


ԷՌՆԵՍ ՏԵՄԻՆՉՈՒՅՅ

82/73)  
2-50



ուՆԵՆԱԿ

ԵՎ

ՀՈՆԵՆԱԿ

Արգելակը մինչև վերջ քաշած էր, և երբ ծուկը խփել էր, Ջոնսընը պոկվել էր նստարանից ու չէր կարողացել պահել կարթածողը: Կարթածողը ծնկին էր դրել, թելն էլ մյուս ծնկի տակով էր անցկացրել: Եթե գոտին հանած չլիներ, իրեն էլ հետը կտաներ:

Շարժիչն անջատեցի ու նավախելի կողմն անցա: Նստել էր որովայնն ամուր գրկած, կարթածողը շատ ուժգին էր հարվածել:

- Երևի այսօր բավական է, - ասացի:
- Ի՞նչ էր, - հարցրեց:
- Սև թրածուկ:
- Ինչպե՞ս պատահեց:
- Ավելի լավ է, վնասը հաշվենք, - ասացի: - Կոճը վրաս երկու հարյուր հիսուն դոլար էր նստել: Հիմա ավելի թանկ արժե: Կարթածողը՝ քառասունհինգ: Ամենաքիչը վեց հարյուր յարդ երկարություն ուներ, երեսունվեց կարթաթել:

Այդ պահին էդդին նրա մեջքը թփփախրեց:

- Պարոն Ջոնսըն, - ասաց, - ձեր բախտը պարզապես չի բերում: Նման բան կյանքումս առաջին անգամ եմ տեսնում:

- Չա՛յնդ, հարբեցող, - սաստեցի նրան:
- Չէ, ճիշտ եմ ասում, պարոն Ջոնսըն, - շարունակեց էդդին, - կյանքումս չէի տեսել:

- Բա որ այդ հրեշը ինձ էլ քաշեր-տանե՞ր, - ասաց Ջոնսընը:
- Ուզում էիք ամեն ինչ ինքներդ անել, - պատասխանեցի: Կատարել էի:

- Շա՛տ էր մեծ, - ասաց Ջոնսընը, - ոնց-որ պատիժ լիներ:
- Իհարկե, - ասացի, - նման ծուկը կարող է և սպանել:
- Բայց դրանց էլ եմ բռնում, չէ՞:

- Բռնում է նա, ով կարողանում է: Սակայն մի կարծեք, թե առանց չարչարվելու եմ որսում:

- Մի աղջկա լուսանկար եմ տեսել, նման ծուկ էր բռնել:
- Իհարկե, - ասացի, - բայց ոչ՝ կենդանի: Չուկը խայծը կուլ է տվել, նա էլ քաշել-պոկել է ստամոքսը, հետո ծուկը օրի երես է դուրս եկել ու սատկել: Իսկ ես խոսում եմ կարթելու մասին, երբ կարթը միայն ձկան շուրթն է բռնում:

- Ախր, - պատասխանեց Ջոնսընը, - սրանք շատ մեծ ձկներ են: Եթե հաճելի չէ, էլ ինչո՞ւ ենք ծուկ որսում:

- Ճիշտ է, պարոն Ջոնսըն, - խոսեց էդդին, - եթե հաճույք չես ստանալու, ինչո՞ւ ես ծուկ բռնում: Գիտեք, պարոն Ջոնսըն, ուղիղ մեխին խփեցիք: Եթե հաճելի չէ, էլ ինչո՞ւ ենք ծուկ որսում:

Աչքիս առաջ ծուկն էր, համ էլ սարսափելի ափսոսում էի որսա-

սարքը, այնքան, որ նրանց զրույցը պարզապես չէի լսում: Նեգրին կարգադրեցի նավը դեպի Մորրո շրջել: Չէի խոսում, իսկ նրանք խաղաղ նստել էին. մի աթոռին էդդին՝ շիշը ձեռքին, մյուսին՝ Ջոնսընը:

- Կապիտա՛ն, - որոշ ժամանակ անց ինձ դիմեց Ջոնսընը, - կարո՞ղ եք ինձ համար հայթու՞ պատրաստել:

Բառ չասացի, արագորեն պատրաստեցի ու մեկնեցի նրան, հետո ինձ համար մի գավաթ անխառն լցրեցի: Ինձ ու ինձ մտածում էի. այս պարոնը տասնհինգ օր է՝ ծուկ է որսում, ի վերջո մի այնպիսի ծուկ է կարթել, որի համար իսկական ձկնորսը ամբողջ տարին ծովում կռիվ կտար, հետո ձեռքից բաց է թողել՝ հերիք չէ, նաև կորցրել է որսասարքս ու հիմա ամենդ նստել՝ խմում է այս հարբեցողի հետ:

Երբ նավահանգիստը հասանք, ու նեգրը կանգնած սպասում էր, ասացի.

- Վաղն ի՞նչ ենք անելու:
- Վաղը՝ դժվար, - ասաց Ջոնսընը, - նման ձկնորսությունից կուշտ եմ:

- Հիմա պետք է նեգրին վճարել:
- Որքա՞ն:

- Մեկ դոլար: Եթե ցանկանում եք, կարող եք թեյափող էլ տալ: Ջոնսընը նեգրին մի հատ մեկ դոլարանոց ու երկու հատ կուբայական քսան ցենտանոց տվեց:

- Սա՞ ինչ է, - մետաղադրամները ցույց տալով՝ ինձ դիմեց նեգրը:
- Թեյափող է, - պատասխանեցի իսպաներեն, - այլևս պետք չես: Իսկ դա նվեր է:

- Վաղը չգա՞մ:
- Ոչ:

Նեգրը վերցրեց խայծկապ պարանի կծիկը, դրեց մուգ ակնոցները, ծղոտե գլխարկը գլխին քաշեց և, առանց հրաժեշտ տալու, հեռացավ: Այս նեգրը մեր մասին երբեք էլ լավ կարծիքի չի եղել:

- Ե՞րբ եք պատրաստվում հաշիվը փակել, պարոն Ջոնսըն, - հարցրեցի:

- Առավոտյան բանկ եմ գնալու, - ասաց, - ճաշից հետո կվճարեմ:
- Գիտեք, չէ՞, ընդամենը քանի օր է:
- Տասնհինգ:

- Ոչ, այսօր էլ հետը՝ տասնվեց, մեկական օր էլ՝ գնալ-գալը,

\* Կոկտեյլի տեսակ: Այս և հետագա ծանոթությունները բարդանցիմ են

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՈՒՆԻՔԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Կրթական և մշակութային հարցերի նախարարության կողմից

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ստացվում է տասնութ: Գումարած կարթածողը, կոճն ու կարթաթե-  
լը:

- Որսասարքը ձեր կորուստն է:  
- Ոչ, պարոն, դուք եք կորցրել:  
- Դրա համար ամեն օր վարձ եմ վճարում: Ձեր կորուստն է:  
- Ոչ, պարոն, - պնդեցի, - եթե ծուկը կտրեր, և ձեր մեղքով չլի-  
ներ, ուրիշ բան: Բայց ինքներդ եք կորցրել որսասարքը՝ ձեր անփու-  
թության պատճառով:

- Զուկը պոկեց-տարավ ձեռքիցս:  
- Որովհետև քաշել էիք արգելակն ու կարթածողը անցքի մեջ  
չէիք դրել:

- Իրավունք չունեք դրա համար գումար գանձել:  
- Եթե ավտոմեքենա վարձեիք ու տանեիք, ժայռին խփեիք, ձեր  
կարծիքով, չէ՞իք վճարելու:

- Եթե ես չեմ վարել, պարզապես մեքենայի մեջ եմ եղել, իհարկե՞  
ոչ, - պատասխանեց Ջոնսընը:

- Հիանալի՛ է, պարոն Ջոնսըն, - ասաց Էդդին, - գլխի ես, չէ՞, կա-  
պիտան:

Եթե ավտոմեքենայի մեջ լինեք, կզոհվեք: Եվ՝ ստիպված չէր լինի  
վճարել: Լա՛վ է մտածված:

Հարբեցողի ասածներին ուշադրություն չդարձրեցի:

- Կարթածողի, կոճի ու կարթաթելի համար պարտք եք երկու հա-  
րյուր իննսուհինգ դոլար, - ասացի Ջոնսընին:

- Իհարկե, արդարացի չէ, - պատասխանեց, - բայց եթե այդպես  
եք ճիշտ գտնում, եկեք, ուրեմն, հավասար կիսեմք վնասը:

- Որ նորը գնեմ, երեք հարյուր վաթսուհինգ պակաս չի մստի: Կար-  
թաթելը չեմ հաշվում: Այդպիսի ծուկը կարող էր թելն ամբողջությամբ  
տանել, և դուք մեղավոր չէիք լինի: Եթե հիմա այստեղ բացի այս  
հարբեցողից ուրիշ մարդ լինեք, կհաստատեք, որ ձեզանից ավելին  
չեմ պահանջում: Իհարկե, թվում է, թե մեծ գումար է, բայց երբ որսա-  
սարք եմ ձեռք բերել, ինքս էլ մեծ գումար եմ տվել: Նման մեծ ծուկ  
բռնելու համար ամենալավ որսասարքը պետք է ունենաս:

- Պարոն Ջոնսըն, տեսա՞ք, ասում է, թե ես հարբեցող եմ: Կարող  
է, և այդպես է: Բայց, միևնույն է, նա իրավացի է: Նա ճիշտ է և ճիշտ  
էլ դատում է, - ասաց Էդդին:

- Լավ, եկեք չվիճենք, - վերջապես ասաց Ջոնսընը, - կվճարեմ,  
չնայած համաձայն չեմ: Ուրեմն, տասնութ օր՝ երեսուհինգական  
դոլարով, գումարած ևս երկու հարյուր իննսուհինգ դոլար:

- Հարյուրն արդեն տվել եք, - ասացի, - ձեզ կներկայացնեմ ծախ-

սերի հաշիվն ու կհանեմ, թե սննդից ինչ է մնացել: Այսինքն, այն, ինչ  
գնել էինք ճանապարհի համար:

- Արդարացի է, - ասաց Ջոնսընը:

- Ինձ լսեք, պարոն Ջոնսըն, - դարձյալ խոսեց Էդդին, - եթե իմա-  
նայիք, թե այստեղ արտասահմանցիներին ոնց են կլպում, կհանոզ-  
վեիք, որ արդարացիից մի բան էլ այն կողմ է: Գիտեք, ինչ կասեմ:  
Ուղղակի զարմանալի է: Կապիտանը ձեզ այնպես է վերաբերվում,  
կարծես հարազատ մայրը լինեք:

- Վաղը բանկ եմ գնալու, ճաշից հետո այստեղ կլինեմ: Իսկ հա-  
ջորդ օրը կմեկնեմ շոգենավով:

- Կարող եք մեր նավով վերադառնալ ու ճանապարհածախսը  
տնտեսել:

- Ոչ, - պատասխանեց, - շոգենավով ժամանակ կշահեմ:

- Շատ լավ, - ասացի, - գուցե խմե՞նք:

- Խմենք, - պատասխանեց Ջոնսընը: - Ուրեմն, ոչ մեկս նեղացած  
չենք, չէ՞:

- Իհարկե, պարոն, - ասացի: Հետո երեքով տեղավորվեցինք նա-  
վախելին ու մեկական հայրու խմեցինք:

Հաջորդ օրը վաղ առավոտից զբաղված էի նավով, յուրը փոխե-  
ցի և պակաս-պռատը կարգի բերեցի: Կեսօրին մոտ իջա քաղաք,  
նախաճաշեցի չինական ռեստորանում, որտեղ կարելի էր ընդամե-  
նը քառասուն ցենտով կարգին սնվել, ապա կնոջս ու երեք դուստ-  
րերիս համար նվերներ գնեցի: Դե գիտեք՝ օծանելիք, հովհարներ,  
երեք հատ բարձր սանր-հերակալ: Ավարտեցի գնումներս, Դոնովա-  
նի մոտ մտա, զարեջուր խմեցի, նրա հետ մի-երկու բառ փոխանա-  
կեցի, հետո Սան-Ֆրանցիսկոյի նավամատույցը վերադառնալու  
ճանապարհին երեք-չորս տեղ ոտքս կախ գցեցի ու էլի զարեջուր  
խմեցի: «Կունարդ» բարում Ֆրենկիին հյուրասիրեցի և ուրախ-  
զվարթ նավ վերադարձա: Գրպանումս քառասուն ցենտ էր մնացել:  
Ֆրենկին հետս եկավ, ու մինչ մատած Ջոնսընին էինք սպասում, մե-  
կական շիշ էլ սառույցով արկղից վերցրեցինք:

Ամբողջ գիշեր, նաև՝ ցերեկը, Էդդին չերևաց, չնայած համոզված  
էի, որ ուշ թե շուտ հայտնվելու էր, երբ այլևս ապառիկով խմելու  
բան չտային: Դոնովանն ասել էր, որ նախորդ գիշեր Ջոնսընի հետ  
մի պահ իր մոտ էր մտել, հյուրասիրել էր ապառիկով: Սպասում  
էինք: Շուտով սկսեցի զարմանալ՝ Ջոնսընն ինչո՞ւ չի հայտնվում:  
Նավամատույցում խնդրել էի, որ եթե ինձանից շուտ գար, փոխան-  
ցեի, որ նավ բարձրանար ու սպասեր, սակայն պարզվեց, այս կող-  
մերում բոլորովին չէր էլ երևացել: Մտածեցի, հավանաբար, գիշերն

ուչ է հյուրանոց հասել և մինչև կեսօր քնով է ընկել: Բանկերը չորսն անց կեսին են փակվում: Հետո նկատեցինք, որ երթուղային ինքնաթիռն օդ բարձրացավ, և հինգն անց կեսի մոտ տրամադրությունս արդեն փչացավ: Տեղս չէի գտնում:

Ժամը վեցին Ֆրենկլինն հյուրանոց ուղարկեցի՝ տեղեկանալու, արդյո՞ք Ջոնսընն այնտեղ էր: Մտածում էի՝ գիշերը մի քիչ երկար է քեֆ արել, կամ վատ է զգում ու չի կարողացել նույնիսկ հյուրանոցից դուրս գալ: Այնքան սպասեցի, մինչև մութն ընկավ: Շատ էի անհանգստանում՝ ութ հարյուր քսանհինգ դոլար էր պարտք:

Ֆրենկլին կես ժամ առաջ էր գնացել: Վերջապես երևաց, շտապում էր ու գլուխը թափահարում:

- Թռել ինքնաթիռով, - ասաց:

Այդպե՛ս: Ի՞նչ ասեմ: Հյուպատոսարանն արդեն փակ է: Ունեցած-չունեցածս էլ քառասուն ցենտ է, միևնույն է, ինքնաթիռն արդեն Մայամիում է: Նույնիսկ հեռագրել չեմ կարող: Ա՛յ քեզ պարոն Ջոնսըն: Դե ինչ, ես եմ մեղավոր: Ավելի խելացի պետք է վարվեի:

- Լավ, - ասացի Ֆրենկլինին, - ամեն դեպքում, մի շիշ էլ սառը խմենք:

Պարոն Ջոնսընի հաշվին:

Արկղում երեք շիշ «Արևադարձային» էր մնացել:

Ֆրենկլին ինձանից պակաս չէր դառնացել: Չգիտեմ ինչու, այդպես թվաց: Անընդհատ թիկունքս էր թփթփացնում ու գլուխը թափահարում:

Ուրեմն, այսպես: Ես սնանկացած եմ: Կորցրել եմ հինգ հարյուր երեսուն դոլար նավավարձը, իսկ որսասարք երեք հարյուր հիսուն դոլարով էլ չեմ կարող ձեռք բերել: Մտածում էի, ա՛յ թե կուրախանան անգործները, որ ամբողջ օրը թափառում են նավամատույցում: Կոնչերի\* մի մասի սիրտը ուրախությունից կպայթի: Իսկ երեկ չէ մյուս օրը երեք հազար դոլարից հրաժարվեցի, ընդամենը պետք է երեք օտարերկրացիներին կղզի հասցնեի: Կարևոր չէր, թե որ կղզին, մենակ թե երկրից դուրս հանեի:

Լավ, ի՞նչ եմ անելու: Նավը բարձել չեմ կարող, վիսկի գնելու համար փող է պետք, հետո էլ այդ գործի մեջ համարյա բան չի մնում: Ամբողջ քաղաքը լցրել եմ, առնող չկա: Ուրեմն, ի՞նչ, առանց փողի տուն վերադառնամ ու ամբողջ ամառ սովա՞ծ մնամ: Ընտանիք ունեմ: Նավահանգստի ելքի համար վճարել եմ, երբ նոր էի ժամանել: Սովորաբար, գործակալին նախօրոք ես վճարում, նա գրանցում է ու

\* Խխունջ հավաքողներ:

թույլտվություն է տալիս: Սատանան տանի, նույնիսկ վառելիքի փող չունեմ: Վիճակը ծանր է: Ա՛յ քեզ պարոն Ջոնսըն:

- Ֆրենկլի, այստեղից մի բան պետք է տանեմ, - ասացի, - փող պետք է աշխատեմ:

- Մտածել, - պատասխանեց Ֆրենկլին: Նա օրերով թափառում էր ափին, պատահական գործեր էր անում, համարյա խուլ էր և ամեն գիշեր հարբում էր: Բայց նրանից բարի ու հավատարիմ մարդ դժվար թե գտնվեր: Այս կողմերում հայտնվելուս առաջին օրվանից եմ ճանաչում: Միշտ օգնում էր նավը բարձել: Հետո, երբ սպիրտի գործը թողեցի և սկսեցի նավը վարձակալությամբ տալ՝ թրածկան որսի գործ դրեցի Կուբայում, հաճախ էի նրան հանդիպում նավամատույցում կամ սրճարանում: Թվում է՝ հիմար էր, համ էլ քիչ էր խոսում ու անվերջ ժպտում էր, բայց պատճառն այն էր, որ խուլ էր:

- Ինչ լինի, տանե՛լ, - հարցրեց Ֆրենկլին:

- Բա ինչ, - պատասխանեցի, - ընտրություն չունեմ:

- Ինչ լինի՞:

- Իհարկե:

- Մտածել, - ասաց Ֆրենկլին, - որտե՞ղ լինել:

- «Մարգարիտում», - ասացի, - ճաշելու եմ:

«Մարգարիտում» հնարավոր է քսանհինգ ցենտով կուշտ ճաշել: Ուզածդ ուտելիքը, բացի ապուրից, տասը ցենտ է, ապուրը՝ հինգ: Ֆրենկլն ինձ մինչև սրճարան ուղեկցեց, և երբ ներս մտա, շարունակեց ճանապարհը: Բաժանվելուց առաջ սեղմեց ձեռքս ու մի անգամ էլ թփթփացրեց թիկունքս:

- Չվիատվե՛լ, - ասաց: - Այ, ես՝ Ֆրենկլի, շատ քաղաքականություն: Շատ գործ: Շատ խմել: Քիչ փող: Բայց լավ ընկեր: Չվիատվե՛ս:

- Ողջ լինես, Ֆրենկլի, - ասացի, - դու էլ չվիատվես, բարեկամս:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

«Մարգարիտ» մտա և տեղավորվեցի սեղաններից մեկի մոտ: Կրակոցներից կոտրված ապակու փոխարեն արդեն նորն էին դրել, կարգի էր բերված նաև ցուցափեղկը: Երեք-չորս gallego\*-ներ խմում էին կանգնակի մոտ, մի քանիսը ճաշում էին: Սեղաններից մեկի շուրջ դոմինո էին խաղում: Տասնհինգ ցենտով լոբով ապուր, շոգեխաշած միս ու կարտոֆիլ էի պատվիրել: Մի շիշ էլ գարեջուր, ընդամենը՝ քառորդ դոլար: Երբ խոսք բացեցի կրակոցների մասին, մատուցողը չցանկացավ խոսել: Լավ վախեցած էին:

Ճաշեցի-վերջացրեցի, քիկն տվեցի, ծխախոտ վառեցի ու սկսեցի գլուխ ջարդել, թե ինչ էի անելու: Հանկարծ նկատեցի Ֆրենկիին, մեկին հետևը գցած ներս մտավ: Դեղնամորթ է, անցավ մտքովս: Ուրեմն՝ դեղնամորթ:

- Ծանոթացե՛ք, պարոն Սինգը է, - ժպտալով ներկայացրեց Ֆրենկին:

Արագ էր պատվիրատու գտել, դրա համար էլ անչափ հպարտ էր:

- Շատ հաճելի է, - ասաց պարոն Սինգը:

Կյանքումս նման պճնամուլ չէի տեսել: Ճիշտ է, չինացի էր, սակայն խոսում էր գտարյուն անգլիացու նման, հազի՛ն սպիտակ կոստյում էր, մետաքսյա վերնաշապիկ, սև փողկապ և հարյուր քսանհինգ դոլարանոց պանամա:

- Սուրճ չե՞իք ցանկանա, - ինձ դիմեց:

- Չեզ ընկերակցելու համար միայն:

- Շնորհակալ եմ, - ասաց պարոն Սինգը, - այստեղ մենա՞կ եմք:

- Եթե սրճարանում գտնվողներին չհաշվենք, - պատասխանեցի:

- Շատ լավ, - ասաց պարոն Սինգը, - նավ ունե՞ք:

- Համարյա երեսուներոթ ոտնաչափ երկարությամբ, - ասացի, -

Կերմատի հարյուր ծիառածանոց շարժիչով:

- Ախ այդպե՛ս, - ասաց պարոն Սինգը, - կարծում էի, ավելի մեծ է:

- Հանգիստ կարելի է երկու հարյուր քսանվեց արկղ բարձել:

- Կարո՞ղ եմ վարձել:

- Ի՞նչ պայմանով:

- Կարող եք հետներս չմեկնել: Կապիտան էլ ունեմ, անձնակազմ էլ:

- Ոչ, - պատասխանեցի, - որտեղ նավը, այնտեղ՝ ես:

- Պարզ է, - ասաց պարոն Սինգը, ապա դիմեց Ֆրենկին: - Չէի՞ք

կարող մեզ մենակ թողնել:

Ֆրենկին ավելի ուշադիր նայեց ու ժպտաց:

- Խուլ է, - ասացի, - անգլերեն էլ գրեթե չի հասկանում:

- Պարզ է, - շարունակեց պարոն Սինգը, - դուք իսպաներեն խոսում եք:

Նրան փոխանցեք, որ ավելի ուշ միանա մեզ:

Քթամատով նշան արեցի: Ֆրենկին վեր կացավ ու կանգնակին մոտեցավ:

- Իսկ դուք իսպաներեն չգիտե՞ք, - հարցրեցի:

- Դե, իհարկե, - պատասխանեց պարոն Սինգը: - Ասացեք, ի՞նչ պարագա պատճառ հանդիսացավ ... ստիպեց հետաքրքրվել...

- Փող է հարկավոր:

- Պարզ է, - ասաց պարոն Սինգը, - նավի հետ կապված պարտքե՞ր ունեք: Կարո՞ղ է, հանկարծ, կալանեն:

- Ոչ:

- Լավ է, - ասաց պարոն Սինգը, - նավի վրա իմ դժբախտ հայրենակիցներից քանիսի՞ն կարելի է տեղավորել:

- Նկատի ունե՞ք՝ տեղափոխե՞լ:

- Ճիշտ այդպես:

- Նայած որքան ճանապարհ ենք գնալու:

- Մեկ ամբողջ օր:

- Չգիտեմ, - ասացի, - երևի տասներկու հոգի, եթե ուղերբո չունենան:

- Ուղերբո չկա:

- Ո՞ր եմ հասցնելու:

- Չեր հայեցողությամբ, - պատասխանեց պարոն Սինգը:

- Նկատի ունեմ, որտե՞ղ եմ իջեցնելու:

- Տանելու եք Տորտուգաս, նրանց հետևից առագաստանավ է գալու:

- Գիտեք, - ասացի, - Տորտուգասում, Լոզգերիեղ Քիում, փարոս կա, երկկողմ ռադիոկայան ունի:

- Ճիշտ է, - ասաց պարոն Սինգը, - հիմարություն կլիներ նրանց այնտեղ իջեցնել:

- Ուրեմն, ի՞նչ անենք:

- Ասացի, մինչև այնտեղ եք տանելու: Նրանց հետ այդպես ենք պայմանավորվել:

\* Իսպանական Գալիսիա գավառի բնակիչ, օգտագործվում է որպես արհամարհական մականուն:

- Լավ, - ասացի:
- Կիջեցնեք, որտեղ հարմար կգտնեք:
- Բայց առագաստանավն անպայման գալու է, չէ՞:
- Իհարկե՞ ոչ, - ասաց պարոն Սինգը, - հիմարություն կլինեք:
- Ամեն մեկի համար որքա՞ն եք վճարելու:
- Հիսուն դոլար:
- Չի ստացվի:
- Իսկ յոթանասունհի՞նգ:
- Դուք որքա՞ն եք ստանում:
- Դե, դա գործի հետ կապ չունի: Գիտեք ինչ, իմ դերը տարբեր կերպ կամ, ինչպես ասում են, տարբեր տեսանկյունից կարելի է դիտարկել: Միայն դրանով չի սահմանափակվում:
- Այո, - ասացի, - իսկ այն, ինչ ես եմ ամելու, փող չարժի՞: Այդպե՞ս է ստացվում:
- Լրիվ հասկանում եմ ձեզ, - ասաց պարոն Սինգը, - դե ինչ, ասե՛նք՝ մարդը հարյուր դոլար:
- Լսե՛ք, - ասացի, - եթե բռնվեցի, գիտե՞ք, քանի տարի կտան:
- Տասը, - պատասխանեց պարոն Սինգը, - ամենաքիչը: Բայց ինչո՞ւ պետք է անպայման բանտարկվեք, սիրելի կապիտան: Ընդամենը մի բանում եք վտանգվում՝ ուղևոր վերցնելու մեջ: Մնացածը կախված է ձեր խելամտությունից:
- Իսկ եթե գան ու ձե՞զ պատասխանատվության կանչեն:
- Դրանից հեշտ բա՞ն: Ես ձեզ կմեղադրեմ, որ խաբել եք ինձ: Հետո մասամբ կհատուցեմ նրանց ծախսերն ու նորից կուղարկեմ: Նրանց, իհարկե, հայտնի է, որ այս ուղևորությունը բարդությունների հետ է կապված:
- Իսկ ե՞ս:
- Կարծում եմ, ստիպված կլինեմ հյուպատոսարանին տեղեկացնել:
- Պարզ է:
- Կապիտան, մեր օրերում հազար երկու հարյուր դոլարն այն գումարը չէ, որից կարելի է հրաժարվել:
- Փողը ե՞րբ կստանամ:
- Երկու հարյուրը, հենց որ համաձայնվեք, հազարն էլ՝ բեռնելիս:
- Իսկ եթե երկու հարյուրը վերցնեմ ու անհետանա՞մ:
- Ինչ կարող եմ անել, - ժպտաց, - բայց, կապիտան, վստահ եմ, որ նման բան չեք անի:
- Երկու հարյուրը հիմա ձեզ մո՞տ է:
- Իհարկե:

- Ափսե՛ի տակ դրեք:
- Դրեք:
- Լավ, - ասացի, - առավոտյան թույլտվության հարցը կլուծեմ, ու հենց որ մութն ընկնի, ճամփա կընկնեմ: Որտե՞ղ ենք բարձելու:
- Բակուրանառն հարմա՞ր է:
- Կարելի է: Մնացած հարցերը կարգավորե՞լ եք:
- Իհարկե:
- Հիմա, ինչ վերաբերվում է բեռնելուն, - ասացի, - հրվանդանի վրա երկու կրակ եք վառում, մեկը մյուսից հեռու, մի փոքր վերև: Հենց որ նկատեցի, կմոտենամ ափին: Նավակով կգաք, նավակից էլ կբարձենք: Ինքնե՛րդ կգաք, փողն էլ կբերեք: Մինչև փողը չստանամ, ոչ մեկին վերև չեմ թողնելու:
- Ոչ, - պատասխանեց, - կեսը բարձելուց առաջ կստանաք, կեսը՝ հետո:
- Լավ, - ասացի, - ավելի արդարացի կլինի:
- Ուրեմն, պայմանավորվեցինք:
- Կարծես, - ասացի, - ոչ ուղեբեռ, ոչ էլ՝ զենք: Ոչ մի բան՝ ատրճանակ, դանակ, ածելի: Պետք է համոզված լինեմ:
- Կապիտան, - ասաց պարոն Սինգը, - ինձ չե՞ք վստահում: Չե՞ք տեսնում, որ մեր շահերը համընկնում են:
- Խոստանո՞ւմ եք, որ կստուգեք:
- Խնդրում եմ, ինձ վատ վիճակի մեջ մի դրեք: Չե՞ք հասկանում, որ ընդհանուր շահ ունենք:
- Լավ, - ասացի, - ժամը քանիսի՞ն տեղում կլինեք:
- Տասներկուսին:
- Դե լավ, - ասացի, - կարծես, վերջ:
- Փողն ի՞նչ արժեթղթերով հարմար կլինի:
- Հարյուրանոցներով:
- Վեր կացավ տեղից, հայացքով մինչև դուռն ուղեկցեցի: Երբ դուրս էր գալիս, Ֆրենկին ժպտաց նրան: Պարոն Սինգը նրա կողմը չնայեց: Պճնամուլ չինացի է, ինչ ասես: Ա՛յ թեզ պարոն Սինգ: Ֆրենկին իմ սեղանին մոտեցավ:
- Դե, ի՞նչ, - հարցրեց:
- Պարոն Սինգին որտեղի՞ց ես ճանաչում:
- Չինացի տեղափոխում, - պատասխանեց, - խոշոր գործ:
- Վաղո՞ւց ես ճանաչում:
- Էստեղ, երկու տարի, - ասաց Ֆրենկին, - առաջ ուրիշ մարդ չինացի տեղափոխել: Ինչ-որ մեկ սպանել նրան:
- Ինչ-որ մեկը պարոն Սինգին էլ կսպանի:

- Պարզ է, - ասաց Ֆրենկին, - այդպես պետք: Շատ խոշոր գործ:
- Գործ է, էլի, - ասացի:
- Խոշոր գործ, - շարունակեց Ֆրենկին, - գնացած չինացի հետ չգալ:

Ուրիշ չինացի նամակ գրել, ամեն ինչ շատ լավ:

- Հիանալի է, - ասացի:
- Այս չինացի չգիտի գրել: Հարուստ չինացի գիտի գրել: Այս չինացի ոչինչ չուտել: Միայն բրինձ: Այստեղ հարյուր հազար չինացի: Ընդամեն երեք կին չինացի:

- Ինչո՞ւ:

- Կառավարություն չթողնել:

- Ծիծաղելի է, - ասացի:

- Նրա հետ գործ անե՞լ:

- Կարող է:

- Լավ գործ, - ասաց Ֆրենկին, - քաղաքականությունից լավ:

Շատ փող:

Շատ խոշոր գործ:

- Մի շիշ գարեջուր կխմե՞ս, - հարցրեցի:

- Էլ չվիատվե՞լ:

- Ոչ, ոչ, - ասացի, - շատ խոշոր գործ: Քեզանից շնորհակալ եմ:

- Լավ, - ասաց Ֆրենկին ու մեջքս քփփացրեց, - ինձ ուրախացնել: Ես ուզեմալ, որ դու ուրախ լինել: Չինացի՝ լավ գործ, չէ՞:

- Հրաշալի:

- Ես ուրախ, - ասաց Ֆրենկին: Ձգում եմ՝ քիչ է մնում հրճվանքից արտասվի, որ ամեն ինչ լավ է դասավորվել, և քփփացնում եմ ուսը: Ա՛յ քեզ Ֆրենկի:

Վաղ առավոտյան առաջին գործս այն եղավ, որ գործակալին գտա ու խնդրեցի, որ թույլտվությունը նախապատրաստեր: Նա անձնակազմի ցուցակը պահանջեց, ասացի, որ անձնակազմ չի լինելու:

- Մենա՞կ եք վերադառնալու, կապիտան:

- Այո:

- Իսկ ձեր օգնակա՞նը:

- Հարբում է, - ասացի:

- Մենակ վտանգավոր է:

- Ընդամենը իննսուն մղոն է, - ասացի, - կարծում եք, այդ հարբեցողն օգո՞ւտ է տալիս:

Նավը քշեցի նավահանգստի հակառակ կողմը՝ Ստանդարտ Օյլի նավամատույցը, և երկու բաքն էլ բերնեբերան լիցքավորեցի: Մոտ երկու հարյուր գալոն: Չէի ուզում գալոնը քսանութ ցնետով

զնել, բայց ստիպված էի, ի՞նչ իմանաս, որտեղ ես հայտնվելու:

Այն պահից, որ հանդիպել էի չինացուն ու կանխավճար վերցրել, հանգիստ չունեի: Գիշերը համարյա չքնեցի: Երբ Սան-Ֆրանցիսկոյի նավահանգիստը վերադարձա, Էդդին արդեն ինձ էր սպասում:

- Ողջո՞ւյն, Հարրի, - ծայնեց ու ձեռքով արեց: Ցած նետեցի նավխելի ցցապարանը, կապեց ու վեր բարձրացավ: Տեսքը նույնն էր՝ բարձրահասակ, աչքերը մշուշոտ, բայց սովորականից, կարծես, շատ էր խմած: Ոչինչ չասացի:

- Հարրի՛, ուրեմն, այդ տիպը՝ Ջոնսոնը, մեզ քցեց ու փախա՞վ, - հարցրեց, - ի՞նչ մտքի ես:

- Կորի՛ր այստեղից, - գոռացի, - քո պատճառով գործերս միայն դեպի վատն են զնում:

- Եղբայրս, ի՞նչ ես կարծում, ես էլ քո չափ կատաղած չե՞մ:

- Իջի՛ր նավից, - պատասխանեցի:

Հարմարվեց աթոռին ու ոտքերը մեկնեց:

- Իմացա, ուղևորվում եմք, - ասաց: - Բա ինչ, այստեղ մնալն ի՞զուր է:

- Դու չես գալիս:

- Հարրի՛, ի՞նչ է պատահել: Իզուր ես հետս վիճում:

- Ի՞նչ ես ասում: Կորի՛ր այստեղից:

- Հանգի՛ստ, հանգի՛ստ:

Մի հատ դեմքին հասցրեցի, տեղից վեր թռավ ու իջավ նավից:

- Հարրի՛, քո տեղը լինեի, այդպես չէի վարվի, - ասաց:

- Հըլա մի փորձե՛իր, - ասացի: - Հետս չեմ տանում: Եվ՝ վերջ:

- Հասկացանք: Բայց ինչո՞ւ խփեցիր:

- Որ հասկանաս:

- Բա հիմա ի՞նչ եմ անելու: Այստեղ մնամ ու սոված սատկե՞մ:

- Է, մի՛ սատկիր, - ասացի, - զնա, երթուղային շոգենավի վրա

հետդարձի տոմսի դիմաց աշխատիր:

- Հետս ազնիվ չես վարվում, - ասաց:

- Հետաքրքիր է, ինքդ երբևէ որևէ մեկի հետ ազնիվ վարվե՞լ ես, ա՛յ հարբեցող, - պատասխանեցի, - նույնիսկ սեփական մորդ կխաբես:

Իմիջայլոց, դա էլ էր ծիշտ: Չնայած վատ զգացի, որ խփել էի: Ընդհանրապես, հարբածին հարվածելը զգվելի է: Սակայն, միևնույն է, որքան էլ ուզեմայի, չէի կարող նրան նման գործի վերցնել:

Ոտները քարշ տալով շարժվեց դեպի նավամատույցի դարպասները, որ, կարծես, մի ամբողջ քաղցած օրից երկար էին: Ապա շրջվեց ու վերադարձավ:

- Հարրի, մի-երկու դուլար չե՞ս տա:
- Զինացու փողից մի հինգդուլարանոց տվեցի:
- Հարրի, միշտ համոզված եմ եղել, որ ընկերս ես: Ինչո՞ւ չես ուզում ինձ էլ հետդ վերցնել:
- Դժբախտություն ես բերում:
- Ուղղակի դիվոտել ես, - ասաց, - ոչինչ, բարեկամս: Ապագայում քեզ բախտավոր կհամարես, եթե կարողանաս բարևել ինձ:
- Հիմա, որ ձեռքին փող կար, ավելի արագ էր քայլում, չնայած, միևնույն է, տհաճ էր տեսնել, թե ինչպես էր ոտքը ոտքի առաջ դնում: Այնպես էր գնում, կարծես, հողերը հակառակ կողմից լինեին:
- Գնացի «Մարգարիտ», հանդիպեցի գործակալին, վերցրեցի թղթերը: Նրան գարեջուր հյուրասիրեցի: Հետո նախաճաշում էի, երբ հայտնվեց Ֆրենկին:
- Տվել քեզ, - ասաց ու թղթի մեջ գլանածն փաթաթած ու կարմիր թելով կապած փոքրիկ կապոց մեկնեց: Թուղթը քանդեցի, թվաց՝ լուսանկար էր: Մտքովս անցավ, որ, հավանաբար, նավահանգստում ինչ-որ մեկը նավս է լուսանկարել:
- Այ՛քեզ բան: Մահացած նեգրի մեծ կիսանկար էր, կոկորդը մի ականջից մինչև մյուսը կտրած ու խնամքով կարած, կրծքին՝ իսպաներեն մակագրություն՝ «Այսպես ենք վարվում lengua larga-ների հետ»:
- Ո՞վ տվեց, - հարցրեցի Ֆրենկին:
- Մատնացույց արեց նավահանգստում աշխատող փոքրամարմին, թոքախտավոր իսպանացուն, որ այդ պահին կանգնակի մոտ էր:
- Ասա՛, թող մոտենա:
- Տղան մոտեցավ: Ասաց, որ առավոտյան, ժամը տասնմեկի կողմերը, երկու երիտասարդ են եկել և տվել են իրեն: Հետաքրքրվել են՝ ինձ ճանաչո՞ւմ է, ինքն էլ ասել է, որ ճանաչում է: Հետո հանձնել է Ֆրենկին, որ ինձ փոխանցի: Իրեն էլ մեկ դուլար են նվիրել, որ հաստատ տեղ հասցնի: Ասաց, որ լավ էին հագնված:
- Քաղաքականություն, - խոսեց Ֆրենկին:
- Այո, այո, - ասացի:
- Նրանք մտածել, որ դու ոստիկանությանը պատմել, որ առավոտը հանդիպել ջահելների հետ:
- Այո, հավանաբար:
- Վատ քաղաքականություն, - ասաց Ֆրենկին, - լավ է, որ դու մեկնել:

- Ուրիշ հանձնարարություն չե՞մ տվել, - հարցրեցի փոքրամարմին իսպանացուն:
- Ոչ, միայն կապոցը փոխանցել:
- Վատ քաղաքականություն, - կրկնեց Ֆրենկին, - շատ վատ քաղաքականություն:
- Ծալեցի-դասավորեցի գործակալի տված թղթերը, վճարեցի նախաճաշի համար և, սրճարանից դուրս գալով, կտրեցի-անցա հրապարակն ու ներս մտա նավահանգստի դարպասներից: Երբ արդեն շրջանցել էի պահեստներն ու նավամատույց էի հասել, կարծես, երջանկություն իջավ վրաս: Համենայնդեպս, երիտասարդներն լավ վախեցրել էին ինձ: Այնքան հիմար էին, որ իրենց թվացել էր, թե ինչ-որ մեկի մոտ շատախոսել են: Դրանք բոլորն էլ Պանչոյի մման են: Վախից կատաղում են, իսկ որ կատաղում են, ուզում են մարդ սպանել:
- Նավ բարձրացա, սկսեցի շարժիչը տաքացնել: Ֆրենկին նավամատույցից ինձ էր հետևում: Դեմքին խուլի նույն ծիծաղելի ժպիտն էր: Մոտեցա:
- Լսի՛ր, - ասացի, - սրա պատճառով հանկարծ կրակը չընկնե՞ս:
- Հէր լուծ: Ստիպված էի գոռալ:
- Ինձ լավ քաղաքականություն, - պատասխանեց Ֆրենկին ու արծակեց նավախելի ցցապարանը:



**Ձ** եռքով արեցի Ֆրենկլիին, որ արդեն արձակել էր կառանները, նավը դուրս բերեցի նավակայանից և ուղղություն վերցրեցի դեպի նեղուցը: Անգլիական բեռնատար շոգենավը նույնպես ծով էր դուրս եկել, հավասարվեցի նրան, հետո շրջանցեցի: Շաքար էր բարձած, քիթեղն էլ ժանգոտած էր: Երբ անցնում էի շոգենավի կողքով՝ հին, երկնագույն սվիտերով մի լիմոնակեր\* նավախելից ինձ էր նայում: Նավահանգստից դուրս լողալով՝ անցա Մորրոն և ուղղություն վերցրեցի դեպի Քի Ուեսթ, ուղիղ գծով դեպի հյուսիս: Բաց թողեցի դեկանիվը, անցա առջևի տախտակամածն ու հավաքեցի ցցապարանը, ապա վերադարձա ու ճշտեցի ուղղությունը: Հավանան սկզբում հայտնվեց նավախելի հետևում, հետո անհետացավ տեսադաշտից, մնաց լեռներից այն կողմ:

Քիչ անց այլևս տեսադաշտում չէր նաև Մորրոն, ապա անհետացավ «Նացիոնալ» հյուրանոցի շենքը, երևում էր միայն Կապիտոլիումի գմբեթը: Հոսանքն ավելի թույլ էր, քան այն օրը, երբ վերջին անգամ ձկնորսության էինք դուրս եկել, մեղմ գեփյուռ էր խաղում: Երկու ձկնորսանավ նկատեցի, որ Հավանա էին վերադառնում, գալիս էին արևմուտքից, ուրեմն՝ հոսանքն այնքան էլ ուժեղ չէր:

Անջատեցի շարժիչը: Իմաստ չունեի իզուր տեղը վառելիք ծախսել: Թող նավն առայժմ հոսանքով գնա: Երբ մութն ընկնի, հեշտությամբ կկողմնորոշվեմ Մորրոյի փարոսով, իսկ եթե շատ հեռացած լինեմ՝ ճիշտ ուղղությունը կվերցնեմ Կոհիմարի լույսերով ու կհասնեմ Բակուրանա: Հաշվարկեցի, որ եթե հոսանքն ուժգնությունը չփոխեր, մինչև մթնելը ուղիղ տասներկու մղոն կանցնեի, այսինքն տեղ կհասնեի, և Բարակաոյի լույսերը կերևային:

Ուրեմն, շարժիչն անջատեցի և վերև բարձրացա, որ տեսնեի, թե ինչ էր երևում առջևում: Արևմուտքից երկու ձկնորսանավ շարժվում էին նավահանգստի ուղղությամբ, հետևում՝ օվկիանոսի ափին, վեր էր խոյանում Կապիտոլիումի ճերմակ գմբեթը: Ջրի երեսին տեղ-տեղ դեղնած ջրիմուռներ էին նշմարվում, օդում թռչումներ էին, սակայն՝ փոքրաքանակ: Մի պահ նստեցի նավախցի տանիքին, զննեցի շուրջ-

\* Անգլիական նավաստիներին տրվող մականուն: Limey բառից՝ լիմոնահյութ, որ նրանք մշտապես խմում են լնդախտի հիվանդությունը կանխելու համար:

բոլորս՝ բացի ջրիմուռների հարևանությամբ մշտապես թափառող մանր շագանակագույն ձկնիկները, ուրիշ ծուկ չտեսա: Եղբայրս, թույլ մի տուր, որ հավատացնեմ, թե Հավանայից մինչև Քի Ուեսթ երկու քայլ է: Դեռ որքա՞ն ճանապարհ պետք է անցնեմ:

Մի քանի րոպեից ցած իջա: Ներքևում եղին էր:

- Ի՞նչ է եղել: Շարժիչին բա՞ն է պատահել:

- Խափանվել է:

- Դռնա՞կն ինչու չես փակել:

- Ռա՛դ արա, - ասացի:

Գիտե՞ք, ինչ էր արել: Նավամատույց էր վերադարձել, նավի քթամասի դռնակից ներս էր մտել նավախուցն ու պառկել-քնել էր: Հետո էլ երկու շիշ էր բերել: Մտել էր առաջին պատահած bodega-ն\*, վերցրել էր երկու շիշ ու եկել: Երբ միացրել էի շարժիչը, զարթնել, հետո նորից քնել էր: Իսկ երբ ծովածոցում կանգնեցրել էի նավը, ալիքները սկսել էին ուժգին օրորել, և կրկին զարթնել էր:

- Հա՛րրի, գիտեի, որ ինձ էլ ես հետդ վերցնելու, - ասաց:

- Հա՛, որ գրողի ծոցն ուղարկեմ, - պատասխանեցի: - Նույնիսկ անունդ նավամատյանում չկա: Ավելի լավ է, հենց հիմա ջուրը թռչես:

- Դե լավ, Հարրի, նորվա հանաքչին չես, - ասաց, - մենք՝ կոնչերս, դժբախտության պահին պետք է իրար հասնենք:

- Էն էլ՝ դո՞ւ, - ասացի, - քո այդ կեղտոտ բերանով: Որ խմած եղար, խոսքիդ ո՞վ կհավատա:

- Ես վստահելի մարդ եմ, Հարրի: Կարող ես փորձել և կհամոզվես:

- Երկու շիշն էլ ինձ տուր, - ասացի: Մտքումս ուրիշ բան էր:

Շշերը հանեց, բացած շիջ մի կում արեցի, ապա երկու շիշն էլ դեկանիվի մոտ տեղավորեցի: Անշարժ կանգնել էր: Նայեցի դեմքին: Ցավում էի նրա համար, վատ էի զգում, որ ստիպված էի լինելու մտադրությունս իրականացնել: Սատանան տանի, չէ՞ որ վաղուց և լավ էի ճանաչում նրան, երբ դեռ մարդ էր:

- Շարժիչին ի՞նչ է պատահել, Հա՛րրի:

- Ոչինչ էլ չի պատահել:

- Բա ի՞նչ է եղել: Ինչո՞ւ ես այդպես նայում:

- Եղբայրս, - ասացի, իսկապես խղճում էի նրան, - գործերդ լավ չեն:

- Ի՞նչ ես ուզում ասել, Հա՛րրի:

- Դեռ ինքս էլ չգիտեմ, - ասացի, - չեմ որոշել:

Մի քիչ էլ նստեցիք, սակայն այլևս տրամադիր չէի հետը գրուցել: Եվ քանի որ գիտեի այն, ինչ գիտեի, դժվար էր նրա հետ խոսել: Ցած

\* Իսպաներեն՝ նպարեղենի խանութ:

իջա, վերցրեցի օդածիզ հրացանս ու երեսուն տրամաչափի «Վինչեստերը», որ միշտ ներքևում էի պահում, առանց պատյանից հանելու կախում էի նավախցի առաստաղի տակ, ուր սովորաբար կարթածողերն են դնում, ուղիղ դեկանիվի վերևում, որ միշտ ձեռքիս տակ լինեին: Ձեռքը խնամքով պահում էի յուղով ներծծված ոչխարի մորթու մեջ՝ բուրդը դեպի ներս: Նավի վրա միայն այդպես կարելի է խուսափել ժանգից:

Ստուգեցի օդածիզի օդամղիչն ու մխոցը, մի քանի անգամ քաշեցի ձգանն ու լիցքավորեցի: Չետո փամփուշտ դրեցի «Վինչեստերի» մեջ ու լիցքավորեցի փամփուշտառուփը: Ներքնակի տակից հանեցի նաև երեսունութ տրամաչափի հատուկ տիպարի «Սմիթ-Վեստերը», որ հիշատակ էր մնացել այն օրերից, երբ Մայամիում ծառայում էի ոստիկանական ջոկատում, յուղեցի, լիցքավորեցի և գոտուս մեջ խրեցի:

- Ի՞նչ է պատահել, - հարցրեց Էդդին, - ասա տեսնեմ, ի՞նչ է կատարվում:

- Ոչինչ, - պատասխանեցի:

- Ձե՞նքն ինչի համար է:

- Նավի վրա միշտ էլ զենք են պահում, - ասացի, - թռչուններ են խփում, եթե հանկարծ խայծին են վրա տալիս, կամ՝ շնածկներ, և, ընդհանրապես, պետք է գալիս, երբ կղզիների մոտերքում են լողում:

- Սատանան տանի, ի՞նչ-որ բան է կատարվում, - ասաց Էդդին, - վերջապես, ի՞նչ է պատահել:

- Ոչինչ, - պատասխանեցի: Նստած Էդդինն էի նայում, երեսունութ տրամաչափի «Սմիթ-Վեստերը» ալիքներին համաչափ խփվում էր ազդրիս: Մտածում էի՝ մի՞ շտապիր, դեռ կարող է պետք գալ:

- Մի փոքր գործ ունենք, - ասացի, - Բակուրանաոյում: Ժամանակը կգա, կասեմ:

Չէի ուզում նախօրոք տեղեկացնել, գիտեի, որ անհանգստանալու և վախենալու էր, այդ դեպքում նրանից օգուտ չէր լինի:

- Չարրի՛, քեզանից լավ ո՞ւմ էի գտնելու, - ասաց, - ես էլ ամենահարմար մարդն եմ: Կարող ես ապավինել ինձ:

Նրան նայեցի՝ բարձրահասակ էր, դողդոջուն, աչքերը՝ մշուշոտ, սակայն ոչինչ չասացի:

- Լսի՛ր, Չարրի, մի կուն տուր, ընդամենը մի կուն, - խնդրեց, - վախենում եմ՝ թափ տա:

Տվեցի: Նստած՝ մութն ընկնելուն էինք սպասում: Գեղեցիկ մայրամուտ էր, դուրեկան, մեղմ զեփյուռ էր խաղում, և երբ արևն արդեն սկսեց անհետանալ, միացրեցի շարժիչն ու նավը դանդաղ դեպի ափը շրջեցի:

**Ս**թության մեջ կանգ առանք ափից մոտ մեկ մղոն հեռավորության վրա: Արևը մայր մտնելուն պես հոսանքն ուժգնացել էր, նկատեցի, որ փոխվել էր նաև հոսանքի ուղղությունը: Քիչ հեռվում, արևմուտքում նշմարվում էին Մորրոյի փարոսն ու Չավանայի գիշերային հրացուլը, ուղիղ մեր դիմաց Ռինկոնի ու Բարակոայի լույսերն էին: Մինչև Բակուրանաոն անցնելը և Կոհիմարին մոտենալը նավը վարում էի հոսանքին հակառակ: Չետո սկսեցի լողալ հոսանքի ուղղությամբ: Մութն արդեն խտացել էր, սակայն հեշտությանբ էի կողմնորոշվում: Նավի բոլոր լույսերն անջատել էի:

- Ի՞նչ ենք անելու, Չարրի, - հարցրեց Էդդին: Վախը կրկին գլուխ էր բարձրացնում:

- Ի՞նչ ես կարծում:

- Չգիտեմ, - պատասխանեց, - ինձ վախեցնում ես:

Կարծես, մորից սկսում էր ցնցվել և երբ մոտեցավ, զգացի, որ շնչակտուր էր լինում:

- Ժամը քանի՞սն է:

- Չիմա իջնեմ՝ նայեմ, - ասաց: Վերադարձավ՝ ինն անց կես էր:

- Քաղցած ես, - հարցրեցի:

- Ոչ, - պատասխանեց, - հո գիտես, որ այսպես չոր ու ցամաք ուտել չեմ կարող, Չարրի:

- Լավ, - ասացի, - մի կուն էլ արա:

Երբ խմեց, հետաքրքրվեցի, թե ինչպես էր զգում: Ասաց, որ արդեն լավ էր:

- Քիչ հետո էլի կտամ, - ասացի, - գիտեմ, որ եթե չխմես, քաջությունը լրիվ կկորցնես: Մոտներս էլ խմելու բան քիչ կա: Այնպես որ՝ շատ մի՛ ոգևորվիր:

- Ավելի լավ է բացատրես, թե ինչ է կատարվում, - ասաց Էդդին:

- Լսի՛ր, -խոսեցի մթության միջից, - Բակուրանաո ենք գնում, տասներկու չինացի ենք վերցնելու: Չենց որ նշան անեմ, դեկանիվը ձեռքը կառնես և ուշադիր ինձ կլսես: Դրանց կբարձենք ու կփակենք նավախցում: Չիմա զնա, քթամասի դռնակը ծածկիր:

Տեղից վեր կացավ, մթության մեջ պարզորոշ գծագրվեց նրա երկարուկ ստվերը: Վերադարձավ և ասաց.

- Չարրի, հիմա մի կուն կարելի՞ է:

- Ոչ, - պատասխանեցի, - ուզում եմ, որ ոգիդ բարձրանա: Չեմ ուզում, որ քեզ կորցնես:

- Ես վստահելի մարդ եմ, Հարրի: Այ, կտեսնես:

- Հարբեցող ես, - ասացի: - Լսի՛ր: Մի չինացի է դրանց բերելու: Հենց որ եկավ, փող է տալու: Երբ բեռները վերջացնենք, էլի է տալու: Հենց տեսար, որ երկրորդ անգամ է փող տալիս, շարժիչը գործի կզգես ու ծով դուրս կգաս: Եվ ուշադրություն չդարձնես, թե ինչ է կատարվում: Ինչ էլ լինի՝ լրիվ ընթացքով առաջ: Հասկացա՞ր:

- Հա:

- Երբ արդեն ճամփին կլինենք, և չինացիներից որևէ մեկը կփորձի նավախցից դուրս պրծնել կամ գլուխը դռնակից կհանի, անմիջապես կվերցնես օդածիզն ու հետ կիրես: Օդածիզի հետ վարվել գիտե՞ս:

- Ոչ: Ցույց տուր, ինչ պետք է անեմ:

- Միննույն է՝ չես հիշի: Լավ, իսկ «Վինչեսթերից» գլուխ կհանե՞ս:

- Չգանը քաշում ու կրակում ես, չէ՞:

- Ճիշտ է, - ասացի, - մենակ տես, հա, նավի կմախքը չծակես:

- Ավելի լավ է՝ մի քիչ էլ տաս, - ասաց եղդին:

- Լավ, մի կում:

Թույլ տվեցի՝ մի կարգին կում արեց: Գիտեի, որ միննույն է, չէր հարբելու, խմածը վախից լուծվելու-գնալու էր: Չնայած ամեն կումը որոշ ժամանակ ազդելու էր: Եղդին խմեց հասանելիքն ու, կարծես ուրախանալով, ասաց.

- Ուրեմն, հիմա էլ չինացի ենք անցկացնելու: Տեր Աստված, միշտ ասում էի, որ երբ շան օրն ընկնեն, չինացի եմ անցկացնելու:

- Բայց ոնց որ թե մինչև հիմա շան օրը չես ընկել, հը՞, - ասացի: Ամեն դեպքում, զարմանալի տղա է:

Մինչև տասն անց կեսը երեք անգամ էլ թույլ տվեցի կում անել՝ ի պետս քաջության: Նրան նայելով՝ զվարճանում էի ու մտքերս ցրում: Չէի նախատեսել, որ այսքան երկար էի սպասելու: Հաշվարկել էի, հենց մութն ընկներ՝ շարժվելու էի, այնքան էի հեռանալու, որ լուսավորվող գոտուց դուրս հայտնվեի և ափի երկայնքով հասնեի Կոհիմար:

Տասնմեկի մոտ էր, հրվանդանին զույգ կրակ նկատեցի: Մի քիչ էլ սպասեցի և սկսեցի դանդաղ շարժվել դեպի ափը: Բակուրանառն փոքրիկ ծովածոց է, այստեղ նախկինում ավազաբարձման նավամատույց է եղել: Փոքրիկ գետակ էլ կա, երբ անձրևաջրերը լվանումբացում են գետաբերանը, ծովն է լցվում: Իսկ ձմռանը հյուսիսային

քամիները քշում են ավազն ու փակում գետի բոլոր ելքերը: Ժամանակին ձկնորսական նավերը գետն էին մտնում և գուռավա էին բարձում, կողքին մի փոքրիկ քաղաք էլ կար: Բայց փոքրիկն ավերել է, և այսօր մեն-մի կանգուն տնակ է մնացել, որ gallego-ներն են կառուցել: Քանդված հյուղակների մնացորդներից՝ որպես հավաքատեղ, ուր կիրակի օրերը Հավանայից մարդիկ գալիս են լողանալու և ժամանակ անցկացնելու: Մի տնակ էլ կա, լիազորն է բնակվում, բայց ափից բավական հեռու է:

Նման վայրերում, ափի երկայնքով մեկ, կառավարությունն իր լիազոր ներկայացուցիչն ուներ, սակայն վստահ էի, որ չինացին նրա հետ պայմանավորվել և հենց նրա նավակն էլ վերցրել էր: Երբ ավելի մոտեցանք, զգացի ծովախաղողի հոտն ու ափին աճող թփերից փչող քաղցր բույրը:

- Անցի՛ր նավախելի կողմը, - կարգադրեցի Էդդիին:

- Այստեղ խանգարող բան չկա, - ասաց: - Խուփերը մյուս կողմում են, ծոցի մուտքի մոտ:

Դե, մի ժամանակ կարգին նավաստի է եղել:

- Ընթացքին հետևիր, - ասացի՝ նավն ուղղելով այն կողմը, որտեղ մեզ կարող էին նկատել: Ալեբախություն չկար, շարժիչի ծայրը նույնպես կլսվեր: Չէի ուզում սպասել, առանց իմանալու՝ մեզ տեսել էին, թե՞ ոչ, դրա համար էլ միանգամից երկու կողային լապտերները միացրեցի՝ կարծիրն ու կանաչը, հետո անմիջապես անջատեցի: Ապա նավը շրջեցի, մի փոքր հետ քշեցի, կանգ առա հենց ծովածոցի մուտքի մոտ ու շարժիչը միացրած թողեցի: Ափին մոտ էինք, նավը քիչ էր ճոճվում:

- Այստեղ արի, - ծայնեցի Էդդիին ու մի լիքը բաժակ լցրեցի:

- Չգանը պետք է շո՞ւտ քաշեմ, - շշմջաց: Այդ պահին նստած էր դեկանիվի դիմաց, մեկնեցի ձեռքս, երկու պատյանն էլ արծակեցի ու հրացանների կոթերը դուրս քաշեցի:

- Ճիշտ այդպես:

- Ուխա՛յ, - հրճվեց:

Չարմանալ կարելի էր, թե խմիչքն ինչպես էր ազդում, և՛ ինչ արագությամբ:

Կանգնած էինք, առափնյա թփերի արանքից նշմարվում էր լիազորի տան վառվող լույսը: Մի պահ հրվանդանի կրակները կորան տեսադաշտից, ապա կրակներից մեկը հայտնվեց հրվանդանի մյուս կողմում: Հավանաբար, մեկը հանգցրել էին:

Քիչ անց նավակ նկատեցի, որ ծովախորշից դեպի մեզ էր շարժվում, թիավարողը մի հոգի էր, խելաթիով: Անմիջապես գլխի ընկա,

82 (73

Z-50

ԵՐԱՆԻ ԳԵՄԱՆԻԱՆԵՐ

Գրքի համարը և հեղինակը: Գրքի անունը:

ERNEST HEMINGWAY

TO HAVE AND HAVE NOT (A NOVEL)  
Translated from English by Dmitri Nabokov

Գրքի անունը և հեղինակը: Գրքի անունը:

# ՈՒՆԵՆԱԿ ԵՎ ԶՈՒՆԵՆԱԿ

Գրքի համարը և հեղինակը: Գրքի անունը:

Առաջին հրատարակումը 1925 թվականին Երևանում  
հրատարակել է «Գեղարվեստ» հրատարակչությունը:  
Գրքի համարը և հեղինակը: Գրքի անունը:

Գրքի համարը և հեղինակը: Գրքի անունը:

Երևան  
«Օհիտնակ» 2006թ.

քանի որ անվերջ օրորվում էր: Պարզ էր, թին մեծ էր: Ահագին ուրախացա: Եթե խելաթի է, ուրեմն թիավարողը մեկն է:

Մեզ հավասարվեցին:

- Բարի երեկո, կապիտան, - ասաց պարոն Սինգը:

- Մյուս կողմն անցեք ու կիպ մոտեցեք նավակողին, - ասացի:

Թիավարողին ինչ-որ բան ասաց, բայց սա չկարողացավ խելաթիով հետընթաց անել, որսացի եզրագերանն ու նավակը դեպի մեր նավը քաշեցի: Նավակում ութ հոգի էր: Վեց չինացի, պարոն Սինգն ու թիավարողը: Երբ կռացա, որպեսզի նավակը քաշեի, սպասում էի, որ հարվածելու էին գլխիս: Իզուր էի անհանգստանում՝ ոչինչ չպատահեց: Մեջքս ուղղեցի և պարոն Սինգին հնարավորություն տվեցի բռնվել նավակողից:

- Ապա մի ցույց տվեք, տեսնե՛մ, - ասացի:

Կապոցն ինձ մեկնեց, վերցրեցի, անցա դեկանիվի մոտ, որտեղ էդդին էր, ու վառեցի կողմնացույցի լույսը: Ուշադիր գննեցի: Կարծես, ամեն ինչ կարգին էր, լույսն անջատեցի: Էդդին դողում էր:

- Լցրո՛ւ, քեզ համար, - ասացի: Անմիջապես հանեց շիշն ու բացեց:

Վերադարձա դեպի նավակողը:

- Լավ, - ասացի, - վեց հոգի թող բարձրանան:

Պարոն Սինգն ու թիավարողը հետևում էին, որ նավակը հանկարծ չզարկվեր մեր նավին, որովհետև նույնիսկ նման թույլ ալեկոծության ժամանակ դրա հավանականությունը մեծ էր: Լսեցի, ինչպես պարոն Սինգը չինարեն ինչ-որ բան ասաց, և նավակում գտնվող բոլոր չինացիները սկսեցին նավը բարձրանալ:

- Մեկական, - ասացի:

Էլի ինչ-որ բան ասաց, և չինացիները մեկը մյուսի հետևից արագ-արագ բարձրացան: Տարբեր հասակի ու չափի էին:

- Դեպի նավախուցը տար, - հրահանգեցի էդդիին:

- Այս կողմը, պարոններ, - ասաց էդդին: Սատանան տանի, զգացի, որ վերջին կումը չափազանց հիմնավոր էր եղել:

- Փակի՛ր դուռը, - ասացի, երբ բոլորն արդեն ներսում էին:

- Լսում եմ, պարոն, - պատասխանեց էդդին:

- Հիմա գնամ՝ մնացածին բերեմ, - ասաց պարոն Սինգը:

- Լավ, - պատասխանեցի:

Հրեցի նավակն, ու կուբացին սկսեց թիավարել:

- Լսի՛ր, - դիմեցի էդդիին, - շիշը հանգիստ թող: Որքան պետք է, արդեն քաշ ես:

- Լսում եմ, կապիտան, - պատասխանեց:

- Քե՞զ ինչ եղավ:

- Այս գործը դուրս շատ եկավ, - ասաց էդդին, - ուրեմն, ասում ես, ձգանն այսպե՞ս ենք քաշում:

- Ա՛յ դու հարբեցող, - ասացի, - տուր մի քիչ էլ ես խմեմ:

- Էլ չկա, - պատասխանեց էդդին, - մեղավոր եմ, կապիտան:

- Լսի՛ր: Հիմա ուշադիր կհետևես, հենց որ փողը ձեռքս տա, անմիջապես շարժիչը կմիացնես:

- Լսո՛ւմ եմ, կապիտան, - ասաց էդդին:

Կռացա, վերցրեցի մյուս շիշը, գտա խցանահանն ու բացեցի: Մի մեծ կում արեցի և, վերադառնալով նավախել, խցանը տեղը խցկեցի ու շիշը թաքցրեցի ջրով լիքը հյուսապատ երկու շշերի հետևում: - Պարոն Սինգը գալիս է, - ասացի էդդիին:

- Ճիշտ այդպես, պարոն:

Նավակը մեր կողմն էր լողում: Երբ նավակողին մոտեցան՝ սպասեցի, մինչև մեր նավից կբռնվեին: Պարոն Սինգը կախվեց նավախելի թեքատից, որի վրայով, սովորաբար, մեծ ձկներն էինք վերև քաշում:

- Թող բարձրանան, - ասացի, - մեկական:

Վեց չինացի էլ բարձրացավ, այս անգամ բոլորն էլ ընտրովի էին՝ նույն հասակի:

- Բա՛ց արա և ներքև ուղեկցիր, - կարգադրեցի էդդիին:

- Լսո՛ւմ եմ, պարոն:

- Փակի՛ր նավախուցը:

- Լսո՛ւմ եմ, պարոն:

Նկատեցի, որ էդդին արդեն դեկանիվի մոտ էր:

- Դե, ինչ, պարոն Սինգ, - ասացի, - մնացածը տեսնենք:

Ձեռքը գրպանը տարավ և փողն ինձ մեկնեց: Արագ ճանկեցի թեղ փողը, թեղ մեկնված ձեռքը, և երբ նա ձգվեց, մյուս ձեռքով բռնեցի կոկորդը: Ջգացի, որ նավը ցնցվեց ու փրփուրներ թողնելով առաջ մղվեց, և չնայած ամբողջ ուշադրությունս պարոն Սինգի կողմն էր, նկատեցի, որ մինչ նրա ջրածգումների ու կծկումների ուղեկցությամբ հեռանում էինք, կուբացին՝ թիակը ձեռքին, կանգնել էր նավակի հետևանասում: Իսկ մեր չինացին թփրտում էր եռաժանիով խփված դելֆինի նման:

Ուրրեցի թևն ու տարա մեջքի հետևը, բայց երևի շատ ուժեղ էի ձգել, քանզի զգացի, որ կարող էր դուրս ընկնել: Երբ թևը թուլացավ, պարոն Սինգը ծիծաղելի, խուլ ծղրտոց հանեց, թափով առաջ նետվեց ու կծեց ուսս, ես, իհարկե, կոկորդը բաց չթողեցի: Բայց երբ համոզվեցի, որ թևն իսկապես դուրս էր ընկել, թողեցի ուժասպառ թևն ու երկու ձեռքով ամուր բռնեցի կոկորդը: Իսկ պարոն Սինգը, կար-

ծես, անպայման պետք է ձկան նման այս ու այն կողմ զարկվեր, թևը՝ կախ: Ի վերջո, ծնկի բերեցի ու երկու բութ մատով ամուր սեղմեցի կոկորդը, այնքան, որ ճթթաց: Հավատացեք, ճթթոցը լավ էլ լսվում է:

Մի-երկու րոպե այդպես պահեցի, հետո պառկացրի նավախելին: Թանկարժեք շորերը հագին անշարժ պառկել էր մեջքի վրա՝ ոտքերը ստորին տախտակամածից կախված: Այդպես էլ թողեցի:

Հատակից հավաքեցի փողը, վերև բարձրացա, միացրեցի կողմնացույցի լույսն ու հաշվեցի: Հետո ձեռքս առա դեկանիվն ու էդդիին կարգադրեցի նավախելից գտնել-բերել երկաթի այն կտորները, որ խարիսխի փոխարեն էինք օգտագործում, երբ ծուկ էինք որսում ծանծաղուտներում՝ կամ այնտեղ, ուր հատակը քարքարոտ էր, և խարիսխը կարող էր կոտրվել:

- Չեմ գտնում, - ձայնեց էդդին: Վախեցնում էր պարոն Սինգի մոտերքում հայտնվել:

- Արի՛, վերցրու դեկը, - ասացի, - ծովի ուղղությամբ պահիր:

Ներքևում, տախտակամածի տակ, իրարանցում սկսվեց, բայց այնտեղ գտնվողներն ինձ բոլորովին չէին անհանգստացնում:

Գտա, ինչ փնտրում էի՝ Տորտուգասի ածխաբեռնման հին նավահանգստից մնացած երկաթները, երկու մեծ կտոր ընտրեցի ու պարանով ամուր կապեցի պարոն Սինգի ոտնակոճերից: Երբ ափից մոտ երկու մղոն հեռացել էինք, նրան նավից դուրս նետեցի: Թեքատի վրայով սահելով ջուրն ընկավ: Նույնիսկ գրպանները չէի շոշափել: Չէի ուզում ձեռք դիպցնել:

Տախտակամածին արյան հետքեր էին, քիթ-բերանից էր հոսել, դույլով ջուր քաշեցի, չնայած ընթացքն այնքան արագ էր, որ քիչ էր մնում նավից դուրս թռչելի: Նավախելի տակից հանեցի շվաբրն ու լավ մաքրեցի հատակը:

- Դանդաղացրո՛ւ, - հրահանգեցի էդդիին:

- Բա որ հանկարծ դուրս լողա՞, - հարցրեց էդդին:

- Այնտեղ, ուր գցեցի, խորությունը յոթ հարյուր սաժեն է, - ասացի: - Այդքանը դեռ պետք է իջնի: Երկար ճանապարհ է, եղբայրս: Մինչև չուռչի՝ դուրս չի գա, իսկ մինչ այդ շարժվելու է հոսանքի ուղղությամբ և ձկների համար յուղալի պատառ է դառնալու: Պարոն Սինգի համար մի՛ անհանգստանա:

- Քեզ ի՞նչ էր արել, - հարցրեց էդդին:

- Ոչ մի բան, - ասացի: - Այսքան մարդու հետ գործ եմ ունեցել, արա հետ ամենահեշտն էր: Դրա համար էլ անընդհատ մտածում էի, որ ինչ-որ բան այն չէր:

- Ինչո՞ւ սպանեցիր:

- Որ այն տասներկուսին չսպանեմ, - պատասխանեցի:

- Հարրի, - ասաց, - խմելու բան տուր, թե չէ զգում եմ, որ դողս բռնում է:

Հենց տեսա, որ գլուխը կախ է ընկել, սիրտս սկսեց խառնել:

Շիշը նրան մեկնեցի:

- Չիմացիների՞ն ինչ ենք անելու, - հարցրեց էդդին:

- Որքան հնարավոր է, շուտ պետք է բեռնաթափենք, - պատասխանեցի, - քանի դեռ նավախուցն ամբողջովին չեն ապականել:

- Որտե՞ղ ենք իջեցնելու:

- Կտանենք ուղիղ դեպի ծանծաղուտները, - ասացի:

- Հիմա շրջվե՞մ:

- Շրջվի՛ր, - ասացի, - միայն՝ զգույշ:

Դանդաղ լողում էինք ստորջրյա խութերի վրայով, մինչև ափամերձ ծանծաղուտը սկսեց սպիտակին տալ մթության մեջ: Խութերը բավական խորն էին, հատակն ավազոտ էր ու թեքությունով մինչև ափն էր հասնում:

- Անցի՛ր քթամասն ու խորությունն ասա:

Սկսեց եռաժանիով չափել խորությունն ու ամեն անգամ նշան անել, որ առաջ շարժվի: Հետո վերադարձավ ու նշան տվեց, որ կանգնեմ: Միացրեցի ետընթացքը:

- Մոտ հինգ ոտնաչափ է:

- Խարիսխ ենք զցում, - ասացի, - եթե հանկարծ չկարողանանք տեղից պոկվել, ստիպված պետք է պարանը կտրենք:

Էդդին սկսեց ճոպանը դանդաղ բաց թողնել, և երբ խարիսխն ի վերջո հատակին հասավ, հանգույց արեց: Նավը տարուբերվում էր:

- Գիտես, հատակը լրիվ ավազ է, - ասաց:

- Ջրի խորությունն այստեղ որքա՞ն կլինի:

- Հինգ ոտնաչափից ոչ ավելի:

- «Վինչեսթերը» վերցրու, - ասացի, - և զգույշ եղիր:

- Մի կում էլ տուր, - խնդրեց: Լավ նվաղել էր:

Շիշը մեկնեցի ու հանեցի օդածիգը: Բացեցի նավախից դուռն ու ասացի.

- Դո՛ւրս եկեք:

Շարժում չեղավ:

Հետո չիմացիներից մեկը գլուխը դուրս հանեց, տեսավ էդդիին՝ հրացանը ձեռքին ու հետ փախավ:

- Դո՛ւրս եկեք, - ասացի, - ձեզ ձեռք չենք տա:

Դարձյալ ոչ մի շարժում: Ներսում բվվում են չինարեն:

- Է՛յ, շո՛ւտ արեք, դո՛ւրս եկեք, - բղավեց եղդին: Սատանան տանի, հաստատ շիշը մոտն էր:

- Շիշը տեղը դիր, - ասացի, - թե չէ քեզ էլ դուրս կնետեն:

- Դո՛ւրս եկեք, - դիմեցի չինացիներին, - թե չէ կկրակեն:

Մեկն զգուշությամբ ծիկրակեց դռան տակից, հավանաբար նկատեց, որ ափը մոտ էր ու սկսեց չիսկչիսկացնել աստամները:

- Դո՛ւրս եկեք, - կրկնեցի, - կրակում են:

Սկսեցին դուրս սողալ:

Անկեղծ ասած, չգիտեմ, մարդն ինչ աստիճանի ստոր պետք է լինի, որ տասներկու դժբախտ չինացի սատկացնի, գրագ կգամ, դա ոչ միայն տհաճություն է, այլև՝ գլխացավանք:

Դուրս եկան՝ սարսափած, անզեն, ուղիղ տասներկու հոգի: Դետ ընկրկեցի դեպի նավախելը՝ ամուր բռնելով օդածիզը:

- Ջո՛ւրը թռեք, - գոռացի, - ձեզ չի ծածկի:

Ոչ մեկը տեղից չշարժվեց:

- Արագացրե՛ք:

Շարժում չկար:

- Է՛յ, դեղնամուկ առնետակերներ, - գոռաց եղդին, - ջո՛ւրը թռեք:

- Չա՛յնդ, հարբեցող, - սաստեցի նրան:

- Լողանալ չիմանալ, - ասաց չինացիներից մեկը:

- Լողալ պետք չէ, - ասացի, - խորը չէ:

- Դե շո՛ւտ արեք, ջո՛ւրը թռեք, - շարունակեց եղդին:

- Արի այստեղ, - ասացի նրան, - հրացանը մի ձեռքով բռնիր, մյուսով վերցրու եռաժանին ու դրանց ցույց տուր, թե խորությունը որքան է:

Ջուրն իջեցրեց եռաժանին, հետո հանեց ու ցույց տվեց, թե մինչև ուր էր թրջվել:

- Պետք չէ՞ լողալ, - հարցրեց նույն չինացին:

- Ոչ:

- Եի՞շտ:

- Եի՞շտ:

- Մենք որտե՞ղ:

- Կուբան է:

- Դու խաբել, - ասաց, ոտքերն անցկացրեց նավակողի վրայով, կախվեց ու թռավ: Գլուխն ակնթարթորեն անցավ ջրի տակ, հետո հայտնվեց մակերեսին. ջուրը մինչև կզակն էր հասնում:

- Դու խաբեբա, - կրկնում էր, - անպետք խաբեբա:

Կատաղած էր և, կարծես, վախը մոռացել էր: Չինարեն ինչ-որ բան ասաց, մյուսները նույնպես ջուրը լցվեցին:

- Ամեն ինչ կարգին է, - ասաց եղդին, - խարխախը բարձրացրու:

Ծով դուրս եկանք, լուսինը սահում էր երկնականաբով, հեռվում երևում էին մինչև կզակները ջրի մեջ սուզված, դեպի ափը շարժվող չինացիների գլուխները, սպիտակին էին տալիս ծանծաղուտն ու ծփացող թփերը:

Շրջանցեցինք խութերը, մի անգամ էլ հետ նայեցի հորիզոնում գծագրվող ծանծաղուտին ու բլուրներին, ապա ուղղություն վերցրեցի դեպի Քի Ուեսթ:

- Դե, հիմա կարող ես քնել, - ասացի եղդին: - Չէ, սպասիր, նախ ներքև իջիր, բոլոր լուսանցույցները բաց արա, լավ օդափոխիր նավախուցը, համ էլ յողը բեր:

- Ի՞նչ է պատահել, - սրվակն ինձ մեկնելով՝ հարցրեց:

- Մատս եմ կտրել:

- Ուզո՞ւմ ես, դեկը բռնեմ:

- Գնա, քնի՛ր, - ասացի, - կարթնացնեմ:

Մեկնվեց վառելիքի բաքի վերևում, պատի վրա ամրացված մահճիկին և մի քանի թոպեից արդեն քնած էր:

## ԳԼՈՒԽ ԶԻՆԳԵՐՈՐԴ

Ղեկանիվը ծնկով էի բռնել, արծակել էի վերնաշապիկս և զննում էի պարոն Սինգի կծած տեղը: Վերքը խորն էր, յողեցի, հետո մատել ու մտածում էի՝ կարո՞ղ է չինացու կծածը թունավոր լինել, և ականջ էի դնում շարժիչի համաչափ, փափուկ տկտկոցին ու նավակողերին գարնավող ջրի ճողփյունին: Ի վերջո, որոշեցի՝ սատանան տանի, կծոցը վարակիչ չի կարող լինել: Պարոն Սինգի նմանները, հավանաբար, օրը երկու-երեք անգամ խոզանակով մաքրում են ատամները: Ա՛յ քեզ պարոն Սինգ: Ճիշտն ասած, այնքան էլ գործնական մարդ չէր: Գուցե՝ գործնակա՞ն էր: Կամ էլ՝ պարզապես վստահում էր ինձ: Անկեղծորեն խոստովանում եմ, այդպես էլ նրանից զուլխ չհանեցի:

Ուրեմն, հիմա ամեն ինչ պարզ է, բացի՝ էդդիից: Այս հարբեցողը, հենց որ գլուխը տաքանա, բերանբացություն է անելու: Ղեկանիվի մոտ մտած նրան էի նայում ու մտածում՝ սատանան տանի, սրանից ոչ կենդանի ժամանակ օգուտ կա, ոչ էլ՝ մեռած, համ էլ՝ մաքուր դուրս կգամ: Այսօր, երբ տեսա, որ նավի վրա էր, որոշեցի վերջը տալ, բայց հետո, երբ ամեն ինչ բարեհաջող ընթացավ, փոշմանեցի: Բայց հիմա, որ տեսնում եմ՝ պառկել է այնտեղ, գայթակղությունը նորից զուլխ է բարձրացնում: Համ էլ մտածում եմ՝ չարժի ամեն ինչ փչացնել այնպիսի արարքի պատճառով, որի համար հետո զղջալու ես: Հիշեցի, որ նավամատյանում նրա մասին չէր նշված, ուրեմն՝ ստիպված էի լինելու տուգանք վճարել, այնպես որ, չգիտեի, ինչպես վարվել:

Ժամանակ շատ ունեի և հանգիստ կարող էի մտմտալ, այնպես որ նավի ուղղությունը չէի փոխում ու մերթ ընդ մերթ կում էի անում նրա բերած շից: Մեջը համարյա բան չէր մնացել, լրիվ դատարկեցի, հետո վերջին շիշը բաց արեցի, և, ազնիվ խոսք, անչափ հաճելի էր ղեկանիվի մոտ, գիշերն էլ նպաստավոր էր ծովն անցնելու համար: Ի վերջո, հաջողված ուղերթ էր, չնայած պահեր եղան, որ թվում էր, թե վերջը վատ էր լինելու:

Երբ լույսը սկսեց բացվել, էդդին արթնացավ: Ասաց, որ ահավոր վատ է զգում:

- Ղեկը վերցրո՞ւ, - ասացի, - տեսնեմ, շուրջներս ինչ կա-չկա:

Անցա նավախելն ու մի դույլ ջուր շաղ տվեցի: Մաքուր-մաքուր էր: Հետո խոզանակով քերեցի նավակողի եզրը, դատարկեցի հրացաններն ու թաքցրեցի ներքևում: Բայց ատրճանակը գոտուցս չհա-

նեցի: Ներքևում ամեն ինչ կարգին էր, մաքուր և թարմ, հոտ բոլորովին չկար: Միայն մահճակալներից մեկին էր լուսանցույցից ջուր ցայտել, կողպեցի բոլոր լուսանցույցները: Աշխարհի ոչ մի մաքսավոր այստեղ այլևս չինացու հոտ չի առնի:

Նկատելով նավահանգստային գործակալի տված գրությունները, որ նավ վերադառնալուն պես ցանցի մեջ էի դրել և տեղավորել էի ելունուտի շրջանակված թույլտվության տակ, դուրս քաշեցի ու սկսեցի ուսումնասիրել: Հետո շարժվեցի դեպի տախտակամածը:

- Լսի՛ր, - ասացի, - ինչպե՞ս ես նավամատյանում հայտնվել:

- Գործակալին հանդիպեցի, հյուպատոսություն էր գնում, ասացի, որ ես էլ եմ մեկնում:

- Աստված պահպանում է հարբեցողներին, - ասացի և, ատրճանակը գոտուցս հանելով, թաքցրեցի ներքևում:

Սուրճ եփեցի, հետո վերև բարձրացա ու ղեկանիվը ծեռքս առա:

- Ներքևում սուրճ կա, - ասացի:

- Սուրճը չի փրկի, եղբայրս: - Գիտեք, խղճացի նրան: Իսկապես, լավ չէր զգում:

Ժամը իննին մեր դիմաց հայտնվեց Սենդի Քիի փարոսը: Մինչ այդ արդեն դեպի ծովածոցն ուղևորվող լցանավեր էինք նկատել:

- Երկու ժամից տեղ կհասնենք, - ասացի: - Քեզ օրը չորս դուլար եմ վճարելու, հաշվենք, թե Ջոնսընը մեզ չի «քցել»:

- Այս գիշեր որքա՞ն աշխատեցիր, - հարցրեց:

- Ընդամենը վեց հարյուր, - պատասխանեցի:

Չգիտեմ, հավատաց, թե՛ ոչ:

- Դրանից բաժին չունե՞մ:

- Քո բաժինը, - պատասխանեցի, - այնքան է, որքան ասացի, և եթե այս գիշերվա մասին թեկուզ մի անգամ բերանդ բացես, կիմաման ու հերդ կանի՞ծեմ:

- Հարրի, հո գիտես, որ բացբերան չեմ:

- Հարբեցող ես: Բայց կապ չունի, ինչքան էլ հարբած լինես, եթե փորձեցիր բերանդ շաղ տալ, խոսքս՝ խոսք է:

- Ես վստահելի եմ, - ասաց, - ինչո՞ւ ես ինձ հետ այդ տոնով խոսում:

- Խմիչքը որ մի քիչ թունդ եղավ, նվիրվածությունիցդ բան չի մնա, - պատասխանեցի: Չնայած այլևս չէի անհանգստանում՝ ո՞վ էր նրան հավատալու: Պարոն Սինգը չէր բողոքելու: Չինացիները՝ նույնպես: Թիավարողի վեջը չէր: Ջոռով կրակը չէր ընկնելու: Միայն էդդին էր ուշ, թե շուտ դուրս տալու, բայց հարբեցողին ո՞վ կհավատար:

Համ էլ՝ ո՞վ կարող էր հաստատել: Այ, լուրջ խոսակցություն կլիներ,



եթե սխալ գործեի, և հետագայում Էդդիի անունը տեսնեին նավամատյանում: Այ, այս հարցում բախտս բերեց: Իհարկե, կարող էի ասել, թե նավից դուրս էր ընկել, բայց խոսակցություն անպայման կլիներ: Էդդիի բախտն էլ բերեց: Մի խոսքով, բախտներս ահագին բերել էր:

Մինչ այդ արդեն կտրել-անցել էինք հոսանքը, երկնագույն ջուրը կանաչել ու վճիտ էր դարձել, առջևում՝ արևելյան և արևմտյան Չոր ժայռերին զծագրվում էին ցցագերանները, նշմարվում էին Քի Ուեսթի ռադիոաշտարակն ու ցածրիկ տների միջից վեր խոյացող «Լա-Կոնչա» հյուրանոցը, երևում էր աղբանոցի վրա բարձրացած ծխի հսկայական ամպը: Հիմա արդեն Սենդի Քիի փարոսը մոտ էր, ժայռի ստորոտում կարելի էր տեսնել նավակայանն ու փոքրիկ նավաշինարանը, ուրեմն, ընդամենը քառասուն րոպեի ճանապարհ էր մնացել, հաճելի էր տուն վերադառնալ, նաև՝ գիտակցել, որ ամբողջ ամառ ուտելու բան ես ունենալու:

- Էդդի, ի՞նչ կարծիքի ես, մի բան չխմե՞՞նք, - հարցրեցի:

- Հարրի, միշտ համոզված եմ եղել, որ ընկերս ես:

Երեկոյան բազմել էի ճաշասենյակում, սիգար էի ծխում, ջրով բացած վիսկի էի խմում ու ռադիոյով Գրեյսի Ալենին էի ունկնդրում: Աղջիկները կինո էին գնացել, լավ էի զգում, քունս տանում էր: Դուռը թակեցին, կինս՝ Մերին, տեղից վեր կացավ և գնաց դուռը բացելու: Վերադարձավ ու ասաց.

- Այն հարբեցողն է, Էդդի Մարշալը: Ուզում է քեզ տեսնել:

- Ասա թող կորչի, թե չէ, որ վեր կացա, վզակոթին տալով դուրս եմ չարտելու, - ասացի:

Մերին մի անգամ էլ գնաց, հետո եկավ ու տեղը նստեց: Պատուհանից, որի գոգին էի դրել ոտքերս, տեսա, թե ինչպես Էդդին անցավ փողոցի աղեղնավոր լամպի տակով՝ մի ուրիշ հարբեցողի հետևը զցած, որին չգիտես որտեղից էր ծարել, երկուսն էլ օրորվում էին, և լույսի մեջ նրանց ստվերներն ավելի ուժգին էին ճոճվում:

- Դժբախտ հարբեցողներ, - ասաց Մերին: - Դրանց միշտ խղճացել եմ:


- Այս մեկը բախտավոր հարբեցող է:

- Բախտավոր հարբեցող չի լինում, - պատասխանեց Մերին, - ինքը լավ գիտես:

- Ճիշտ է, - ասացի, - թերևս, չի լինում:

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

## ՀԱՐՐԻ ՄՈՐԳԱՆ



## ՉԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

**Ն** եղուցն անցան գիշերով, հյուսիս-արևմուտքից ուժգին քամի էր փչում: Երբ արևն արդեն երկնակամարում էր, նկատեց ծովածոցից դուրս լողացող նավթի լցանավը, որ այնքան բարձր էր ու առավոտյան պաղ արևի շողերի մեջ այնպես ճերմակ, կարծես ծովից դուրս ցցված բարձրահարկ շինություն լիներ: Շրջվեց դեպի նեգրը.

- Սատանան տանի, որտե՞ղ ենք:

Նեգրը տեղից բարձրացավ ու շուրջբոլորը նայեց.

- Մայամի կողմերում նման բան ինչ-որ չեմ հիշում:

- Լավ էլ գիտես, որ Մայամի չենք գնում, - ասաց:

- Ես էլ էդ եմ ասում, Ֆլորիդյան կղզիներում նման չենք չեմ տեսել:

- Ուղղությունը միշտ դեպի Սենդ Քի ենք բռնել:

- Ուրեմն, արդեն պետք է երևար: Կամ էլ՝ գոնե պետք է նշմարվեին Ամերիկայի առափնյա ծանծաղուտները:

Քիչ անց գլխի ընկավ, որ հորիզոնում ոչ թե չենք էր, այլ նավթի լցանավ, և մեկ ժամ չանցած երևաց Սենդ Քին՝ թեթև, ծիգ ու արևակեզ, որ ծովից դուրս էր ցցվել ճիշտ այնտեղ, որտեղ և պետք է լիներ:

- Նավարկելիս պետք է վստահ լինես, - ասաց նեգրին:

- Ես միշտ էլ վստահ եմ, - պատասխանեց նեգրը, - բայց այն ամենից հետո, ինչ կատարվեց այս ուղերթի ժամանակ, վստահությունս լրիվ կորցրել եմ:

- Ո՞տքդ ինչպես է:

- Անվերջ ցավում է:

- Ոչինչ, - ասաց, - պետք է մաքուր պահես ու վիրակապը չհանես, ինքն իրեն կապաքինվի:

Այժմ ուղղություն էր վերցրել դեպի հարավ, մի օր դադար էր առնելու և սպասելու էր Ուման Քիի մանգլենիների մեջ, ուր աննկատ կլինեին՝ մինչև նավակն ընդառաջ կգար:

- Մի՛ վախեցիր, կանցնի, - ասաց նեգրին:

- Չգիտեմ, - պատասխանեց նեգրը, - շատ է ցավում:

- Չենք որ տեղ հասնենք, ինչ որ պետք է, կանենք, - ասաց, - այնքան էլ ծանր չես վիրավորվել: Մի՛ անհանգստացիր:

- Ես վիրավոր եմ, - պատասխանեց նեգրը, - կյանքումս երբեք

վիրավոր չեմ եղել: Համ էլ կապ չունի, վերջը մեծ է, թե՛ փոքր, միևնույն է, վտանգավոր է:

- Պարզապես, վախեցած ես:

- Ո՛չ, պարոն: Վիրավոր եմ: Շատ է ցավում: Ամբողջ գիշեր դողացրել եմ:

Նեգրը շարունակում էր փնթփնթալ, հետո շղիմացավ, հանեց վիրակապն ու սկսեց վերջը գննել:

- Հանգի՛ստ թող, - ասաց: Նեգրը պառկել էր նավախցիկի հատակին, շրջապատված խմիչքի՝ ապուխտ հիշեցնող պարկերով: Մի կերպ էր իր համար տեղ ազատել, և նրա ամեն շարժումից պարկերի մեջ կոտրվող ապակու ձայն էր լսվում, ու խմիչքի հոտ էր տարածվում: Չորս կողմը սպիրտի հետքեր էին: Այժմ Հարրին դեկն ուղիղ դեպի Ուման Քի էր պահել: Այն արդեն պարզորոշ գծագրվում էր հորիզոնում:

- Ցավում է, - ասաց նեգրը, - գնալով ավելի շատ է ցավում:

- Ցավալի է, Ուե՛սլի, - ասաց, - սակայն դեկը չեմ կարող բաց թողնել:

- Չեզ համար մարդն ու շունը մեկ եմ, - ասաց նեգրը: Սկսել էր բարկանալ:

Սակայն Հարրին շարունակում էր խղճալ նրան:

- Ցավդ թեթևացնելու եմ, Ուե՛սլի, - ասաց, - առայժմ հանգիստ պառկիր:

- Չեր վեջն էլ չի, թե մարդու հետ ինչ է կատարվում, - շարունակեց նեգրը, - ձեր մեջ մարդկային ոչինչ չկա:

- Ամեն ինչ անելու եմ, - պատասխանեց, - միայն թե հանգիստ պառկիր:

- Ոչ մի բան էլ չեք անելու, - ասաց նեգրը: Հարրի Մորգանը չարձագանքեց, որովհետև հարգում էր նրան, թե չէ նման դեպքում ճիշտը նրան հարվածելն էր, իսկ Հարրին իրեն թույլ չէր տա նեգրին խփել: Սակայն վերջինս չէր լռում:

- Ինչո՞ւ կանգ չառանք, երբ սկսեցին կրակել:

Հարրին չպատասխանեց:

- Թե՛ մարդկային կյանքը խմիչքի բեռից թանկ չէ:

Հարրին ակնդետ դեկին էր նայում:

- Ամմիջապես պետք է կանգ առնեինք, թող բեռը վերցնեին:

- Ո՛չ, - խոսեց Հարրին, - նրանք և՛ բեռը կբռնագրավեին, և՛ նավը, մեզ էլ բանտ կուղարկեին:

- Բանտից չեմ վախենում, - ասաց նեգրը, - վիրավորվե՞լն ինչիս էր:

Հարրին հոգնել էր նրա շատախոսությունից ու սկսել էր նյարդայնանալ:

- Գրողը տանի, ո՞վ է ավելի ծանր վիրավոր, - հարցրեց, - ե՞ս, թե՛ դու:

- Իհարկե՛ դուք, - պատասխանեց նեգրը, - բայց կյանքումս վիրավոր չեմ եղել: Չեմ էլ պատկերացրել, թե կարող եմ վիրավորվել: Ինձ չեն վարձել, որ վիրավորվեմ: Չեմ ուզում վիրավորվել:

- Հանգստացիր, Ուե՛սլի, - ասաց Հարրին, - որ շատ խոսես, ավելի կվատանաս:

Մտտենում էին կղզուն: Նավն արդեն առափնյա ծանծաղուտներում էր, և մինչ Հարրին այն դեպի նեղուցն էր ուղղորդում, արևը կուրացուցիչ փայլում էր ջրի երեսին: Նեգրը ցավից կամ խախտվել էր, կամ էլ՝ էծերն էին եկել, այնպես որ, շարունակում էր դուրս տալ:

- Խմիչքն հիմա տանում են, որ ի՞նչ - ասում էր, - արգելքը հանված է:

Մաքսանենգությունն այլևս ո՞ւմ է պետք: Թող լաստանավով տանեն:

Հարրին դեկի մոտ էր, հայացքը նեղուցից չէր կտրում:

- Մարդիկ ինչո՞ւ չեն կարողանում ազնիվ ու պարկեշտ ապրել և ազնիվ ու պարկեշտ աշխատանքով փող վաստակել:

Հարրին նկատեց, թե ինչպես էր ջուրը ծփում ափի երկայնքով, չնայած կուրացուցիչ արևը թույլ չէր տալիս պարզորոշ զանազանել ափը, ամեն դեպքում շրջեց նավը: Մի ձեռքով կտրուկ պտտեց դեկանիվը, և երբ նեղուցի զույգ ափերն ուղիղ նրա դիմաց հայտնվեցին, նավը դանդաղ ուղղորդեց դեպի մանգլենիների մացառուտը: Մի փոքր հետ տվեց ու երկու շարժիչն էլ անջատեց:

- Կարող եմ խարխսիսը իջեցնել, - ասաց, - բայց հետո հաստատի վիճակի չեմ լինելու բարձրացնել:

- Իսկ ես անգամ շարժվել չեմ կարողանում, - խոսեց նեգրը:

- Իսկապես, հալո՞ հալ չի, - պատասխանեց Հարրին:

Դժվար էր տեղաշարժել, բարձրացնել ու ջուրը նետել փոքրիկ խարխսիսը, բայց մի կերպ գլուխ բերեց ու ճուպանը ձգելով՝ այնքան բաց թողեց, որ նավը երերաց մացառուտներում, և մանգլենու ճյուղերը նավախցից ներս մխրձվեցին: Գրողը տանի, անցավ մտքով, նավախցում հիմա ի՞նչ է կատարվում:

Երեկոյան մաքրել-կապել էր նեգրի վերքը, նեգրն էլ իր ձեռքն էր վիրակապել, սակայն ինքն ամբողջ գիշեր աչք չէր կտրել կողմնացույցից, և երբ լույսը բացվել էր, նոր էր միայն նկատել, որ նեգրն

անշարժ պառկած էր նավախցի հատակին, պարկերի արանքում, մինչ ինքն ակնդետ հետևել էր ալիքներին ու կողմնացույցին և անվերջ Սենդ Քիի փարոսն էր փնտրել, այնպես որ չէր հասցրել շուրջբուրդը կարգին գննել: Իսկ գործերը լավ չէին:

Նեգրը՝ ոտքը ցցած, խցկվել էր պարկերի կույտի մեջ: Գնդակները ութ տեղից ծակել էին նավախցի կմախքը: Հողմապակին ցխված էր: Պատկերացում անգամ չունեի, թե որքան ապրանք էր փչացել, և այնտեղ, ուր նեգրն արյան հետքեր չէր թողել, իր սեփական արյունն էր թափված: Բայց վտանգավորը սպիրտի հոտն էր: Ամեն ինչից սպիրտ էր բուրում: Նավն անշարժացել էր մանգլենիների արանքում, սակայն Հարրին դեռ չէր թոթափել ծովածոճի տհաճ զգացումը, որ ուղեկցել էր նրան ամբողջ գիշեր՝ ծովածոցն անցնելու սկզբից մինչև վերջ:

- Գնամ, սուրճ պատրաստեմ, - ասաց նեգրին, - հետո քեզնով կգբաղվեմ:

- Սուրճ չեմ ուզում:

- Ես եմ ուզում, - պատասխանեց Հարրին: Բայց ներքևում գլուխը սկսեց պտտվել, ամմիջապես տախտակամած վերադարձավ:

- Ստիպված ենք առանց սուրճի յուլա գնալ, - ասաց:

- Ջուր եմ ուզում:

- Հիմա կբերեմ:

Հյուսաշշից մի բաժակ ջուր տվեց նեգրին:

- Կարիք կա՞ր առաջանալ, երբ արդեն կրակում էին:

- Իսկ ի՞նչ կարիք կար կրակել, - պատասխանեց Հարրին:

- Ինձ բժիշկ է պետք:

- Բժիշկն ի՞նչ է անելու, որ ես արդեն չեմ արել:

- Բուժելու է:

- Երեկոյան, երբ նավակը գա, բժիշկ էլ կլինի:

- Ոչ մի նավակի էլ չեմ ուզում սպասել:

- Լավ, - ասաց Հարրին, - հիմա պարկերը ջուրը կնետենք:

Սկսեց պարկերը նավից դուրս շարժել, բայց զգաց, որ մի ձեռքով դժվար էր աշխատել: Լիկյորի պարկը հազիվ քառասուն ֆունտ կշռի, բայց հազիվ էր հասցրել մի-երկու պարկից ազատվել, գլուխը սկսեց նորից պտտվել: Փլվեց նավախցի հատակին, ապա պառկեց:

- Չեզ սպանելու եք, - ասաց նեգրը:

Հարրին գլուխը պարկերից մեկին էր հենել ու անշարժացել: Նավախուց ներթափանցած մանգլենիների ճյուղերը ստվերել էին այն տեղը, ուր ինքն էր պառկել: Ականջին էր հասնում ճյուղերի գազաթները տարուբերող քամու մեղմ գվվոցը, և նայելով վեր՝ բարձր, սա-

ռը երկնքին, հյուսիսից շարժվող հազվադեպ ամպերի ծվեմներն էր տեսնում միայն:

«Նման եղանակին դժվար թե ծով դուրս եկող լինի, - մտածեց, - ո՞ւմ մտքով կանցնի, որ այս փոթորիկին ճամփա ենք ընկել»:

- Կարծում եք, գալո՞ւ են, - հարցրեց նեգրը:

- Իհարկե՛ն, - պատասխանեց, - բա ո՞նց:

- Իսկական փոթորիկ է:

- Մեզ սպասում են:

- Այս եղանակին՝ դժվար: Ինչո՞ւ եք ուզում ինձ խաբել: - Նեգրը խոսում էր՝ բերանը պարկին կիպ սեղմած:

- Հանգստացի՛ր, Ուեսլի, - պատասխանեց Հարրին:

- Դեռ ուզում է, որ հանգիստ լինեմ, - շարունակեց նեգրը: - Հանգստացի՛ր:

Ինչպե՞ս հանգստանամ: Հիմա շան նման կսատկեմ ու իսկապես կհանգստանամ: Դո՛ւք եք ինձ այստեղ բերել: Դո՛ւք էլ պետք է այստեղից հանեք:

- Հանգստացի՛ր, - կարճ կապեց Հարրին:

- Ոչ մի նավակ էլ չի գալու, - ասաց նեգրը, - հաստատ գիտեմ, չեն գալու:

Լսո՞ւմ եք, մրսում են: Ասում են, այս ցավին ու ցրտին այլևս չեն դիմանում:

Հարրին թուլացած ու սպառված էր: Նեգրի աչքերն ուշադիր իրեն էին հետևում, մի կերպ ծնկեց, ծախ ձեռքով բռնեց անզգայացած-կախված աջ թևն ու տեղավորեց ծնկների արանքում, հետո բռնվեց եզրագերանին ամրացված տախտակից ու ներքև՝ նեգրին նայելով ձգվեց-ուտքի կանգնեց, շարունակելով ծնկներով սեղմել-պահել աջ թևը: Մտքով անցավ, որ մինչ այդ պահն իրականում ցավ էր զգացել:

- Եթե թև ուղղեինք ու ձգեինք, այսքան չէր ցավի, - ասաց:

- Բերեք վիրակապով ամրացնեմ, - ասաց նեգրը:

- Արմունկս ծալել չեմ կարող, - պատասխանեց, - կարծես, փայտացել է:

- Բա ի՞նչ անենք:

- Լիկյորը դուրս նետենք, - ասաց Հարրին, - փորձիր մի քանի պարկ զցել, գոնե այն մի քանիսը, որոնց ձեռքդ կհասնի, Ուեսլի:

Նեգրը տեղից շարժվեց ու փորձեց ձգվել դեպի պարկերը, սակայն տնքաց ու հետ ընկավ:

- Շա՞տ է ցավում, Ուեսլի:

- Տե՛ր Աստված, - հառաչեց նեգրը:

- Եթե շարժվես, գուցե այդքան չցավի՞:

- Ես վիրավոր եմ, - ասաց նեգրը, - չեմ կարող շարժվել: Այս մարդն ուզում է, որ նավը բեռնաթափեմ, բայց չէ՞ որ ես վիրավոր եմ:

- Հանգստացի՛ր:

- Մի անգամ էլ կրկնեք, հաստատ կխելագարվեմ:

- Հանգստացի՛ր, - կրկնեց Հարրին:

Նեգրը ոռնաց, տախտակամածը շոշափելով, մի կողմ հրեց մտոցի կափարիչն ու քաշեց-հանեց հեսանաքարը:

- Կսպանե՛մ, - գոռաց, - փորդ կթափե՛մ:

- Հեսանաքարո՞վ: - ասաց Հարրին, - Հանգստացի՛ր, Ուեսլի:

Նեգրը զլուխը թաղեց պարկերի մեջ ու լաց եղավ: Հարրին դանդաղ բարձրացնում էր լիկյորի պարկերը և դուրս էր նետում նավից:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Մինչ բեռնաթափում էր նավը, հանկարծ շարժիչի ծայն լսեց և շրջվելով՝ տեսավ, որ մի նավակ, շրջանցելով ափամերձ ելուստը, նեղուցն ի վար իրենց կողմն էր շարժվում: Գերմակ մոտորանավակ էր՝ հողմապակիով ու դեղին ծածկոցով:

- Նավակը եկավ, - ասաց, - վեղր կաց, Ուե՛սլի:

- Չեմ կարող:

- Մինչև հիմա ինչ որ եղել է՝ անցած լինի, - ասաց Գարրին, - բայց սրանից հետո արդեն ամեն ինչ հիշելու եմ:

- Քո գործն է, - պատասխանեց նեգրը, - ես էլ ոչինչ չեմ մոռանալու:

Գարրին այնքան արագ էր աշխատում, որ քրտինքն ուղղակի հոսում էր դեմքից, և առանց հայացքը կտրելու դանդաղ առաջացող նավակից՝ չվնասված ձեռքով բարձրացնում էր լիկյորի պարկերն ու նավակողից այն կողմ նետում:

- Մյուս կողմը շրջվիր, - ձգվեց դեպի նեգրի գլխատակի պարկն ու այն էլ դուրս նետեց: Նեգրը մեջքն ուղղեց և նստեց տեղում:

- Ահա և նրանք, - բացականչեց Գարրին: Նավակն արդեն կիպ մոտեցել էր նավին:

- Կապիտան Վիլլին է, - ասաց նեգրը, - հետն էլ սիրող ձկնորսներ են:

Գերմակ նավակի հետմամասում, ֆլանելե կոստյում ու ճերմակ գլխարկներով երկու տղամարդ, ձկնորսական աթոռներին նստած՝ կարթով ծուկ էին որսում, դեկանիվի մոտ ֆետրե գլխարկով ու անձրևանոցով ծերունին էր, որ նավակն ուղիղ դեպի մանգլենիների մացառուտն էր վարում, ուր մաքսանենձ նավն էր կայանել:

- Գործերդ ինչպե՞ս են, Գարրի, - նավին հավասարվելով՝ ծայնեց ծերունին:

Գարրին չվնասված ձեռքով ողջունեց նրան: Նավակն, առանց ընթացքը դանդաղեցնելու, անցավ կողքով, ձկնորսները մի պահ հայացքները նավի վրա գցեցին, հետո շրջվեցին ծերունու կողմը: Գարրին չլսեց, թե ինչ էին խոսում:

- Դեռ ծով չմտած շրջվելու և հետ է գալու, - Գարրին ասաց նեգրին: Ցած իջավ ու վերմակ բերեց: - Արի վրադ գցեմ:

- Մի քիչ ուշ գլխի ընկաք, որ պետք է ծածկեք: Երևի տեսան, որ լիկյոր է բարձած: Դիմա ի՞նչ ենք անելու:

- Վիլլին կարգին տղա է, - պատասխանեց Գարրին, - հենց քաղաք հասնի՝ ում որ պետք է՝ կհայտնի, որ արդեն այստեղ ենք: Իսկ ձկնորսներն անվնաս են: Նրա՞նց ինչ:

Գարրին նորից վատ զգաց, նստեց դեկանիվի դիմացի նստարանին և ոտքերով ամուր սեղմեց աջ թևը: Ծնկները դողում էին, և այդ թույլ ցնցումներից նախաբազկի փշրված ոսկորներն իրար էին քսվում: Ծնկները հեռացրեց իրարից, ազատեց թևն ու թողեց, որ ազատ կախ ընկներ: Թևը թուլացած-կախված նստել էր, երբ կրկին հայտնվեց ճերմակ նավակը: Նավախելին նստած ձկնորսները դարձյալ գրուցում էին: Կարթածողերը մի կողմ էին դրել, մեկը հեռադիտակով իրենց էր գնում: Բավական հեռու էին, նրանց խոսակցությունն ականջին չէր հասնում: Չնայած, եթե նույնիսկ լսեր էլ, թե ինչ էին խոսում, դրանից ի՞նչ էր փոխվելու:

«Գարավային Ֆլորիդա» վարձակալական մոտորանավակն անվերջ վեր ու վար էր անում Ուման Քի նեղուցով, քանի որ ուժեղ քամի էր, և ծով դուրս գալ չէր կարող, իսկ կապիտան Վիլլի Ադամսը մտնտում էր՝ ուրեմն, Գարրին գիշերը ճղել-անցել է սահմանը: Խոսք չկա, իսկական տղամարդ է: Փոթորիկն էլ վեջը չի: Գիշտ է, նավը լավն է: Դետաքրքիր է, հողմապակի՞ն ինչու է կտրվել: Սատանան տանի, կյանքումս ճիսկ չէի անի այս փոթորիկին ծով դուրս գալ: Ոչ էլ՝ Կուբայից խմիչք կբերեի: Դիմա բուլորն էլ Մարիելից են բերում: Ասում են, այնտեղ ազատ է:

- Ի՞նչ ասացիք, պարոն:

- Սա ի՞նչ նավ է, - հարցրեց ձկնորսներից մեկը:

- Ա՞յս նավը:

- Այո, այո:

- Հա՛, Քի Ուեսթի նավերից է:

- Հարցնում եմ, ո՞ւմ նավն է:

- Չգիտեմ, պարոն:

- Տերը ձկնորս է:

- Ասում են:

- Այսի՞նքն:

- Դե, ամեն ինչ էլ անում է:

- Անունը չգիտե՞ք:

- Ոչ, պարոն:

- Կարծեմ, Գարրի կանչեցիք:

- Չէ, ի՞նչ եք ասում:

- Լսեցի, որ Գարրի կանչեցիք:

Կապիտան Վիլլի Ադամսն ուշադիր գննեց գրուցակցին: Լայն այ-

տոսկրեր, բարակ, իրար սեղմված չար շուրթեր, կարմիր թշեր ու փոս ընկած մոխրագույն աչքեր, որ իրեն էին նայում քաթանե ճերմակ գլխարկի տակից:

- Երևի սխալմամբ եմ ասել, - պատասխանեց կապիտան Վիլլին:
  - Կարծես նա վիրավոր է, դոկտոր, - հեռադիտակն ընկերոջը մեկ-մեկով՝ խոսեց երկրորդ ձկնորսը:
  - Տեսնում եմ, - ասաց նա, որին դոկտոր էին կոչել, - այդ մարդն ո՞վ է:
  - Իսկապես, չեմ ճանաչում, - պատասխանեց կապիտան Վիլլին:
  - Հիմա կճանաչեք, - ասաց բարակաշուրթը, - գրե՛ք նավի համա-րը:
  - Գրեցի, դոկտոր:
  - Մոտենանք ու տեսնենք, թե ինչ է պատահել, - կարգադրեց դոկտորը:
  - Դուք բժի՞շկ եք, - հարցրեց կապիտան Վիլլին:
  - Դոկտոր, բայց ոչ՝ բժշկության, - պատասխանեց մոխրաչը:
  - Եթե բժիշկ չեք, պետք չէ մոտենալ:
  - Ինչո՞ւ:
  - Եթե մեր կարիքն ունենար, նշան կաներ: Իսկ եթե մեր օգնու-թյան կարիքը չունի, ինչո՞ւ իզուր քիթներս խոթենք: Մեզ մոտ ըն-դունված է, որ ամեն մեկն իր գործով զբաղվի:
  - Շատ լավ: Դե, ուրեմն, ձեր գործն արեք: Մեզ այդ նավին մոտեց-րեք:
- Կապիտան Վիլլին, Փալմերի երկզվանանի շարժիչի համաչափ հազոցների ուղեկցությամբ, շարունակում էր նավակն ուղղորդել նեղուցն ի վեր:
- Չլսեցի՞ք, ինչ ասացի:
  - Լսեցի, պարոն:
  - Այդ դեպքում, ինչո՞ւ չեք կատարում:
  - Այդ ո՞վ եղաք, որ ինձ հրամայեք, - հարցրեց կապիտան Վիլլին:
  - Կապ չունի: Արեք այն, ինչ ասում եմ:
  - Ո՞վ եք, է՞, ձե՞զ եմ հարցնում:
  - Լավ, ուրեմն, ի գիտություն ձեզ ասեմ, որ այսօրվա դրությամբ ես Միացյալ Նահանգների ամենաազդեցիկ երեք մարդկանցից մեկն եմ:
  - Բա Քի Ուեսթում ի՞նչ գործ ունեք:
- Մյուս ձկնորսն առաջ թեքվեց:
- Պարոնը Ֆրեդերիկ Հարիսոնն է, - ասաց տպավորիչ տոնով:
  - Չեմ լսել, - պատասխանեց կապիտան Վիլլին:

- Ոչի՞նչ, հիմա կլսեք, - ասաց Ֆրեդերիկ Հարիսոնը, - և ոչ միայն դուք, այլ այս ամբողջ զարշահոտ, նեխած գյուղաքաղաքը, նույն-նիսկ եթե ստիպված լինեմ փորփրել դրա կեղտոտ ընդերքը:

- Կարգին մարդ եք երևում, - ասաց կապիտան Վիլլին, - ո՞նց եք հաջողացրել այդքան երևելի դառնալ:
- Մեր կառավարության ամենանշանավոր գործիչներից ե, - ավե-լացրեց մյուս ձկնորսը:
- Չէ՛, հա, - պատասխանեց կապիտան Վիլլին, - որ այդպես է, Քի Ուեսթում ի՞նչ գործ ունի:
- Եկել է հանգստանալու, - պատասխանեց քարտուղարը, - շու-տով գեներալ-նահանգապետ է դառնալու ...
- Բավակա՛ն է, Ուիլլիս, - նրան ընդհատեց Ֆրեդերիկ Հարիսոնը:
- Հիմա նավին կմոտեցնե՞ք, - ժպտալով ավելացրեց: Նման դեպքե-րի համար նա հատուկ ժպիտ ուներ:
- Ո՛չ, պարոն:
- Լսի՛ր, այ պակասամիտ ձկնորս: Հե՛րդ կանիծեմ:
- Հավատում եմ, - պատասխանեց կապիտան Վիլլին:
- Դու դեռ չգիտես, թե ես ով եմ:
- Թքած ունեմ, - ասաց կապիտան Վիլլին:
- Նա մաքսանենգ է, չէ՞:
- Ինքներդ որոշեք:
- Նրան բռնելու համար, հավանաբար, պարզևատրում էլ կլինի:
- Կասկածում եմ:
- Օրինախախտ է:
- Ընտանիք ունի, ինքը պետք է ապրի ու նրանց էլ կերակրի: Գրո-ղը տանի, ձեզ ո՞վ է կերակրում, այս մարդիկ, չէ՞, որ Քի Ուեսթում շաբաթական վեց ու կես դոլարով աշխատում են կառավարության համար:
- Նա վիրավորվել է: Նշանակում է, բախում է եղել:
- Կարող է, զվարճանալու համար, ինքն է իր վրա կրակել:
- Սրամտությունդ քե՛զ պահիր: Հիմա նավին կմոտենաս, և մենք նրան էլ, նավն էլ կտանենք ու կհանձնենք իրավապահներին:
- Որտե՞ղ:
- Քի Ուեսթում:
- Ի՞նչ է, ոստիկա՞ն եք:
- Ասացի, չէ՞, նա ով է, - խոսեց քարտուղարը:
- Լավ, - ասաց կապիտան Վիլլին, ապա կտրուկ քաշեց դեկն ու շրջեց նավակը՝ այնքան կիպ մոտենալով ափին, որ թիպատուտա-կի կողքերից մերգելի ամպեր դուրս թռան: Հետո նավակը փնջալով

ՀՏԴ 820.(73)  
ԳՄԴ 84.7 ԱՄՆ  
Հ 500

Հեմինգուեյ

Թարգմանությունն անգլերենից՝ Արամ Արսենյանի

ERNEST HEMINGWAY

TO HAVE AND HAVE NOT (A NOVEL)  
Translated from English by Aram Arsenyan

Գիրքը լույս է տեսել պետական պատվերով

Հեմինգուեյ եռնեստ  
Հ 500 Ունենալ և չունենալ /վեպ/ եռնեստ Հեմինգուեյ.- եր.:  
«Ծիծեռնակ» հրատ., 2006թ.: 182 էջ:

Եռնեստ Հեմինգուեյը (1899-1961) համաշխարհային արժակի խոշորագույն վարպետներից է, Պուլիցերյան (1953) և Նոբելյան (1954) մրցանակների դափնեկիր: Նրա մի շարք ստեղծագործություններ հրատարակվել են հայերեն՝ «Տոն, որը միշտ քեզ հետ է», «Հրաժեշտ գեներին», «Կիլիմանջարոյի ձյուները», «Ծերունին և ծովը» և այլն:

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող «Ունենալ և չունենալ» վեպն արտացոլում է հարուստների ու աղքատների՝ «ունեցողների» և «չունեցողների» հավերժական հակամարտությունը, բացահայտում է նրանց ներաշխարհն ու հոգեկան տվյալները, ապացուցում, որ սեփական իրավունքների համար մղվող պայքարը դատապարտված է, եթե միայնակ ես:

Պ 4703040100  
0153(01)2006 2006թ.

ԳՄԴ 84.7 ԱՄՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՄԻՆԻՍՏԵՐՈՒԹՅԱՆ ԻԼԼՍՏՐԱՏՈՒԹՅԱՆ

ISBN 99941-937-9-1

Գրքական - ունեւէլք

Ե.Գ.Ա.ՆԻ ՊՐԱՄ ԱՐՍԵՆՅԱՆ


© Արամ Արսենյան

13576

© Ծիծեռնակ, 2006թ.

# ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՀԱՐԻ ՄՈՐԳԱՆ



շարժվեց դեպի մանգլեմիների ծանծաղուտը, ուր կայանել էր մաքսանենգ նավը:

- Ձենք ունե՞ք, - կապիտան Վիլլիին հարցրեց Ֆրեդերիկ Չարիտոնը:

- Ո՛չ, պարոն:

Ֆլամելե կոստյումով ձկնորսներն այժմ կանգնել էին նավախելին ու մաքսանենգ բեռով նավն էին զննում:

- Սա ավելի զվարճալի է, քան ծուկ որսալը, չէ՞, դոկտոր, - ասաց քարտուղարը:

- Ձկնորսությունն անհմաստ զբաղմունք է, - պատասխանեց Ֆրեդերիկ Չարիտոնը, - ասենք, թե առագաստածուկ ես բռնել, ի՞նչ ես անելու: Ուտելու համար պիտանի չէ: Իսկ սա գոնե հետաքրքիր է: Եվ անչափ ուրախ եմ, որ անմիջական մասնակիցն եմ լինում: Այս մարդը վիրավոր է և չի կարող փախչել: Ծովն էլ անհանգիստ է: Նավի համարն էլ գիտենք:

- Եվ իրականում նրան ձերբակալելու եք առանց կողմնակի օգնության, - հիացմունքով ավելացրեց քարտուղարը:

- Նաև՝ առանց գենք օգտագործելու, - ասաց Ֆրեդերիկ Չարիտոնը:

- Եվ առանց գաղտնի ոստիկանությանը խառնելու, - շարունակեց քարտուղարը:

- Էդգար Չուվերը գերազնահատում է իր կարևորությունը, - ասաց Ֆրեդերիկ Չարիտոնը: - Իմ կարծիքով, նրան շատ ենք ազատություն տվել: Ավելի՛ մոտեցեք, - կարգադրեց կապիտան Վիլլիին: Կապիտանն անջատեց շարժիչը, և նավակը սկսեց լողալ հոսանքին համընթաց:

- Չե՛յ, - կապիտան Վիլլին ծայնեց դեպի նավի, - գլուխներդ չբարձրացնե՛ք:

- Սա՛ ինչ էր, - զայրացավ Չարիտոնը:

- Չա՛յնդ, - բղավեց կապիտան Վիլլին, ապա կրկին դիմեց նավի վրայի մարդկանց, - լսի՛ր, ուղիղ դեպի քաղաք շարժվիր ու չվախենա: Նավի համար մի՛ անհանգստանա: Բռնագրավելու են: Բեռնաթափվիր ու քաղաք մտիր: Իմ նավակի վրա Վաշինգտոնից ինչ-որ լրտես կա: Ասում է, նախագահից էլ կարևոր մարդ է: Ուզում է քեզ բռնել: Կարծում է, մաքսանենգ ես: Նավիդ համարը գրել է: Կյանքունս քեզ չեմ տեսել և չգիտեմ, թե ով ես: Քեզ չեմ կարող ճանաչել, եթե...

Չոսանքը նավերն իրարից արդեն բավականին հեռացրել էր: Բայց կապիտան Վիլլին շարունակում էր բղավել.

- Ես չգիտեմ, թե որտեղ ենք քեզ տեսել: Այստեղ վերադառնալու համար ճանապարհը չեմ գտնի:

- Էղա՛վ, - լսվեց նավից:

- Իշխանավոր այս խելոքին մինչև մութն ընկնելը ստիպելու եմ, որ ծուկ որսա, - բղավում էր կապիտան Վիլլին:

- Էղա՛վ:

- Որս շա՛տ է սիրում, - կապիտան Վիլլիի ծայնն արդեն խզվում էր, - բայց շան որդին ասում է, թե միսն ուտելի չէ:

- Շնորհակալ եմ, ախպերս, - լսվեց Չարիիի ծայնը:

- Եղբա՛յրդ է, - հարցրեց Ֆրեդերիկ Չարիտոնը: Դեմքը կաս-կարմիր էր կտրել, հետաքրքրասիրությունը դեռ չէր անոքվել:

- Ոչ, պարոն, - պատասխանեց կապիտան Վիլլին, - բոլոր նավավարներն էլ իրար ախպեր են ասում:

- Անմիջապես Քի Ուեսթ ենք վերադառնում, - ասաց Ֆրեդերիկ Չարիտոնը:

Սակայն, կարծես, իր ասածին այնքան էլ չէր հավատում:

- Ո՛չ, պարոն, - պատասխանեց կապիտան Վիլլին, - դուք, պարոնայք, նավը վարձել եք մեկ օրով: Եվ իմ խնդիրն է այնպես անել, որ ձեր փողն իզուր չկորչի: Ինձ պակասամիտ անվանեցիք, սակայն ամբողջ օրը ծառայելու եմ ձեզ:

- Մեզ Քի Ուեսթ հասցրու, - կարգադրեց Չարիտոնը:

- Լսո՛ւմ եմ, պարոն, - ասաց կապիտան Վիլլին, - միայն թե՛ ավելի ուշ:

Չինա գիտե՞ք, ինչ կասեմ: Առագաստածուկը թրածկան նման համեղ է: Երբ տանում ենք Չավանայի շուկայում վաճառելու, ֆունտին տասը ցենտ են տալիս՝ այնքան, որքան թրածկանը:

- Դե, ծայնդ կտրի՛ր, - բարկացավ Ֆրեդերիկ Չարիտոնը:

- Կարծում էի, որպես կառավարության ներկայացուցիչ, ձեզ կհետաքրքրեր:

Մեր կերածի կամ մնացած ապրանքների գները դուք եք որոշում: Այդպես չէ՞: Որ բարձր լինեն կամ նման մի բան: Որ հացը թանկ լինի, իսկ ձկներդենը՝ էժան:

- Դե, լռե՛ք, բավական է, - գոռաց Չարիտոնը:



## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

**Յ**արրին վերջին պարկը դուրս նետեց նավից:

- Մեծ դանակը բե՛ր, - ասաց նեգրին:
- Ջուրն է ընկել:

Յարրին սեղմեց ստարտերը և երկու շարժիչն էլ գործի դրեց: Երկրորդն այն ժամանակ էր տեղադրել, երբ կրկին սկսել էր մաքսանենգ խմիչք տեղափոխել, որովհետև ճգնաժամ էր, և ձկնորսությանը զբաղվող այլևս չկար: Վերցրեց կացինն ու ծախ ձեռքով կտրեց խարսխաճուպանը: Մտածեց՝ խարիսխը ջրատակ կլինի, և հետագայում, երբ բեռը գտնեմ ու վեր քաշեմ, խարիսխն էլ հետը կբարձրացնեմ: Ուղիղ Գարիսոն Բայթ կլողամ, եթե կուզենան նավը բռնագրավել, թող վերցնեն: Ինձ բժիշկ է պետք: Չեմ ուզում և՛ նավից զրկվել, և՛ թևիցս: Միայն բեռը մի նավի գին արժե: Այնքան էլ շատ չի փչացել: Չնայած մի կաթիլ էլ որ թափված լիներ, էլի հոտն ընկնելու էր:

Սեղմեց ծախակողմյան լծակն, ու նավը հոսանքին համընթաց ճոճվելով՝ պոկվեց մանգլենիների մացառուտից: Շարժիչները համաչափ տկտկում էին: Կապիտան Վիլլիի նավակն արդեն երկու մղոն հեռացել էր Բուկա Գրանդեի ուղղությամբ: «Այնպիսի հոսանք է, որ կարելի է նաև լճերի միջով անցնել», մտածեց Յարրին:

Սեղմեց աջակողմյան լծակը, բացեց կարգավորող կափույրն, ու շարժիչները սկսեցին հռնդալ: Նա զգաց, թե ինչպես նավի քիթը վեր ցցվեց, և երբ թիապտուտակը սկսեց ջուրը քաշել-հանել արմատների տակից, կանաչ մանգլենիներն արագորեն լողացին-անցան կողքով: Վերջապես, կարող է նավը չվերցնեն, անցավ մտքով: Չնարավոր է նաև՝ թևս բուժեն: Ում մտքով կանցներ, որ Մարիելում վրաներս կրակելու են, վեց ամիս ազատ գնում-գալիս էինք: Ես էլ կուբացիները: Մեկը մյուսին չի վճարել, մեր վրա են կրակում: Կուբացիներն այդպես են:

- Է՛յ, Ուեսլի, - ծայնեց՝ շրջվելով դեպի նեգրը, որ դեռևս վերմակի տակ էր, նավախցում: - Ինչպե՞ս ես:

- Տե՛ր Աստված, - պատասխանեց Ուեսլին, - ավելի վատ չի լինում:

- Դեռ կլինի, երբ բժիշկը զոնդը մտցնի, - ասաց Յարրին:

- Մարդ չեք, - ասաց նեգրը, - մարդկային ոչինչ չունեք:

Ծերուկ Վիլլին չի ծախի, մտածեց Յարրին: Երբեք: Եվ ճիշտ արեցինք, որ պոկվեցինք, տեղում մնալ չէր կարելի: Սպասելը հիմարություն կլիներ: Սիրտս այնպես էր խառնում ու գլուխս այնպես էր պտտվում, որ միտքս մթազնել էր:

Առջևում արդեն նշմարվում էին «Լա Կոնչա» հյուրանոցի ճերմակ պատերը, ռադիոաշտարակներն ու քաղաքային շինությունները: Տրումբոյի նավահանգստում լաստանավ երևաց, պետք է այն շրջանցեր, որպեսզի Գարիսոն Բայթում հայտնվեր: Այ քեզ ծերուկ Վիլլի՛, մտածում էր: Դրանց հերը անիծելու է: Չետաքրքիր է, ի՞նչ անասուններ են նրա նավակում: Սատանան տանի, էլի վատ եմ զգում: Գլուխս սարսափելի պտտվում է: Լավ էր, այնտեղ չմնացինք: ճիշտ արեցինք, որ չսպասեցինք:

- Պարոն Յարրի, - ասաց նեգրը, - կներեք, որ նավը բեռնաթափելիս չկարողացա օգնել:

- Դե, լավ, ոչինչ, - պատասխանեց, - վիրավոր նեգրին ինչ ասեմ: Բայց դու լավ նեգր ես, Ուե՛սլի:

Շարժիչների հռնդյունի ու նավակողին զարնվող ջրի աղմկալից ճողփյունի մեջ ակամջին էր հասնում սեփական սրտի տարօրինակ խուլ բաբախոցը: Ամեն անգամ, երբ ուղերթից տուն էր վերադառնում, նույն զգացումն էր ունենում: Չամենայնդեպս, հնարավոր է, թևս բուժվի, մտածում էր: Դեռ շատ է ինձ պետք գալու:

# ՄԱՍՆ ԵՐԲՈՐԴ

## ՀԱՐԻԻ ՄՈՐԳԱՆ



## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### Պատմում է էլբերտը

Խստած էինք Ֆրեդիկի հաստատությունում, անսպասելի ներս մտավ երկարահասակ, նիհար փաստաբանն ու հարցրեց.

- Խուանը որտե՞ղ է:
- Դեռ չի վերադարձել, - ինչ-որ մեկը պատասխանեց:
- Տեղյակ եմ՝ եկել է, անպայման պետք է տեսնեմ նրան:
- Դե, իհարկե, ինքներդ եք տեղը մատնել, փաստորեն, գործ եք տվել, հիմա էլ ուզում եք դատարանում պաշտպանել, - ասաց Յարրին: - Ոչ էլ այստեղ եկեք ու նրան փնտրեք: Երևի ձեր գրպանում է:
- Կորե՞ք գորղի ծոցը, - պատասխանեց փաստաբանը, - նրա համար գործ եմ ճարել:
- Ուրեմն, ուրիշ տեղ փնտրեք, - շարունակեց Յարրին, - մա այստեղ չէ:
- Ասում եմ, չէ՞, նրա համար գործ եմ գտել, - կրկնեց փաստաբանը:
- Դուք մարդու համար գործ գտնողը չեք: Պարզապես մաղձ եք:
- Այդ պահին ներս մտավ ռետինե իրեր վաճառող ալեհեր, երկարամազ ծերունին, հարյուր հիսուն գրամ խնդրեց, և հենց որ Ֆրեդիկ լցրեց բաժակը, այդ փոչոտը խլեց շիշը, խցանը տեղը խցկեց ու շնչակտուր փողոց թռավ:
- Ձեր թևին ինչ է եղել, - Յարրին հարցրեց փաստաբանը: Յարրիի թևը մինչև ուսը դատարկ էր:
- Տեսքը դուրս չէր գալիս, կտրել եմ, - պատասխանեց Յարրին:
- Դո՞ւք, թե՛ մեկ ուրիշը:
- Ես ու բժիշկը, - ասաց Յարրին: Առավոտից խմում էր և, կարծես, քեֆը լավ-լավ էր: - Ձգաստ մտնել էի, իսկ մա կտրում էր: Այ, եթե ուրիշների գրպանը մտնողների ձեռքն էլ կտրեին, դուք վաղուց ոտք ու ձեռքից զրկված կլինեիք:
- Իսկ ի՞նչ էր եղել, որ ստիպված էիք կտրել, - հարցրեց փաստաբանը:
- Ձեր գործը չի, - պատասխանեց Յարրին:
- Դե, հենց էնպես եմ հարցնում: Ի՞նչ է պատահել, որտե՞ղ:
- Գնացեք, ուրիշին սոսնձվեք, - ասաց Յարրին, - լավ էլ գիտեք,

թե որտեղ եմ եղել ու ինչ է պատահել: Միայն թե, լավ կլիներ ձեր բերանը փակ պահեիք ու չզզվացնեիք:

- Ուզում եմ զրուցել, - շարունակեց փաստաբանը:
- Դե լավ, ասեք:
- Ոչ, առանձին պետք է խոսենք:
- Ձեզ ասելու բան չունեմ: Ձեզանից լավ բան չես սպասի: Թուճավոր եք:
- Ձեզ համար եմ ասում: Լավ բան է:
- Դե, լավ: Ես մի անգամը կլսեմ, - պատասխանեց Յարրին: - Ի՞նչ է եղել:
- Խուանի՞ն է վերաբերվում:
- Ոչ, Խուանը կապ չունի:
- Շրջանցեցին կանգնակն ու բարի միջով անցան սրահի հետևը, ուր առանձնախցիկներն էին, և երկար մնացին այնտեղ: Երբ նրանք սրահում չէին, ներս մտավ Չաղ Լյուսիի աղջիկը՝ անբաժանելի ընկերուհու ուղեկցությամբ, որի հետ աշխատում էին ինչ-որ հաստատությունում: Տեղավորվեցին կանգնակի մոտ ու կոկա-կոլա պատվիրեցին:
- Լսել եմ, աղջիկներին արգելված է երեկոյան վեցից հետո փողոց դուրս գալ կամ բարերում երևալ, - Չաղ Լյուսիի աղջկան դիմեց Ֆրեդիկին:
- Ասում են:
- Այս քաղաքում ապրելը դժոխք է դառնում, - շարունակեց Ֆրեդիկին:
- Դժոխքից էլ վերան: Դուրս ես գալիս, որ սենդվիչ ու կոկա-կոլա առնես, իսկ քեզ ձերբակալում են ու տասնհինգ դոլար տուգանում:
- Դե հիմա միայն նրանց են կպնում, - խոսեց Չաղ Լյուսիի աղջիկը, - ով սիրում է զվարճանալ: Ով համապատասխան արտաքին ունի:
- Եթե այս քաղաքում ինչ-որ բան արագորեն չփոխվի, գնալով ավելի է վատանալու:
- Այդ պահին վերադարձան Յարրին ու փաստաբանը: Վերջինս ասաց.
- Ուրեմն, այնտե՞ղ կլինեք:
- Գուցե այստե՞ղ բերեիք:
- Չէ, այստեղ չեն ուզում գալ: Այնտեղ կհանդիպենք:
- Լավ, - ասաց Յարրին ու կանգնակի կողմը շրջվեց, իսկ փաստաբանը գնաց դեպի ելքը:
- Էլ, ի՞նչ կխմես, - ինձ դիմեց Յարրին:

- Բակարդի:
- Ֆրեդի, երկու բաժակ բակարդի: - Ապա իմ կողմը նայեց ու ասաց, - հիմա ձեռքդ գործ ունե՞ս:
- Հանրային ծառայություն:
- Ի՞նչ ես անում:
- Փոս եմ փորում: Տրամվայի հին գծերն ենք հանում:
- Որքա՞ն ես ստանում:
- Յոթ ու կես:
- Շաբաթակա՞ն:
- Ի՞նչ էիր կարծում:
- Բա ինչո՞վ ես հարբում:
- Որ չիլուրասիրեիր, չէի խմի, - պատասխանեցի: Ականջիս տակ փսփսաց.
- Հետս կմեկնե՞ս:
- Նայած՝ ուր:
- Կխոսեմք:
- Եղավ:
- Արի գնանք, մեքենայով պտտվենք, - ասաց: - Առայժմ, Ֆրեդի: Խնած ժամանակ արագ էր շնչում: Անցանք փորփրած փողոցով, որտեղ աշխատել էի ամբողջ օրը, և թեքվեցինք առաջին անկյունը, ուր կանգնեցրել էր մեքենան:
- Նստի՛ր, - ասաց:
- Ո՞ւր ենք գնում, - հարցրեցի:
- Չգիտեմ, - պատասխանեց, - ճանապարհին կորոշենք:
- Անցանք Ուայթհեդ փողոցով, չէր խոսում, հետո խաչմերուկից ձախ թեքվեցինք, անցանք քաղաքի կենտրոնն ու հասանք Ուայթսթրիթ, այնտեղից էլ՝ ծովի ափը: Հարրին չէր խոսում, թեքվեցինք առափնյա փողոցն ու շարժվեցինք դեպի լայն ծառուղին: Հենց որ ծառուղին մտանք, մեքենան կիպ մոտեցրեց մայթին ու կայանեց:
- Արտասահմանցիներ են, ինչ-որ ուղերթի համար ուզում են նավ վարձել, - ասաց:
- Բայց մաքսատունը նավդ կալանել է, չէ՞:
- Տեղյակ չեմ:
- Ի՞նչ ուղերթ է:
- Մեկին պետք է տեղափոխեմ, Կուբայում գործ ունի, բայց ոչ օդով կարող է անցնել, ոչ էլ՝ շոգենավով: Լեզվանին այդպես ասաց:
- Այդպիսի բան արվո՞ւմ է:
- Իհարկե: Հեղաշրջումից հետո՝ որքան ուզես: Խնդիր չէ: Հարյուրավոր մարդիկ են անցնում:

- Իսկ նա՞վը:
- Ստիպված պետք է գողանանք: Մենակ թե, գիտես, մաքսատանը որ պահում են, շարժիչը լցավորված չի լինում, չեմ կարող միանգամից գործի գցել:
- Նավահանգստի՞ց ո՞նց ես հանելու:
- Կհանեմ:
- Բա վերադառնա՞լը:
- Կմտածենք: Թե չես ուզում գալ, ասա՛:
- Եթե մեջը փող կա, հաստատ եկող եմ:
- Լսի՛ր, - ասաց, - հիմա շաբաթական յոթ ու կես դոլար ես վաստակում:
- Երեք դպրոցահասակ երեխա ունես, օրերով սոված են: Ընտանիք ունես, բոլորիդ փորն էլ դատարկ է, ես էլ քեզ փող աշխատելու հնարավորություն եմ տալիս:
- Չասացիր՝ որքան: Չիմանա՞մք, ռիսկի դիմելն ինչ արժե:
- Էլ, հիմա ինչքան էլ ռիսկի դիմես, շատ չես վաստակի, - ասաց: - Այ, օրինակ՝ ես: Պատահել է, ձկնորսության ամբողջ շրջանում սիրող-ձկնորսներ եմ ման ածել ու օրական երեսուհինգ դոլար եմ աշխատել: Իսկ հիմա կրակում են վրաս, կորցնում եմ թև էլ, նավս էլ, և ինչի՞ համար՝ անիծյալ սպիրտի, որ իսկի նավիս գինը չի հանի: Բայց ասեմ, չեմ թողնելու, որ զավակներիս ստամոքսները տրորվեն, ոչ էլ ի սեր կառավարության, մի քանի քոռ կոպեկի համար կոյտղի եմ փորելու, որ հետո չբավարարի ընտանիքս կերակրելուն: Չմայած հիմա հող փորել չեմ էլ կարող: Չգիտեմ, օրենքներն ով է հորինում, բայց մի բան գիտեմ՝ այնպիսի օրենք չկա, որ մարդ պետք է սովածահ լինի:
- Ես գործադուլ եմ արել այդ օրերի դեմ, - պատասխանեցի:
- Եվ վերադարձել ես աշխատանքի, - ասաց, - նրանք էլ հայտարարել են, թե բողոքում եք բարեգործության դեմ: Կարծեմ, ամբողջ կյանքդ աշխատել ես, չէ՞: Եվ ոչ մեկից ողորմություն չես խնդրել:
- Հիմա աշխատանք չի ճարվում, - ասացի, - չկա այնպիսի աշխատանք, որով ընտանիքդ կերակրես:
- Իսկ ինչո՞ւ:
- Չգիտեմ:
- Ես էլ չգիտեմ, - պատասխանեց, - միայն թե իմ ընտանիքը կուշտ է լինելու այնքան ժամանակ, քանի դեռ մյուսներն ուտելու բան ունեն: Ուզածներն այն է, որ ձեզ՝ կոնչերիդ քշեն այստեղից, ձեր հյուղակներն այրեն, տեղը հյուրամոցներ կառուցեն և քաղաքը տուրիստական կենտրոն դարձնեն: Այդպես եմ իմացել: Լսել եմ, որ հիմա հողեր են առնում և հետո, երբ քաղցը աղքատներիդ այլ վայ-

րեր կքշի, ուր ավելի ուժգին կսովեք, անմիջապես հայտնվելու են ու այստեղ զբոսաշրջիկների համար չքնաղ անկյուն են արարելու:

- Կարմիրի նման ես խոսում, - ասացի:

- Ես կարմիր չեմ, - պատասխանեց, - պարզապես կատաղում եմ: Վաղուց եմ մտահոգված ու զայրացած:

- Թե որ կորցրել ես, վիճակդ չի փոխվել, չէ՞:

- Գրողի ծոցը կորչեր թև: Թև էր, կորցրեցի՝ պրծա: Ավելի վատ բաներ էլ են լինում: Մարդը երկու թև ունի, և՛ էլի ինչ-որ բաներ: Ու եթե թևերիցդ մեկը կորցրեցիր, իսկ մնացածն անվնաս է, էլի մարդ ես: Դե լավ, սատանան տանի, - ասաց, - այդ մասին չեմ ուզում խոսել: - Մի պահ դադար տվեց, ապա շարունակեց: - Իմ մնացած բաները տեղում են: - Հետո շարժիչը գործի դրեց ու ասաց, - զմանք, պետք է դրանց հանդիպենք:

Անցնում էինք քաղաքային զբոսայգու կողքով: Ծովից մեղմ բամբի էր փչում, հանդիպում էին հազվադեպ ավտոմեքենաներ, սալահատակից տղմառտ էր բուրում այն տեղերում, որտեղ ուժեղ փոթորիկի ժամանակ ալիքները ծփում-անցնում էին ալեհատ պատնեշը: Հարրին դեկը բռնել էր ծախ ձեռքով: Նրան միշտ էլ հավանում էի, հաճախ էի նավարկելիս ընկերակցել, սակայն հիմա, երբ թևը կորցրել էր, փոխվել էր, գումարած՝ մաքսավորները բռնագրավել էին նավը, որովհետև Վաշինգտոնից այստեղ հանգստի ժամանած ինչ-որ տիպ ցուցմունք էր տվել, որ տեսել է, թե ինչպես են նավից սպիրտային խմիչք բեռնաթափում: Նավի վրա Հարրին երբեք չէր տրտնջում, բայց նավը կորցնելուց հետո վիհատվել էր: Եվ հիմա, կարծես, ուրախացել էր, որ նավը գողանալու առիթ էր ընծեմվել: Գիտեր, այդ հաճույքը կարճ էր վայելելու, սակայն հույս ուներ, թե հաջողացնելու էր մի քիչ փող վաստակել: Ինձ էլ օդ ու ջրի նման փող էր պետք, բայց միտք չունեի թակարդն ընկնել: Եվ ասացի.

- Հարրի, գիտես, չէ՞, որ չեմ ուզում կրակն ընկնել:

- Սրանից ահավոր կրակը հաստատ չես ընկնի, - ասաց, - սովամահ լինելուց վատ բան կա՞:

- Ի՞նչ ես սովը գլուխդ գցել, - ասացի, - բոլորովին էլ սովամահ չեմ լինում:

- Ինքդ՝ գուցե, բայց երեխաներդ՝ հաստատ:

- Դե, բավական է, - ասացի, - հետո կաշխատեն, բայց այլևս նման ձևով չխոսես:

- Լավ, - ասաց, - վստա՞հ ես, որ այս աշխատանքը քեզ հարմար է: Թե չէ քաղաքում ցանկացողներ շատ կլինեն:

- Հարմար է, - պատասխանեցի, - արդեն ասացի, որ ուզում եմ:

- Դե, ուրեմն, պինդ կաց:

- Ինքդ պինդ կաց, - ասացի, - դու ես կարմիրի նման դատում:

- Դե, դե, ապա մի թափ տուր քեզ, - ասաց, - կոնչերդ բոլորդ էլ փնթփնթան եք:

- Այդ երբևանի՞ց ինքդ կոնչ չես:

- Այն օրվանից, երբ առաջին անգամ կուշտ փորով հաց կերա:

Այդպես արտահայտվելը խոզություն էր, բայց դեռ մանկուց նրան խորթ էր կարեկցանքը: Չմայած, խղճահարությունը բացակայում էր նաև սեփական անձի նկատմամբ:

- Լավ, - ասացի:

- Մի՛ հուզվիր, - պատասխանեց: Երևացին բարի լույսերը:

- Այստեղ ենք հանդիպելու, - ասաց Հարրին, - բերանդ փակ կպահես:

- Կորի՛ր գրողի ծոցը:

- Լավ, լավ, հանգստացի՛ր, - ասաց՝ թեքվելով դեպի նրբանցքն ու մոտենալով բարի ետնադռանը: Կռվազան էր ու հայիոյախոս, բայց, միևնույն է, հավանում էի նրան:

Մեքենան կայանեցինք ետնամուտքի դիմաց ու մտանք խոհանոցը, որտեղ բարի տիրոջ կինը կքել էր սալօջախի վրա:

- Ողջո՛ւյն, Ֆրեդա, - նրան դիմեց Հարրին, - Լեզվանին ո՞ւր է:

- Հենց նոր եկավ, Հարրի: Ողջո՛ւյն, էլ բերտ:

- Ողջո՛ւյն, տիկին Ռիչարդս, - պատասխանեցի: Նրան ճանաչում էի այն ժամանակվանից, երբ բնակվում էր «Ջունգլիներում»\*, և պետք է ասեմ, մեր քաղաքում քիչ չեն ամուսնացած, աշխատասեր կանայք, որ այնտեղից են դուրս եկել, իսկ այս մեկը, կարող եմ վստահեցնել, ամենաաշխատասերներից էր:

- Տանեցիները ողջ-առո՞ղջ են, - տիկինն ինձ դիմեց:

- Բոլորն էլ լավ են:

Խոհանոցի միջով անցանք բարին կից սենյակը: Սեղանի շուրջը նստած էին փաստաբանը՝ Լեզվանին, և չորս կուբացի:

- Նստե՛ք, - նրանցից մեկն անգլերեն էր խոսում: Հաղթանդամ էր, ծանրամարմին, լայնադեմ, ծայրը խոպոտ էր, քեֆն էլ արդեն լավ-լավ էր՝ միանգամից երևաց: - Ձեր անո՞ւնը:

- Իսկ ձե՞րը, - հարցրեց Հարրին:

\* «Ջունգլիներ» կամ «Գուվերի քաղաքներ»՝ գործազուրկների բնակատեղին, որտեղ ապրում էին տախտակներից ու արկղներից սարքած օբլաններում: Այստեղի կանայք ու աղջիկները, կարիքից դրոյված, զբաղվում էին մարմնավաճառությամբ:

- Մի թևով ինչպե՞ս եք ծուկ որսում, - հարցրեց լայնադեմը:
- Երկու անգամ արագ, - պատասխանեց Չարրին: - Չեզ էլի պե՞տք եմ:
- Ոչ:
- Սկսեցին իրար մեջ իսպաներեն խոսել:
- Դե, ես գնացի, - ասաց Չարրին:
- Հենց որ նավը պետք լինի, տեղյակ կպահեմ, - ասաց Լեզվանին:
- Սկզբից՝ փողը, - ասաց Չարրին:
- Վաղը:
- Ուրեմն, բարի գիշեր, - ասաց Չարրին:
- Բարի գիշեր, - պատասխանեց ամենաջահելն ու ամենաքաղաքավարին:

Լայնադեմը լուռ էր: Մնացած երկուսը, որ հնդկացու նման պղնձագույն մաշկ ունեին, այդպես էլ չխոսեցին, բացի մի քանի բառից, որ իսպաներեն ասել էին լայնադեմին:

- Այսօր, ավելի ուշ կտեսնվենք, - ասաց Լեզվանին:
- Որտե՞ղ:
- Ֆրեդիի մոտ:
- Դուրս եկանք խոհանոցով, և Ֆրեդան ասաց.
- Ինչպե՞ս է Մերին, Չարրի:
- Հիմա լավ է, - պատասխանեց Չարրին: - Արդեն խաղաղվել է, - ասաց և դուրս եկավ դռնից: Նստեցինք մեքենան, կրկին անցանք քաղաքային զբոսայգու կողքով: Ամբողջ ճանապարհին չխոսեց: Երևի ինչ-որ բան էր մտմտում:
- Տուն իջեցնե՞մ:
- Լավ կլիներ:
- Հիմա խճուղու վրա՞ ես ապրում:
- Այո: Ի՞նչ ես ասում, գործն անելո՞ւ եմք:
- Չգիտեմ, - պատասխանեց, - դեռ չգիտեմ, գնալո՞ւ եմք, թե՛ չէ:

Վաղը կտեսնվենք:

Տանս դռների առաջ իջեցրեց, ուզում էի ներս մտնել, բայց դեռ դուռը չբացած՝ պառավս հարձակվեց, թե քարչ ես եկել դրսերում, հարբեցողությամբ ես զբաղվել և ուշացել ես ճաշից: Հարցրեցի՝ ինչպե՞ս կարող եմ խմել, երբ գրպանումս կոպեկ չկա, իսկ նա թե՛ երևի պարտք ես արել: Հարցրեցի, նրա կարծիքով ո՞վ ինձ պարտքով փող կտա՝ իմանալով, որ հանրային ծառայության մեջ եմ, իսկ նա թե՛ սպիրտախեղղ մոռութի ինձանից հեռու պահիր ու սեղանի մոտ նստիր: Ես էլ նստեցի: Երեխաները տանը չէին, գնացել էին բեյսբոլի խաղը դիտելու, տեղավորվեցի սեղանի մոտ, բերեց ընթրիքն ու հետս չէր խոսում:

Հարրի

Այս գործին չէի ցանկանա խառնվել, բայց այլընտրանք չուներ: Մեր օրերում ընտրելու հնարավորություն չի տրված: Կարող էի հրաժարվել, բայց ի՞նչ իմանաս, վաղն ինչ գործ է հանդիպելու: Ինքս չեմ խցկվում, բայց եթե պետք է, ուրեմն՝ պետք է: Հավանաբար, էլբերտին հետս չվերցնեմ: Հիմար է, չնայած ազնիվ է, համ էլ լավ նավաստի է: Վախկոտ չէ, բայց չգիտեմ, արժի՞ վերցնել: Մյուս կողմից էլ, հո որևէ հարբեցողի կամ նեգրի չե՞մ վերցնելու: Ինձ այնպիսի մարդ է պետք, որին վստահեմ: Եթե գործը գլուխ գա, նրան հաստատ չեմ նեղացնի: Բայց չեմ կարող ամեն ինչ ասել, թե չէ հետս չի գա, իսկ ինձ պետք է, որ կողքս մարդ լինի: Իհարկե, կնախընտրեի մենակ լինել, մենակ միշտ էլ ավելի լավ է, բայց այս անգամ դժվար թե միայնակ գլուխ հանեմ: Դե, մենակ շատ լավ կլիներ: Էլբերտի համար էլ լավ կլիներ, ոչնչից տեղյակ չէր լինի: Խնդիրը Լեզվանին է: Լեզվանին ամեն ինչից տեղյակ է: Դրա մասին էլ պետք է մտածեին: Այդ ամենը պետք է հաշվի առնեին: Կարծում եք Լեզվանին այնքան հիմար է, որ գլխի չի՞ ընկնում, թե ինչ եմ ուզում անել: Դժվար: Չնայած, կարող է նրանց մտքին բոլորովին էլ դա չէ: Հնարավոր է, նման բան իսկի չեմ էլ անելու: Նաև բնական է, որ մտքներին հենց դա լինի, ես հո լսեցի՞ այդ բառը: Եթե նրանց ուզածը դա է, անմիջապես փակվելուց առաջ պետք է անեն-վերջացնեն, թե չէ առափնյա պահակախմբի ինքնաթիռը կհասցնի ժամանել Մայամիից: Հիմա ժամը վեցին արդեն մութ է: Ինքնաթիռը մի ժամում կհասնի: Հենց որ մութն ընկնի, այլևս վախենալու բան չուներ: Այսպես, եթե հանձն առնեմ դրանց տեղափոխել, պետք է նավի հարցն էլ լուծեմ: Դուրս բերելը դժվար չէ, բայց եթե այսօր դուրս բերեմ, ու գլխի ընկնեն, կարող եմ և հայտնաբերել: Հաստատ աղմուկ կբարձրանա: Ամեն դեպքում, այսօր պետք է անպայման դուրս հանեմ: Կարելի է դուրս բերել՝ հենց որ տեղատվությունը սկսվի, իսկ հետո՝ թաքցնել: Համ էլ կհասցնեմ մի լավ գննել, թե ինչ է պակասում, կարող է ինչ-որ բան է պետք փոխել կամ ավելացնել, նաև հնարավոր է, վրայից բան հանած լինեմ: Բենզին ու ջուր էլ պետք է լցնեմ: Մի խոսքով, գիշերը մի լավ չարչարվելու եմ: Երբ արդեն ապահով թաքցրած կլի-

նեմ, էլբերտը նրանց կբերի մոտորանավակով: Թեկուզ՝ Ուոլթոնի: Կարող եմ վարծել: Կամ էլ՝ Լեզվանին կվարծի: Այդպես ավելի լավ կլինի: Չամ էլ Լեզվանին կօգնի այս գիշեր նավը դուրս բերել: Չենց Լեզվանին: Որովհետև պարզից էլ պարզ է, որ Լեզվանիի հաշվով նրանք ինչ-որ բան որոշել են: Իսկ եթե իմ ու էլբերտի հաշվով էլ են որոշել: Դրանց մեջ նավաստի կա՞: Որևէ մեկը նավաստու մմա՞ն էր: Արի մտածենք: Ոնց որ: Կարծես, այն բարեհամբույրը: Կարող է, հենց այդ ջահե՞լն է: Անպայման պետք է պարզեմ, որովհետև բոլորովին էլ լավ չի լինի, եթե հենց սկզբից հույս ունենան, թե առանց էլբերտի կամ առանց ինձ գլուխ են հանելու: Թե չէ, ուշ թե շուտ, մեր հարցերն էլ կլուծեն: Ծովախորշում ժամանակ շատ կլինի: Ես էլ, հո, անընդհատ մտածում եմ: Կարգին պետք է գցեմ-բռնեմ: Մխալվելու իրավունք չունեմ: Ոչ մի սխալ: Ոչ մի: Դե ինչ, հիմա մտահոգվելու բան կա: Անելու գործ էլ կա, մտածելու էլ, թե չէ նստում ու գուշակում ես, թե ինչ է լինելու: Միայն գուշակություններով չեն ապրում: Գործն արդեն սկսվել է: Չամ էլ՝ արդեն խաղի մեջ ես: Քեզ հնարավորություն է տրվել: Չակառակ դեպքում, պիտի նայես, թե ինչպես է ամեն ինչ գրողի ծոցը գնում: Առանց նավի ու ապրուստի: Այ՛ թեզ Լեզվանի: Չգիտի էլ, ինչ կրակն է ընկել: Չի պատկերացնում, թե այս ամենն ինչով է ավարտվելու: Մենակ թե Ֆրեդիի մոտ երկար չսպասեմ: Շատ գործ ունեմ: Ավելի լավ է, մի բան ուտեմ:

## ՉԼՈՒՄ ԵՐՐՈՐԴ

**Ս**տավորապես ինն անց կեսին ներս մտավ Լեզվանին: Ամմիջապես զգացվեց, որ Ռիչարդի մոտ լավ կոնծել է, որովհետև երբ խնում է, անպատկառ է դառնում, իսկ հիմա կտի տեսքով է հայտնվել դռների մեջ:

- Դե, ընկեր, - դիմեց Չարրիին:
- Ես թեզ ի՞նչ ընկեր, - պատասխանեց Չարրիին:
- Ուզում եմ հետդ խոսել, ընկեր:
- Որտե՞ղ: Բարի հետևի քո գրասենյակում, - հարցրեց Չարրիին:
- Այո: Այնտեղ մարդ կա՞, Ֆրեդի:
- Ենպես օրենք չեն սարքել, որ մարդ լինի: Չգիտե՞ք, ժամը վեցի հետ կապված արգելքը երկա՞ր է տևելու:
- Ինչո՞ւ ինձ չեք վարծում, որ հարցերը լուծեմ, - ասաց Լեզվանին:
- Սատանան թող ձեզ վարծի, - պատասխանեց Ֆրեդիին: Եվ Չարրիին ու փաստաբանը բարի հետևն անցան, որտեղ առանձնասենյակներն ու դատարկ շշերի արկղներն էին:

\*\*\*

Առաստաղին մեն-մի լամպ էր վառվում, Չարրիին արագ ստուգեց բոլոր չլուսավորված առանձնասենյակներն ու համոզվեց, որ ոչ ոք չկար:

- Դե, - ասաց Չարրիին:
- Վաղը չէ մյուս օրը, ուշ երեկոյան, - պատասխանեց Լեզվանին:
- Մտքներին ի՞նչ է:
- Ինքդ իսպաներեն գիտես, - ասաց Լեզվանին:
- Նրանց հո չե՞ք ասել:
- Իհարկե՞ ոչ: Գիտեք, չէ՞, ձեր ընկերն եմ:
- Չեր սեփական մորն էլ կմատնեք:
- Վե՛րջ տվեք: Տեսեք, ինչ գործով եմ ձեզ հետ կիսվում:
- Երբվանի՞ց եք նման քաջություն ձեռք բերել:
- Լսե՛ք, ինձ փող է հարկավոր: Այստեղից պետք է փախչեմ, լրիվ խճճվել եմ: Դե, ինչ ասեմ, ինքներդ էլ գիտեք, Չարրի:
- Ո՛վ չգիտի:
- Լսել եք, չէ՞, ոնց են դրանք հեղափոխության կարիքների համար փող հայթայթում՝ երեխաներ են առևանգում և նման բաներ:

- Լսել են:
- Նույնն էլ սա է: Գաղափարի համար են անում:
- Հասկացանք: Բայց այնտեղ չեն, չէ՞, այստեղ են: Ձեր հարազատ քաղաքում: Այստեղ բանկի բոլոր ծառայողներին լավ ճանաչում եք:
- Ոչ ոք չի տուժելու:
- Սրանց չես կարող վստահել:
- Կարծում էի, կարգին տղամարդ եք:
- Կարգինը՝ կարգին են: Իմ տղամարդկության համար մի՛ անհանգստացեք: Բայց դեռ շարունակելու են այստեղ ապրել:
- Իսկ ես՝ ոչ, - ասաց Լեզվանին:
- Հիսուս Քրիստոս՝ անցավ Հարրի մտքով: Ի՛նքն ասաց:
- Այստեղից հեռանալու են, - շարունակեց Լեզվանին: - Նավը ե՞րբ եք դուրս հանելու:
- Այսօր:
- Ո՞վ է օգնելու:
- Դուք:
- Որտե՞ղ եք թաքցնելու:
- Մշտական տեղում:

\*\*\*

Պարզվեց, նավը դուրս բերելն այնքան էլ դժվար չէր: Շատ հեշտ էր, ինչպես և նախատեսել էր Հարրին: Գիշերային պահակը ժամը մեկ շրջայց էր անում, մնացած ժամանակ նստում էր ռազմական հին նավահանգստի դարպասների մոտ: Մրցամակույկով հասան նավամատույց, կտրեցին նավակառանը, և երբ տեղափոխվեցին սկսվեց, նավը մրցամակույկի օգնությամբ հեշտությամբ ծով դուրս բերեցին: Դրսում, երբ լողում էին նավանցիկ ջրանցքով, Հարրին զննեց շարժիչները և տեսավ, որ ամեն ինչ կարգին էր, ընդամենը բաշխիչի գլխիկներն էին անջատված: Հետո ստուգեց վառելիքի պաշարը, պարզվեց, դեռ հարյուր հիսուն գալոն կար: Բաքից բենզին չէին քաշել, այնքան էր, որքան մնացել էր վերջին ուղերթից հետո: Այն ժամանակ, ծով դուրս գալուց առաջ, երկու բաքն էլ բերնեբերան լցրել էր ու շատ քիչ էր ծախսել, որովհետև ծովը մրրկածուփ էր, և ստիպված նավը դանդաղ էր վարել:

- Տանը բաքով բենզին ունեն, - Հարրին ասաց Լեզվանին: - Կարող եմ շշերը լցնել ու ավտոմեքենայով բերել, եթե էլի պետք լինի, էլբերտը հետը կբերի: Նավը գետաբազուկի մոտ կկանգնեցնեն,

ծիշտ այնտեղ, որտեղ հատվում է խճուղուն: Այնպես որ, կարող են ավտոմեքենայով մոտենալ:

- Նրանք ուզում էին, որ անմիջապես Փորթեր-Դոքի մոտ սպասեիք:

- Ինչպե՞ս կարող եմ նավն այնտեղ կառանել, բոլորի աչքի առաջ:

- Չեք կարող: Բայց չեմ կարծում, թե կցանկանան ավտոմեքենայով գալ:

- Դե լավ, ուրեմն այսօր իմ ասած տեղում կթողնեմ, կլիցքավորեմ, ինչ-որ պետք է կանեմ, հետո կքշեմ իրենց ուզած տեղը: Նրանց մոտորանավակով կբերեք: Իսկ հիմա նավը պետք է տանեմ-տեղավորեմ: Շատ գործ ունեն: Դուք կվերցնեք մարզամակույկը, կգնաք ու կամրջի մոտ ավտոմեքենայով կսպասեք ինձ: Մի-երկու ժամից խճուղու վրա կլինեմ: Նավն այնտեղ կթողնեմ և խճուղի դուրս կգամ:

- Պարզ է, ես ձեր հետևից կգամ, - պատասխանեց Լեզվանին: Հարրին անջատեց շարժիչը, որպեսզի նավն անձայն լողար, շրջեց մրցամակույկն ու շարժվեց ուղիղ այն ուղղությամբ, որտեղից երևում էին պահակային երկկայմ առազաստանավի լույսերը: Հետո անջատեց շարժիչն ու ամուր պահեց մարզամակույկը, որպեսզի Լեզվանին կարողանար տեղափոխվել:

- Ուրեմն՝ երկու ժամից. - ասաց:

- Շատ լավ, - պատասխանեց Լեզվանին:

Դեկանիվը բռնած, Հարրին դանդաղ առաջանում էր մթության մեջ, խուսափելով հայտնվել նավահանգստի լույսերի գոտում, և մտածում էր, որ փող աշխատելու համար Լեզվանին, համենայն դեպս, ահագին չարչարվելու էր: Հետաքրքիր է, որքա՞ն հույս ուներ վաստակել: Եվ, ընդհանրապես, ինչպե՞ս էր դրանց ցանցն ընկել: Խելացի տղա է, կարգին ապագա ունի: Վատ փաստաբան չէ: Մարսնեցի, երբ ինքն ասաց այդ մասին: Ինքն է իր գլխին սարքում: Տարօրինակ է, որ մարդն ընդհանրապես կարողանում է փորձանք բերել: Երբ լսեցի, հասկացա, որ գլխին փորձանք է բերելու, և սարսափեցի:



## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

**Տ**ուն մտնելով՝ լույսը չվառեց, ներքևում հանեց կոշիկներն ու քարե աստիճաններով վերև բարձրացավ: Հանվեց, և մինչ կի-  
նը կարթնանար, հենց վերնաշապիկով անկողին մտավ: Մթուխան մեջ  
լավեց կնոջ ծայնը՝ Հա՛րրի, ինքը պատասխանեց՝ Քնի՛ր, պառավ:

- Հա՛րրի, ի՞նչ է պատահել:
- Ուղերթի եմ գնալու:
- Ո՞ւմ հետ:
- Ոչ մեկի: Կարող է, էլ բերտն էլ գա:
- Ո՞ւմ նավով:
- Իմն եմ վերցրել:
- Ե՞րբ:
- Նոր:
- Բանտ ես ընկնելու, Հարրի:
- Ոչ ոք չգիտի, որ նավը հանել եմ:
- Որտե՞ղ է:
- Թաքցրել եմ:

Անկողնում անշարժ պառկած՝ դեմքին զգաց կնոջ տենչացող  
շուրթերը, հետո՝ շոշափող ձեռքերը, շրջվեց և ամուր սեղմվեց  
նրան:

- Ոգո՞ւմ ես:
- Այո: Հենց հիմա:
- Քնած էի: Հիշո՞ւմ ես, քնած ժամանակ ոնց էինք անում:
- Լսի՛ր, կոնատ թևս չի՞ խանգարում: Տհա՞ծ չէ՞:
- Հիմար ես: Ինձ նույնիսկ դուր է գալիս: Քո ամեն ինչն ինձ դուր  
է գալիս:

Այստեղ դիր: Չէ, ա՛յ, այստեղ: Շարունակի՛ր: Այ, լա՛վ է:  
- Կարծես, ծովային կրիայի լողաթև լինի:  
- Ոչ էլ կրիա ես: Ճի՞շտ է, որ նրանք երեք օր են անում:  
- Ճիշտ է: Զգույ՛շ: Աղջիկներին կարթնացնենք:  
- Նրանք չգիտեն, թե ինչ գանձ ունեն: Երբեք էլ չեն իմանա: Ա՛յս,  
Հարրի, երանի չմեկնեիր: Երբեք ստիպված չլինեիր մեկնել: Շատ  
կանանց հետ ես եղել, սաա՛, ո՞վ է ամենալավը:

- Դու:
- Սուտ ես ասում: Միշտ խաբում ես ինձ:

- Ճիշտ եմ ասում, ամենալավը դու ես:
- Պառավել եմ:
- Երբեք չես պառավի:
- Համ էլ՝ հիվանդ եմ:
- Կապ չունի, եթե կարգին կին ես:
- Շարունակի՛ր: Էլի՛: Թևո այստե՛ղ դիր: Այդպե՛ս: Լա՛վ է: Լա՛վ է:
- Շատ ենք աղմկում:
- Չէ՛, հա, փսփսում ենք:
- Արևածագից առաջ մեկնելու եմ:
- Դե լավ, քնի՛ր: Առավոտյան վաղ կարթնացնեն: Կվերադառ-  
նաս, հետո մի լավ կզվարճանանք: Կզնանք Մայամի, հյուրանո-  
ցում կմնանք, ինչպես այն ժամանակ: Այն անգամվա նման: Այն-  
պիսի տեղ, որտեղ մեզ ոչ-ոք երբեք չի տեսել: Հը՞, գուցե Նոր Օռ-  
լեա՞ն գնանք:
- Կարող է պատահել, - ասաց Հարրին: - Լավ, Սե՛րի, թող քնեն:
- Նոր Օռլեան կգնա՞նք:
- Իսկ ինչո՞ւ՞ ոչ: Մենակ թե հիմա պետք է քնեն:
- Դե լավ, քնի՛ր: Քա՛ղցրս: Քնի՛ր, քնի՛ր: Կարթնացնեն: Մի՛ ան-  
հանգստանա:
- Քնեց՝ անդամատված թևք բարձով մեկ տարածած, իսկ կինը դեռ  
երկար ժամանակ պառկած՝ նրան էր զննում: Պատուհանից ներթա-  
փանցող փողոցային լապտերի լույսի մեջ պարզորոշ տեսնում էր ա-  
մուսնու դեմքը և մտածում էր՝ Ի՞նչ բախտավոր եմ: Հիմա՛ր աղջիկ-  
ներ: Դեռ չգիտեն, թե ինչի են արժանանալու: Իսկ ես գիտեմ, թե ինչ  
ունեն և ինչ են ունեցել: Բախտավոր կին եմ: Ասում է՝ ծովային կրիա-  
յի նման: Ուրախ եմ, որ թևն էր, ոչ թե՛ ոտքը: Չէի ուզեմ, որ ոտքը  
կորցներ: Իսկ թևն ինչու պետք է կորցներ: Ամեն դեպքում, անսովոր  
է, բայց ինձ չի խանգարում: Նրա հետ կապված ոչինչ ինձ չի խան-  
գարում: Երջանիկ կին եմ: Նման տղամարդ գոյություն չունի: Ով չի  
փորձել՝ չգիտի: Ինքս շատ եմ փորձել: Եվ բախտավոր եմ, որ նա է  
ինձ բաժին հասել: Կարող է, կրիաներն էլ նույն զգացումն են ունե-  
ցնում, ինչ և՛ մենք: Հնարավոր է, որ նրանք էլ անընդհատ զգում են  
դա: Կամ՝ կարող է եզին ցա՞վ է պատճառում: Սատանաղն տանի,  
ինչ հիմարություններ են մտքովս անցնում: Տեսե՛ք, քնել է երեխայի  
պես: Ավելի լավ է քնեմ, որ ժամանակին արթնացնեն: Աստված իմ,  
ամբողջ գիշեր կզբաղվեի դրանով, եթե տղամարդիկ այլ կերպ  
ստեղծված լինեին: Ամբողջ գիշեր կանեի ու չէի քնի: Երբեք, երբեք  
չէի քնի: Բուրբուրվիմ, ոչ մի ակնթարթ: Պատկերացնո՞ւմ եք, հը՞: Տա-  
րի՞քս: Այնքան էլ ծեր չեմ: Ասաց, չէ՛, դեռ լավիկն եմ: Քառասուն

## ՉԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Յավանաբար տեսել եք, թե ինչ է կատարվում Հավանայում վաղ առավոտյան. շրջնուլիկները խաղաղ մրափում են պատերի տակ, իսկ սառույց մատակարարող սայլակները ուր-որ է կհայտնվեն բարերի ետնամուտքերի մոտ: Նավահանգստից արդեն քաղաք էինք իջել և անցնում էինք հրապարակի հակառակ կողմը, որպեսզի սրճեինք «Սան Ֆրանցիսկոյի մարգարիտ»-ում: Միակ արթուն մուրացկանը ջուր էր խմում ցայտադրյուրից: Սրճարան մտանք, տեղավորվեցինք սեղաններից մեկի մոտ, և նկատեցինք, որ այն երեքն արդեն մեզ էին սպասում:

Նրանցից մեկը մոտեցավ:

- Դե, ի՞նչ, - հարցրեց:

- Չի ստացվի, - պատասխանեցի, - շատ կցանկանայի օգտակար լինել, բայց անցյալ գիշեր բացատրեցի, որ ի վիճակի չեմ:

- Չեր գինն ասեք:

- Կապ չունի: Չեմ կարող: Եվ՝ վերջ:

Մյուս երկուսը նույնպես մոտեցան և տխուր կանգնեցին իրենց ընկերոջ

կողքին: Հաճելի տղաներ էին, անկեղծորեն կուզեմայի օգնած լինել:

- Ամեն զլխից՝ հազարական, - առաջարկեց նա, ով բավական լավ էր խոսում անգլերեն:

- Մի՛ ստիպեք, որ անհարմար վիճակի մեջ հայտնվեմ, - ասացի:

- Ազնվորեն ասում եմ՝ չեմ կարող:

- Հետագայում, երբ իրադրությունը փոխվի, այս ամենը հաշվի կառնվի:

- Գիտեմ: Ես էլ սրտանց կուզեի օգտակար լինել: Բայց չեմ կարող:

- Ինչո՞ւ:

- Ունեցած-չունեցածս այս նավն է: Կորցրեցի՝ ապրուստից կզրկվեմ:

- Մեր տված փողով նոր նավ կգնեք:

- Բանտում նավն ինչի՞ս է պետք:

Նրանց թվում էր, թե գինն էի բարձրացնում կամ պարզապես ուզում էի, որ խնդրեին ու համոզեին, դրա համար էլ առաջին գրուցակիցս շարունակեց պնդել:

- Երեք հազար կունենաք, վաղվա օրվա համար մեծ գումար է: Հո տեսնո՞ւմ եք, որ այսպես երկար չի շարունակվելու:

- Լսե՛ք, - ասացի, - ինձ համար միևնույն է, թե ձեր երկրի նախագահը ով կլինի: Ես սկզբունք ունեմ. Նահանգներ չտանել այն ամենը, ինչը կարող է խոսել:

- Նկատի ունեք, որ խոսելու եմք, - հարցրեց նրանցից մեկը, որ մինչ այդ լուռ էր: Տեսքից երևում էր՝ խիստ գրգռված էր:

- Ասացի, կարող է:

- Կարծում եք, *lengua larga*՞ եմք:

- Ոչ:

- Իսկ գիտե՞ք, թե *lengua larga*-ն ինչ է:

- Այո: Բացբերան:

- Եվ տեղյա՞կ եք, թե նման մարդկանց հետ ինչպես ենք վարվում:

- Ինձ հետ այդ ձևով չխոսեք, - պատասխանեցի, - ինքներդ եք առաջարկում, ձեզանից ոչինչ չեմ խնդրել:

- Վեղրջ տուր, Պանչո, - զայրացած ընկերոջը սաստեց առաջին գրուցակիցս:

- Ասաց, որ կծախենք, - շարունակեց Պանչոն:

- Լսեղք, - բացատրեցի, - ասացի, որ չեմ տանի այն, ինչը կարող է խոսել: Լիկյորի արկղերը չեն կարող խոսել: Հյուսապատ շշերը՝ նույնպես: Եվ էլի նման բաներ: Իսկ մարդիկ կարող են խոսել:

- Չինացիները կարո՞ղ են խոսել, - չարախնդաց Պանչոն:

- Կարող են, բայց ես նրանց չեմ հասկանա, - պատասխանեցի:

- Մի խոսքով, չե՞ս ուզում:

- Երեկ արդեն ասել եմ՝ չեմ կարող:

- Բայց դու չես խոսելու, չե՞, - հարցրեց Պանչոն:

Ասածներս չէր ըմբռնում, դրա համար էր կատաղում: Ինձ թվաց, որ այդ ամենին գումարվել էր նաև հիասթափությունը: Հարկ չհամարեցի պատասխանել:

- Դու *lengua larga* չես, չե՞, - շարունակեց չարախնդալ:

- Չեմ կարծում:

- Այսինքն՝ ի՞նչ, վախեցնո՞ւմ ես:

- Լսի՛ր, - դիմեցի նրան, - առավոտ կանուխ պետք չէ կուպտել: Չեմ կասկածում, որ բոլ կոկորդ ես կտրել: Իսկ ես չեմ հասցրել նույնիսկ սրճել:

- Ուրեմն վստահ ես, որ մարդկանց կոկո՞րդ եմ կտրել:

- Ոչ, - պատասխանեցի, - և ինձ բոլորովին չի հետաքրքրում: Չե՞ս կարող գործից խոսել, առանց գրգռվելու:

ի՞նչ տարիք է, որ: Նրանից երկու տարով եմ մեծ: Տե՛ս, է, երեխայի  
նման քնել է:

\*\*\*

Արևածագից երկու ժամ առաջ արդեն ավտոտնակում էին, բեն-  
զինի բաքի կողքին, շշերը լցնում, խցանում էին ու մեքենայի բեռ-  
նախցիկում տեղավորում: Հարրին կեռիկն ամրացրել էր աջ ձեռքին  
և ճարպկորեն տեղաշարժում ու բարձրացնում էր հյուսկեն շշերը:

- Չե՞ս ուզում նախաճաշել:
- Կվերադառնամ՝ հետո:
- Գոնե սո՛ւրճ խմե՛իր:
- Պատրաստ է:
- Իհարկե: Տանից դուրս գալուց առաջ եմ սալօջախին դրել:
- Դե, բե՛ր:

Սուրճը բերեց, ամուսինն ընպեց մթության մեջ, մեքենայի անիվի  
կողքին պազած: Կինը զավաթը վերցրեց ու կանգադարակին դրեց:

- Հետո գալու եմ, կօգնեմ շշերը դատարկել, - ասաց:
- Լավ, - պատասխանեց: Կինն ամուսնու կողքը տեղավորվեց՝  
գիրուկ, երկարոտն, խոշորածեռն, հաստազոր, բայց դեռևս գեղեց-  
կատես, բոլորազլխարկը քաշած ոսկեգույն ներկած մազերին: Ցայ-  
գալույսի խավարին ու ցրտին սլանում էին խճուղով, մառախուղի  
մեջ, որ ծանրորեն իջել-կախվել էր հարթավայրի վրա:

- Անհանգիստ ես, Հարրի:
- Չգիտեմ: Պարզապես հուզվում եմ: Ի՞նչ է, որոշել ես մազերդ  
երկարացնե՞լ:
- Մտածեցի, մի քիչ կարելի է: Աղջիկներն անվերջ հոգիս հանում են:
- Նրանց ասածը գրողի ծոցն ուղարկիր: Թող այնպես, ինչպես  
կա:

- Իսկապե՞ս, այդպե՞ս ես ուզում:
- Այո, - պատասխանեց: - Ինձ այդպես է դուր գալիս:
- Չե՞ս կարծում, որ արդեն շատ եմ ծերացել:
- Նրանցից գեղեցիկ ես:
- Լավ, ուրեմն կկտրեմ: Եթե ուզում ես, գույնն էլ կբացացնեմ:
- Աղջիկների ի՞նչ գործն է, թե դու ինչ ես անում, - ասաց Հարրին:

- Թող  
գահլաղ չտանեն:
- Դե, գիտես նրանց: Բոլոր ջահելներն էլ նույնն են: Լսի՛ր, եթե  
այս ուղևորությունդ հաջող անցավ, Նոր Օռլեան գնալու ենք, չէ՞:
- Մայամի:

- Թեկուզ՝ Մայամի: Նրանց այստեղ կթողնենք:
- Սկզբում այս գործը պիտի ավարտեն:
- Բայց անհանգիստ ես, հա՞:
- Չէ:
- Գիտե՞ս, չորս ժամ անքուն էի, քո մասին էի մտածում:
- Անչափ բարի պառավ ես:
- Հենց որ քո մասին եմ մտածում, անմիջապես քեզ եմ ուզում:
- Լավ, հիմա արի բենզինը լցնենք, - ասաց Հարրին:

## ԳԼՈՒԽ ԴԻՆԳԵՐՈՐԴ

Առավոտյան ժամը տասին Զարրին արդեն Ֆրեդիի բարի կանգնակի մոտ էր: Կողքը կանգնած էր ևս չորս-հինգ հոգի: Մաքսային երկու ծառայողները նոր էին հեռացել: Զետաքրքրվել էին նավի մասին, պատասխանել էր, որ տեղյակ չէ:

- Երեկ երեկոյան որտե՞ղ էիք, - հարցրել էր նրանցից մեկը:
- Այստեղ, հետո՝ տանը:
- Մինչև քանի՞սն էիք այստեղ:
- Մինչև փակվելը:
- Այստեղ ձեզ որևէ մեկը տեսե՞լ է:
- Բոլորն են տեսել, - ասել էր Ֆրեդին:
- Իսկ ի՞նչ է պատահել, - հետաքրքրվել էր Զարրին: - Ձեր կարծիքով, իմ սեփական նա՞վն էի գողանալու: Գողանայի, ի՞նչ էի անելու:
- Ընդամենը հարցրեցի, թե որտեղ եք եղել, - ասել էր մաքսավորը: - Մի՛ բարկացեք:
- Չեմ բարկանում, - պատասխանել էր Զարրին: - Այն ժամանակ էի բարկացել, երբ նավն անհիմն կալանեցին, առանց ապացույց ունենալու, թե դրանով սպիրտ է տեղափոխվել:
- Երդվել և ցուցմունք էին տվել, - ասել էր մաքսավորը: - Ցուցմունք տվողը ես չեմ եղել: Ինձանից լավ գիտեք, թե ով էր:
- Ասե՛ք թե, - պատասխանել էր Զարրին, - բայց մի՛ ասեք, թե ձեր հարցերից բարկանում եմ: Ինձ համար ավելի լավ կլիներ, որ նավը տեղում մնար: Ետ ստանալու հույս կունենայի: Զիմա, եթե իսկապես գողացել են, էլ ի՞նչ հույս:
- Ճիշտն ասած՝ ոչ մի, - պատասխանել էր մաքսավորը:
- Մի խոսքով, գնացեք, ձեր գործին, - ասել էր Զարրին:
- Դե լավ, իրար մի՛ անցեք, - ասել էր մաքսավորը, - թե չէ այնպես կանեմ, որ իսկապես իրար կանցնեք:
- Տասնհինգ տարի է՝ նույնն են լսում, - պատասխանել էր Զարրին:
- Տասնհինգ տարի իրար չեք անցել:
- Բանտում էլ չեմ մտտել:
- Դե, ուրեմն, հանգիստ մնացեք, թե չէ՝ կնստեք:
- Լա՛վ, լա՛վ, հանգստացե՛ք, - ասել էր Զարրին: Այդ ժամանակ ներս էր մտել հիմար տաքսիստը՝ կուբացին, հետը՝ ինչ-որ տիպ, որ նոր էր ինքնաթիռից իջել, և Մեծ Ռոջերը դիմել էր կուբացուն.
- Զետյուս, ասում են, երեխա՞ ես ունեցել:

- Այո, պարոն, - հպարտորեն պատասխանել էր Զետյուսը:
- Այդ ե՞րբ հասցրիր ամուսնանալ, - հարցրել էր Ռոջերը:
- Անցել ամիս: Ամիս, որ առաջ սա: Զարսանիք գա՞լ:
- Ոչ, - պատասխանել էր Ռոջերը, - հարսանիք չգալ:
- Շատ բան կորցնել, - ասել էր Զետյուսը, - կորցնել ուրախ հարսանիք:
- Ի՞նչ պատահել, որ չգալ:
- Չէիր հրավիրել:
- Այո, այո, - ասել էր Զետյուսը: - Ես մոռանալ: Ձեզ չկանչել: Դուք ստանա՞լ, ինչ ուզե՞նալ, - կուբացին դիմել էր նորեկին:
- Այո, կարծես: Սա ձեր ունեցած ամենաբանկ բակարդի՞ն է:
- Այո, պարոն, - պատասխանել էր Ֆրեդին: - Սա իսկական carta del oro՞ է:
- Լսի՛ր, Զետյուս, ինչո՞ւ ես կարծում, որ քո երեխան է, - շարունակել էր Ռոջերը: - Բոլորովին էլ քոնը չէ:
- Ո՞նց իմ չէ: Ո՞նց: Սատանա տանի, ես չթողնել, որ դուք այդպես խոսել:
- Ո՞նց իմ չէ: Դուք կով ամեն ու հորթ չստանա՞լ: Ի՞նչ երեխա: Աստված սիրես, ի՞նչ: Իմ սեփական երեխա: Այո՛, պարոն:
- Նա հեռացավ նորեկի ու մի շիշ բակարդիի ընկերակցությամբ, բոլորը սկսեցին հիմա էլ Ռոջերի վրա ծիծաղել: Տարօրինակ տիպ է այդ Զետյուսը: Մյուս կուբացին՝ Սուիտուաթերն էլ պակասը չէ:
- Այդ ժամանակ ներս մտավ փաստաբան Լեզվանին և Զարրիին դիմեց.
- Զենց նոր մաքսավորները գնացին ձեր նավի հետևից:
- Զարրին նրան նայեց. դեմքն այնպիսի արտահայտություն ուներ, կարծես ասում էր՝ կսպանեմ: Լեզվանին նույն անարտահայտիչ տոնով շարունակեց.
- Աշխատանքի առաջընթացի վարչության հսկա բեռնատարների վրայից ինչ-որ մեկը նկատել է, որ մանգլեմիների մեջ նավ կա և Բոկո Զիկայից, որտեղ ճամբար են կառուցում, զանգել է մաքսատուն: Զենց նոր Զերման Ֆրեդերիքսին հանդիպեցի: Նա ասաց:
- Զարրին չարձագանքեց, դեմքը կրկին իր բնական արտահայտությունը ստացավ: Զետո դիմեց Լեզվանիին.
- Միշտ ամեն ինչից տեղյակ եք:
- Կարծում էի, կհետաքրքրեր ձեզ, - Լեզվանին պատասխանեց նույն անարտահայտիչ ծայնով:

\* Իսպ.՝ ոսկե պիտակ – ծ.թ.

- Ինձ հետ կապ չունի, - ասաց Չարրին: - Թող լավ հսկեին: Կանգնակի մոտ էին և այլևս չխոսեցին, մինչև որ Մեծ Ռոջերն ու մյուսները հեռացան: Չետո երկուսով անցան հետնասենյակը:
- Թույն եք, է՞, - ասաց Չարրին, - ինչին ձեռք եք գցում, թունավորվում է:
- Ե՞ս եմ մեղավոր, որ բեռնատարի վրայից տեսել եմ: Տեղն ինքներդ էիք ընտրել: Ինքներդ էլ թաքցրել էիք:
- Լռե՛ք, - ասաց Չարրին: - Ի՞նչ է ստացվում, առաջ այդտեղ նման բեռնատարներ չէին հայտնվում: Ազնիվ ճանապարհով փող վաստակելու վերջին հնարավորությունս էր: Վերջինը՝ նավն այնտեղ բշել, ուր փող կա:
- Ընդամենը տեղյակ եմ պահում, թե ինչպես է եղել:
- Պարզապես լեշակեր եք:
- Ինչ որ է, - կարճ կապեց Լեզվանին, - նրանք ուզում են այսօր երեկոյան շարժվել:
- Քարն իրենց գլուխը:
- Սկսում են անհանգստանալ:
- Ո՞ր ժամին են ուզում շարժվել:
- Չինգին:
- Նավ կճարեն: Եվ ցանկացած տեղ կհասցնեն, թեկուզ՝ դժոխք:
- Վատ միտք է:
- Էլի՞ սկսեցիք կռալ: Ձեր քիթը մի՞ խոթեք իմ գործերի մեջ:
- Լսե՛ք, անխելք կռվազան, - ասաց Լեզվանին, - ուզում եմ օգնել ձեզ, բանի տեր դարձնել...
- Եվ թունավորում եք: Լռե՛ք: Ավելի լավ է, ձեր նման մաղձի հետ գործ չունենայի:
- Դե վե՛րջ տվեք, զգվացրի՛ք:
- Լավ, - ասաց Չարրին: - Չիմա պետք է մտածեմ: Մինչև հիմա մի բան էի մտածում, մտածեցի-վերջացրի, հիմա ուրիշ բանի մասին եմ մտածում:
- Ինչո՞ւ չեք ուզում, որ օգնեմ ձեզ:
- Ժամը տասներկուսին կգաք այստեղ ու գրավը կբերեք:

\*\*\*

Երբ ընդհանուր սրահը մտան, Էլբերտն արդեն այնտեղ էր և անմիջապես Չարրիին մոտեցավ:

- Էլբերտ, ցավում եմ, բայց քեզ չեմ վերցնելու, - ասաց Չարրին: Արդեն որոշել էր:
- Շատ չի պահանջելու, - պատասխանեց Էլբերտը:

- Շատ եմ ցավում, - շարունակեց Չարրին, - բայց քո կարիքն այլևս չկա:
- Այդքանով ուրիշ մարդ, կարգին մարդ հետդ չի գա, - ասաց Էլբերտը:
- Մեռակ եմ գնալու:
- Նման գործի մեռակ չեն գնում, - շարունակեց Էլբերտը:
- Չա՛յնդ, - ասաց Չարրին, - իմ գործերից ի՞նչ ես հասկանում: Թե՞ հանրային աշխատանքների ժամանակ եմ սովորեցրել:
- Կորի՛ր գրողի ծոցը, - բարկացավ Էլբերտը:
- Կարող է, և՛ կորչեմ, - ասաց Չարրին: Դեմքին նայելով՝ անմիջապես կարելի էր գլխի ընկնել, որ մտահոգ էր և չէր ուզում, որ իրեն խանգարեին:
- Ամեն դեպքում, կուզեի գալ, - խոսեց Էլբերտը:
- Չեմ կարող վերցնել, - ասաց Չարրին: - Գիտե՞ս ինչ, ինձ մեռակ քող:
- Էլբերտը հեռացավ, Չարրին հենվել էր բարին և այնպես էր նայում հինգ, տասը ցնտանոց ու քառորդ դոլարանոց ավտոմատների և Քեստերի «Վերջին ճակատամարտը»\* նկարին, կարծես առաջին անգամ էր տեսնում:
- Բայց Չեյտուսը երեխայի հաշվով լավ շշպոեց Մեծ Ռոջերին, չէ՞, - սուրճի բաժակները օժառաջրի թասի մեջ ընկղմելով՝ նրան դիմեց Ֆրեդին:
- Մի տուփ «Չեստերֆիլդ» տուր, - պատասխանեց Չարրին: Տուփը խցկեց կոնատ թևատակը, մի ծայրից բացեց, սիգարետ հանեց, բերանը դրեց, հետո տուփը գրպանը խցկեց ու կացրեց սիգարետը:
- Նավդ սարքի՞ն է, - հարցրեց:
- Նոր եմ վերադարձել, - պատասխանեց Ֆրեդին: - Սարքին-կարգին է:
- Վարձով կտա՞ս:
- Ինչի՞ համար է:
- Կուրա անցնելու:
- Ամբողջ արժեքը պետք է գրավ դրվի:
- Ի՞նչ արժե:
- Չազար երկու հարյուր դոլար:
- Կվերցնեմ, - ասաց Չարրին: - Առանց գրավի կվստահե՞ս:
- Ոչ, - պատասխանեց Ֆրեդին:

\* Գեներալ Ջորջ Քեստերը ջախջախիչ պարտություն է կրել հնդկացիներից 1876 թվականին: Այս նկարը քաջ ծանոթ է բոլոր ամերիկացիներին:

- Դիմացը տունս կտամ:
- Տունդ ինձ պետք չէ: Հազար երկու հարյուր է պետք:
- Պայմանավորվեցինք, - ասաց Հարրին:
- Սկզբում՝ փողը, - ասաց Ֆրեդին:
- Լեզվանին որ գա, կասես ինձ սպասի, - ասաց Հարրին ու դուրս եկավ:

## ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

**Ս**երին ու աղջիկները նախաճաշում էին:

- Ողջույն, հայրիկ, - ասաց ավագ դուստրը: - Հայրիկը եկավ:
  - Ի՞նչ կա ուտելու, - հարցրեց Հարրին:
  - Տապակած միս, - պատասխանեց Մերին:
  - Հայրիկ, ասում են նավթ գողացել են:
  - Արդեն գտել են, - ասաց Հարրին:
- Մերին նրան նայեց:
- Ո՞վ է գտել, - հարցրեց:
  - Մաքսավորները:
  - Ա՛խ, Հարրի, - կարեկցանքով ասաց կինը:
  - Բայց լավ է, չէ՞, որ գտել են, հայրիկ, - ասաց կրտսերը:
  - Ուտելիս չի կարելի խոսել, - պատասխանեց Հարրին: - Նախաճաշս ի՞նչ եղավ: Ո՞ւմ ես սպասում:
  - Արդեն բերում են:
  - Ժամանակ չունեն, - ասաց Հարրին: - Աղջիկներ՛ր, վերջացրեք ու այստեղից՝ հայրե՛: Մայրիկի հետ խոսելիք ունեն:
  - Հայրիկ, փող տուր, երեկոյան ուզում ենք թատրոն գնալ:
  - Ավելի լավ է՝ գնացեք լողափ: Անվճար է:
  - Լողափի համար ցուրտ է, հայրիկ, համ էլ՝ թատրոն ենք ուզում:
  - Լավ, լավ, - ասաց Հարրին:
- Երբ աղջիկները սենյակից դուրս եկան, դիմեց Մերիին.
- Չե՞ս կտրատի:
  - Հիմա, քաղցրս:
- Մանրացրեց միսը, ինչպես փոքրիկների համար են կտրատում:
- Շնորհակալություն, - ասաց Հարրին: - Արդեն ոչ մի բանի պիտանի չեմ:
- Աղջիկներն էլ, ոնց որ, մի բան չեն, հը՞:
- Չէ, քա՛ղցր:
  - Այդպես էլ տղա չունեցանք:
  - Որովհետև կարգին տղամարդ ես: Կարգին տղամարդուց աղջիկ է լինում:
  - Ինձանից հիմա էլ ի՞նչ տղամարդ, - ասաց Հարրին: - Լսի՛ր, մեկնում են, դժոխքն են գնում:

- Ասա, տեսնեմ, նավի՞ն ինչ եղավ:
- Բեռնատարից են տեսել: Բարձր բեռնատարից:
- Բանը բուրդ է:
- Ավելի վատ: Ք... է:
- Լավ, լավ, Հարրի, տանը նման բառեր մի՞ օգտագործիր:
- Երբեմն անկողնում դրանից վատ բաներ են ասում:
- Դա ուրիշ է: Բայց տանը, սեղանի շուրջ նման բառեր չեն ուզում

լսել:

- Ամեն ինչ էլ ք... է:
- Սրտնեղած ես, քաղցրս, - ասաց Մերին:
- Չէ, - ասաց Հարրին, - պարզապես մտածում եմ:
- Դե լավ, մտածիր: Քո ուժերին հավատում եմ:
- Ես էլ: Ուրիշ ոչ մի բանի չեմ հավատում:
- Հիմա չե՞ս ուզում գործի մասին պատմել:
- Ոչ: Բայց չանհանգստանա, ինչ էլ լսես՝ իրար չանցնես:
- Չեմ անհանգստանա:
- Լսի՛ր, Մերի: Չեղմահարկ բարձրացիր ու «Թոմսոնս» բեր, փայտյա արկղի մեջ էլ նայիր, տես, փամփշտակալները լիցքավորվա՞ծ են:
- Հրացան մի՞ վերցրու:
- Պետք է:
- Արկղով փամփուշտ է՞լ է պետք:
- Ոչ: Ինքնուրույն չեմ կարող լիցքավորել: Չորս փամփշտակալ ունեմ:
- Քաղցրս, ասա, վտանգավո՞ր ուղևորություն է:
- Չազդելի:
- Աստված իմ, - ասաց կինը: - Տե՛ր Աստված, այնպես կուզեի, որ ստիպված չլինեիր նման գործեր անել:
- Գնա՛, գնա իրացանը բե՛ր: Մի հատ էլ սուրճ դիր:
- Հիմա, հիմա, - պատասխանեց Մերին: Ապա թեքվեց սեղանի վրա և համբուրեց ամուսնու շուրթերը:
- Ինձ մենակ թող, - ասաց Հարրին: - Պետք է մտածեմ:

Նստել էր սեղանի մոտ ու նայում էր դաշնամուրին, սպասքապահարանին, ռադիոընդունիչին, «Սեպտեմբերյան առավոտ» փորագրությանն ու աղեղները գլխավերևում ձգած կուպիդոնների նկարներին, մաքուր կաղնեփայտից սեղանին և նույն փայտից սարքած փայլուն աթոռների, պատուհանների վարագույրներին ու մտածում էր՝ Կրկին բախտ վիճակվելո՞ւ է վայելել այս տունը: Ինչո՞ւ է հիմա վիճակս ավելի վատ, քան այն ժամանակ, երբ դեռ նոր էի սկ-

սել: Եթե այս խաղն ինչպես հարկն է՝ ավարտին չհասցնեմ, ամեն ինչ կորած է: Չէ՛ մի: Տունը չհաշված, իսկի վաթսուս դուլար էլ չունեմ, բայց ամեն ինչ սեղանին եմ դնելու: Անիծյալ աղջիկներ: Ես ու պառավս այդքանը կարողացանք: Երբ հետը ծանոթացա, նրա պահեստում երևի տղաներն արդեն վերջացել էին:

- Ահա, խնդրեմ, - հրացանը ուսափոկից քարշ տալով՝ ասաց Մերին: - Բոլոր փամփշտակալները լիցքավորված են:

- Գնալու ժամանակն է,- պատասխանեց Հարրին և կնոջ ձեռքից վերցրեց կտավե յուղոտ պատյանը, որի մեջ անկանոն լցված էին հրացանի մասերը: - Տեղավորի՛ր մեքենայի առջևի նստարանի տակ:

- Ցտեսություն, - ասաց Մերին:
- Ցտեսություն, պառավ:
- Չեմ անհանգստանա: Բայց զգույշ եղիր:
- Բարով մնաս:
- Ա՛խ, Հարրի, - հառաչեց կինն ու ամուր սեղմվեց ամուսնուն:
- Դե լավ, թող: Շտապում եմ:
- Կռնատ թևով թփթիացրեց կնոջ թիկունքին:
- Ծովակրիա՛, - ասաց կինը: - Ա՛խ, Հարրի, զգույշ կլինես:
- Վերջ, գնացի: Ցտեսություն, պառավ:
- Ցտեսություն, Հարրի:

Հետևեց, մինչև դուրս եկավ տանից՝ բարձրահասակ, թիկնեղ, ծիգ մարմնով, պիրկ ազդրերով, քայլելիս ինչ-որ կենդանի էր հիշեցնում, անցավ կնոջ մտքով, արագ ու թեթև շարժումներով՝ բոլորովին չէր ծերացել, ի՛նչ անկաշկանդ ու սահուն քայլվածք է, մտածեց, իսկ երբ մեքենա նստեց, երևացին ամուսնու խարտյաշ, արևակեզ մազերը, մոնդոլատիպ լայն այտուսկրերն ու նեղ աչքերը, կոտրած քիթը, լայն բերանն ու կլորավուն կզակը, մեքենա նստելիս ամուսինը ժպտաց կնոջը, և կինը սկսեց արտասվել: «Ա՛խ, այդ անիծյալ դեմքը», մտածում էր կինը: «Հենց որ տեսնում եմ այդ անիծյալ դեմքը, լացս գալիս է»:

## ՉԼՈՒԽ ՅՈՒԹԵՐՈՐԴ

**Տ**րեղի բարի կանգնակի մոտ երեք հովելներ էին նստած, Ֆրեդին խմիչք էր մատուցում: Մեկը բավական բարձրահասակ, նիհարակազմ, լայնաթիկունք տղամարդ էր, կիսավարտիքով, աչքերին՝ հաստապակի ակնոց, դեմքն արևառ էր, փոքրիկ, կարճ կտրած դեղնակարմիր բեղ ուներ: Կողքին նստած էր շիկահեր տիկինը, որի գանգուր մագերը տղամարդավարի կարճ էին կտրած, բարեկազմ չէր, դեմքի արտահայտությունն ու մարմնի կառուցվածքը հուշում էին, որ կին-ըմբշամարտիկ էր: Նույնպես կիսավարտիքով էր:

- Նզովյալ լինեք, - կինը խոսում էր երրորդ հովելի հետ, որի դեմքն ուռած և կարմիր էր, բեղը՝ ժանգագույն, կանաչ հովարով սպիտակ կեպի էր դրել և տարօրինակ ձևով էր արտաբերում բառերը՝ շուրթերն ուռցնելով, կարծես ահավոր տաք ինչ-որ բան էր ուտում:

- Հիանալի է, - ասաց կանաչ հովարով տղամարդը, - ամօրյա խոսքում նման բան երբեք չէի լսել: Կարծում էի հնացած դարձված է, նրանցից, որ միայն ... ծիծաղաշարժ պատմվածքներում են հանդիպում, և ոչ՝ գրական լեզվում:

- Նզովյալ եք, նզովյալ, - կոկետության հանկարծական բռնկումով կրկնեց ըմբշամարտիկի տեսքով տիկինը՝ գրուցակցին պարզելով իր պզուկավոր կիսադեմը վայելելու հաճույքը:

- Հրաշալի է, - մեկ անգամ էլ կրկնեց կանաչ հովարավորը: - Այնքան գեղեցիկ եք արտասանում: Հավանաբար, Բրուկլինի՞ց է ծանանգություն մնացել:

- Մի՛ նեղվեք: Տիկինս է, - ասաց բարձրահասակը: - Ծանոթ չե՞ք:

- Ինքն էլ է նզովյալ, իր հետ ծանոթ լինելն էլ, - վրա բերեց կինը: - Այստեղ ձեզ լա՞վ եք գգում:

- Ոչինչ, - պատասխանեց կանաչ հովարավորը: - Իսկ դո՞ւք:

- Իրեն հրաշալի է գգում, - ասաց բարձրահասակը, - ինքներդ կհամոզվեք:

Այդ պահին ներս մտավ Հարրին, և բարձրահասակի տիկինն ասաց.

- Ի՞նչ անզուգական է: Իսկն իմ ուզածն է: Հայրի՛կ, ինձ համար կառնե՞ս:

- Կարո՞ղ եմ հետդ խոսել, - Հարրին դիմեց Ֆրեդին:

- Իհարկե: Հենց հիմա և ինչի մասին կցանկանաք, - մեջ ընկավ հովել տիկինը:

- Չայնդ կտրիր, պոռնի՛կ, - ասաց Հարրին: - Դո՛ւրս գանք, Ֆրեդի: Հետնամասի սենյակում, սեղանի մոտ սպասում էր Լեզվանին:

- Ողջո՛ւյն, ընկեր, - ասաց Հարրին:

- Չայնդ, - վրա բերեց Հարրին:

- Լսի՛ր, - խոսեց Ֆրեդին, - վե՛րջ տուր: Այլևս այդ ձևով չչարունակես:

Եթե գործով ես եկել՝ մի՛ հայիոյիր: Եվ կնոջը կարգին հաստատությունում պոռնիկ չեն անվանում:

- Պոռնիկ չէ, ի՞նչ է, - պատասխանեց Հարրին, - չլսեցի՞ր, ինչ ասաց:

- Ինչ էլ լինի, երեսին նման բան չի կարելի ասել:

- Լավ: Փողը բերե՛լ եք:

- Իհարկե, - ասաց Լեզվանին: - Ինչո՞ւ չպետք է բերեի: Չասացի՞, որ բերելու եմ:

- Տեսնեմ:

Լեզվանին փողը նրան մեկնեց: Հարրին հաշվեց՝ տասը հատ հարյուրանոց էր, չորս հատ՝ քսանանոց:

- Պետք է հազար երկու հարյուր լիներ:

- Իմ հասանելիքը վերցրել եմ, - ասաց Լեզվանին:

- Մնացածն էլ տվեք:

- Ոչ:

- Տվե՛ք:

- Հիմարություն մի՛ արեք:

- Ողորմելի ճիճո՛ւ:

- Հանգստացի՛ր, այ անասուն, - ասաց Լեզվանին: - Ուժդ չփորձե՛ս, միևնույն է՝ մոտս չէ:

- Պարզ է, - ասաց Հարրին, - ավելի շուտ պետք է գլխի ընկած լինեի:

- Լսի՛ր, Ֆրեդի: Վաղուցվա ծանոթներ ենք: Նավդ հազար երկու հարյուր արժի: Հարյուր քսանը պակասում է: Սա վերցրու, մնացած հարյուր քսանն ու վարձավճարն էլ կմնա հետո:

- Ուրեմն, պարտք ես մնում երեք հարյուր քսան դոլար, - ասաց Ֆրեդին:

Նման գումար վտանգելը նրա համար խաղ ու պար չէր, և այդ մասին մտածելով՝ նույնիսկ քրտնեց:

- Ավտոմեքենա ունեմ, տանն էլ ռադիոընդունիչ կա, այդքան կարժենան, դրանք էլ գրավ համարիր:



- Կարող եմ փաստաթղթով ձևակերպել, - ասաց Լեզվանին:
- Ինձ թուղթ պետք չէ, - ասաց Ֆրեդին: Քրտինքի մեջ կորել էր, ծայրն էլ անվճռական էր: Հետո ավելացրեց, - Դե լավ, փորձենք: Բայց, Աստոն սիրուն, նավի հետ զգույշ կվարվես, խոստանում ես, Հարրի:
- Սեփական նավիս նման:
- Քոնն արդեն կորցրել ես, - ասաց Ֆրեդին: Քրտինքը ջրի նման հոսում էր մարմնով, Հարրիի նավը հիշելով՝ տազնապան ավելի աստկացավ:
- Շատ զգույշ կլինեն:
- Փողը բանկի պահոցում կդնեն, - ասաց Ֆրեդին: Հարրին Լեզվանիին նայեց:
- Ապահով տեղ է, - քմծիծաղ տվեց:
- ԲուՖետապան, - ծայրնեց ինչ-որ մեկը:
- Քե՛զ են կանչում, - ասաց Հարրին:
- ԲուՖետապան, - կրկին լսվեց նույն ծայրը: Ֆրեդին գնաց:
- Այս մարդն ինձ վիրավորեց, - Հարրիի ականջին հասավ նույն ճղճղան ծայրը, բայց ուշադրությունն արդեն Լեզվանիի կողմն էր.
- Կսպասեմ նավահանգստում, փողոցի վերջում: Կես թաղամաս այն կողմ:
- Եղավ:
- Այսքանը:
- Եղավ, ընկե՛ր:
- Ես քեզ ի՞նչ ընկեր:
- Ինչպես կուզեք:
- Ժամը չորսից այնտեղ կլինեն:
- Ուրի՞շ:
- Նավը հափշտակելու են, պա՞րզ է: Ես բանից անտեղյակ եմ: Պարզապես շարժիչն եմ ստուգում: Նույնիսկ ուղևորվելու համար պատրաստ չեմ: Ֆրեդիի նավը վարձել եմ, որ սիրող ձկնորսներ պտտեցնեն: Չենքի ուժով ստիպելու են, որ շարժիչը գործի զցեն, կառանապարանն էլ կտրելու են:
- Իսկ Ֆրեդի՞ն: Նրանից հո ձկնորսության համար չե՞ք նավը վերցրել:
- Ֆրեդիին կզգուշացնեն:
- Չարժե:
- Ասելու եմ:
- Խորհուրդ չէի տա:

- Լսե՛ք, նույնիսկ պատերազմի տարիներին եմ Ֆրեդիի հետ գործ արել:
- Երկու անգամ, և խնդիր չենք ունեցել: Գիտե՞ք, նրա համար որքան եմ ապրանք բերել: Քաղաքի խուժանից միայն նրան եմ վստահում:
- Ինքս ոչ մեկին չէի վստահի:
- Դուք՝ իհարկե: Ամեն մարդ իր արշինով է չափում:
- Ինձ հանգիստ թողեք:
- Լավ, հիմա գնացեք ձեր ընկերների մոտ: Ի՞նչ ալիքի ունեք:
- Կուբացիներ են: Հանդիպել եմ հյուրանոցում: Նրանցից մեկին պետք է օգնեի հոժարագրով գումար ստանալ: Անհավանական բան կա՞:
- Եվ ոչինչ չե՞ք նկատել:
- Ոչինչ: Պայմանավորվել էինք հանդիպել բանկում:
- Ինչո՞վ են գալու:
- Տաքսիով:
- Վարորդի կարծիքով, նրանք ի՞նչ են, ջութակահարներ՞:
- Մեկին կճարենք, որ ընդհանրապես չի մտածում և կարծիք չունի: Այս քաղաքում՝ ինչքան ուզես: Թեկուզ՝ Հեյսուսը:
- Հեյսուսը լավ էլ գլխի ընկնող է: Հիմար-հիմար դուրս տալուն մի՛ նայեք:
- Կասեմ, թող ավելի հիմարին գտնեն:
- Այնպիսի մեկին, որ երեխա չունենա:
- Բոլորն էլ ունեն: Տաքսու վարորդ տեսե՞լ եք, որ զավակ չունենա:
- Ա՛յ քեզ ստոր առնետ:
- Բայց հո երբեք մարդ չեմ սպանել, - պատասխանեց Լեզվանին:
- Չեք էլ սպանի: Լավ, դուրս գանք: Չեր կողքին որ նստում եմ, ոնց որ ոջլոտեմ:
- Երևի, ձեզանից անբաժան են:
- Ի՞նչ է, խոսելու ժամանա՞կ են վրաղ քաշվում:
- Եթե բերանդ չես սոսնձում:
- Դե, ուրեմն, սոսնձեք: Իսկ ես գնում եմ մի բաժակ զցելու, - ասաց Հարրին:

\*\*\*

Բարի մեծ սրահում երեք հովեկները դեռ նստած էին բարձր աթոռակներից: Երբ Հարրին կանգնակին մոտեցավ, տիկինը զզվանքով մի կողմ շրջվեց:

- Ի՞նչ ես խմելու, - հարցրեց Ֆրեդին:
- Իսկ տիկինն ի՞նչ է խմում, - ի պատասխան հարցրեց Չարրին:
- Cuba libre:
- Այդ դեպքում, ինձ անխառն վիսկի տուր:

Հաստապակի ակնոցով բարձրահասակ կարմրաբեղ հովեկը մեծ, ուղիղ քթով զարդարուն դեմքը Չարրիի ականջին թեքեց ու ասաց.

- Լսե՛ք, ինչո՞ւ տիկնոջս կոպտեցիք:

Չարրին ոտքից զուլխ չափեց նրան, ապա դեպի Ֆրեդին շրջվեց.

- Այստեղ ի՞նչ է կատարվում:
- Համենայն դեպս, ինչո՞ւ, - շարունակեց բարձրահասակը:
- Հանգստացե՛ք, - նրան դիմեց Չարրին:
- Ինձ հետ այդպես չեք կարող վարվել:
- Լսե՛ք, - ասաց Չարրին, - եկել եք, որ կազդուրվեք ու ամրանաք, չէ՞: Դե, ուրեմն, հանգստացե՛ք, - և բարից դուրս եկավ:
- Հավանաբար, պետք է նրան հարվածեի, - խոսեց բարձրահասակ հովեկը: - Ի՞նչ ես կարծում, թանկագինս:
- Ափսոս, տղամարդ չեմ, - պատասխանեց կինը:
- Կես ճանապարհին եք, հատկապես՝ նման կազմվածքով - գարեջրի բաժակի մեջ մրթմրթաց կանաչ հովարավորը:
- Ի՞նչ ասացիք, - բարձրահասակի դեմքը ձգվեց:
- Որ կարող եք նրա ազգանունն ու հասցեն գտնել և նամակ գրել՝ տեղեկացնելով, թե իր մասին ինչ կարծիքի եք:
- Ձեր ազգանունն ինչ է: Կարծես, ձե՞ռք եք ամուսն:
- Կարող եք պարզապես պրոֆեսոր Մաք Ուոլսի կոչել:
- Իմ ազգանունը Լաֆթըն է, - ասաց բարձրահասակը, - գրող եմ:
- Ուրախ եմ ծանոթանալ, - պատասխանեց պրոֆեսոր Մաք Ուոլսին: - Եվ հաճախ եք գրում:

Բարձրահասակը շուրջբոլորը նայեց:

- Արի հեռանանք այստեղից, սիրելիս, - ասաց, - այստեղ բոլորը կամ անպատկառ են, կամ՝ խելագար:
- Տարօրինակ վայր է, - շարունակեց պրոֆեսոր Մաք Ուոլսին, - բայց, իրականում՝ հմայիչ: Ամերիկյան Ջիբրալթար են ասում, ընդ որում, Կահիրեից երեք հարյուր յոթանասուևհինգ մղոն հարավ է: Չնայած այս բարը միակ տեղն է, ուր հասցրել եմ լինել: Իմիջայլոց, հրաշալի բար է:
- Տեսնում եմ, իսկապես պրոֆեսոր եք, - ասաց տիկինը: - Գիտեք, ինձ դուր եք գալիս:

- Դուք էլ ինձ եք դուր գալիս, ջանիկս, - պատասխանեց պրոֆեսոր Մաք Ուոլսին: - Սակայն, դժբախտաբար, պետք է հեռանամ:

Տեղից վեր կացավ ու գնաց հեծանվի հետևից:

- Այստեղ բոլորը խելագար են, - ասաց բարձրահասակը: - Էլի խմե՛նք, քաղցրիկս:
- Պրոֆեսորն ինձ դուր եկավ, - ասաց կինը, - շատ սիրալիր էր:
- Իսկ այն մյո՞ւսը...
- Ա՛խ, նա պարզապես գեղեցկություն էր, - պատասխանեց կինը, - թաթարի էր նման: Ափսոս, լկտի էր: Դեմքով ոնց-որ Չինգիզ խանը լիներ: Ո՛ւխ, ի՞նչ լավիկն էր:
- Թևի մեկը չկար, - ասաց ամուսինը:
- Չնկատեցի, - շարունակեց կինը: - Արի էլի խմենք: Հետաքրքիր է, էլ՝ ում ենք տեսնելու այստեղ:
- Գուցե, Թամերլանին, - պատասխանեց ամուսինը:
- Որքա՞ն կարոզացած ես, - ասաց կինը: - Բայց Չինգիզ խանն էլ ինձ հերիք էր: Իսկ պրոֆեսորին ինչո՞ւ այդքան դուր եկավ, որ ես ասացի «նզովյալ»:
- Չգիտեմ, սիրելիս, - ասաց Լաֆթընը՝ գրողը: - Ինձ երբեք դուր չի եկել:
- Երևում է, նրան դուր եկա հենց այնպիսին, ինչպես կամ, - ասաց կինը: - Ի՞նչ սիրալիր էր:
- Հավանաբար, նրան էլի կհանդիպես:
- Երբ էլ գաք, նրան այստեղ կգտնեք, - ասաց Ֆրեդին: - Այստեղ է ապրում: Արդեն երկու շաբաթ կլինի:
- Իսկ այն մեկն ո՞վ էր, որ այդպես կոպիտ խոսեց:
- Այն մյո՞ւսը: Հեչ, տեղացի է:
- Ի՞նչ գործի է:
- Ամեն ինչ էլ անում է, քիչ ու միչ, - պատասխանեց Ֆրեդին: - Չկնորս է:
- Թևն ինչպե՞ս է կորցրել:
- Չգիտեմ: Ինչ-որ տեղ վնասել է:
- Բայց շա՛տ գեղեցիկ է, - ասաց կինը:

Ֆրեդին ծիծաղեց:

- Նրա մասին ինչ ասես, լսել էի, բայց նման բան առաջին անգամ լսեցի:
- Ձեր կարծիքով, դեմքը գեղեցի՞կ չէ:
- Լա՛վ էլի, տիկին, - պատասխանեց Ֆրեդին: - Ոնց որ խոզապուխտ լինի, քիթն էլ՝ կոտրած:

- Թյո՛ւ, ինչո՞ւ են տղամարդիկ այսքան անխելք, - ասաց կինը: -  
Նա ի՞նչ երագներով տղամարդն է:

- Երագում սխալ տղամարդ եք տեսնում, - ասաց Ֆրեդին:

Գրողը նստել էր անշարժ, դեմքի հիմար արտահայտությունն անհետանում էր միայն այն պահերին, երբ հիացած նայում էր սեփական կնոջը: Իսկապես, կամ գրող պետք է լինես, կամ՝ Հանրային բարեգործական աշխատանքների վարչության աշխատակից, որպեսզի նման կին ունենաս, մտածում էր Ֆրեդին: Աստված իմ, իսկապես սարսափելի էր:

Այդ պահին ներս մտավ էլբերտը:

- Հարրին ո՞ւր է:

- Գնաց նավահանգիստ:

- Շնորհակալ եմ, - ասաց էլբերտը:

Նա դուրս գնաց, գրողն ու տիկինը շարունակում էին նստած մնալ, Ֆրեդին լարված էր, անհանգստանում էր նավի համար, կանգնած՝ մտածում էր, թե որքան էին ոտքերը ցավում, որովհետև ստիպված էր ամբողջ օրը ոտքի վրա մնալ: Ցեմենտած հատակին փայտյա ճաղավանդակ էր դրել, բայց միևնույն է, չէր օգնում: Ոտքերն ամբողջ օրն ուղղակի նվվում էին: Փոխարենը կարգին առևտուր էր անում, քաղաքում՝ բոլորից լավ, լրացուցիչ ծախսերն էլ քիչ էին: Բայց այս կնիկը ի՞նչ խրտվիլակ է: Ամուսինն էլ պակասը չէ, չի կարողացել կարգին կին ճարել: Սրան նույնիսկ փակ աչքերով բան չես անի, մտածում էր Ֆրեդին: Ոչ էլ՝ ուրիշից փոխ առած աչքերով: Մի գլուխ կոկտեյլ են խմում: Այն էլ՝ թանկարժեք: Բայց դե՛ լավ է:

- Լսում եմ, պարոն, - ասաց, - այս վայրկյանին:

Ներս մտավ ծովայինի գլուխը վերնաշապիկով ու խակի գույնի կիսավարտիքով, արևախամո դեմքով, խարտյաչ, բարեկազմ մի տղամարդ, հետը՝ բրդյա նուրբ, սպիտակ սվիտերով ու մուգ երկնագույն տաբատով մի գեղեցկուհի:

- Ո՛ւմ եմ տեսնում, - տեղից վեր կենալով՝ բացականչեց Լաֆթընը, - Ռիչարդ Գորդընը և չքնաղ օրիորդ Չելենը:

- Ողջո՛ւյն, Լաֆթըն, - ասաց Ռիչարդ Գորդընը, - այս կողմերում հարբած պրոֆեսոր չե՞ք տեսել:

- Հենց նոր դուրս եկավ, - ասաց Ֆրեդին:

- Վերմոնտ կուզե՞ս, փոքրիկս, - Ռիչարդ Գորդընը հարցրեց կնոջը:

- Եթե խմելու ես, ես էլ չեմ հրաժարվի, - պատասխանեց: Հետո ողջունեց Լաֆթըններին: - Ֆրեդի, խնդրում եմ, երկու բաժին ֆրանսիականին մի բաժին իտալական խառնեք:

Բարձր աթոռակին նստած՝ ոտքերը ծալապատիկ հենել էր աթոռակի ծողին ու պատուհանից դուրս էր նայում: Ֆրեդին հիացած նրան էր զննում: Ֆրեդիի կարծիքով, ծնունդ Քի Ուեսթում հանգստացողներից ամենագեղեցիկը հենց նա էր: Նույնիսկ ավելի գեղեցիկ, քան հռչակավոր գեղուհի տիկին Բրեդլին: Վերջինս սկսել էր գիրանալ: Իսկ այս ջահել գեղեցկուհին իռլանդուհու սիրունիկ դեմք ուներ, համարյա մինչև ուսերն հասնող մուգ խոպոպիկներ ու կատարյալ հարթ մաշկ: Ֆրեդին նայեց նրա թուխ թաթիկին, որ գրկել էր զավաթը:

- Գործերն ինչպե՞ս են, - Լաֆթընը հարցրեց Ռիչարդ Գորդընին:

- Ամեն ինչ կարգին է, - պատասխանեց Գորդընը, - ձեզ մո՞տ ինչ կա:

- Ջեյմսը չի ուզում աշխատել, - ասաց տիկին Լաֆթընը, - մի գլուխ խմում է:

- Ասացե՛ք, ո՞վ է այդ պրոֆեսոր Մաք Ուոլսին, - հարցրեց Լաֆթընը:

- Կարծեմ, տնտեսագիտության պրոֆեսոր է, հիմա մեկամյա գիտական արձակուրդում է կամ նման մի բան: Հելենի բարեկամն է:

- Նա ինձ դուր է գալիս, - Հելենը նայեց Գորդընին:

- Ինձ էլ, - ավելացրեց տիկին Լաֆթընը:

- Առաջինն ինձ է դուր եկել, - հրճվանքով վրա բերեց Հելեն Գորդընը:

- Դե լավ, թող ձերը լինի, - պատասխանեց տիկին Լաֆթընը: - Ձեզ նման օրինավոր աղջիկներն իրենց ուզածին միշտ էլ հասնում են:

- Դրա համար էլ օրինավոր ենք, - ասաց Հելեն Գորդընը:

- Էլի եմ վերմոնտ վերցնում, - ասաց Ռիչարդ Գորդընը: - Դուք էլ չե՞ք ցանկանա, - դիմեց Լաֆթըններին:

- Կարելի է, - ասաց Լաֆթընը: - Ի դեպ, վաղը Բրեդլիների ճոխ ընդունելությանը լինելո՞ւ եք:

- Իհարկե, նա անպատճառ գնալու է, - ասաց Հելեն Գորդընը:

- Գիտեք, այդ կինն ինձ դուր է գալիս, - ասաց Ռիչարդ Գորդընը:

- Նա ինձ հետաքրքրում է թեղ որպես կին, թեղ որպես հասարակական երևույթ:

- Ո՛ւխ, - բացականչեց տիկին Լաֆթընը, - պրոֆեսորի նման կիրթ եք խոսում:

- Տգիտությամբ մի՛ պարծենա, սիրելիս, - ասաց Լաֆթընը:

- Իսկ հասարակական երևույթների հետ անկողին մտնո՞ւմ եմ, - դռան միջով դուրս նայելով՝ հարցրեց Հելեն Գորդընը:

- Հիմարություններ դուրս մի՛ տուր, - ասաց Ռիչարդ Գորդընը:
- Ուզում եմ իմանալ, դա է՞լ է գրողի խնդիրը, - հարցրեց Յելենը:
- Գրողը պետք է ամեն ինչին լավատեսյակ լինի, - ասաց Ռիչարդ Գորդընը: - Գրողն իրավունք չունի հանուն ինչ-որ քաղքենիական չափանիշների սահմանափակել սեփական կենսափորձը:
- Ահա՛ թե ինչ, - ասաց Յելեն Գորդընը, - իսկ գրողի կի՞նն ինչ պետք է անի:
- Կարծում եմ, շատ գործ կունենա, - ասաց տիկին Լաֆթընը: - Ա՛խ, միայն տեսնեիք, թե քիչ առաջ ինչ տղամարդ հայտնվեց այստեղ և անպատվեց ինձ ու Ջեյմսին: Ի՞նչ սարսափազրու էր:
- Հավանաբար, պարտավոր էի հարվածել նրան, - ասաց Լաֆթընը:
- Պարզապես զարհուրելի՛ էր, - շարունակեց տիկին Լաֆթընը:
- Տուն եմ գնում, - ասաց Յելեն Գորդընը: - Գալի՞ս ես, Դի՛ք:
- Թերևս, մի փոքր էլ շրջեմ քաղաքում, - ասաց Ռիչարդ Գորդընը:
- Հա՛, - ասաց Յելեն Գորդընը՝ Ֆրեդիի գլխավերևով նայելով հայելու մեջ:
- Այո, - պատասխանեց Ռիչարդ Գորդընը: Ֆրեդին բարձրացրեց գլուխը, նրան թվաց, թե խեղճ կինն ուր որ է՝ արտասվելու է: Ֆրեդին չէր ցանկանում, որ նման ցավալի իրադեպը հենց իր բարում տեղի ունենար:
- Էլի կխմե՞ս, - Ռիչարդ Գորդընը հարցրեց կնոջը:
- Ոչ, - կինը ճոճեց գլուխը:
- Չեզ ի՞նչ պատահեց, - հարցրեց տիկին Լաֆթընը: - Այստեղ տխու՞ր է:
- Սարսափելի ուրախ է, - պատասխանեց Յելեն Գորդընը: - Սակայն, կարծում եմ, ավելի լավ է տուն գնամ:
- Շուտ եմ վերադառնալու, - ասաց Ռիչարդ Գորդընը:
- Կարող ես չչտապել, - պատասխանեց կինն ու դուրս գնաց: Այդպես էլ չարտասվեց: Ոչ էլ Ջոն Մաք Ուոլսիին գտավ:

## ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Հարրի Մորգանն ավտոմեքենան կանգնեցրեց ուղիղ նավահանգստի դիմաց, այնտեղ, ուր կայանել էր Ֆրեդիի նավը, հետո հանոզվելով, որ շուրջբոլորը մարդ չկար, բարձրացրեց առջևի նստարանը, տակից հանեց կտավե յուղոտ պատյանն ու նավի հատակին նետեց:

Նավ բարձրացավ, բացեց շարժիչային բաժանմունքի դռնակն ու հրացանի պատյանը թաքցրեց աչքից հեռու: Ապա միացրեց ներածման կափույրներն ու երկու շարժիչն էլ գործի դրեց: Աջակողմյա շարժիչն սկսեց համաչափ տկտկալ, սակայն ծախակողմյա շարժիչի երկրորդ ու չորրորդ մխոցների աշխատանքն անկանոն էր: Ստուգեց ու տեսավ, որ լուցամոմերը ճաքած էին, փնտրեց, սակայն նորը չգտավ:

«Պետք է վառելիք լցնել ու նոր լուցամոմեր ճարել», մտածեց:

Նստեց ներքևում, շարժիչների մոտ, բացեց պատյանն ու հրացանը հավաքեց: Հովհարիչի փոկի երկու մեծ կտոր ու չորս պտուտակ գտավ, փոկերի մեջ անցքեր բացեց և կրկնակի ուսափոկ սարքեց, հետո հրացանը տեղավորեց դռնակից ծախ՝ տախտակամածի հակառակ կողմում, ամմիջապես ծախ շարժիչի տակ: Հրացանը կախվել ու թթևակի ճոճվում էր, վերցրեց պատյանի կողային գրպանիկների մեջ խցկած չորս փամփշտակալներից մեկն ու տեղավորեց հրացանի մեջ: Ապա ծնկեց շարժիչների մեջտեղում, մեկնեց ձեռքն ու փորձեց հրացանը վերցնել: Ընդամենը երկու շարժում: Սկզբում պետք է արծակել հրացանակոթի տակի փոկը և հրացանը դուրս քաշել երկրորդ ուսափոկի միջից: Մի անգամ էլ փորձեց, դժվար չէր, նույնիսկ՝ մեկ ձեռքով: Ապահովիչի լծակը կիսավտոմատից տեղափոխեց ավտոմատ ընթացքի, հետո ստուգեց ու հանոզվեց, որ ապահովիչը գոց էր: Հրացանը կրկին ուսափոկի մեջ անրացրեց: Չէր կարողանում որոշել, թե որտեղ տեղավորեր պահուստային փամփշտակալները, ի վերջո պատյանը վառելիքի բաքի տակ խցկեց, այնտեղից հանելը հեշտ կլիներ, իսկ փամփշտակալները դրեց պատյանի մեջ՝ գլուխները դեպի դուրս: «Երբ արդեն ծովում կլինենք, առաջին պատեհ պահին կարող եմ երկու հատը վերցնել ու գրպանս դնել», մտածեց:

Ոտքի կանգնեց: Հրաշալի օր էր, ցուրտ չէր, հյուսիսից մեղմ քա-

- ճիշտ է, հիմա կատաղած եմ, - ասաց, - և պատրաստ եմ սպանել քեզ:

- Սատանան տանի, - ասացի, - շատ ես խոսում:

- Պանչո, այս կողմն արի, - կանչեց առաջին գրուցակիցս, ապա ինձ դիմեց: - Ներող կլինեք, շատ կուզենայի, որ, ամեն դեպքում, մեզ էլ վերցնեիք:

- Ցավում եմ, բայց չեմ կարող:

Երեքն էլ դեպի դուռը շարժվեցին: Հայացքով ուղեկցում էի. հաճելի երիտասարդներ էին՝ կարգին հագուկապով, գլխաբաց, և հարուստի տեսք ունեին: Անվերջ փողից էին խոսում, փողատեր կուբացու անգլերենով:

Երկուսը, կարծես, եղբայրներ էին, երրորդը՝ Պանչոն, մի փոքր բարձրահասակ էր, չնայած արտաքինը համարյա նույնն էր՝ վայելչակազմ մարմին, թանկարժեք հագուստ, փայլուն մազեր: Մտածեցի՝ համենայն դեպս, կատաղած գռեհիկի մեկը չէ, ինչպես սկզբում էր թվացել, երբ սկսել էր խոսել: Պարզապես, գրգռված էր:

Դռնից նոր էին դուրս եկել ու աջ էին թեքվել, նկատեցի, որ հրապարակի հակառակ կողմից մի փակ ավտոմեքնա սլացավ նրանց ընդառաջ: Սկզբում ցուցափեղկի մեծ ապակին գետին տապալվեց, արձակված գնդակը փշրեց աջ պատի անկյունում ցցված ցուցադարակի շշերը: Հետո էլի կրակոցներ եղան, պատի երկայնքով շարված բոլոր շշերը ջարդվեցին:

Կանգնակի հետևը թռա և փորձեցի ներքևի ծախ անկյունից նայել, թե ինչ էր տեղի ունենում: Ավտոմեքենան կանգ առավ, երկու երիտասարդ դուրս սահեցին ու պազեցին մեքենայի կողքը: Մեկի ձեռքին «Թոմսոն» հրացան էր, մյուսինի մոտ՝ կարճափող ինքնաձիգ: Թոմսոնովը նեգր էր: Ընկերոջ հագին վարորդական ճերմակ թիկնոց էր:

Ջրուցակիցներիցս մեկը բերանքսիվայր ընկել էր մայթին, փշրված ցուցափեղկի անմիջական հարևանությամբ: Մյուս երկուսը թաքնվել էին «Արևադարձային գարեջուր» ընկերության սառցասայլակի հետևում, որ նոր էր մոտեցել հարևան «Կուևարդ» բարին: Սայլակին լծված ձիերից մեկը գետին էր տապալվել ու կախվել էր լծասարքից, մյուսը փորձում էր գլուխն ազատել կապերից:

Տղաներից մեկը կրակեց սայլակի հետևից, գնդակը մայթին դիպավ ու հետ թռավ: Նեգրը, դեմքը գետնին սեղմած, կրակեց ուղիղ սայլակի տակ ու՝ կպավ: Թաքնված կուբացիներից մեկը փռվեց մայթին, գլուխն ուժգին զարկվեց եզրաբարին: Չեռքերով ամուր բռնել էր գլուխն ու ցնցվում էր, և մինչ նեգրը կվերալիցքավորեր հրա-

ցանը, այս անգամ վարորդը կրակեց նրա ուղղությամբ: Անկանոն կրակոց էր: Մանրագնդակներն արծաթյա կարկտահատիկների նման շաղ եկան մայթին:

Մյուս երիտասարդը փորձում էր երկու ոտքից վիրավոր ընկերոջը քարշ տալ սայլակի հետևը, և ես տեսա, թե նեգրը ինչպես դեմքը նորից մայթին սեղմեց ու նշան բռնեց: Հանկարծ իմ ընկեր Պանչոն սայլակի մյուս կողմն անցավ ու թաքնվեց դեռևս ոտքի վրա մնացած ձիու թիկունքում: Շատ զգույշ, որ հանկարծ ձիուն չխրտնեցներ: Դեմքը սփրթնած էր, կարծես կեղտոտ սավան լիներ: Հետո դուրս սահեց ձիու հետևից ու վարորդի վրա կրակեց իր սուգերով, որ անվրեպ դիպնելու համար ամուր սեղմել էր զույգ ձեռքով: Կրակեց առանց դադարի՝ գնդակներից երկուսն անցան նեգրի գլխավերևով, երրորդը տեղ չհասավ:

Գնդակներից մեկը դիպել էր անվաղողին, քանի որ այն ուժգին փսսաց, օղը վայրկենապես դուրս մղվեց, և անվաղողի կողքին փոշու հանկարծական շիթ խոյացավ, իսկ նեգրն իր թիրախին հնարավորություն տվեց մոտ տասը քայլ հեռանալ, ապա կրակեց ուղիղ որովայնին: Հավանաբար, հրացանի մեջ եղած վերջին գնդակն էր, քանի որ տեսա, թե ինչպես նեգրը մի կողմ նետեց «Թոմսոն», իսկ իմ ընկեր Պանչոն մեկեն փլվեց ու բերանքսիվայր փռվեց սալահատակին: Լյուգերին հենվելով՝ փորձում էր ոտքի կանգնել, սակայն գլուխը չէր կարողանում գետնից պոկել, իսկ նեգրը վերցրեց վարորդի կողքին, մեքենայի անիվի մոտ ընկած ինքնաձիգն ու ցխեց Պանչոյի գլուխը: Ա՛յ քեզ նեգր:

Չեռքս ընկած առաջին բաց շշից կում արեցի՝ գլխի չընկնելով, թե ինչ էի խմում: Տիան պատմություն էր: Դուրս թռա վաճառասեղանի հետևից ու վազեցի ուղիղ դեպի խոհանոցը, ապա ետնադռնով փողոց ելա: Արագ շրջանցեցի հրապարակը՝ նույնիսկ չնայելով դեպի սրճարան աճապարող ամբոխը, հասա նավամատույցն ու նավ բարձրացա:

Վարձակալս արդեն սպասում էր: Պատմեցի, թե ինչ էր տեղի ունեցել:

- Իսկ եղի՞ն ուր է, - հարցրեց վարձակալս՝ Ջոնսընը:

- Կրակոցներն սկսվելուց հետո այլևս չեմ տեսել:

- Կարո՞ղ է, նրան էլ եմ դիպել:

- Չեմ կարծում, սատանան տանի: Ասում եմ, սրճարանի կողմն արձակված գնդակները միայն ցուցափեղկը վնասեցին: Ամենասկզբում էր, երբ մեքենան նրանց թիկունքում հայտնվեց: Առաջինին հենց պատուհանի մոտ խփեցին: Այ, այս անկյան տակ մոտեցան ու ...

մի էր փչում: Իսկապես, հաճելի եղանակ էր: Տեղատվություն էր սկսվել, նեղուցի ափի ցցագեղամներին երկու փորահավ նկատեց: Մուգ կանաչ մի ձկնորսանավ փնջացնելով անցավ կողքով, թռչնաշուկա էր ուղևորվում, դեկանիվի կողքին նշմարեց նեգր-ձկնորսին: Հարրին ցած նայեց. ափից թույլ քամի էր փչում, ծովն անխռով էր, արևի թեք ճառագայթների մեջ՝ ավազակերտ կղզյակի շուրջը, որ առաջացել էր, երբ այդ մասուն հատակը խորացրել էին, ջուրը մոխրա-երկնագույն էր: Կղզյակի վրա ճերմակ ճայեր էին ճախրում:

«Գիշերը հանգիստ է լինելու», մտածեց Հարրին: «Նեղուցն անցնելու համար հրաշալի եղանակ է»:

Շարժիչները կարգավորելիս քրտնել էր, մեջքն ուղղեց և լաթի կտորով սրբեց դեմքը:

Նավամատույցում էլքերտն էր:

- Լսի՛ր, Հարրի, - ասաց: - Գուցե ի՞նձ էլ վերցնես:

- Հիմա՞ ի՞նչ է պատահել:

- Հանրայինում շաբաթը երեք օր են գործ տալիս: Առավոտյան ի՞նչ անցավ:

Ստիպված լրացուցիչ աշխատանք պիտի ճարեմ:

- Լա՛վ, - ասաց Հարրին: Այդ ընթացքում միտքը փոխել էր: - Թող քո ուզածը լինի:

- Ի՞նչ լավ ստացվեց, - ասաց էլքերտը, - թե չէ վախենում էի պառավիս աչքին երևալ: Առավոտյան հարսանիք սարքեց, կարծես ես եմ կրճատել հանրային աշխատանքները:

- Դե լավ, հա, պառավիղ եղա՞ծն ի՞նչ է, - ծիծաղելով ասաց Հարրին, - մի հատ քոթակեիր:

- Չէ՛ մի, - պատասխանեց էլքերտը, - տակից դուրս չեմ գա: Ջադուկի լեզու ունի, հետը գլուխ դնել չի լինի:

- Լսի՛ր, էլ, - ասաց Հարրին, - նստիր մեքենաս, գնա նավահանգստի երկաթեղենի պահեստն ու վեց հատ լուցամոմ գնիր, այ, սրանից: Հետո քսան ցենտի սառույց ու կես ոլորտի արքայածուկ կառնես, երկու տուփ սուրճ, չորս տուփ մսի պահածո, երկու բոքոն հաց, շաքար ու երկու տուփ խտացրած կաթ: Կմտնես Սինքլերի մոտ, կասես, թող հարյուր հիսուն գալոն բենզին բերի: Եվ որքան կարող ես՝ շուտ վերադարձիր ու ձախակողմյա շարժիչի երկրորդ ու չորրորդ լուցամոմերը փոխիր, թափանիվից հաշված: Ասա, որ բենզինի համար հետո կվճարեմ: Թող սպասի կամ ի՞նձ հանդիպի Ֆրեդիի մոտ: Ասածներս կհիշե՞ս: Առավոտյան սիրող ձկնորսների հետ տարպոնի որսի ենք դուրս գալու:

- Տարպոնի համար արդեն շատ ցուրտ է, - ասաց էլքերտը:

- Պատվիրատուներս ասում են՝ դեռևս ուշ չէ, - պատասխանեց Հարրին:

- Ավելի լավ չի՞ լինի՝ մի ոլորտի արքայածուկ վերցնեմ, - հարցրեց էլքերտը: - Մեկ էլ տեսար, գայլածկները վրա տվեցին: Այս ափին հիմա լիքն են:

- Լավ, արա այնպես, ինչպես հարմար ես գտնում: Մեծակ թե՛ մի ժամից այստեղ լինես, ու բենզինն էլ լցված լինի:

- Այդքան բենզինն ի՞նչ ենք անելու:

- Կարող է մինչև լուսաբաց ծովում մնանք, այլևս լիցքավորվելու ժամանակ չենք ունենա:

- Կուբացիներն ի՞նչ եղան, որ պետք է անցկացնեիր:

- Լուր չունեմ:

- Լավ գործ էր:

- Սա էլ վատը չէ: Դե լավ, գնա:

- Այս գործից որքա՞ն են ունենալու:

- Օրը՝ հինգ կանաչ, - ասաց Հարրին: - Եթե համաձայն չես, հարց չկա:

- Լավ, լավ, - պատասխանեց էլքերտը: - Ասում ես, ո՞ր լուցամոմերն էին:

- Թափանիվից հաշված՝ երկրորդն ու չորրորդը, - ասաց Հարրին: էլքերտը գլխով արեց:

- Կմտապահեմ, - ասաց, նստեց մեքենան, շրջվեց ու շարժվեց փողոցն ի վեր:

Այնտեղից, ուր Հարրին էր կանգնած, լավ երևում էին Ամերիկյան առաջին վարկային բանկի քարակերտ շինությունն ու շքամուտքը: Բանկը փողոցի սկզբնամասում էր, նավահանգստից համարյա մեկ թաղամաս հեռու: Հարրին կողային մուտքը չէր տեսնում: Նայեց ժամացույցին: Արդեն ժամը երկուսն անց էր: Փակեց շարժիչային բաժանմունքի դռնակն ու նավամատույց բարձրացավ: Ինչ որ է: Ինչ որ կարող էի, արել եմ: Գնամ, Ֆրեդիին տեսնեմ, հետո կգամ ու կսպասեմ այստեղ: Նավամատույցից դուրս գալով՝ ձախ թեքվեց ու շարժվեց դեպի նրբանցքը, որպեսզի ստիպված չլիներ բանկի կողքով անցնել:

## ՉԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

**Տ**րեղի բարուն մատած մտածում էր՝ չբռնե՞մ ու ամեն ինչ պատմեմ սրան, սակայն չէր համարձակվում: Սրահում մարդ չկար, միայն ինքն էր՝ աթոռակին մատած և հանկարծ որոշեց խոսել, բայց թվաց՝ անկարող էր: Երբ մի անգամ էլ էր պատրաստվում սկսել, զգաց, որ Ֆրեդին նման քայլի գնացող չէր: Մի ժամանակ՝ գուցե և հանդգներ, բայց այսօր՝ ոչ: Կարող է՝ այն ժամանակ էլ խուսափեր: Եվ երբ մտածում էր Ֆրեդիին տեղյակ պահելու մասին, նոր միայն զգաց, թե ինչ կեղտոտ գործ էր: Կարող եմ պարզապես այստեղ մնալ, մտածում էր, ու ոչինչ էլ չի լինի: Կարելի է մնալ, մի քանի բաժակ գցել, հարթել ու ոչ էլ այդ ամեն ինչին խառնվել: Միայն թե «Թոմսոնս» այնտեղ է: Չնայած ոչ մեկն էլ չգիտի, որ իմն է, բացի պառավիցս: Կուբայում եմ ձեռք գցել, ուղեթի ժամանակ, երբ դեռ այն գործերով էի զբաղվում: Ոչ ոք չգիտեր, որ առել էի: Կարող եմ այստեղ մնալ ու գլուխս ազատել: Բա ապրո՞ւստ ինչպես հայթայթեմ: Մերիին ու աղջիկներին ինչո՞վ կերակրեմ: Ողջ մավ ունեմ, ողջ՝ փող, ողջ էլ՝ կրթություն: Մի թևանի մարդն ի՞նչ կարող է անել: Մանր-մունր բաներ: Հիմա կարող եմ այստեղ մնալ, ասեմք՝ մի հինգ բաժակ խմել, և՛ վերջ: Արդեն ուշ կլինի: Կամ էլ՝ հենց այնպես, ինքնահոսի թողնել, ինչ լինում է՝ թող լինի:

- Խմելու բաղն տուր, - դիմեց Ֆրեդիին:
- Ես ըստե՛ս:

Կարող եմ տունս վաճառել կամ վարձով տալ, մինչև աշխատանք կճարեմ: Ի՞նչ աշխատանք: Ոչ մի աշխատանք էլ չկա: Կարող եմ բանկ գնալ ու մատնել, բայց դիմացն ի՞նչ կունենամ: Չոր շնորհակալություն: Բա էլ ի՞նչ: Ընդամենը՝ շնորհակալություն: Մի խումբ կուբացի սողուն-պաշտոնյաներ անկապ տեղը վրաս կրակ բացեցին, թևովս վճարեցի, ամերիկացիներն էլ մավը ձեռքիցս առան: Հիմա ի՞նչ՝ տանիցս զրկվեմ ու դատարկ շնորհակալություն ստանամ: Ողջ մի շնորհակալություն: Գրողի ծոցը լինի, մտածեց: Այլ տարբերակ չունեմ:

Ուզում էր Ֆրեդիին պատմել, որ գոնե ինչ-որ մեկն իմանար, թե ինքն ինչ էր պատրաստվում անել: Բայց չէր կարող պատմել, համոզված էր, որ Ֆրեդին դրան չի գնա: Հիմա լավ է վաստակում: Ցերեկը համարյա մարդ չի լինում, բայց ամեն օր մինչև գիշերվա երկուսն ասեղ գցելու տեղ չկա: Բկից չեն բռնել: Հաստատ այդ քայլին

գնացողը չի: Ինքս միայնակ պիտի անեմ, մտածում էր, դժբախտ էլ-բերտի հետ: Աստված իմ, նավամատույցում կանգնած՝ ի՞նչ սովահար տեսք ունեի խեղճը: Կոնչեր կան, որ մինչև սովը չխեղդի, չեն հանդգնի գողություն անել: Քաղաքում լիքն են՝ սովից զկռտում են: Բայց մատը-մատին չեն խփում: Դանդաղ սովամահ են լինում՝ օր-օրի: Ծնված օրվանից այդ հալին են, իհարկե, բոլորը չէ, բայց՝ շատերը:

- Լսի՛ր, Ֆրեդի, - ասաց, - երկու շիշ տուր:
  - Ի՞նչ տամ:
  - Բակարդի:
  - Եղավ:
  - Մեմակ թե, բաց արա՛ հետո: Ինչպես գիտես, մավը վարձել էի, որ կուբացիներ տեղափոխել:
  - Այդպես ասացիք:
  - Բայց չգիտեմ, թե երբ են պատրաստվում մեկնել: Կարող է, այսօր երեկոյան: Դեռ չեն տեղեկացրել:
  - Նավը սարքին է, ցանկացած պահի կարող եք մեկնել: Այսօր գիշեր ծովը խաղաղ է լինելու, նպաստավոր է նեղուցն անցնելու համար:
  - Ոնց-որ ասում էին, թե այսօր ուզում են ձկնորսության դուրս գալ:
  - Նավի վրա ձկնորսական պիտույքներ էլ կան, եթե, իհարկե, փորհապվեր չեն տարել:
  - Տեղում են:
  - Ուրեմն, բարի ճանապարհ, - ասաց Ֆրեդին:
  - Շնորհակալ եմ: Լսի՛ր, մի շիշ էլ տուր:
  - Ի՞նչ:
  - Վիսկի:
  - Կարծեմ, բակարդի՞ էիք խմում:
  - Ծովի վրա եմ խմելու, եթե գիշերը ցուրտ լինի:
  - Ամբողջ ճանապարհին համընթաց քամի է լինելու, - ասաց Ֆրեդին:
  - Այո, լավ գիշեր է լինելու: Դե ինչ, մի շիշ էլ կտա՞ս:
  - Ներս մտան բարձրահասակ հովեկն ու տիկինը:
  - Ահա և իմ երագների տղամարդը, - ասաց կինն ու տեղավորվեց
- Հարրիի կողքի աթոռակին:  
Հարրին մի հայացք ձգեց նրա վրա և վեր կացավ:  
- Դեռ կանցնեմ, Ֆրեդի, - ասաց: - Գնամ նավամատույց, կարող է ձկնորսներս արդեն ուզում են ծով դուրս գալ:

- Մի՛ գնացեք, - ասաց կինը: - Խնդրում եմ, մի՛ գնացեք:
- Հիմարություններ դուրս մի՛ տվեք, - ասաց Հարրին և արագ դուրս գնաց:

Ռիչարդ Գորդընը քայլում էր փողոցն ի վար, դեպի Բրեդլինների ընդարձակ ձմեռային առանձնատունը: Հույս ուներ տիկին Բրեդլին տանը մենակ գտնել: Հավանականությունը մեծ էր: Տիկին Բրեդլին գրողների, նաև նրանց գրքերի հավաքածուներ, սակայն Ռիչարդ Գորդընն այդ մասին դեռ չգիտեր: Նույն պահին նրա տիկինը ծովափով տուն էր վերադառնում: Այդպես էլ չէր հանդիպել Ջոն Մաք Ուոլսիին: Հույս ուներ պատուհանից տեսնել, երբ նա իրենց տան մոտով անցնելիս կլիներ:

## ԳՆՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՂ

**Է**լբերտն արդեն նավի վրա էր, բաքերը լիցքավորված էին:

- Հիմա շարժիչը գործի կգցեն և այն երկու մխոցները կստուգեն,
- ասաց Հարրին: - Ուտելիքը տեղավորե՞լ ես:
- Այո:
- Դե, ուրեմն, խայծը պատրաստիր:
- Խոշո՞րն ես ուզում:
- Անպայման: Տարպոնի համար:

Էլբերտը նավախելի վրա խայծն էր կարգավորում, Հարրին դեկանիվի մոտ էր՝ շարժիչն էր տաքացնում: Հանկարծ ինչ-որ ծայն լսվեց, կարծես անվաղող պայթեց: Փողոցի կողմը նայեց ու տեսավ, թե ինչպես բանկի դռնից ինչ-որ մարդ դուրս թռավ: Ձեռքին ատրճանակ: Վազեց փողոցով և արագ անհետացավ: Երկու հոգի էլ դուրս եկան բանկից՝ ատրճանակներով ու կաշվե սև պայուսակներով, և վազեցին նույն ուղղությամբ: Հարրին էլբերտին նայեց. խայծով էր զբաղված: Չորրորդը՝ լայնադեմը, բանկի դռների մեջ հայտնվեց «Թոմսոնը» ձեռքին և երբ արդեն դուրս էր գալիս, ներսում չչակը սկսեց երկար ու սարսափազդու հնչել, և Հարրին տեսավ, որ նրա հրացանի փողը ցնցվեց՝ պո՛ւկ, պո՛ւկ, հետո մի ուրիշ ծայն լսվեց՝ բո՛ւմ, բո՛ւմ, բո՛ւմ՝ կտրուկ, և նույն պահին էլ խլացավ չչակի աղմուկի մեջ: Լայնադեմը շրջվեց ու սկսեց վազել, ապա կանգ առավ, մի անգամ էլ կրակեց բանկի շքամուտքի ուղղությամբ, և հենց որ էլբերտը տեղից վեր թռավ ու բղավեց՝ «Տե՛ր Աստված, բանկն են թալանում: Տե՛ր Աստված, ի՞նչ կարող ենք անել», Հարրին նրբանցքի կողմից մեքենայի շարժիչի ծայն լսեց ու նկատեց «Ֆորդ» տաքսին, որ դեպի նավահանգիստն էր սլանում:

Կուբացիներից երեքը հետևի նստարանին էին, մեկը՝ վարորդի կողքին:

- Նավն ո՞ւր է, - նրանցից մեկը գոռաց խապաներեն:
- Դիմացդ է, ապո՛ւշ, - պատասխանեց մյուսը:
- Այն նավը չէ:
- Կապիտանը նույնն է:
- Արա՛գ, արա՛գ, ի սեր Աստծո:
- Իջի՛ր, - նրանցից մեկն ասաց վարորդին, - ձեռքերդ վե՛ր:



Երբ վարորդն իջավ մեքենայից, կուբացին դանակը նրա գոտու տակ խցկեց և, դեպի իրեն քաշելով, կտրեց գոտին, ապա համարյա մինչև ծնկները պատառոտեց շալվարը: Ձեռքի հետ էլ շալվարը ներքև քաշեց:

- Չշարժվե՛ս, - կարգադրեց:

Երկու չինացիները պայուսակները նավի հատակին նետեցին, հետո չորսը միասին, իրար հրմշտելով, նավը բարձրացան:

- Գնացի՛նք, - հրամայեց նրանցից մեկը: Բարձրահասակը հրացանի փողը Չարրիի թիկունքին սեղմեց:

- Արագացրո՛ւ, կապիտան, - ասաց, - գնացի՛նք:

- Միայն թե հանգիստ, - պատասխանեց Չարրին: - Դա էլ մի կողմ քաշեք:

- Շարժվեցի՛նք, - ասաց բարձրահասակը: Ապա էլբերտի կողմը շրջվեց՝ «Շո՛ւտ արա»:

- Սպասի՛ր, Չարրի, - բղավեց էլբերտը, - շարժիչը չմիացնե՛ս: Սրանք բանկն են թալանել:

Բարձրահասակ կուբացին շրջվեց ու «Թոմսոնն» էլբերտի վրա պահեց:

- Վա՛յ, պետք չէ՛, պետք չէ՛, - ասաց էլբերտը, - պետք չէ՛:

Չրացանի փողն այնքան մոտ էր կրծքին, որ երեք գնդակն էլ, կարծես, միննույն անցքով ներս մտան: Էլբերտը՝ աչքերը չռած, բերանը լայն բացած դանդաղ ծնկի եկավ: Թվաց, փորձում էր մի անգամ էլ «Պետք չէ» ասել:

- Առանց օգնականի էլ յուր կգնաս, - ասաց բարձրահասակ կուբացին, - կռնատ շան որդի: - Ապա՛ իսպաներեն, - դանակը վերցրե՛ք ու ճոպանները կտրե՛ք: - Նորից՝ անգլերեն, - Արագացրո՛ւ, շարժվեցի՛նք: - Կրկին՝ իսպաներեն, - Ատրճանակը մեջքի՛ն սեղմեք: - Էլի՛ անգլերեն, - Դե, գնացի՛ղնք: Թե չէ՛՝ գլուխդ կցխեն:

- Արդեն շարժվում ենք, - ասաց Չարրին:

Պղնձամաշկ կուբացին ատրճանակը սեղմել էր նրա կողերին, այնտեղ, որտեղ թևը բացակայում էր: Փողն համարյա կաշում էր ուսից կախված կեռիկին:

Երբ դուրս էին լողում նավահանգստից, Չարրին, ղեկանիվն առողջ ձեռքով պտտելով, հետ-հետ էր նայում, որպեսզի նավը ցածողերին չհիպցներ, և տեսավ էլբերտին՝ նավախելի վրա, սևավուն լճակի մեջ ծնկած, գլուխը կողքի վրա թեքած: Նավամատույցին «Ֆորդ» տաքսին էր, կողքին՝ ճերմակ վարտիքով գիրուկ վարորդը, շալվարը մինչև կոճերն իջեցրած, ձեռքերը գլխից վեր, բերանը էլբերտի նման լայն բացած: Փողոցում ուրիշ մարդ չկար:

Ցցածողերը մնացին հետևում, շուտով անցնելու էին փարոսի կողքով ու բաց ծով էին դուրս գալու:

- Արագ, արագ, - գոռաց բարձրահասակ կուբացին, - ավելի՛ արագ:

- Ատրճանակը մի կո՛ղմ տարեք, - ասաց Չարրին: Մտքովն անցավ նավը տանել-մխրճել Քրոուֆի Բարի ծանծաղուտը, բայց համոզված էր, որ գրողի տարած կուբացին առանց վարանելու տեղում կթողներ իրեն:

- Ավելի՛ արագացրու, - կարգադրեց բարձրահասակ կուբացին: Չետո խոսեց իսպաներեն: - Պառկե՛ք, բոլո՛րդ: Ձենքը կապիտանի վրա՛ պահեք: - Էլբերտին քաշեց-պառկացրեց, ինքն էլ մեկնվեց նավախելին: Մնացածները նույնպես արագ մեկնվեցին նավի հատակին: Չարրին նստած մնաց ղեկանիվի մոտ: Ակնդետ առաջ էր նայում դեպի նեղուցը և նավը վարում էր մարզանավերի կայանատեղով, կանաչ լուսաթարթի կողքով, ապա շրջանցեց ծովապատնեշը, բերդամրոցը, անցավ կարմիր լուսաթարթն ու հետ նայեց: Բարձրահասակ կուբացին գրպանից հանել էր կանաչ տուփն ու փամփշտակալն էր լիցքավորում: Չրացանը կողքին էր, հետ՝ դեպի նավախելն էր նայում ու լիցքավորում էր շոշափելով: Մյուսները նույնպես շրջվել էին, բացի նրանից, որ իրեն էր հսկում: Երկու պղնձամաշկերից մեկն էր, որ ատրճանակով անվերջ նշան էր անում իրեն՝ առաջ նայիր: Չետապնդողներ դռնա չէին երևում: Շարժիչները համաչափ էին աշխատում, տեղատվությունն օգնում էր, որ նավը հանգիստ ընթանար: Անցան խարսխավոր լողանի կողքով, Չարրին նկատեց, որ ծանրությունից ծովի վրա էր թեքվել, շուրջը եռանդագին խլթխլթում էին հոսանքից ծնված ալիքները:

Ընդամենը երկու արագընթաց նավ կա, որ կարող է մեզ հասնել, մտածում էր Չարրին: Մեկը Ռեյի մոտորանավակն է, որ մեկնել է Մատեկումբե՝ փոստի հետևից: Երկրորդը որտեղ է: Չիշեց, մի քանի օր առաջ տեսել էր էդ թեյլըրի նավաշինարանում: Այն, որ ինքն ուզում էր վարձել Լեզվանիի միջոցով: Չէ, չէ, երկու հատ էլ կա, ուղղեց ինքն իրեն: Մեկը ճանապարհային պետական վարչությանն է, որ այս պահին կղզիներում է: Մյուսը Գարիսոն Բայթուն է կայանել: Որքա՞ն հեռացած կլինենք: Շրջվեց ու տեսավ, որ բերդամրոցը մնացել էր հեռվում, ռազմական նավահանգստի թիկունքում դուրս էր ցցվել փոստային հին բաժանմունքի աղյուսե կարմիր շենքը, և հյուրանոցի դեղին, բարձր շինությունն իշխում էր հորիզոնում գծագրվող քաղաքի փոքրիկ գմբեթի վրա: Նշմարվում էր ամրոցը երիզող ծովածոցը, դեպի ձմեռային հյուրանոցը ձգվող տնակաշարքի վերևում

երևում էր նաև փարոսի աշտարակը: Ամենաքիչը՝ չորս մղոն, հաշվեց մտքում: Ահա և մեր պոչը: Չկնորսական երկու ճերմակ նավակ, շրջանցելով այնհատ պատմեշը, իրենց կողմն էին ածապարում: Ժամում տասը մղոն էլ չեն բացի, մտածեց: Ողորմելիներ:

Կուրացիներն սկսեցին իրար մեջ իսպաներեն խոսել:

- Մեր արագությունը, կապիտան, - հարցրեց բարձրահասակը՝ հետ նայելով նավախելից:

- Մոտավորապես՝ տասներկուս, - պատասխանեց Հարրին:

- Դրա՞նք որքան կարող են բացել:

- Տասից ոչ ավելի:

Բոլոր կուրացիները շրջվեցին, նույնիսկ՝ իրեն հսկողը: Լավ, ի՞նչ կարող եմ անել, մտածում էր Հարրին: Առայժմ՝ ոչինչ:

Երկու ճերմակ նավակներն այդպես էլ մնացին որպես երկու փոքրիկ բծեր:

- Ռոբերտո, այս կողմը նայիր, - ասաց քաղաքավարին:

- Ի՞նչ է:

- Նայի՛ր:

Հետևում, անգնն աչքի համար անհասանելի հեռավորության վրա, ջրի երեսին ամպ էր գոյացել:

- Մեզ վրա են կրակում, - ասաց քաղաքավարին: - Հիմար են, է՛:

- Գժվե՞լ են, ի՞նչ է, - ասաց լայնադեմը: - Երեք մղոն կլինի:

«Չորս, - մտքում ասաց Հարրին, - չորսից էլ ավելի»:

Հարրին պարզորոշ տեսնում էր ջրի հարթ մակերևույթին հայտնվող ամպի քուլաները, սակայն կրակոցների ծայնը չէր լսում:

«Այս կոնչերը ցնդել են, - մտածեց, - լրիվ անուղեղ են»:

- Կապիտան, այս կողմերում կառավարությանը պատկանող նավ կա՞, - Հարրիի կողմը շրջվելով՝ հարցրեց լայնադեմը:

- Առափնյա հսկողության ծառայությանը:

- Դա՞ ինչ արագություն ունի:

- Հազիվ՝ տասներկուս:

- Ուրեմն՝ վախենալու բան չունե՞նք:

Հարրին չպատասխանեց:

- Բա էլ ի՞նչ ենք անհանգստանում:

Հարրին դարձյալ չարձագանքեց: Սենդ Քիի անվերջ դուրս ցցվող ու լայնացող սրածայր գագաթը մնացել էր ծախ կողմում, ծանծաղուտները հիմա գրեթե ուղղահայաց էին աչ նավակողին: Տասը րոպեից ստորջրյա խութերն էլ կմնային հետևում:

- Ի՞նչ է պատահել: Խոսելը մոռացե՞լ եք:

- Ի՞նչ էիք հարցնում:

- Ուրիշ ի՞նչ կա, որ կարող է մեզ հասնել:

- Առափնյա հսկողության ինքնաթիռը, - ասաց Հարրին:

- Քաղաք մտնելուն պես հեռախոսալարերը փրթել ենք, - ասաց քաղաքավարին:

- Ուղիղ գծերը նո՞ւյնպես, - հարցրեց Հարրին:

- Կարծում եք, ինքնաթիռը կհասնի՞:

- Քանի դեռ մութը չի ընկել՝ հնարավոր է, - ասաց Հարրին:

- Ձեր առաջարկը, կապիտան, - խոսեց լայնադեմը՝ Ռոբերտոն: Հարրին չպատասխանեց:

- Ձեր կարծիքն եմ ուզում իմանալ:

- Ինչո՞ւ թույլ տվեցիք, որ այս շան որդին սպաներ օգնականիս,

- Հարրին դիմեց քաղաքավարիին, որ կողքը կանգնած կողմնացույցին էր նայում:

- Չա՛յնդ, - սաստեց Ռոբերտոն: - Քեզ էլ կսատկացնեն:

- Որքա՞ն եք թալանել, - Հարրին կրկին դիմեց քաղաքավարիին:

- Չգիտեմ: Դեռ չենք հաշվել: Մեկ է, մերը չի:

- Այ դա ճիշտ է, - ասաց Հարրին: Փարոսն արդեն մնացել էր հետևում, և Հարրին ուղղությունը 2250 էր վերցրել: Հավանալի ուղղությունն էր:

- Ուզում եմ ասել, մեզ համար չենք արել: Այլ՝ մեր հեղափոխական կազմակերպության:

- Օգնականիս է՞լ հանուն ձեր կազմակերպության սպանեցիք:

- Շատ եմ ցավում, - ասաց ջահելը: - Նույնիսկ չեմ կարող բացատրել, թե որքան ծանր եմ տանում:

- Մի՛ էլ փորձեք, - ասաց Հարրին:

- Գիտեք, - ջահելն այժմ արդեն մեղմ ծայնով էր խոսում, - Ռոբերտոն տխմարի մեկն է: Լավ հեղափոխական է, բայց չար է: Մաչադոյի իշխանության օրերին այնքան է մարդ սպանել, որ սովորություն է դարձել: Դա նրան, կարծես, նույնիսկ դուր է գալիս: Չնայած, հանուն նպատակի է անում: Բարի նպատակի: - Ապա շրջվեց Ռոբերտոյի կողմը, որ «Թոմսոնը» ծնկներին՝ նստել էր նավախելի ձկնորսական աթոռակին և ճերմակ նավակներին էր հետևում, որոնք Հարրիին հիմա արդեն ավելի փոքր էին թվում:

- Խմելու բան կա՞, - նավախելից ծայնեց Ռոբերտոն:

- Ոչ, - ասաց Հարրին:

- Դե, ուրեմն, ունեցածս կխմեմ, - ասաց Ռոբերտոն: Կուրացիներից մեկը փռվել էր բենզինի բացի վերևում հարմարեցված մահճիկին: Երևում է, ծովաճոճից սրտխառնուք ուներ: Մյուսին էլ էր ճոճել, բայց դեռ դիմանում էր:

Յետ նայելով՝ Չարրին կապարագույն նավ նկատեց, որ վաղուց շրջանցել էր բերդամրոցն ու այժմ մոտենում էր ճերմակ նավակներին:

«Առափնյա հսկողության նավն է, - անցավ մտքով, - սա էլ մի բան չի»:

- Կարծում եք, ինքնաթի՞ռ է գալու, - հարցրեց քաղաքավարին:  
- Կես ժամից մութը կընկնի, - պատասխանեց Չարրին, ապա նստեց դեկանիվի դիմացի աթոռակին: - Ի՞նձ ինչ եք անելու: Սպանելո՞ւ եք:

- Չէի ցանկանա, - ասաց ջահելը, - սպանել չեմ սիրում:  
- Այդտեղ ինչո՞վ ես զբաղված, - հարցրեց Ռոբերտոն, որի ձեռքին մի շիշ վիսկի էր հայտնվել: - Կապիտանի հե՞տ ես ընկերանում: Ի՞նչ է, ուզում ես աղ ու հա՞ց կիսել:

- Դեկանիվը բռնե՞ք, - ջահելին դիմեց Չարրին: - Ուղղությունը տեսնո՞ւմ եք: Երկու հարյուր քսանհինգ: - Աթոռակից իջավ ու շարժվեց դեպի նավախելը:

- Խմելու բան տվեք, - դիմեց Ռոբերտոյին: - Ահա և ձեր սպասածը՝ առափնյա հսկողության նավը, բայց մեզ չի հասնի:

Որոշել էր, որպես ավելորդ ճոխություն, առայժմ մի կողմ թողնել զայրույթը, ատելությունն ու վիրավորանքը և ձեռնամուխ լինել պլան մշակելուն:

- Իհարկե, - ասաց Ռոբերտոն, - մեր հետևից ո՞նց կհասնի: Մի հատ էս էրեխեքին նայեք, դրանց սրտխառնո՞ցը: Ինչ ասացի՞ք: Խմե՞լ: Իսկ ուրիշ վերջին ցանկություն չունե՞ք, կապիտան:

- Կատակասերն եք, - ասաց Չարրին: Մի լավ կում արեց:  
- Կամա՞ց, կամա՞ց, - բողբոջեց Ռոբերտոն: - Էղած-ջեղածն էս է:  
- Ես էլ ունեմ, - ասաց Չարրին, - այն ժամանակ կատակեցի:  
- Ինձ հետ չկատակեղք, - նրան կասկածանքով զննելով՝ ասաց

Ռոբերտոն:

- Այլևս չեմ կատակի:  
- Ի՞նչ ունեք:  
- Բակարդի:  
- Բերեղք:  
- Լավ, լավ, հանգիստ, - ասաց Չարրին, - ո՞ւր ենք շտապում:

Առաջանալով՝ լոք արեց էլբերտի վրայով: Դեկանիվի կողքով անցնելիս աչքը զցեց կողմնացույցին: Ջահելն ուղիղ քսանհինգ աստիճան շեղվել էր, կողմնացույցի սլաքը տատանվում էր: Նավաստի չէ, մտածեց Չարրին: Ուրեմն, դեռ ժամանակ ունեմ: Մի հատ էլ նավահետքին նայեմք:

Նավահետքը երկու փրփրուն կորեր գծելով արագ հետ էր փախչում, դեպի այն կողմը, ուր նավախելի վրայով հորիզոնում նրբորեն գծագրվում էր փարոսի շագանակագույն, սրածայր ուրվագիծը: Նավակներն անհետացել էին: Աղոտ բժի նման հազիվ նշմարվում էին քաղաքային ռադիոաշտարակները: Շարժիչները համաչափ էին աշխատում: Չարրին կռացավ, վերցրեց բակարդիի շիշն ու նավախել վերադարձավ: Սկզբում ինքը խմեց, հետո շիշը մեկնեց Ռոբերտոյին: Նավախելին կանգնած ներքև՝ էլբերտին էր նայում, և վատ զգաց: Խեղճ, սովյալ թշվառական, մտածեց:

- Ի՞նչ է պատահել: Նրանից վախենո՞ւմ եք, - հարցրեց լայնադեմ կուրացին:

- Ի՞նչ կասեք, դուրս չնետե՞նք, - հարցրեց Չարրին: - Իմաստ ունի՞ հետներս քարշ տալ:

- Չարք չկա, - ասաց Ռոբերտոն: - Ահագին խելոք եք:  
- Դուք թևատակերից բռնեք, - ասաց Չարրին, - ես՝ ոտքերից: Ռոբերտոն «Թոմսոնը» նավախելի լայն մասին դրեց և, կռամալով, դիակը բռնեց ուսերից ու բարձրացրեց:

- Աշխարհում մեռելից ծանր բան չկա, - ասաց: - Կապիտան, մինչև հիմա մեռած տղամարդ գրկե՞լ էիք:

- Ոչ, - պատասխանեց Չարրին, - իսկ դուք մեռած կին գրկե՞լ եք: Ռոբերտոն դիակը դեպի նավախելը քաշեց:

- Լա՞վ էլ սուր տղա եք երևում, - ասաց: - Չխմե՞նք:  
- Դեմ չեմ, - ասաց Չարրին:

- Ճիշտ եմ ասում, փոշմանել եմ, որ սպանեցի, - ասաց Ռոբերտոն, - իսկ երբ ձեզ սպանեմ, ավելի եմ զղջալու:

- Դե լավ, թարգեք, - ասաց Չարրին, - բա ձեզ պե՞տք է նման բաների մասին խոսել:

- Գնացի՞նք, - ասաց Ռոբերտոն, - մե՛կ, երկո՛ւ, երե՛ք:

Երբ կռացան, բարձրացրեցին մարմինն ու նավակողից այն կողմ էին նետում, Չարրին ոտքով հրեց, նավից դուրս զցեց կուրացու հրացանը: Այն էլբերտի հետ միաժամանակ չրմփաց ջրի մեջ, սակայն հակառակ էլբերտի, որ ջրատակ լինելուց առաջ երկու անգամ շրջվեց թիապտուտակի տակից առատորեն դուրս հոսող ճերմակ փրփուրների մեջ, հրացանը միանգամից սուզվեց-անհետացավ:

- Այսպես ավելի լավ է, - ասաց Ռոբերտոն: - Չիմա արդեն ամեն ինչ կարգին է: - Չետո, երբ նկատեց, որ հրացանն անհետացել էր, գոռաց, - ո՞ւր է: Ի՞նչ արեցիք:

- Ի՞նչը:  
- La ametralladora, - լարվածությունից անցավ խապաներենի:

- Դա՞ ինչ է:
- Լավ էլ գիտեք:
- Չեմ տեսել:
- Դո՞ւրս եք նետել: Կսպանե՞մ, հենց հիմա՞ կսպանեմ:
- Հանգստացե՞ղք, - ասաց Հարրին: - Սատանան տանի, ինչո՞ւ եք սպանում:
- Ատրճանա՛կ տուր, - Ռոբերտոն իսպաներեն բղավեց մահճիկին պառկած կուբացու կողմը: - Շո՛ւտ արա, ատրճանա՛կ:
- Հարրին կանգնել էր նավախելին, և նրան թվում էր, թե այն երբեք այդքան մեծ ու ընդարձակ չէր եղել, թևատակերն ահավոր քրտնել էին, քրտինքը մեջքով ներքև էր հոսում:
- Հերի՛ք է սպանես, - մահճիկին պառկած կուբացին էր: - Օգնա-կանին արդեն սպանել ես: Հիմա էլ՝ կապիտանի՞ն: Բա մեզ ո՞վ է Կուբա հասցնելու:
- Նրան հանգի՛ստ թող, - ասաց երկրորդը, - տեղ կհասնենք, հե-տո կսպանես:
- Հրացանս ջուրն է գցել, - ասաց Ռոբերտոն:
- Փողը մոտներս է: Հրացանն ինչի՞դ է: Կուբայում լիքը գնդացիո կա:
- Կտեսնեք, սխալ եմք անում, որ սրան չենք սատկացնում: Խոսքս կհիշեք:
- Դե, շո՛ւտ արա, ատրճանա՛կ տուր:
- Լավ, վերջացրո՛ւ: Հարբած ես: Հենց խմում ես, մարդ ես ման գալիս, որ սպանես:
- Ավելի լավ է, մի քիչ էլ խմեք, - ասաց Հարրին՝ գոլֆստրիմի մոխ-րագույն ալիքների վրայով գննելով, թե ինչպես էր կլոր, բոսոր արե-գակը քսվում ջրերին: - Նայե՛ք, երբ արևը լրիվ անհետանա, ջուրը բաց կանաչավուն կդառնա:
- Գրողի ծո՞ցը, - գոռաց լայնադեմ կուբացին: - Կարծում ես, է-ծա՞ն ես պրծնելու:
- Նոր հրացան կառնեմ, - ասաց Հարրին: - Կուբայում քառասուն-հինգ դոլար էլ չի արժենա: Հանգիստ եղե՛ք: Համ էլ՝ այլևս անհան-գստանալու կարիք չկա: Հետևներիցս նույնիսկ ինքնաթիռը չի հաս-նի:
- Մեկ է, քեզ սպանելու եմ, - թեք նայելով՝ ասաց Ռոբերտոն: - Հա-տուկ արեցիր: Դրա համար էլ ստիպեցիր, որ դիակը բարձրացնեմ:
- Ինձ չեք կարող սպանել, - ասաց Հարրին: - Չեզ ո՞վ է նեղուցն անցկացնելու:
- Շուտ պետք է սպանած լինեի:

- Հանգստացե՛ք, - ասաց Հարրին, - իսկ ես գնամ, շարժիչները ստուգեմ:

Բարձրացրեց դռնակն ու ցած իջավ, ձգեց խծոցները, ականջ դրեց շարժիչներին ու շոշափեց «Թոմսոնը»: Դեռ շուտ է, մտածեց: Ճիշտը սպասելն է: Աստված իմ, լավ էլ հաջող ստացվեց: Էլբերտի համար արդեն միևնույն է՝ մեռած է: Պառավն էլ թաղման ծախս չի անի: Լայնադեմ խոզի մուկ: Պոռնիկի ծնունդ: Ստոր մարդասպան: Աստված իմ, ո՞նց կուզեի հենց հիմա դրա վերջը տալ: Բայց ավելի լավ է՝ սպասեմ:

Վերև բարձրացավ ու ծածկեց դռնակը:

- Դե, ինչպե՞ս եք, - հարցրեց Ռոբերտոյին: Չեռքը նրա ճարպա-կալած ուսին էր դրել: Լայնադեմ կուբացին նայեց ու ոչինչ չասաց:

- Տեսե՞լ եք, ջուրն արդեն կանաչել է, - հարցրեց Հարրին:

- Կորեք գրողի ծողը, - ասաց Ռոբերտոն: Հարբած էր, բայց կաս-կածը դեռ չէր թթացել, շան մման հոտն առնում էր:

- Դեկանիվն ի՞նձ տվեք, - Հարրին դիմեց ջահելին: - Չեր անունն ի՞նչ էր:

- Կարող եք եմիլիո կոչել, - պատասխանեց ջահելը:

- Ցած իջեք, ներքևում ուտելու բան կա, - ասաց Հարրին: - Հաց ու պահածո:

Եթե ուզում եք, սուրճ էլ կարող եք եփել:

- Սուրճ չեմ ուզում:

- Քիչ հետո ինքս կդնեմ, - ասաց Հարրին: Նստել էր կողմնացույ-ցի լամպի լույսի մեջ՝ դեկանիվի դիմաց և հեշտությամբ ուղղորդե-լով նավը խաղաղ, անխռով ծովում՝ հետևում էր, թե ինչպես էր խա-վարը դանդաղ իջնում ջրերին: Կողային լապտերները չէր միացրել:

Նեղուցն անցնելու համար հիանալի գիշեր է, մտածեց, չքնաղ գիշեր: Հենց որ լրիվ մթնի, նավը դեպի արևելք կթեքեմ: Թե չէ՝ մի ժամից Հավանայի գիշերային հրացուլքը կհայտնվի տեսադաշտում: Ամենաշատը՝ երկու ժամից: Իսկ հենց որ քաղաքի լույսերը երևան, այս շան որդին կոգտրվի ու նորից կուզենա սպանել ինձ: Բախտս բերեց, հրացանից պրծանք: Էն էլ ո՞նց բերեց: Հետաքրքիր է, Մերին ընթրիքին ի՞նչ է պատրաստել: Հիմա ո՞նց է անհանգստանում: Այն-քան, որ ուտելու ցանկություն հաստատ չունի: Հետաքրքիր է, որ-քա՞ն փող են թռցրել: Տարօրինակ է, մինչև հիմա չեն էլ հաշվել: Հե-ղափոխության համար փող ճարելու լավ ճանապարհ է: Կուբացի-ները զարմանալի ժողովուրդ են:

Բայց այս Ռոբերտոն ստորի մեկն է: Գիշերը վերջը տալու եմ: Կարևոր չէ, թե հետո ինչ կլինի, մեկ է՝ սատկացնելու եմ: Չնայած,

խեղճ էլքերտին այլևս ի՞նչ օգուտ: Ցավում են, որ քրասույզ արեցի: Լույնիսկ չգիտեմ, ո՞նց մտքովս անցավ:

Ծխախոտ վառեց ու սկսեց ծխել մթության մեջ:

Ամեն ինչ լավ է, մտածեց: Ավելի լավ, քան կարող էի պատկերացնել: Այս ջախելն էլ կարգին տղա է երևում: Լավ կլիներ, որ այն երկուսը նույն տեղում պառկած մնային: Չնայած գերադասելի է, որ հաջողացնեի բոլորին մի տեղ հավաքել: Պետք է խելացի վարվել: Առայժմ որքան հանգիստ լինեն, իմ օգուտն է: Որքան հանդարտ, այնքան՝ լավ:

- Սենդվիչ չէ՞իք ցանկանա, - հարցրեց ջախելը:

- Ոչ, շնորհակալություն, - պատասխանեց Չարրին: - Ավելի լավ է, ձեր ընկերոջը տվեք:

- Նա խնում է: Չի ուտի, - ասաց ջախելը:

- Իսկ մյուսները:

- Սրտերը խառնում է, - պատասխանեց:

- Նեղուցն անցնելու համար գիշերը նպաստավոր է, - ասաց Չարրին:

Նկատեց, որ ջախելը կողմնացույցին չէր նայում, և նավը դեպի արևելք էր լողում:

- Չաճելի օր է, - ասաց ջախելը, - ափսոս, որ ձեր օգնականի բախտը չբերեց:

- Լավ տղա էր, - ասաց Չարրին: - Բանկում նո՞ւյնպես մարդ տուժեց:

- Փաստաբանը: Ազգանունն ի՞նչ էր... Սիմոնսը:

- Սպանվե՞ց:

- Կարծեմ:

Ուրեմն, այսպես, պարոն Լեզվանի, մտածեց: Սատանան տանի, ուրիշ ի՞նչ էիր սպասում: Ինչպե՞ս կարող էր մտքովդ անցնել, թե պլստալու ես: Ահա, ինչ է լինում, երբ սեփական խաղդ չես խաղում: Եվ փորձում ես չափից ավելի խելոք ձևանալ: Պարո՞ն Լեզվանի: Մնաս բարո՞վ, պարոն Լեզվանի:

- Ինչպե՞ս պատահեց:

- Կարծում եմ, գուշակում եք, - պատասխանեց ջախելը: - Չեր օգնականի դեպքում ամեն ինչ այլ կերպ ստացվեց: Ցավում եմ: Գիտեք, այն մյուսի մտքով էլ վատ բան չէր անցնում: Պարզապես, հեղափոխության տվյալ փուլում այդպես էր պետք:

- Որքան գիտեմ, վատ մարդ չէր, - ասաց Չարրին, և անմիջապես մտքով անցավ՝ Մեկը լսեր, թե ինչեր են դուրս տալիս: Սատանան տանի, լեզուն ոսկոր չունի: Բայց հիմա պետք է այս ջախելի սիրտը շահել, ինչ իմանաս...

- Իսկ ի՞նչ հեղափոխություն եք նախապատրաստում, - հարցրեց:

- Մենք միակ իրական հեղափոխական կուսակցությունն ենք, - ասաց ջախելը: - Ուզում ենք նախորդ բոլոր քաղաքական դեկավարների, մեզ շնչահեղձ անող ամերիկյան իմպերիալիզմի ու զինվորական բռնակալության վերջը տալ: Ուզում ենք ամեն ինչ նորից սկսել և բոլոր մարդկանց իրենց կյանքը դասավորելու հնարավորություն տալ: Ուզում ենք, որ ցաջիրո-ները, երևի գիտեք՝ գյուղացիները, ազատվեն ստրկությունից, շաքարի բոլոր խոշոր տնկադաշտերը հանձնելու ենք նրանց, ովքեր դրանց իրական մշակն են: Բայց կունենիստներ չենք:

Չարրին հայացքը կտրեց կողմնացույցից և նրան նայեց:

- Եվ ինչպե՞ս եք այդ ամենին հասնելու, - հարցրեց:

- Հենց թեկուզ այսօր պայքարի համար փող ենք ձեռք բերել, - ասաց ջախելը: - Հանուն հեղափոխության այնպիսի միջոցների ենք դիմում, որոնք, սակայն, հետագայում այլևս երբեք չենք կիրառելու: Նաև այնպիսի մարդկանց ենք օգտագործում, որոնց օգնությամբ նույնպես ապագայում չենք դիմելու: Նպատակն արդարացնում է միջոցները: Ցարական Ռուսաստանում էլ էին նույն կերպ վարվում:

Սա արմատական է, մտածեց Չարրին: Ահա, թե ով է՝ արմատական:

- Դե ինչ, լավ ծրագիր ունեք, - ասաց Չարրին, - հատկապես, այդ ամենն անում եք հանուն աշխատավոր մարդկանց: Նախկինում ես էլ եմ գործադուլների մասնակցել, երբ մեզ մոտ՝ Քի Ուեսթում դեռևս սիգարի ֆաբրիկա կար: Ուրախությամբ կօգնեի, եթե նախապես իմանայի, թե ովքեր եք և ինչ է ձեր ուզածը:

- Շատերը կցանկանային մեզ օգնել, - ասաց ջախելը, - սակայն առայժմ շարժման տրամաբանությունն այն է, որ չի կարելի մարդկանց վստահել: Այս փուլը նույնպես անհրաժեշտ է, չնայած որոշ իրադեպերի համար շատ եմ ցավում: Ատում եմ ահաբեկչությունը: Եվ սրտովս չէ նման ձևով փող ձեռք բերելը: Սակայն ընտրության հնարավորություն չունենք: Չեք պատկերացնի, թե այսօր Կուբայում իրավիճակն ինչ ահավոր է:

- Գիտեմ, այնտեղ վիճակը շատ ծանր է:

- Չեք կարող երևակայել, թե որքան դժվար է: Արյունալի բռնապետություն, որ հասել է ամենախուլ գյուղերը: Փողոցում նույնիսկ երեքով կողք-կողքի կանգնելը վտանգավոր է: Կուբան արտաքին թշնամիներ չունի, բանակի կարիք էլ չկա, սակայն քսանհինգ հազարանոց զորք են պահում, իսկ զինվորականները, կապրալից մինչև ամենաբարձրը, ժողովրդի արյունն են ծծում: Բոլորը, նույ-

նիսկ շարքայիցները, հենց միայն մտածում են, թե ինչպես գրպանները լցնեն: Դա էլ բավական չէ, պահեստային զինուժ կա՝ Մաչատրոյի ժամանակներից մնացած խարդախները, ավազակներն ու լրտուները, որ թալանում են այն, ինչ բանակը դեռ չի հասցրել խելի: Մինչև այդ բանակից չազատվեք, անհմար է որևէ լավ բան անել: Առաջ մեզ մահակներն էին իշխում: Գիմա՝ հրացանները, ատրճանակները, գնդացիներն ու սպիները:

- Այո, վատ է, - ասաց Գարրին ու մի փոքր թեթեց դեկանիվը, որպեսզի նավը դեպի արևելք շարժվեր:

- Չե՛ք կարող պատկերացնել, - ասաց ջահելը: - Թշվառ հայրենիքս շատ են սիրում և ամեն, ամեն ինչ կանեն, որպեսզի այն ազատեն բռնապետության ճիրաններից: Դրա համար էլ ստիպված են նույնիսկ որոշ արգահատելի բաներ անել: Սակայն պատրաստ են նաև հազար անգամ ավելի ատելի քայլի դիմել:

Գիմա արժեր մի բաժակ զցել, մտածեց Գարրին: Սրա հեղափոխությունն ինչի՞ս է: Դրա հեղափոխությունը ք... է: Աշխատավոր մարդուն օգնելու համար բանկ է թալանում ու իրեն աջակցողին սպանում, հետո էլ վերացնում է դժբախտ թշվառական էլքերտին, որ կյանքում ոչ մեկին վատություն չի արել: Աշխատավոր մարդու է սպանում, չէ՞: Ասա՝ մտքովն անցնո՞ւմ է: Այն էլ՝ ընտանիք պահող մարդու: Կուբան կուբացիներն են դեկավարում: Իրենք էլ իրենց դավաճանում են: Եվ պատրաստ են իրար ծախել: Արդյունքում ունեն այն, ինչին արժանի են: Գրողի ծոցը կորչի դրանց հեղափոխությունը: Մի բան գիտեմ՝ ընտանիքս պետք է կերակրեմ ու չեմ կարողանում: Իսկ սա եկել, իր հեղափոխությունով գլուխ է տանում: Գրողի ծոցը կորչի դրա հեղափոխությունը:

- Վատ է, վատ, - դիմեց ջահելին: - Լսե՛ք, կարո՞ղ եք մի թուփով դեկանիվը բռնել: Ուզում եմ մի բան խմել:

- Խնդրեմ, - պատասխանեց ջահելը, - միայն թե ասեք, ի՞նչ կուրսի վրա պահեմ:

- Երկու հարյուր քսանհինգ աստիճան, - ասաց Գարրին:

Արդեն մութն ընկել էր, բայց գուժստրիմի կեսը դեռ չէին անցել, և հայտնվել էին մեռյալ ալեկոծության գոտում: Գարրին շրջանցեց մահճիկներին պառկած կուբացիներին, անցավ դեպի նավախելը, ուր հատակին ամրացված աթոռակին փռվել էր Ռոբերտոն: Խավարի մեջ ալիքները մեղմ գարկվում էին նավակողերին: Ռոբերտոն մեկնվել էր հասակով մեկ, ոտքերը դրել էր մյուս, շրջված աթոռակին:

- Խմելու բան տվեք, - Գարրին նրան դիմեց:

- Գնացե՛ք գրողի ծոցը, - խոպոտածայն ասաց լայնադեմը, - սա ի՞նչն է:

- Լավ, - ասաց Գարրին և գնաց մյուս շիշը բերելու: Ներքևում, մթության մեջ, շիշը սեղմեց կոնատ քևի տակ, դուրս քաշեց Ֆրեդիի հանած ու նորից տեղը խցկած խցանը և կու՛մ արեց:

Ամենահարմար պահն է, մտածեց: Սպասելն այլևս անիմաստ է: Ջահելն իր ասելիքն արդեն ավարտել է: Խոշորադեմ սրիկան հարբած է, մյուս երկուսը թուլացած-ընկած են: Դենց հիմա, իսկ ինչո՞ւ՛նչ:

Մի կու՛մ էլ արեց, բակարդին վայրկենապես տաքացրեց, մի քիչ կայտառացրեց, բայց հոգին դեռևս ընդարմացած ու դատարկ էր: Ներսում ամեն ինչ սառած էր:

- Խմել չե՞ք ուզում, - հարցրեց դեկանիվը բռնած ջահելին:

- Ոչ, շնորհակալ եմ, - պատասխանեց ջահելը: - Ես ընդհանրապես չեմ խմում: - Կողմնացույցի լույսի տակ Գարրին նկատեց, որ նա ժպտում էր: Գեղեցիկ տղա էր: Եվ շատ կիրք էր խոսում:

- Իսկ ես մի կու՛մ կանեմ, - ասաց Գարրին: Երկու կարգին կու՛մ արեց, բայց բակարդին անկարող էր ջերմացնել, թափանցող սառնությունը բարձրացել-լցվել էր կրծքավանդակը: Շիշը հատակին դրեց:

- Ուղղությունը չփոխեղք, - ասաց ջահելին, - գնում եմ շարժիչները ստուգելու:

Բացեց դռնակն ու ներքև իջավ: Վերցրեց տախտակամածին ամրացված երկար կեռն ու հենեց դռնակին: Կռացավ շարժիչների վրա, առողջ ձեռքով շոշափեց խողովակներն ու մխոցները և ձեռքը դրեց խժժոցներին: Երկու խժժոցն էլ մեկ ու կես պտույտ ձգեց: Դերի՛ք է ձգձգես, ասաց ինքն իրեն: Դերի՛ք եղավ: Քաջությունը ո՞ւր կուրավ: Կար ու՛՛ չկա, մտածեց:

Դետո դուրս նայեց դռնակից: Ձեռքը հեշտությամբ հասնում էր բեմզինի բաքի վերևում հարմարեցված մահճիկներին, որոնց վրա կուբացիներն էին: Դեկանիվի դիմաց ջահելն էր՝ բարձր աթոռակին նստած, թիկունքն իր կողմն արած, նրա մարմինը հստակ գծագրվում էր կողմնացույցի լապտերի լույսի մեջ: Շրջվեց և ջրի սև ֆոնի վրա տեսավ նավախելին մեկնված Ռոբերտոյին:

Փամիշտակալի մեջ քսանմեկ փամփուշտ կար, ուրեմն, ամենաշատը՝ չորս հատ հինգանոց կրակահերթ, մտածեց: Ձեռքս թեթև պետք է լինի: Դե, լավ: Գնացի՛նք: Դերի՛ք է ձգես, վախկոտի մեկը: Աստված իմ, ամեն ինչ կտայի, որ մի կու՛մ էլ անեի: Վերջ, էլ ոչ մի կու՛մ: Մեկնեց ծախ ձեռքը, քանդեց առաջին ուսափոկը, մատը ձգա-

Մին դրեց, քաշեց ապահովիչի լծակն ու հանեց հրացանը: Պագելով շարժիչների մոտ՝ զգույշ նշան բռնեց ուղիղ ջահելի ծոծրակին, որ հատակ գծագրվում էր կողմնացույցի լույսի մեջ:

Բոցը հանկարծակի առկայծեց մթության մեջ, գնդակները, բաց դռնակին ու շարժիչներին դիպչելով, խուլ չխկչխկացին: Մինչ ջահելի մարմինը դանդաղ սահում էր աթոռակի վրայից, Հարրին շրջվեց ու կրակեց ձախ մահճիկին պառկած մութ կերպարանքի ուղղությամբ՝ այնքան մոտ պահելով հրաշունչ, ցնցվող հրացանափողը, որ հաջորդ պահին քթին հասավ կուբացու վերարկուի խանձահոտը: Ապա շրջվեց ու մի կրակահերթ էլ բաց թողեց երկրորդի վրա, որն արդեն տեղից բարձրացել և փորձում էր ատրճանակը հանել: Հարրին մի փոքր էլ պագեց ու սկսեց նավախելը զննել: Լայնադեմ կուբացին արդեն աթոռակի վրա չէր: Երկու աթոռակներն էլ պարզորոշ գծագրվում էին խավարի մեջ: Քիչ հեռվում անշարժացած ջահելն էր: Սրա հարցում կասկած չիմել չէր կարող: Աջակողմյան մահճիկին պառկած կուբացին դեռ թպրտում էր: Մյուսը, Հարրին սրան աչքի պոչով էր տեսնում, բերանքսիվայր կիսակախվել էր նավակողից:

Հարրին մթության մեջ փորձեց գտնել լայնադեմին: Հիմա նավը տեղում էր պտտվում, և նավախցիկը թույլ լուսավորվել էր: Շունը պահած՝ շուրջբոլորն էր զննում: Կարծես նա է՝ հատակի անկյունում սև ստվեր երևաց: Ավելի ուշադիր զննեց, ստվերը, կարծես, շարժվեց: Նա է:

Իր կողմն էր սողում: Ոչ, ձգվում էր դեպի ընկերը, որ կիսակախված էր նավակողից: Ատրճանակն էր ուզում վերցնել: Հատակին սեղմվելով՝ Հարրին հետևում էր ստվերի շարժումներին, ապա պարզորոշ տեսավ նրան: Ու՛ կրակեց: Բոցը լուսավորեց սողացողի ձեռքերն ու ծնկները, և երբ բոցն ու հրացանի տկտկոցը դադարեցին, Հարրին զգաց, թե ինչպես էր նա ծանրորեն ջղաձգվում հատակին:

- Այդպե՛ս, շան որդի, - ասաց Հարրին, - մարդասպան խոզի մուրթ:

Ներսի սառնությունն անհետացել էր, հիմա արդեն հաճելի դատարկություն էր, երզեցիկ զվվոց, նա ավելի կռացավ ու ձեռքը մեկնեց պաշտպանիչ շերտով ծածկված բենզինի բաքի տակ, որպեսզի նոր փամփշտակալ հաներ ու լիցքավորեր հրացանը: Դուրս քաշեց փամփշտակալը, սակայն ձեռքը թրջվել էր ու շատ արագ չորացավ:

Բաքին եմ դիպել, մտածեց: Շարժիչները պետք է անջատել: Ի՞նչ իմանաս, որտեղի՞ց է կաթուն:

Հանեց, մի կողմ նետեց դատարկ փամփշտակալը, նորը տեղադրեց ու վերև բարձրացավ:

Մինչ «Թոմսոնը» ձախ ձեռքով բռնած ոտքի կկանգնեք և կփորձեք աչ ուսի կեռիկով փակել դռնակն ու շուրջբոլորը զննել, ձախ մահճիկին պառկած կուբացին, որի ձախ ուսին երեք գնդակ էր մխրձել, և դրանցից երկուսը ծակել-անցել, հասել էին բաքին, հանկարծ նստեց տեղում, նշան բռնեց և կրակեց ուղիղ Հարրիի որովայնին:

Հարրին ընկրկեց ու փլվեց տեղում: Նրան թվաց, թե մահակով ուժգին հարվածել էին փորին: Թիկունքը հեծել էր ձկնորսական աթոռակի երկաթյա խողովակին, որի մեջ կարթածողն են ամրացնում, և երբ կուբացին երկրորդ անգամ կրակեց ու ցխեց գլխավերևի ձկնորսական աթոռակը, Հարրին փույթով շոշափեց հատակը, գտավ «Թոմսոնը», կռնատ ուսի կեռիկով ճանկեց հրացանակոթը, զգուշությամբ բարձրացրեց ու փամփշտակալի կեսը դատարկեց կուբացու վրա, որը գլուխն առաջ թեքած՝ հանգիստ նստած կրակում էր իր ուղղությամբ: Վերջինս պարկի նման փլվեց մահճիկին, իսկ Հարրին շարունակեց շոշափել հատակը, մինչև գտավ լայնադեմին, կեռիկով բռնեց նրա գլուխը, իր կողմը շրջեց, հրացանափողը սեղմեց քունքին ու քաշեց ձգանը: Այնպիսի ձայն դուրս եկավ, որ հիշեցնում էր հասուն դղումին մահակով հասցված հարվածի դնգոցը: Հարրին հրացանը ցած դրեց ու պառկեց հատակին:

- Ես շան որդի եմ, - շուրթերը համարյա տախտակամածին էին քսվում, - շան որդի եմ, ու վերջս եկել է:

Շարժիչները պետք է անջատել, թե չէ կմոխրանանք-կվերանանք, մտածեց: Ամեն ինչ դեռ վերջացած չէ: Աննշան շանս ունեմ: Հիսո՛ւս Քրիստոս: Պատահականություն, և՛ վերջ ամեն ինչին: Ընդամենը՝ պատահականություն: Սատանա՛ն տանի: Սատանա՛ն տանի այդ կուբացուն: Ո՞ւմ մտքով կանցներ, որ չի սատկել:

Չորեքթաթ վեր ելավ ու այնպես հրեց դռնակը, որ այն աղմուկով ընկավ շարժիչների վրա, ապա տապալված դռնակի վրայով սողաց առաջ, դեպի դեկանիվի դիմացի աթոռակը: Բռնվեց աթոռակից ու ձգվեց, զարմանալով, որ դեռևս կարողանում էր հեշտությամբ տեղաշարժել, ապա ոտքի կանգնելով՝ զգաց, որ թույլ էր, գլուխը պտտվում էր, առաջ թեքվեց, կռնատ ուսով հենվեց կողմնացույցին ու երկու բռնակն էլ պտտեց: Շարժիչները լռեցին, միայն նավակողերին զարնվող ջրի ձայնն էր լսվում: Ուրիշ ոչ մի հնչյուն: Նավը շրջվեց հոսանքի լայնքով ու սկսեց տարուբերվել ալիքների վրա, որ բերում էր հյուսիսից փչող քամին:

- Ի՞նչ էլ վստահ եք ասում:
- Ուշադիր հետևում էի:
- Գլուխս բարձրացրեցի ու նկատեցի, որ էդդին նավահանգստին էր մոտենում, ոնց որ բոյովացել էր ու ավելի էր փնթիացել: Չեռք ու ոտքն էլ, կարծես, թուլացած լինեին:
- Հրեն, գալիս է:
- Էդդիի տեսքը մի բան չէր: Առավոտները, սովորաբար, նորմալ վիճակում չէր էլ լինում, բայց հիմա ահավոր էր:
- Ո՞ւր կորար, - հարցրեցի:
- Պառկել էի հատակին:
- Դո՞ւք էլ տեսաք, - հետաքրքրվեց Ջոնսընը:
- Մի՞ հիշեցրեք, պարոն Ջոնսըն, - խնդրեց էդդին, - անգամ հիշելիս վատ եմ զգում:
- Ավելի լավ է, մի բաժակ խմեք, - ասաց Ջոնսընը, հետո ինձ դիմեց: - Դե ինչ, այսօր ծով դուրս գալո՞ւ եմք:
- Կամքը ձերն է:
- Լա՞վ եղանակ է լինելու:
- Երեկվա նման: Կարող է՝ ավելի լավ:
- Ուրեմն՝ առա՛ջ:
- Շատ լավ, կմեկնենք, հենց որ ձկնախայծը տեղ հասնի:
- Արդեն երեք շաբաթ ծուկ էինք որսում ծովածոցում, բայց նրա փողի երեսը չէի տեսել, չհաշված հարյուրանոցը, որ նախապես էր տվել՝ հյուսիսարևմտյանի և նավահանգստի ելքի վարձը մուծելու, մի քիչ էլ պարեն ու վառելիք ձեռք բերելու համար: Բոլոր ծախսերը ես էի հոգում, նավը վարձել էր օրը երեսուցիսը դուրսով: Քնում էր հյուրանոցում և առավոտ կանուխ արդեն նավի վրա էր: Էդդին էր գտել-բերել, դրա համար նրան էլ էի հետս վերցրել: Օրական չորս դոլար էի վճարում:
- Վառելիք պետք է լցնեմ, - ասացի Ջոնսընին:
- Բարի:
- Փող է պետք:
- Որքա՞ն:
- Գալոնը քսանութ ցենտ արժի: Քառասուն գալոն պետք է լցնեմ: Ուրեմն՝ տասնմեկ դոլար քսան ցենտ:
- Դրամապանակից տասնհինգ դոլար հանեց:
- Մնացածին գարեջուր ու սառույց վերցնե՞մ, - հարցրեցի:
- Հրաշալի միտք է, - պատասխանեց, - իմ հաշվին կգրեք:
- Մտածեցի՝ երեք շաբաթը բավական ժամանակ է, եթե, իհարկե, կարելի է սրան վստահել, ի վերջո, ի՞նչ տարբերություն, սա՞ կլինի,

- թե՛ մեկ ուրիշը: Չնայած, ճիշտ կլիներ, որ ամեն շաբաթ վճարեր: Պատահել է՝ ամբողջ ամիսը չարչարվել եմ ու փողը վերջում եմ ստացել: Միայն իմն է, չնայած սկզբում համաձայնվում եմ՝ ուրախացած, որ գործ է կպել: Միայն վերջին օրերին եմ սկսում անհանգստանալ, բայց վախենում եմ ծպտուն հանել, որ հանկարծ հաճախորդին չբարկացնեմ: Եթե կարգին վճարելու է, ուրեմն իրար հետ որքան երկար աշխատենք, այնքան՝ լավ:
- Գարեջուր կխմե՞ք, - ասաց՝ բացելով արկղը:
  - Ո՛չ, շնորհակալ եմ:
  - Այդ պահին տախտակամածում հայտնվեց ձկնախայծ դնող նեգրը, և էդդին հրահանգեցի, որ նավարկության պատրաստվի:
  - Նեգրը խայծը նավ բարձրացրեց, և դուրս լողացինք նավահանգստից: Նա սկսեց թյունիկները կեռերին ամրացնել: Կեռը մտցնում էր ձկան բերանից, հանում խռիկներից, հետո բերանը կողքից պատռում էր ու կեռը մյուս կողմից էր հանում, ապա բերանները փաթաթում էր լարով, ամուր կապում էր կեռերը, որ հանկարծ դուրս չպրծնեին, և խայծն առանց ձգվելու, ազատորեն շարժվեր:
  - Ամենախկակախ սև նեգր էր, զգաստ ու մռայլ, վերնաշապիկի տակ, պարանոցին՝ կապույտ հմայիլ, գլխին՝ ծղոտե հնամաշ գլխարկ: Նավի վրա սիրում էր քնել ու լրագիր կարդալ: Բայց արագաշարժ էր և լավ խայծ դնող:
  - Կապիտա՛ն, ինքներդ չե՞ք կարող խայծ դնել, - ինձ դիմեց Ջոնսընը:
  - Կարող եմ, պարողն:
  - Այդ դեպքում, նեգրին ինչո՞ւ եք վերցնում:
  - Երբ ծուկն առատ լինի, կիմանաք, - պատասխանեցի:
  - Այսի՞նքն:
  - Նեգրն ինձանից արագ է աշխատում:
  - Իսկ էդդին չի՞ կարող:
  - Ո՛չ, պարոն:
  - Ինձ թվում է, ավելորդ ծախս է, - նեգրին օրական մեկ դոլար էր տալիս, սա էլ ամեն գիշեր քեֆի մեջ էր: Հենց այդ պահին էլ քնատ էր:
  - Առանց նրա յուլա չենք զնա, - ասացի:
  - Մինչ այդ արդեն շրջանցել էինք առափնյա Կաբանյասում կայանած միակայն ձկնորսանավերը, Մորրոյի ժայռերի քարքարոտ ստորոտում բելոյուզա որսացողներին, և նավը բաց ծով էր դուրս եկել, ուր սկիւն էր տալիս ծովածոցը: Էդդին երկու մեծ փայլախայծերը ջուրն էր իջեցրել, իսկ նեգրը խայծ էր ամրացրել բոլոր երեք կարթածողերին:



Մի պահ կառչեց ղեկանիվից, ապա փլվեց աթոռակին ու մեջքը հենեց թիկնակին: Չգաց, որ չդադարող սրտխառնուքից ուժասպառ էր լինում: Առողջ ձեռքով արծակեց վերնաշապիկն ու շոշափեց վերքը, սկզբում ձեռքի ափով, հետո՝ մատներով: Արյուն համարյա չկար: Ներս է լցվում, մտածեց: Ավելի լավ է չշարժվեմ, գուցե դադարի:

Լուսինն արդեն դուրս էր եկել, պարզորոշ երևում էր, թե ցածում ինչ էր կատարվում:

Քառս է, մտածեց, սատանան տանի, իսկական քառս:

Քանի դեռ գետին չեմ տապալվել, ավելի լավ է պառկեմ, մտածեց ու աթոռակից զգուշությամբ հատակին իջավ:

Պառկեց կողքի, նավակը մի անգամ էլ պտտվեց, և լուսինն ամբողջությամբ լուսավորեց տախտակամածը:

Լիքն է, է՛, մտածեց: Ա՛յ թեզ բան, լիքը-լիքը: Յետո մտածեց՝ նա՞ ինչ է անելու: Մերին, Մերի՞ն ինչ է անելու: Գուցե պարզատրե՞ն: Սատանա՛ն տաներ այդ կուրացուն: Թերևս, Մերին մի կերպ յուր գնա: Խելքը գլխին կին է: Երևի միասին էլ մի կերպ էինք ապրելու: Հավանաբար, այս ամենը հենց սկզբից էլ անիմաստ էր: Կծածս կտորն ավելի մեծ էր, քան կարող էի կուլ տալ: Ի՞նչ գործ ունեի: Բայց ամեն ինչ հաշվարկել էի: Եվ ոչ ոք չի իմանա, թե ինչն ինչպես է եղել: Այ, եթե կարողանայի Մերիի համար ինչ-որ բան անել: Նավի վրա լիքը փող է: Չգիտեմ էլ՝ որքան: Ուզածիս պես կապրեի: Առափնյա պահպանությունը հաստատ ամբողջը կտանի: Համենայն դեպս՝ կեսը: Ա՛յ թե հաջողացնեի պառավիս լուր տալ, թե այստեղ ինչ է կատարվում: Նա ի՞նչ կաներ: Չգիտեմ: Երևի ճիշտ կանեի բենզակայանում կամ մի այլ տեղ գործ ճարեի: Նավը պետք է թարգած լինեի: Այսօր նավով ազնվորեն փող չես վաստակի: Այս սատանան էլ, զոնե չճոճեր: Հանգիստ մնա, էլի՛: Սիրտ ու թոքս իրար են խառնվել: Ես, պարոն Լեզվանին ու էլբերտը: Ով ամենչություն ուներ: Նաև՝ այս սրիկաները: Երևի նման գործերն այսպես են արվում: Դժբախտություն բերող գործեր են: Թերևս, մեր նմանների համար ճիշտը բենզակայան պահելն է: Սատանա՛ն տանի, երևի դա էլ չկարողանայի: Այ, Մերին կարող էր: Հիմա արդեն ծեր է, էլ չի ֆռֆռա: Մեռակ թե այս անիծվածը չճոճեր: Լավ, հիմա պետք է ինձ հանգիստ պահեմ: Որքան հնարավոր է: Ասում են, պետք է անշարժ պառկես ու ջուր չխմես: Կարևորը, ասում են, ջուր չխմելն է:

Սկսեց զննել այն ամենը, ինչ երևում էր լուսնալույսի մեջ:

Դե ինչ, միևնույն է, նավը կարգի չեմ բերելու, մտածեց: Հան-

գիստ: Ուրիշ գործ չունեմ: Հանգիստ: Որքան հնարավոր է՝ հանգիստ: Ամեն դեպքում, ամեն ինչ դեռ կորած չէ: Եթե ջուր չխմեմ ու անշարժ պառկեմ:

Պառկեց մեջքի վրա ու փորձեց համաչափ շնչել: Նավը տարուբերվում էր գուֆստրիմի ալիքների վրա, Հարրի Մորգանը փռվել էր տախտակամածին և փորձում էր ամուր հենվել առողջ ձեռքին, որպեսզի մարմինը չճոճվեր: Շուտով հանդարտվեց և այլևս չէր դիմարդում:



**Տ**րեղի Ուռլլեսի նավը՝ «Թագուհի կոնչը», որ երեսունչորս ոտնաչափ երկարություն ուներ և V-ով համար՝ ասել է, թե Տամպա քաղաքից էր, ճեփ-ճերմակ էր. քթամասի տախտակամածը կանաչ, ինչպես ընդունված էր ասել, «ուրախ կանաչ» էր ներկած, նավախցիկի պատերը նույնպես «ուրախ կանաչ» էին: Նույն գույնով էր ներկած նաև դեկանիվի վերևի ծածկը: Նավի անունն ու մայր-նավահանգստի անվանումը՝ Քի Ուեսթ, Ֆլորիդայի նահանգ, սև տառերով տպված էին նավախելին: Նավակայան և այլ սարքեր չուներ: Հողմապակիներից մեկը կոտրված էր: Թարմ ներկած նավակողը մի քանի տեղում արդեն ծակծկված էր, անցքերի շուրջբոլորը տախտակը ճեղճեղվել էր: Թարմ անցքեր կային նաև զույգ նավակողերի միջնամասում, եզրագերաններից մեկ ոտնաչափ ներքև: Նման անցքեր էին նշարվում նաև ջրագծից քիչ վերև՝ աջ նավակողին, ծածկի հետին հենարանի դիմաց: Ամենաներքևի անցքից մուգ հեղուկ էր հոսում, որ նուրբ վտակներով սառչում-կպչում էր թարմ ներկին:

Նավը շարժվում էր հյուսիսային մեղմ քամուն համընթաց, հյուսիս մեկնող լցանավերի երթուղային սահմանագծից տասը մղոն հեռավորությամբ, և նավի սպիտակականաչ թարմ գույնը խնդալից խաղում էր գոլֆստրիմի մուգ կապույտի վրա: Ջրի մակերեսին լողացող արևախամծ ջրիմուռների փնջերը դանդաղ սահում էին նավի կողքով, հոսանքը դրանք քշում էր դեպի հյուսիս ու արևելք, իսկ քամին անվերջ հրում-հեռացնում էր նավը, տանում գոլֆստրիմի ուղղությամբ: Նավի վրա կյանքի նշաններ չկային, չնայած եզրագերաններից այն կողմ երևում էր տղամարդու մի փոքր փքված մարմին, որ փռված էր բենզինի ձախ բաքի վերևում ամրացված մահճիկին, իսկ աջ նավակողի երկայնքով մի ուրիշ մարմին, կարծես, կիսակախվել էր եզրագերանի վրա և փորձում էր ձեռքը ջրին հասցնել: Ո՛չ գլուխը, ո՛չ էլ ուսերը արևից պաշտպանված չէին, իսկ այնտեղ, ուր մատները համարյա ջրին էին դիպչում, մանրածկների հոծ վտառ էր խմբվել, շատ մանր՝ ընդամենը երկու մատնաչափ երկարությամբ, օվալաձև ոսկեգույն, կարմիր գույնով, որ թողել էին ջրիմուռների փնջերն ու եկել-թաքնվել էին նավի ստվերում, և ամեն անգամ, երբ նավից ինչ-որ բան էր կաթում ջրի մեջ, իրար էին անցնում, հարձակվում, դեռ ու դեռ լողում, կլլում-ոչնչացնում էին այն ա-

մենը, ինչ բաժին էր հասել իրենց: Երկու մոխրագույն մակաբույծ ձկներ, ամեն մեկը՝ տասնութ մատնաչափ երկարությամբ, նույնպես թափառում էին նավի ստվերում, անվերջ փակելով ու բացելով տափակ գլուխների զագաթներին ցցված ճեղքանման ծծիչները, սակայն, թվում է, չէին կարողանում կռահել մանրածկների սնունդ-կաթոցների օրինաչափությունը և անհրաժեշտ պահին, հակառակի պես, հայտնվում էին նավի մյուս կողմում: Նրանք վաղուց էին կուլ տվել նավակողի ներքևի անցքերից ջրի վրա թափվող-լողացող բոսորա-կարմրագույն թանձրուկներն ու թելիկները՝ ամեն անգամ ուժգին թափահարելով այլանդակ, ծծիչագարդ գլուխներն ու երկարավուն, աստիճանաբար նեղացող, կոնաձև մարմինները: Եվ հիմա չէին ցանկանում հեռանալ այնտեղից, որտեղ հաջողվել էր սնվել այդքան կուշտ ու այդպես անսպասելի:

Նավախցիկում ևս երեք մարդ կար: Մեկն անշունչ, մեջքի վրա պռակած էր դեկանիվի դիմացի աթոռակի կողքին, որից էլ, ամենայն հավանականությամբ, սահել-ընկել էր: Երկրորդը, նույնպես անշունչացած, մեջքը կորացրել, հենվել էր ծածկոցի հետևի աջ հենասյանը: Երրորդը, որ դեռ կենդանի էր, սակայն՝ գիտակցությունը կորցրած, պռակել էր կողքի վրա, ձեռքը գլխի տակ:

Նավամբարը լի էր բենզինով, և երբ նավն օրորվում էր, ճողփյունի ձայն էր լսվում: Վիրավոր Հարրի Մորգանը կարծում էր, թե ձայնն իր որովայնից էր գալիս, թվում էր՝ որովայնը մեծացել, հսկայական լիճ էր դարձել, և լճի ջուրը ափերին էր զարնվում: Երևի նրանից էր, որ պռակել էր ծնկները բարձր, գլուխը՝ հետ գցած: Լիճ-որովայնի ջուրը սառն էր, այնքան սառը, որ երբ ջուրը մտավ, ոտքերը փայտացան, սկսեց անտանելի ցուրտ զգալ, շուրջբոլորը միայն բենզինի հոտ էր, կարծես բենզինի փողրակը ծծելով բաքն էր լիցքավորում: Գիտեր, որ մոտերքում վառելիքի բաք չկար, բայց զգում էր ռետինե փողրակի սառնությունը, փողրակը, կարծես, բերանն էր մտել ու ոլորվել, ներսում էր՝ հաստ, սառը, ծանր: Ամեն շունչ առնելիս փողրակը որովայնի մեջ կծկվում ու ավելի էր սառչում, լճի ճողփյունի հետ նրան թվում էր, թե ներսում մեծ օձ էր դանդաղ սողում: Այդ օձից վախենում էր, և չնայած այն իր ներսում էր, թվում էր, թե անչափ հեռվում էր, հիմա նրան միայն ցուրտն էր անհանգստացնում:

Ցուրտը ներթափանցել էր ամբողջ մարմինը, կտրող ցուրտ, որ լրիվ անզգայացրել էր նրան, և անշարժ պռակած՝ նա հնազանդվել, հաշտվել էր սառնության հետ: Մի պահ թվաց, որ եթե կարողանար երկծավվել, ինքն իր համար վերմակ դառնալ՝ կտաքանար, և, կարծես, զգում էր, թե հաջողել էր ու սկսել էր ջերմանալ: Իրականում,

տաքացել էր արյունահոսելուց, որը վերսկսվել էր ծնկները վեր ձգելուց հետո, և երբ ջերմության զգացումն անցավ, հասկացավ, որ երկծավվելն այլևս անհնար էր, ցրտի դեմն առնել չէր լինի, ու դիմադրելն անհմաստ էր: Պառկել, լարել էր ուժերը, որ կարողանար դիմագրավել մահվանը՝ նույնիսկ մտածելու ունակությունը լրիվ կորցնելուց հետո: Նավը փոխել էր ուղղությունը, Հարրին հայտնվել էր ստվերի մեջ ու ավելի էր մրսում:

Երեկոյան ժամը տասից հոսանքն անարգել քշում էր նավը, հիմա արդեն կեսօրն անց էր: Գուֆստրիմի մակերևութին ոչինչ չէր երևում, միայն ծովային ջրիմուռներ, ջրի երեսին լողացող մի քանի վարդագույն, կակուղ մեղուզաներ և Տամպիկոյից դեպի հյուսիս ուղևորվող բեռնված լցանավի հեռավոր ծուխը:

## ՉԻՆԻՍՏԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ

- **Պե՞**, - Ռիչարդ Գորդընը դիմեց կնոջը:
- Վերնաշապիկիդ վրա շրթներիկ հետքեր կան, - ասաց կինը: - Նաև՝ ականջիդ տակ:
- Ղո՞ւ ինչ կասես:
- Ինչի՞ մասին:
- Որ տեսա, թե ինչպես էիր այդ փսլնքոտ հարբեցողի հետ պառկել բազմոցին:
- Սուտ է:
- Բա ի՞նչ տեսա:
- Նստել էինք բազմոցին:
- Մթության մեջ:
- Իսկ դո՞ւ որտեղ էիր:
- Բրեդլինների տանը:
- Այո, - պատասխանեց կինը, - գիտեմ: Ինձ չնոտենաս: Քեզանից այդ կնոջ հոտն է փչում:
- Իսկ քեզանի՞ց ում հոտն է փչում:
- Ոչ մեկի: Նստած՝ ծանոթիս հետ էի զրուցում:
- Նրան համբուրեցի՞ր:
- Ոչ:
- Նա է՞լ չհամբուրեց:
- Համբուրեց, և ինձ դուր եկավ:
- Քա՞ծի մեկը:
- Եթե մի անգամ էլ այդ բառն ասացիր, կհեռանամ քեզանից:
- Քա՞ծ, քա՞ծ:
- Եղավ, - ասաց կինը: - Միևնույն է, ամեն ինչ վերջացած է: Եթե այդքան մեծամիտ չլինեիր, ես էլ քեզ չկարեկցեի, արդեն հասկացած կլինեիր, որ վաղուց ամեն ինչ ավարտված է:
- Քա՞ծ:
- Միսավում ես, - ասաց կինը, - ես քած չեմ: Ջանացել եմ լավ կին լինել, իսկ դու եսասեր, ինքնահավան աքլոր ես: Անվերջ կչչչում ես՝ «Տե՛ս, ինչ արեցի: Տե՛ս, ինչպես եմ քեզ երջանկացրել: Պետք է զլխովս պտտվես ու կռթկռթաս»: Իմացի՛ր, երբեք ինձ չես երջանկացրել, ծանձրացել եմ քեզանից: Իմն էլ վաղուց կռթկռթացել եմ:

- Դու կռթկռթալու իրավունք չունես: Երբեք այնպիսի բան չես արարել, որ կռթկռթալու իրավունք ունենաս:

- Ո՞վ է մեղավոր: Մի՞թե ես չէի ուզում երեխա ունենալ: Ռիսկ չէիք անում:

Բայց ռիսկով Կապ դը Անտիբ էիք մեկնում՝ լողալու կամ Շվեյցարիա՝ դահուկ քշելու: Եվ ամեն առիթով այստեղ՝ Քի Ուեսթ էիք գալիս: Հերիք է, զգվել եմ: Սողկալի ես դարձել: Տիկին Բրեդլին վերջին կաթիլն էր:

- Նրան մի՞ խառնիր:

- Տուն ես գալիս շոթներկով նախշված: Չե՞իր կարող լվացվել: Գոնե ճակատդ մաքրեիր:

- Դու համբուրել ես այդ հարբած ոչնչությանը:

- Սուտ է: Չնայած կանեի, եթե հաստատ իմանայի, թե այդ պահին ինքդ ինչով էիր զբաղված:

- Ինչո՞ւ էիր թույլ տալիս, որ համբուրեր քեզ:

- Կատաղել էի քեզ վրա: Շատ սպասեցիք: Այդպես էլ չեկար: Գնացիր այդ կնոջ մոտ և ամբողջ օրը մնացիր: Ջոնն ինձ տուն ուղեկցեց:

- Ախ, ուրեմն, Ջոնն էր:

- Այո, Ջոնը: Զ-Ո-Ն: Ջոն:

- Ազգանունն ինչ է: Թո՞մաս\*:

- Ո՛չ, Մաք Ուոլսի:

- Ինչպե՞ս է գրվում, միասի՞ն, թե՛ առանձին:

- Չգիտեմ, - կինը ծիծաղեց: Ապա լրջացավ և այլևս նույնիսկ չժպտաց: - Չկարծես, որ ծիծաղեցի, ուրեմն ամեն ինչ կարգին է, - աչքերն արցունքակալած էին, շուրթերը դողում էին, - ոչ մի բան էլ կարգին չէ: Եվ սա սովորական վեճ չէ: Ամեն ինչ վերջացած է: Քեզ չեմ ատում: Չէ, ատելություն չէ: Սողկանք է: Քեզանից ուղղակի զգվում եմ: Ինձ այսքանն էլ հերիք է:

- Դե լա՛վ, - պատասխանեց ամուսինը:

- Ո՛չ: Լավ չէ: Ամեն ինչ վերջացած է: Չե՞ս հասկանում:

- Կարծես, հասկանում եմ:

- Կարծես չի:

- Թատրոն մի՞ սարքիր, Հելեն:

- Թատրոն: Քեզանից հեռանում եմ:

- Չե՛ս հեռանա:

\* Ջոն Թոմաս, ամերիկացի երգիչ, հայտնի է բարեկանությունը ու անմեղությունը:

- Նորից չեմ կրկնելու:

- Եվ ի՞նչ ես պատրաստվում անել:

- Չգիտեմ: Կարող է Մաք Ուոլսիի հետ ամուսնանամ:

- Չե՛ս ամուսնանա:

- Ուզե՞մ ամուսնանամ:

- Նա քեզ չի առնի:

- Կառնի, մի՞ անհանգստանա: Այսօր արդեն խնդրում էր:

Ռիչարդ Գորդընը ոչինչ չասաց: Սրտի տեղում դատարկություն էր, նրան թվում էր, որ այն ամենը, ինչ ասում կամ լսում էր, պատահաբար էր ականջին հասնում:

- Ի՞նչ էր խնդրում, - ծայրը, կարծես, հեռվից էր գալիս:

- Իր կինը դառնալ:

- Ինչո՞ւ:

- Որովհետև սիրում է ինձ: Որովհետև ուզում է, որ իր հետ ապրեմ: Եվ այնքան է վաստակում, որ ինձ կարգին կպահի:

- Բայց դու պակասված ես:

- Օրինական՝ ոչ: Եկեղեցում պակադրություն չի եղել: Չցանկացար եկեղեցի գնալ, և ինչպես գիտես, հենց դա էլ մորս սիրտը կոտրեց: Իսկ ես այնպես էի քեզ սիրահարված, որ պատրաստ էի ցանկացած մարդու սիրտ կոտրել: Աստված իմ, ի՞նչ հիմար էի: Իմ սիրտն էլ կոտրեցի: Այն փշրված է, այլևս սիրտ չունեմ: Հանուն քո սիրո իրաժարվեցի այն ամենից, ինչին հավատում էի, ինչը թանկ էր ինձ համար, որովհետև դու այնքան բացառիկ էիր և այնքան էիր ինձ սիրում, որ հիմարիս համար որոշիչը միայն սերն էր: Սերն էր ամենակարևորը, չէ՞: Սերն, որ միայն մերն էր, մյուսները չունեին կամ չէին կարող ունենալ: Դու համճար էիր, ես՝ քո կյանքը: Ընկերդ էի, քո փոքրիկ սև ծաղիկը: Ապուշություն: Սերն ընդամենը սողկալի սուտ է: Սերը պարզապես հակաբեղմնավորիչ դեղահաբ է, որովհետև վախենում էիր երեխա ունենալ: Սերը քիմաքիմա է, քիմաքիմա, քիմաքիմա՝ այնքան պետք է կրկնեմ, մինչև խլանամ: Սերը վիժումների գազրելի սարսափն է, որ ստիպում էիր անվերջ ապրել: Սերն իմ բզկտված ընդերքն է: Իրար հաջորդող կատետերներն ու սրկումներն են: Լավ գիտեմ, թե սերն ինչ է: Սերը մշտապես կախված է լուրսսենյակի դռան հետևում: Լիզուլի հոտ ունի: Թող սատանայի բաժին դառնա սերը: Սերն այն է, երբ ինձ երջանկություն պարգևելով, հաջորդ պահին քնում ես բերանդ բաց, մինչ ես ամբողջ գիշեր աչք չեմ փակում և չեմ համարձակվում նույնիսկ աղոթել, քանզի գիտեմ, որ դրա իրավունքն այլևս չունեմ: Սերն այն բոլոր զգվելի խաղերն են, որ սովորեցրիր ինձ, որոնք, հավանաբար, գրքերից էիր պեղել:

Բավ է: Ես հրաժարվում եմ թե՛ քեզանից, թե՛ սիրուց: Զո նողկալի սիրուց: Գրողի մեկը:

- Վա՛յ ես քո, իռլանդացու կեղտողտ ճուտ:

- Մի՛ վիրավորիր: Ես էլ կարող եմ հայիոյել:

- Դե լավ:

- Ոչ մի՛ լավ: Վատ է, շատ վատ: Եթե գոնե կարգին գրող լինեիր, գուցե և մնացած թերություններդ հանդուրժեի: Բայց աչքովս եմ տեսել, թե ինչպես ես փրփրում, նախանձում, մողայից հետ չմնալու համար փոխում քաղաքական հայացքներդ, մարդկանց երեսին քծնում և բամբասում թիկունքից: Այնքան բան եմ տեսել, որ զգվում եմ քեզանից: Հիմա էլ այդ հարուստ անառակ քածը՝ Բրեդլին: Չէ, հերիք եղավ: Փորձել եմ և՛ խնամել քեզ, և՛ զիջել, և՛ հոգսերդ հոգալ, եփել-թափել, երբ ցանկացել ես՝ լռել եմ, ուզեցել ես, որ ծիծաղեմ՝ ծիծաղել եմ, բոլոր պոռթկումներիդ տեղի եմ տվել ու ձևացրել, թե երջանիկ եմ, տարել եմ մոլեգնություններդ ու խանդդ, նենգություններդ ու ստորություններդ, բայց հիմա՝ վերջ, այլևս ազատ եմ:

- Ուրեմն, ամեն ինչ նորի՞ց ես սկսելու այդ հարբեցող պրոֆեսորի հետ:

- Իսկական մարդ է: Բարի, զգայուն, նրա կողքին հանգիստ է, հաճելի, համ էլ նույն միջավայրի ծնունդ ենք, ընդհանուր արժեքներ ունենք, որ դու երբեք չես ունենա: Եվ շատ մեծ է հորս:

- Հարբեցող է:

- Խմում է: Հայրս էլ էր խմում: Նա էլ էր բրդե գուլպաներ հագնում ու երեկոները ոտքերը մեկնում էր աթոռին ու լրագիր էր ընթերցում: Երբ խռուկով էինք հիվանդանում, ինչպե՛ս էր խնամում: Կաթսայագործ էր, ձեռքերն ամբողջովին ճաքճքած էին, և երբ խմում էր, սիրում էր կռվել, չնայած լավ կռվում էր նաև սթափ ժամանակ: Եկեղեցի էր հաճախում, քանի որ մայրս էր այդպես ցանկանում, հանուն մորս և ի սեր Տիրոջ պաս էլ էր պահում, բայց ավելի շատ՝ հանուն մորս, նաև արհմիության նվիրյալ անդամ էր, իսկ եթե երբևէ ուրիշ կնոջ հետ էլ է եղել, մայրս երբեք չի իմացել:

- Գրագ կգամ, որ աջ ու ձախ դավաճանել է:

- Կարող է, եթե նույնիսկ այդպես է, նա հետո խոստովանել է վահահորը, ոչ թե մորս, և եթե մեծան բան է արել՝ ստիպված է եղել, չի կարողացել զսպել իրեն, չնայած հետո փոշմանել է ու ապաշխարել: Հանուն հետաքրքրասիրության չի արել, և կամ՝ քաղաքային ինքնասիրությունից դրդված, ոչ էլ՝ որ հետո կնոջը պատմի, թե ինքն ինչ հրաշալի տղամարդ է: Եթե արել է՝ այն պատճառով, որ մայրս մեզ՝ երեխաներիս հետ ամռանը մեկնել է հանգստանալու,

իսկ նա քեֆ է արել ընկերների հետ ու նաև հարբել: Նա իսկական մարդ է եղել:

- Դու պետք է գրող լինեիր ու նրա մասին վեպ գրեիր:

- Քեզանից լավ գրող կլինեի: Ջոն Մաք Ուոլսին էլ իսկական մարդ է: Իսկ դու՝ ոչ: Չես էլ կարող լինել: Եվ քաղաքական համոզմունքներն ու կրոնական դավանանքը բոլորովին կապ չունեն:

- Ես ոչ մի կրոնի չեմ հետևում:

- Ես էլ: Բայց մի ժամանակ դավանել եմ ու հիմա նորից եմ դավանելու:

Եվ դու այլևս չես լինի, որ հավատս խլես ինձանից: Ինչպես խլել ես ամեն ինչ:

- Ո՞չ:

- Ո՞չ: Կարող ես ցանկացած հարուստ կնոջ հետ անկողին մտնել, թեկուզ այդ հետևի Բրեդլի: Եվ ինչ, նա քեզանից գո՞հ է: Չի՞ ասում, որ հրաշալի ես:

Նայելով նրա տխուր, զայրալից դեմքին, որ արտասվելուց ավելի էր գեղեցկացել, անձրևից թարմացած բողբոջի նման ուռած շուրթերին, դեմքին թափված սևաթույր խոպոպներից՝ Ռիչարդ Գորդոնը հասկացավ, որ նրան հետ պահելն անհնար էր.

- Ուրեմն դու ինձ այլևս չե՞ս սիրում:

- Այդ բառը լսել անգամ չեմ ուզում:

- Լավ, - ասաց ու հանկարծակի ամբողջ ուժով հարվածեց կնոջ դեմքին:

Կինը երեսը սեղանին սեղմեց ու սկսեց լաց լինել, այժմ արդեն ոչ թե կատաղությունից, այլ՝ ցավից:

- Սա արդեն իզուր էր, - ասաց:

- Ոչ, պետք էր, - պատասխանեց ամուսինը: - Ամեն ինչ գիտես, բայց չգիտես, թե որքան էր դա ինձ պետք:

*Դուռը բացվեց, սակայն կինը նրան չնկատեց: Աչքին միայն ճերմակ առաստաղն ու զարդանախշերն էին երևում՝ կուպիդոնները, աղավիններն ու ուրրագարդերը, որ ավելի պարզորոշ էին դարձել, երբ լույսը ներթափանցել էր հանկարծակի բացված դռնից:*

*Ռիչարդ Գորդոնը շրջեց գլուխն ու նկատեց նրան դռնախորշի մեջ՝ հաղթանդամ ու մորուքավոր:*

- Մի՛ դադարեցրու, - ասաց հելենը, - կանգ չառնե՛ս:

*Ճոխ մազերը սփռվել էին բարձին:*

*Սակայն Ռիչարդ Գորդոնը դադար էր առել ու գլուխը շրջած՝ քարացել:*

- Նրան բանի տեղ մի՛ դիր: Ոչ մի բանի մասին մի՛ մտածիր: Չե՞ս տեսնում, որ հիմա իրավունք չունես դադարեցնել, - կինը խոսում էր մոլեգին համառությամբ:

Մորուքավորը զգուշությամբ ծածկեց դուռը: Նա ժպտում էր:

- Դե, ի՞նչ եղավ, սիրելիս, - Դե, Բրեդլին հարցրեց վերագտնված խավարի մեջ:

- Պետք է գնամ:

- Չե՞ս տեսնում, որ հիմա չես կարող գնալ:

- Այո մարդը...

- Դե լավ, Թոմմին է, էլի - ասաց Դելենը: - Վաղուց է տեղյակ: Բանի տեղ մի՛դիր: Դե, սիրելիս: Աղաչո՞ւմ եմ:

- Չե՞մ կարող:

- Պարտավո՞ր ես, - կարգադրեց Դելենը: Ռիչարդն զգաց, որ կինն ամբողջ մարմնով դողում էր, իր ուսին հանձնող նրա գլուխը նույնիսկ ցնցվում էր:

- Տե՛ր Աստված, մի՞թե ոչինչ չես հասկանում: Կնոջը պետք է հարգել:

- Ես պետք է գնամ, - պատասխանեց Ռիչարդ Գորդոնը:

Եվ զգաց, որ մթության մեջ հանկարծակի հարվածեցին դեմքին, աչքերից կայծեր թռան: Դետո՞ւ էլի մի հարված: Այս անգամ՝ բերանին:

- Ա՛յ քեզ տղամարդ, - ասաց կինը, - ես էլ գիտեմ, կարգին տղամարդու հետ եմ գործ բռնել: Ապա մի չքվի՛ր այստեղից:

Ահա, թե ինչ էր եղել կեսօրին: Ինչ էր տեղի ունեցել Բրեդլինների տանը:

Այժմ կինը նստել էր գլուխը բռնած, արմունկները հենել էր սեղանին: Երկուսն էլ լուռ էին: Ռիչարդ Գորդոնը լսում էր, թե ինչպես էր ժամացույցը տկտկում, ներսում նույն դատարկությունն էր, ինչ դրսում՝ սենյակում: Քիչ անց կինը, առանց նրա կողմը նայելու, ասաց.

- Ցավում եմ, որ այսպես ստացվեց: Բայց տեսնում ես, չէ՞, ամեն ինչ վերջացած է:

- Այո, եթե իրականում այնպես է, ինչպես ներկայացնում ես:

- Միշտ այդպես չի եղել, բայց արդեն վաղուց այդպես է:

- Չղջում եմ, որ հարվածեցի քեզ:

- Դա ի՞նչ է, որ: Բանն այդ չէ: Ընդամենը հրաժեշտի տարատեսակ է:

- Վե՛րջ տուր:

- Դիմա պետք է իրերս հավաքեմ, - հոգնած ձայնով ասաց կինը, - վախենամ, ստիպված եմ լինելու մեծ ճամպուկը վերցնել:

- Առավոտյան կհավաքվես, - ասաց ամուսինը: - Առավոտյան բոլոր իրերդ կդասավորես:

- Չէ, ավելի լավ է հիմա հավաքվեմ, Դի՛ք, ավելի հեշտ կլինի: Բայց այնքա՛ն եմ հոգնել: Այս ամենից շատ եմ հոգնել, և գլուխս ցավում է:

- Դե, ինչպես կուզես:

- Տե՛ր Աստված, - ասաց կինը, - այնքան կուզեի, որ ամեն ինչ այսպես չլիներ: Բայց, ինչ արած, ինչ որ լինելու էր, արդեն եղել է: Կփորձեմ մինչև գնալս զոնե տունը կարգի բերել: Քեզ ծառայող է պետք: Եթե այսքան բան ասած չլինեի, կամ դու ինձ հարվածած չլինեիր, զուցե, հնարավոր լիներ ինչ-որ կերպ հարթել:

- Ոչ, ամեն ինչ արդեն վաղուց վերջացած էր:

- Այնպես եմ քեզ խղճում, Դի՛ք:

- Չփորձես ինձ խղճալ, թե չէ՛ նորից կհարվածեմ:

- Թերևս ավելի հեշտ կլինի, եթե մի անգամ էլ հարվածես, - ասաց կինը: - Ախր քեզ շատ եմ խղճում: Շատ-շատ:

- Սատանան քեզ տանի:

- Չղջում եմ, որ ասացի, թե անկողնում մի բան չես: Դրանից բան չեմ հասկանում: Ենթադրում եմ, որ հիանալի ես:

- Կարծում ես, ինքը կատարյա՞լ ես, - պատասխանեց ամուսինը:

Կինը նորից սկսեց լաց լինել:

- Ասածդ ապտակից էլ վատ էր, - կմկմաց:

- Իսկ իմ մասին ի՞նչ ասացիր:

- Չգիտեմ: Չեմ հիշում: Կատաղած էի, և ինձ այնպիսի ցավ պատճառեցիր:

- Չէ՞ որ ամեն ինչ վերջացած է, էլ ինչո՞ւ ես հուզվում:

- Չեմ ուզում, որ ամեն ինչ վերջանա: Բայց արդեն ուշ է:

- Քեզ հարբեցող պոռֆեսորդ է մնում:

- Վե՛րջ տուր, - ասաց կինը, - արի այսքանով ավարտենք ու այլևս չխոսենք:

- Արի:

- Լա՞վ:

- Եղավ:

- Այս սենյակում եմ քնելու:

- Ոչ: Կարող ես մահճակալին քնել: Այնտեղ պետք է քնես: Կարճ ժամանակով բացակայելու եմ տանից:

- Մի՛ գնա:

- Պետք է, - ասաց ամուսինը:

- Տեսություն, - պատասխանեց կինը: Ամուսինը գննեց կնոջ այնքան սիրելի ու այնքան հարազատ դեմքը, որ ոչինչ, նույնիսկ արցունքները չէին կարողացել երբևէ տզեղացնել, նրա սևաթույր խոպոպներն ու սվիտերի տակից դուրս ցցված փոքրիկ, պիրկ կրծքերը, որ հիմա հպվել էին սեղանի եզրին, սակայն չէին երևում ավելի ներքև, սեղանի տակ թաքնված կնոջ մյուս բարեմասնությունները, որ այդքան դուր էին գալիս նրան, և որոնց, իր կարծիքով, ինքը միշտ գերազույն հաճույք էր պատճառել, իսկ այժմ հանկարծ պարզվում է, որ ինքն իրականում այնքան էլ բանի պետք չի եղել, և երբ դռնից արդեն դուրս էր գալիս, կինը, կզակը ձեռքերին սեղմած, սեղանի վրայով իրեն էր հետևում և արտասվում էր:

## ՉԼՈՒԻՆ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ

**Յ**եծանիվը թողեց և ոտքով գնաց: Լուսինն արդեն երկնակամարում էր, մթնշաղի մեջ ծառերը սևին էին տալիս, անցավ նեղ բակերով ու լուսաթափանցիկ ծածկոցափեղկով փայտե տնակների կողքով, չսալարկած, երկշարք շինություններով երիզված նրբանցքներով՝ կոնչերի թաղամասով, ուր ամեն ինչ օսլայած էր և հուսալիորեն քողարկված՝ առաքինություն, անհաջողություններ, վարսակաձավար, խաշած ծուկ, թերասնություն, մախապաշարումներ, արդարամտություն, արյունապղծություն ու կրոնասպիտում, շրջանցեց պայծառ լուսավորված, դմաբաց կուբայական «բոլիտոները»՝ փայտաշեն հյուղակները, որոնց հենց թեկուզ անվանումները սրտագրավ էին՝ Կարմիր տնակ, Չիչայի տուն, հասավ եկեղեցու երեսպատված շինությանը, որի եռանկյունի սրածայր գագաթներն անճոռնի ցցվել էին լուսնալույսի մեջ, տեսավ կիսախավարում փառահեղ գծագրվող կուսանոցի սևագագաթ հսկայածավալ շենքն ու ընդարձակ այգին, բենգալցման կայանն ու պարապուտի հարևանությամբ նորակառույց, շքեղ լուսավորված խորտկարանը, որի տեղում ժամանակին գուլֆի փոքրիկ խաղահրապարակն էր, անցավ բազմագույն լույսերով ողողված գլխավոր փողոցով, ուր երեք դեղատուն կար, երաժշտական գործիքների խանութ, հրեական հինգ կրպակ, երեք բիլիարդանոց, երկու վարսավիրանոց, հինգ գարեջրատուն, պաղպաղակի երեք տաղավար, հինգ ցածրորակ ու մեկ առաջնակարգ ռեստորան, լրագրի երկու և օգտագործված հագուստի չորս կրպակ (դրանցից մեկում նաև բանալիներ էին պատրաստում), լուսանկարչատուն, գրասենյակային մասնաշենքում տեղավորված չորս ատամնաբուժարան, որի վերևում իջեցված գների խանութն էր, անկյունում՝ հյուրանոցը, սրա դիմաց՝ տաքսու կանգառը, և անցնելով հյուրանոցը՝ մտավ այն փողոցը, որը հասնում էր մինչև «ջունգլի»՝ անցնելով չներկած մեծ փայտաշեն տնակի կողքով, որի պատուհաններից պիանոլայի հնչյուններ էին լսվում, դռների մեջ աղջիկներ էին կանգնած, իսկ դիմացի մայթին մի նավաստի էր նստած, ապա քայլեց հետմաբակերով, դատարանի աղյուսաշեն շենքի կողքով, որի լուսավորված ժամացույցը տասն անց կեսն էր ցույց տալիս, անցավ լուսնալույսի մեջ փայլող բանտի ճերմակ շինությունն ու հասավ թփերով ցանկապատված «Յասա-



մանի օրերի» բակը, որի լայն մուտքը փակել էին խառնիխուռն կա-  
յանված ավտոմեքենաները:

«Յասամանի օրերը» փայլուն էր լույսերի մեջ և լիքն էր մարդկան-  
ցով, և երբ Ռիչարդ Գորդընը ներս մտավ, տեսավ, որ խաղաարահը  
լեփ-լեցուն էր. անիվը պտտվում էր, գնդիկը ծլնագոցով զարկվում էր մե-  
տադյա միջնապատերին, հետո պտույտները դանդաղում էին, և գնդի-  
կը դռում էր, չխկչխկում, թռչկոտում, ապա կանգ էր առնում, և՛ լռու-  
թյուն, լսվում էր միայն անիվի խուլ գվվոցն ու խաղանիշերի  
թրխկթրխկոցը: Բարի կանգնակի հետևում, երկու բարապանների  
կողքին կանգնած էր ինքը՝ հաստատության տերը, որն էլ ասաց.

- Ողջո՛ւյն, պարոն Գորդըն: Ի՞նչ կխմեք:
- Չգիտեմ, - պատասխանեց Ռիչարդ Գորդընը:
- Չեր տեսքը, կարծես, այն չէ: Ի՞նչ է պատահել: Վա՞տ եք զգում:
- Ո՛չ:

- Ոնց-որ գուշակում եմ, թե ձեզ համար ինչ եմ պատրաստելու:  
Հրաշք մի բան: Երբևէ խսպանական օշինդրօղի՝ օյեն, փորձե՞լ եք:

- Տվե՛ք, - ասաց Գորդընը:
- Հենց որ խմեք, լավ կզգաք: Եվ ցանկություն կունենաք շուրջ-  
ներդ եղած ամեն բան ջարդուփշուր անել, - ասաց հաստատության  
տերը: Ապա կարգադրեց.

- Պարոն Գորդընի համար արտակարգ օյեն:  
Ռիչարդ Գորդընն առանց կանգնակից հեռանալու երեք օյեն  
խմեց, բայց ինքնազգացողությունն այդպես էլ չփոխվեց. պղտոր,  
քաղցր, սառը, լիկյորահամ խմիչքը բոլորովին չազդեց:

- Ուրիշ բան տվեք, - դիմեց բարապանին:
- Ի՞նչ է պատահել: Օյեն-ը ձեզ դուր չեկա՞վ, - հարցրեց տերը: -  
Ավելի լավ չզգացի՞ք:

- Ո՛չ:
- Օյեն-ից հետո ուրիշ բան վերցնելիս պետք է ուշադիր լինեք:
- Անխառն վիսկի՞ տվեք:

Վիսկին ջերմացրեց լեզուն ու քիմքը, սակայն տրամադրությունը  
դարձյալ չփոխվեց, հանկարծ սեփական դեմքը տեսնելով կանգնա-  
կի հետևում ամրացված հայելու մեջ՝ հասկացավ, որ խմիչքն անկա-  
րող էր թեթևացնել հոգին: Ինչ-որ լինելու էր՝ եղել էր, և այն այլևս  
անբաժան էր իրենից, եթե նույնիսկ այնքան խմեր, որ կորցներ գի-  
տակցությունը, միևնույն է, սթափվելով՝ կրկին զգալու էր ներկայու-  
թյունը:

Կանգնակի մոտ, կողքը կանգնած բարձրահասակ, չափից ավե-  
լի միհար, ցանցառ շեկ մորուքով երիտասարդը հարցրեց.

- Ասացեք, խնդրեմ, դուք պարոն Գո՞րդընն եք:
- Այո:

- Ես հերքերտ Սփեյմենն եմ: Կարծեմ, մի ընդունելության ժամա-  
նակ հանդիպել եմք Բրուկլինում:

- Հնարավոր է, - պատասխանեց Ռիչարդ Գորդընը: - Ինչո՞ւ չէ:
- Շատ եմ հավանել ձեր վերջին գիրքը, - ասաց Սփեյմենը: - Ընդ-  
հանրապես, ձեր բոլոր գրքերն էլ հավանում եմ:

- Անչափ ուրախ եմ, - ասաց Ռիչարդ Գորդընը: - Կխմե՞ք:
- Միասին խմենք, - ասաց Սփեյմենը: - Օյեն փորձե՞լ եք:
- Չօգնեց:

- Իսկ ի՞նչ է պատահել:
- Տրամադրություն չունեմ:
- Մի հատ էլ փորձեք:

- Ոչ: Ավելի լավ է՝ անխառն վիսկի:
- Գիտեք ինչ, ինձ համար արտակարգ իրադարձություն է, որ  
հանդիպել եմ ձեզ, - ասաց Սփեյմենը: - Հավանաբար, չեք հիշում  
մեր հանդիպումն այն երեկո:

- Վախենամ՝ ոչ: Բայց, հավանական է, հաջողված երեկույթ է ե-  
ղել:

Սովորաբար, հաճելի երեկոները չեն մտապահվում, այդպես չէ՞:  
- Թերևս, ճիշտ եք, - ասաց Սփեյմենը: - Մարգարետ Վան Բրուն-  
տի տանն էինք: Հիշեցի՞ք, - հարցրեց սպասումով:

- Փորձում եմ:
- Ես էի, որ այդ տունը հրդեհեցի, - ասաց Սփեյմենը:
- Չի կարող պատահել, - ասաց Գորդընը:

- Այո, - ուրախացած ասաց Սփեյմենը, - ես՝ ինքս: Կյանքիս ամե-  
նահրաշալի երեկույթն է եղել, որին երբևէ մասնակցել եմ:
- Իսկ հիմա ինչո՞վ եք զբաղվում, - հարցրեց Գորդընը:

- Առանձնապես՝ ոչ մի բանով, - ասաց Սփեյմենը: - Մի կերպ ապ-  
րում եմ:

Սովորական է դարձել: Իսկ դուք նոր գի՞րք եք գրում:  
- Այո: Արդեն կեսն եմ հասել:

- Հրաշալի է, - ասաց Սփեյմենը, - ինչի՞ մասին է:
- Մանածագործական ֆաբրիկայում տեղի ունեցած գործադուլի:
- Հոյակապ է, - ասաց Սփեյմենը: - Գիտեք, սարսափելի սիրում եմ  
հասարակական թեմաները:

- Ի՞նչ:
- Ուղղակի պաշտում եմ, - ասաց Սփեյմենը: - Ինձ համար դրա-  
նից լավ բան չկա: Դուք, անկասկած, մեր ամենալավ գրողն եք:

Չէի՞ք ասի, ձեր նոր գրքում չնաշխարհիկ հրեա-ագիտատորի կերպար կա՞:

- Իսկ ի՞նչ է, որ, - կասկածանքով հարցրեց Ռիչարդ Գորդընը:
- Սիլվիա Սիդնեյի համար լավ դեր կլինի: Պարզապես սիրահարված եմ նրան: Ուզո՞ւմ եք, լուսանկարը ցույց տամ:
- Տեսել եմ, - ասաց Ռիչարդ Գորդընը:
- Եկեք մի հատ էլ խմենք, - զվարթացավ Սփեյմենը: - Մտքովս չէր անցնի, որ կհանդիպեի ձեզ: Գիտե՞ք ինչ, ես հաջողակ եմ: Իսկական հաջողակ:
- Ինչո՞ւ, - հարցրեց Ռիչարդ Գորդընը:
- Ես խելագար եմ, - ասաց Սփեյմենը: - Հրաշալի է: Նույնն է, ինչ սիրահարվածը, միայն թե միշտ ամեն ինչ բարեհաջող է ավարտվում:

Ռիչարդ Գորդընը մի փոքր հետ քաշվեց:

- Դա արդեն իզուր էր, - ասաց Սփեյմենը: - Ես մոլեգին չեմ: Այսինքն՝ շատ հազվադեպ եմ մոլեգին դառնում: Լավ, եկեք խմենք:
- Վաղո՞ւց եք խելագարվել:
- Կարծում եմ, միշտ էլ այդ եմ եղել, - ասաց Սփեյմենը: - Հավատացնում եմ, մեր օրերում երջանիկ լինելու միակ ձևը դա է: Ինձ ի՞նչ, թե «Դուզլաս Եյքթրաֆթի» բաժնետոմսն ինչ արժի: Կամ՝ Ամերիկայի հեռահաղորդակցության ընկերությանը: Իմ գործը չէ: Ձեր գրքերն եմ կարդում, կամ խմում եմ, կամ էլ Սիլվիի լուսանկարներն եմ նայում և երջանիկ եմ: Ծիտիկ եմ: Նրանից էլ լավը: Ես... - Մի պահ վարանեց, կարծես հարմար բառ էր փնտրում, հետո միանգամից վրա բերեց: - Փոքրիկ, բարի արագիլ եմ: - Բերանից թռցրեց ու կարմրեց: Նա սևեռուն նայում էր Ռիչարդ Գորդընին և շարունակում էր շարժել շուրթերը, այդ պահին բարի մյուս ծայրում նստածներից մի հաղթանդամ շիկահեր երիտասարդ առանձնացավ, մոտեցավ ու ձեռքը նրա ուսին դրեց:

- Գնացի՞նք, Հարոլդ, - ասաց, - տուն գնալու ժամանակն է: Սփեյմենը մոլեգնորեն Ռիչարդ Գորդընին էր նայում:
- Նա ծիծաղում է արագիլի վրա, - ասաց, - նա արագիլից խուսափում է:
- Արագիլից, որ ազատ ճախրում է ...
- Գնա՛նք, Հարոլդ, - կրկնեց հաղթանդամ երիտասարդը:
- Սփեյմենը ձեռքը Ռիչարդ Գորդընին մեկնեց:
- Չեմ նեղանում, - ասաց, - դուք լավ գրող եք: Շարունակե՛ք նույն ձևով գրել: Հիշե՛ք, ես միշտ երջանիկ եմ: Եվ թույլ չտա՛ք, որ ձեզ մոլորեցնեն: Մինչ նոր հանդիպում:

Հաղթանդամ երիտասարդը գրկեց նրա ուսն, ու նրանք ամբոխի միջով դեպի ելքը շարժվեցին: Սփեյմենը շրջվեց ու աչքով արեց Ռիչարդ Գորդընին:

- Լա՛վ տղա է, - ասաց հաստատության տերը: Ապա մատով ճակատին տկտկացրեց: - Կրթված է: Երևի շատ է սովորել: Սիրում է սպասքը ջարդել: Բայց հատուկ չի անում: Հետո էլ՝ վճարում է կոտրածի համար:
- Հաճա՞խ է այստեղ լինում:
- Ամեն երեկո: Ի՞նչ ասաց, այսօր ի՞նչ էր: Կարա՞պ:
- Արագիլ:
- Երեկ ծի էր: Թևերով: «Ուայթ Հորսի» շշի ծիու նման, միայն՝ զույգ թևով:

Ամեն դեպքում, վատ տղա չէ: Շատ փող ունի: Խելքը տեղը չի: Հարազատները հսկողության տակ են պահում, ուղեկցող ունի: Ձեր գրքերն էր գովում, պարոն Գորդըն: Ի՞նչ կխմեք: Հաստատության հաշվին է:

- Վիսկի, - ասաց Ռիչարդ Գորդընը: Նկատեց, որ շերիֆն էր մոտենում: Նա չափազանց միհար էր, կարծես կմախք լիներ, և ծայրահեղ սիրալիք: Ռիչարդ Գորդընն այդ օրը նրան արդեն հանդիպել էր Բրեդլինների տանը և գրուցել էր բանկի կողոպուտի մասին:
- Պարո՞ն Գորդըն, - ասաց շերիֆը, - եթե ուրիշ գործ չունեք, քիչ հետո միասին դուրս կգանք: Առափնյա պահպանությունը Հարրի Մորգանի նավն է բերում: Լցանավն է նկատել Մատակումբեից ոչ հեռու: Ամբողջ հրոսակախմբին վերցրել են:

- Ի՞նչ եք ասում, - ասաց Ռիչարդ Գորդընը, - բոլորի՞ն են բռնել:
- Հաղորդագրության մեջ ասվում է, որ բոլորը սպանված են, միայն մեկն է կենդանի:
- Հայտնի՞ է, թե ով է:
- Այդ մասին ոչինչ չկա: Աստված գիտի, թե այնտեղ ինչ է կատարվել:
- Իսկ փողը հայտնաբերե՞լ են:
- Ոչ ոք չգիտի: Բայց պետք է, որ նավի վրա լինի, քանի որ չեն հասցրել Կուբա անցնել:
- Ե՞րբ այստեղ կլինեն:
- Օ՛, երկու-երեք ժամից ոչ շուտ:
- Նավն ո՞ւր են տանելու:
- Ենթադրում եմ, ռազմական նավաշինարան: Առափնյա պահպանության նավամատույցն այնտեղ է:
- Որտե՞ղ ենք հանդիպելու:

Տաք հոսանքն ավիճն էր մոտեցել, և հաճախացող ջրապտույտների շուրջը ջուրը, կարծես, մանուշակագույն լիներ: Արևելքից մեղմ գեփյուռ էր փչում, մեր նավը խրտմեցնում էր թռչող ձկներին, այդ մեծամարմիններին երևի տեսել եք՝ սևաթույր թևերն Ատլանտյան օվկիանոսի վրայով թռչող Լինդբերգի ինքնաթիռի լուսանկարներն են հիշեցնում:

Խոշոր ձկները լավագույն նախանշաններն են: Տեսողատում, որքան աչքդ կտրի, դեղնած ջրիմուռների կտորներ էին երևում, նշանակում է՝ գլխավոր հոսանքը դեռևս հեռվում էր: Առջևում, փոքրիկ թյուննոսների վտառի անմիջապես գլխավերևում, ծովաթռչուններ էին պտտվում: Կարելի էր տեսնել, թե ինչպես էին թյուննոսները դուրս ցատկում ջրից՝ փոքրամարմին, յուրաքանչյուրը հազիվ երկու-երեք ֆունտ կշռեր:

- Կարող եք սկսել, - դիմեցի Ջոնսընին:

Հագավ հանդերձանքը, ամրացրեց փրկագոտին և ջուրն իջեցրեց ամենաերկար ծողը, որին ամրացված էր «Հարդի» ֆիթմայի կոճը՝ վեց հարյուր յարդ երկարությամբ, երեսունվեց կարթաթելով: Հետ նայեցի, խայծը հրաշալի էր լողում՝ մերթ ընդ մերթ ցատկոտելով կոհակների վրայով, երկու գլխավոր լողաններն անվերջ սուզվում էին ու նորից հայտնվում: Ճիշտ արագություն էինք ընտրել, դեկը պահել էի գլխավոր հոսանքի ուղղությամբ:

- Կարթածողի հաստ ծայրը նավակողի անցքի մեջ ամրացրեք, - ասացի, - բռնելն ավելի հեշտ կլինի: Արգելակը բաց թողեք, որպեսզի հենց որ ձուկը խփի, կարողանաք կարթաթելը թուլացնել: Եթե արգելակը քաշած պահեք, խփելուն պես ձուկը ձեզ էլ հետը կտանի:

Աստծո ամեն օր նույն բանն էի բացատրում և երբեք չէի բարկանում: Հիսուն հաճախորդից հազիվ մեկը ձուկ որսալ իմանար: Բայց այդ մեկն էլ հաճախ իմարություն էր անում և անպայման այնպիսի թել էր օգտագործում, որ թույլ էր լինում ու մեծ ձկան քաշին չէր դիմանում:

- Հը, լա՞վ օր է, - հարցրեց:

- Ավելի լավ չէր կարող լինել, - պատասխանեցի: Իսկապես, լավ օր էր:

Ղեկը նեգրին փոխանցեցի, կարգադրեցի հոսանքի ուղղությամբ դեպի արևելք պահել և անցա նավի հետնամասը, որտեղ Ջոնսընը նստել ու ակնդետ խայծին էր նայում:

- Երկրորդ ծողն էլ չգցե՞մ, - հարցրեցի:

- Չարժե, - պատասխանեց, - ուզում եմ ձուկն ինքս բռնեմ, ինքս էլ ձգեմ ու ափ հանեմ:

- Լավ, - ասացի, - ուզո՞ւմ եք՝ էդդին գցի, ու հենց որ ձուկը խփի, ձեզ փոխանցի, ինքներդ դուրս կքաշեք:

- Ոչ, - պատասխանեց, - ավելի լավ է մի ծողով աշխատեմ:

- Շատ լավ:

Նեգրը շարունակում էր հանգիստ վարել նավը, նկատեցի, որ առջևում թռչող ձկների նոր խումբ էր հայտնվել: Հավանաբար, նեգրը նույնպես տեսել էր: Հետևում Հավանան հրաշալիորեն փայլում էր արևի տակ, Սորրոյի հրվանդանի կողմից մի նավ էր դուրս լողում նավահանգստից:

- Պարոն Ջոնսըն, ինձ թվում է, այսօր ձեր բախտը բերելու է, - ասացի:

- Վաղուց ժամանակն է, - պատասխանեց: - Քանի՞ օր է՝ ծովում եմք:

- Այսօր երեք շաբաթը կլրանա:

- Չկնորսության համար մի քիչ շատ չէ՞:

- Չուկն այդպես է, - ասացի, - մինչև չհայտնվի, չես իմանա՝ կա, թե չկա:

Բայց որ եկավ, անթիվ-անհամար է: Եվ անպայման գալու է: Իսկ եթե այսօր նույնպես չհայտնվեց, ուրեմն այլևս չի գա: Լուսինը բարեհաճ է: Հոսանքը՝ բարենպաստ, շուտով քամի նույնպես կլինի:

- Առաջին օրը, որ ծով դուրս եկանք, մանր ձկներ էին երևում:

- Այո: Ձեզ ասել եմ: Սկզբում հայտնվում են մանրերը, հետո դրանք անհետանում են, ու նոր միայն գալիս են խոշորները:

- Նավաստիներդ բոլորդ էլ նույն երգն են երգում: Կամ շատ շուտ է, կամ՝ արդեն ուշ է, քամին է անբարենպաստ, լուսինը բարեհաճ չէ: Բայց փողը միշտ վերցնում եք:

- Նայած, - պատասխանեցի: - Ցավն այն է, որ սովորաբար այդպես է՝ կամ շուտ է լինում, կամ՝ ուշ, մեծ մասամբ քամին նպաստավոր չէ: Մեկ-մեկ էլ, երբ օրն անչափ բարենպաստ է, մնում ենք ափին՝ հաճախորդ չի լինում:

- Բայց ասում եք, այսօր նպաստավոր է, չէ՞:

- Գուցե: Այսօր այնքան բան է գլխովս անցել: Գրագ եմ գալիս, որ բոլ ձուկ եք բռնելու:

- Հուսանք:

Պատրաստվեցինք որսի: Էդդին նավի քթամասն անցավ ու պառկեց: Կանգնել՝ զննում էի, մինչև ջրի մեջ ձկան պոչ կերևար: Նեգրը մերթ ընդ մերթ փակում էր աչքերը, ստիպված էի նրան էլ հետևել: Գրագ կգամ, որ նախորդ գիշեր ճոխ է անցկացրել:

- Ձեզ այստեղից կվերցնեն:
- Այստեղի՞ց, թե՛ Ֆրեդիի մոտից: Այդքան չեմ կարող այստեղ մնալ:
- Ֆրեդիի մոտ այսօր այնքան էլ անվտանգ չէ: Պատերազմի վերանաճերն են ժամանել, հասարակական աշխատանքի են եղել կղզում: Որ գալիս են, սկսում են կռիվ սարքել:
- Գնամ-տեսնեմ այնտե՞ղ ինչ է կատարվում, - ասաց Ռիչարդ Գորդընը: - Մի տեսակ անտրամադիր եմ:
- Լավ, միայն թե զգույշ կլինեք, - ասաց շերիֆը: - Ուզո՞ւմ եք, մեքենայով տեղ հասցնեմ:
- Շնորհակալ կլինեմ:
- Ամբոխը ճեղքելով դուրս եկան, նստեցին մեքենան, Ռիչարդ Գորդընը տեղավորվեց շերիֆի կողքի նստարանին:
- Ի՞նչ եք կարծում, Մորգանի նավի վրա ի՞նչ է կատարվել, - հարցրեց:
- Աստված գիտի, - պատասխանեց շերիֆը, - ամեն դեպքում, սահմակեցուցիչ իրադարձություններ:
- Մանրամասները չե՞ն հայտնում:
- Ոչ, - ասաց շերիֆը: - Դե, խնդրեմ, հիացե՛ք:
- Հասել էին Ֆրեդիի բարի պայծառ լուսավորված ցուցափեղկին և անմիջապես նկատեցին, որ ներսում ասեղ զգելու տեղ չկար: Դանգերիներ\* հազած տղամարդիկ, մի մասը՝ գլխաբաց, մյուսները՝ կեպիներով, զինվորական հին գլխարկներով կամ ստվարաթղթե սաղավարտներով, երեք շարքով խոնվել էին կանգնակի առաջ, երաժշտական ավտոմատը բարձրաձայնում էր «Կապրի կղզին»: Շերիֆը նոր էր արգելակել մեքենան, երբ բարի բաց դռնից դրխկոցով դուրս թռավ մի տղամարդ՝ մեկ ուրիշին ուսած: Հաջորդ պահին սրանք գետին տապալվեցին ու գիրկընդխառն գլորվեցին մայթին, և նա, որ վերևում էր, զույգ ձեռքերով ամուր քաշեց մյուսի մագերից և նրա գլուխը բութ, նողկալի թխկոցով ծեփեց ցեմենտին: Բարուն գտնվողներից ոչ մեկը նույնիսկ հայացքը չշրջեց:
- Շերիֆն անմիջապես իջավ մեքենայից ու քաշեց վերևում պառկածի ուսերից:
- Ապա մի վե՛րջ տուր, - կարգադրեց, - վեր կաց, տեսնե՛մ: Տղամարդը մի պահ ուղղվեց ու շերիֆին նայեց:
- Աստծու սիրուն, ձեր գործին գնացեք:
- Երկրորդը, որի մագերը լոկի արյունոտվել էին, ականջից էլ

\* *Dungaree* – կոշտ կտորից (սարժից) կարված նավաստու զգեստ:

- արյունը հոսում ու լղղվում էր պեպենոտ այտերին, նույնպես շերիֆի վրա հարձակվեց:
- Բա՛ց թողեք ընկերոջս, - գոռաց խառու ծայնով, - ի՞նչ եք ուզում:
- Կարծում եք, չե՞մ դիմանա:
- Դու ամեն ինչի էլ կդիմանաս, Ջոյ, - ասաց նրան ծեծողը: Ապա շրջվեց շերիֆի կողմը: - Լսե՛ք, կարո՞ղ եք պարտքով մեկ դուլար տալ:
- Ոչ, - պատասխանեց շերիֆը:
- Դե, ուրեմն, կորե՛ք գրողի ծոցը: - Ապա դարձավ Ռիչարդ Գորդընին:
- Դո՞ւք ինչ կասեք, բարեկամ:
- Կարող եմ խմելու բան հյուրասիրել, - ասաց Գորդընը:
- Գնացի՛նք, - ասաց վետերանն ու Գորդընի թևը մտավ:
- Շուտով կվերադառնամ, - ասաց շերիֆը:
- Եղավ, կսպասեմ:
- Երբ նրանք մի կերպ կանգնակի մոտ խցկվեցին, առաջին վետերանը՝ շեկ պեպենոտը, որի ականջն ու երեսն արյունոտ էին, Գորդընի արմուկը գրկեց:
- Ա՛խ, հին բարեկամ:
- Ա՛յ, տղա եմ ասել, - ասաց մյուս վետերանը: - Ամեն ինչի կդիմանա:
- Տեսար, չե՞, դիմացա, - ասաց արյունլվիկը, - ու դրանց հախից եկա:
- Բայց խփել չես կարող, - ասաց ինչ-որ մեկը: - Համ էլ, հերի՛ք է հրես:
- Ճանապարհ տվե՛ք, - գոռում էր արյունլվիկը, - ինձ ու հին ընկերոջս ճանապարհ տվեք: - Ապա շքեղաց Ռիչարդ Գորդընի ականջին: - Ինքս չեմ ուզում խփել: Չե՞ որ կարող եմ դիմանալ, հասկանո՞ւմ եք:
- Լսե՛ք, - հենց որ գարեջրաթաթախ կանգնակին հասան՝ ասաց երկրորդ վետերանը, - լավ կլինե՛ր՝ նրան այսօր կեսօրին տեսնեիք Հինգերորդ ճամբարի զորանոցային խանութի մոտ: Գետին էի գցել ու շշով գլխին էի տալիս: Ոնց-որ թմբուկ լիներ: Մի տասնհինգ անգամ խփեցի:
- Ավելի շատ, - ասաց արյունլվիկը:
- Վեջը չէր:
- Ամեն ինչի կդիմանամ, - ասաց մյուսը: Ապա փսփսաց Ռիչարդ Գորդընի ականջին: - Իմ գաղտնիքն է:

Ուիչարդ Գորդընը վերցրեց հաստափոր, սպիտակազգեստ նեզր բարապանի մեկնած երեք գավաթ գարեջուրն ու երկուսը նրանց փոխանցեց:

- Ի՞նչ գաղտնիք է, - հարցրեց:
- Իմ, - ասաց արյունլվիկը, - իմ գաղտնիքն է:
- Գաղտնիք ունի, - ասաց մյուս վետերանը, - չի խաբում:
- Ուզո՞ւմ եք, ասեմ, - արյունլվիկը շշմջաց Ռիչարդ Գորդընի ա- կանջին:

Գորդընը գլխով արեց:  
- Ցավ չեմ գում:  
Մյուսը գլուխը տմբամբացրեց.  
- Ամբողջ ճշմարտությունն ասա:  
Շեկն արյունոտ շուրթերը համարյա Գորդընի ալկանջին էր կաց- րել:

- Երբեմն, նույնիսկ հաճելի է, - ասաց: - Սրա՞ն ինչ կասեք:

Գորդընի կողքին բարձրահասակ, միհար տղամարդ էր կանգ- նած, դեմքին՝ աչքի անկյունից մինչև կզակը, հսկայական սպի էր ձգվում: Սա նայեց շեկին ու քմծիծաղ տվեց:

- Սկզբում սպորտ էր, - ասաց, - հիմա դարձել է հաճույք: Եթե սիրտս խառնի, քեզնից է խառնելու, Շեկո՞:
- Սիրտդ լա՞վ էլ շուտ է խառնում, - պատասխանեց առաջին վե- տերանը:

- Ո՞ր գորամասում ես ծառայել:
- Քե՞զ ինչ, այ հաստագլուխ, - ասաց բարձրահասակը:
- Գարեջուր չէ՞իք ցանկանա, - առաջարկեց Ռիչարդ Գորդընը:
- Շնորհակալ եմ, - պատասխանեց, - դեռ ունեմ:
- Մեզ մի՞ մոռացեք, - խոսեց այն երկուսից մեկը, որոնց ուղեկցու- քյամբ եկել էր Գորդընը:

- Երեք հատ էլ գարեջուր, - ասաց Ռիչարդ Գորդընը, նեզրը լցրեց և գավաթները նրանց կողմը հրեց: Կանգնակի մոտ այնպիսի հրմշ- տոց էր, որ Գորդընին սեղմել էին բարձրահասակ վետերանին:

- Շոգենավի՞ց եք, - հարցրեց բարձրահասակը:
- Ոչ, այստեղ եմ ապրում: Դուք է՞լ կղզուց եք:
- Այսօր ենք ժամանել Տորտուգասից, - ասաց բարձրահասակը: - Այնտեղ այնպիսի աղմուկ բարձրացրեցինք, որ այլևս վախեցան պահել:

- Կարմիր է, - ասաց առաջին վետերանը:
- Որ ուղեղ ունենայիր, դու էլ կարմիր կլինեիր, - ասաց բարձրա- հասակը:

- Այնտեղ էին քշել, որ մեզանից ազատվեին, բայց գլխներին հո չսարքեցի՞ք: - Ժպտաց Ռիչարդ Գորդընին:

- Խփիղը դրան, - գոռաց ինչ-որ մեկը, և Ռիչարդ Գորդընը տե- սավ, թե ինչպես մի բռունցք հայտնվեց համարյա իր գլխավերևում ու իջավ կողքին կանգնածի դեմքին: Երկու հոգի բռնեցին ու կանգ- նակից հեռացրին հարված ստացածին: Երբ ազատ տարածության մեջ հայտնվեցին, նրանցից մեկը մի անգամ էլ ամբողջ ուժով հար- վածեց տուժածի դեմքին, մյուսը՝ որովայնին: Ձոռը փռվեց ցեմենտե հատակին ու ձեռքերով ծածկեց գլուխը, ծեծողներից առաջինը ոտ- քով հարվածեց նրա թիկունքին: Այդ ընթացքում զոհը ծպտուն չհա- նեց: Առաջին հարվածողը նրան հատակից բարձրացրեց ու պատին սեղմեց:

- Այս շան որդուն պետք է խելոքացնել, - ասաց, և երբ ծեծվողը գույնը գցեց ու թուլացած հենվեց պատին, երկրորդը դիրք ընդու- նեց, ծալեց ծնկները, աչք բռունցքը հետ տարավ, համարյա ցեմեն- տե հատակին հասցրեց ու թափով հարվածեց գունատի կզակին: Վերջինս ծնկի իջավ, հետո դանդաղ կողքի շրջվեց, հատակին՝ գլխի շուրջը, արյան լճակ գոյացավ: Նրան թողեցին ու կանգնակի մոտ վերադարձան:

- Ա՛յ, քեզ հարված, - ասաց առաջինը:
- Շան որդին հենց քաղաք է հասնում, ամբողջ աշխատավարձը գրքույկի վրա է գցում, հետո գալիս ու սկսում է ուրիշի հաշվին հար- բել, - ասաց երկրորդը: - Արդեն երկրորդ անգամ եմ խելք սովորեց- նում:

- Այս անգամ լա՞վ հասկացրիր:

- Որ խփեցի, կզակը պնդուկի տուպրակի նման կախվեց, - գոհ ա- սաց երկրորդը: Ծեծվածը պառկել էր պատի տակ, ոչ ոք ուշադրու- քյան չէր արժանացնում նրան:

- Լսի՛ր, ինձ որ այդպես խփեիր, վեջս չէր լինի, - ասաց շեկ վետե- րանը:
- Չայնդ կտրի՛ր, հաստագլուխ, - ասաց դաս տվողը, - դու սիֆո ես:

- Սո՛ւտ ես ասում:

- Քեզ նմաններից զգվում եմ, - ասաց դաս տվողը: - Ինչո՞ւ պետք է քեզ դիպչեմ ու ձեռքս իզուր կեղտոտեմ:

- Եիշտ էլ ասում ես, ձեռքդ կկտրես, - ասաց շեկը: Ապա դիմեց Ռիչարդ Գորդընին, - Լսի՛ր, բարեկամ, չկրկնե՞մք:

- Լավ ժողովուրդ եմ, չէ՞, - ասաց բարձրահասակը: - Պատերազ- մը մաքրագործում ու ազնվացնում է մարդուն: Հարցն այն է, թե

միայն մեզ նմաններն են կարգին զինվոր լինում, թե՞ ծառայությունն է այդպիսին դարձնում:

- Չգիտեմ, - ասաց Ռիչարդ Գորդընը:  
- Գրագ կգամ, որ այստեղ եղածներից ընդամենը երեքը կամավոր չեն եղել, - ասաց բարձրահասակը: - Ընտրյալներ են, elite: Տականքների սերուցքը: Սրանց հետ էր, որ Վելինգտոնը\* հաղթեց Վաթերլոյում: Իսկ պարոն Գուվերը մեզ քշում է Անտիկոստիից\*\*, պարոն Ռուզվելտն էլ այստեղ է ուղարկում, որ վերջներս տա: Ճամբարում ամեն ինչ անում են, որ համաճարակ սկսվի, բայց այս դժբախտները, նրանց հակառակ, չեն ուզում մահանալ: Մի մասին Տորտուզաս տարան, բայց այնտեղ հիմա պայմաններն ավելի առողջարար են: Բացի դրանից, չէինք ուզում այնտեղ մնալ: Այնպես որ, ստիպված էին այստեղ բերել: Դիմա՞ ինչ են բտրելու: Մեզանից պետք է պրծնեն, չէ՞: Գլխի չե՞ք ընկնում:

- Բայց ինչո՞ւ:  
- Որովհետև հուսալքվածներ ենք, - ասաց բարձրահասակը: - Կորցնելու բան չունենք: Գազանացած ենք: Ավելի ահավոր, քան այն ցնցոտիավորները, որոնց առաջնորդում էր Սպարտակը: Բայց մեզ հետ հեռու չես գնա, այնքան են խփել, որ մեր միակ սփոփանքը խմիչքն է դարձել, իսկ միակ հպարտությունը՝ դիմանալը: Բայց մենք էլ բոլորս նույնը չենք: Մի մասը լավ էլ կպատասխանի:  
- Ճամբարում շա՞տ կոմունիստ կա:  
- Քառասուն, ոչ ավելի, - պատասխանեց բարձրահասակը: - Երկու հազարի մեջ: Կոմունիստը պետք է կարգապահ ու չափավոր լինի, հարբեցողը չի կարող կոմունիստ լինել:  
- Դրան մի՞ լսեք, - ասաց շեկ վետերանը, - նա անհիծյալ պահպանողական է:

Կանգնակի մյուս ծայրում վետերաններից մեկը Ֆրեդիի հետ հաշվի շուրջ էր վիճում:

- Ահա, այսքան ես խմել, - ասում էր Ֆրեդիին:  
Ռիչարդ Գորդընը վետերանի դեմքին նայեց: Դարբած էր, աչքերն՝ արյունակալած, ակնհայտորեն կոիվ էր փնտրում:

\* Դուքս Վելինգտոն, բրիտանացի զեներալ, ջախջախել է Նապոլեոնին 1815-ին:

\*\* Բառախաղ է՝ Անտի - Անակոստիա, Վաշինգտոնի արվարձան, որտեղ կառավարական գործերը 1931-ին և 1932-ին զենքի ուժով ճնշեցին վետերաններին, որ Վաշինգտոն էին ուղևորվում՝ նպաստների ժամկետը երկարաձգելու խնդրագրով:

- Սո՛ւտ ես ասում, - վետերանն ասաց Ֆրեդիին:  
- Ութունհինգ ցնետ, - պատասխանեց Ֆրեդին:  
- Դիմա տեսեք, թե ինչ է լինելու, - ասաց շեկը:  
Ֆրեդին ձեռքերը կանգնակին դրեց: Վետերանից աչք չէր կտրում:

- Սո՛ւտ ես ասում, - ասաց վետերանն ու ձեռքը գարեջրի գավաթին մեկնեց: Մատները դեռ չէին հպվել գավաթին, Ֆրեդին աջ ձեռքով կանգնակի վրայով կիսաշրջան գծեց ու սրբիչի մեջ փաթաթած ծանր աղամանը նրա գլխին իջեցրեց:

- Մաքո՞ւր գործ է, - ասաց շեկ վետերանը, - հրաշալի էր, չէ՞:  
- Բա որ տեսնեք բիլիարդի կիո՞ւլ ինչեր է անում, - ասաց մյուսը:  
Երկու վետերաններ, որ կանգնել էին այնտեղ, ուր փլվել էր աղամանի հարվածից տապալվածը, բարկացած նայեցին Ֆրեդիին:

- Ինչի՞ համար:  
- Դանգստացե՛ք, - ասաց Ֆրեդին: - Մեկական գավաթ հաստատության հաշվին, արա՛գ: Դե՛յ, Ուոլես, դրան պատին հենիր:  
- Գեղեցիկ էր, չէ՞, - շեկ վետերանը հարցրեց Ռիչարդ Գորդընին, - անթերի:

Լայնաթիկունք աժդահան աղամանից տապալվածին քարշ տվեց, դուրս հանեց ամբոխի միջից: Բարձրացրեց, պատին հենեց, իսկ սա նայում էր ու ոչինչ չէր տեսնում:

- Դո՛ւրս գնա, - ասաց նրան, - գնա՛, քարմացի՛ր:  
Գլուխը ձեռքերի մեջ, պատի մոտ նստած էր մյուսը, որին ավելի շուտ էին դաստիարակել: Աժդահան նրան մոտեցավ:  
- Դո՛ւ էլ դուրս գնա, - ասաց, - անվերջ պատմությունների մեջ ես ընկնում:

- Ծնոտս կոտրվել է, - պատասխանեց խռպոտ ձայնով: Բերանից արյունը հոսում-իջնում էր կզակով:

- Բախտդ բերել է, որ նման հարվածից հետո դեռ կենդանի ես, - ասաց աժդահան, - դե, արագացրո՛ւ, դո՛ւրս գնա:

- Ծնոտս կոտրվել է, - կրկնում էր ապուշի նման, - ծնոտս կոտրել են:

- Ասում եմ՝ դո՛ւրս գնա, - ասաց աժդահան, - անընդհատ ինչ-որ պատմության մեջ ես հայտնվում:

Օգնեց-ուղբի կանգնեցրեց ծնողը կոտրվածին, և նա երերուն քայլերով փողոց դուրս եկավ:

- Օր է եղել, որ պատի մոտ տասը-տասներկու հոգին են պառկել, - ասաց շեկ վետերանը: - Մի օր էլ, առավոտյան տեսա, թե ինչպես էր այս հաստափորը հատակը լվանում: Տեսել եմ, չէ՞, ոնց

էիր դույլով հատակը լվանում, - դիմեց հաղթանդամ նեգր-բարապանին:

- Այո, պարոն, - պատասխանեց բարապանը: - Շատ անգամ: Այո, պարոն:

Բայց երբեք չեք տեսել, որ ինքս որևէ մեկին հարվածեմ:

- Ասում էի, չէ՞, - շարունակեց շեկ վետերանը, - դույլով:

- Երևում է, այսօր էլ ճոխ է լինելու, - ասաց մյուս վետերանը: - Լսի՛ր, բարեկամ, - դիմեց Ռիչարդ Գորդընին, - հիմա ի՞նչ, կրկնո՞ւմ ենք:

Ռիչարդ Գորդընն զգում էր, որ գիտականում էր: Բարի հետևում արտացոլվող սեփական դեմքը կամաց-կամաց սկսում էր օտարանալ:

- Չեր ազգանունը չէ՞իք ասի, - հարցրեց բարձրահասակ կոմունիստին:

- Ջեքս, - պատասխանեց բարձրահասակը, - Նելսոն Ջեքս:

- Այստեղ ընկնելուց առաջ որտե՞ղ եք բնակվել:

- Օ՛, շատ տեղերում, - ասաց նա, - Մեքսիկայում, Կուբայում, Գալապոսյան Ամերիկայում, ամենուր:

- Նախանձում եմ, - ասաց Ռիչարդ Գորդընը:

- Ինչո՞ւ եք ինձ նախանձում: Ինչո՞ւ չեք աշխատում:

- Երեք գիրք եմ գրել, - ասաց Ռիչարդ Գորդընը: - Հիմա չորրորդի վրա եմ աշխատում, Գաստոնիայի մասին է:

- Լավ է, - ասաց բարձրահասակը, - նույնիսկ՝ գերազանց: Ասացիք, ձեր ազգանունն ի՞նչ էր:

- Ռիչարդ Գորդըն:

- Ա՛, - ասաց բարձրահասակը:

- Ի՞նչ ասել է՝ ա՛:

- Ոչինչ, - պատասխանեց բարձրահասակը:

- Գրքերս կարդացե՞լ եք, - հարցրեց Ռիչարդ Գորդընը:

- Այո:

- Հավանե՞լ եք:

- Ոչ, - ասաց բարձրահասակը:

- Ինչո՞ւ:

- Չեմ ուզում ասել:

- Ասե՛ք:

- Իմ կարծիքով, բոլորն էլ ք... են, - ասաց բարձրահասակն ու շրջվեց:

- Այսօր, կարծես, երեկոն իմն է, - ասաց Ռիչարդ Գորդընը, - իմ բեմեֆիսն է: Ասացիք, ի՞նչ էիք խմում, - դիմեց շեկ վետերանին, - դեռ երկու դուլար մնացել է:

- Գարեջուր, - ասաց շեկը: - Լսե՛ք, ես ձեր ընկերն եմ: Իմ կարծիքով, ձեր գրքերը հրաշալի են: Սատանա՛ն տանի այդ արձատականին:

- Մտնե՛րդ, ձեր գրքերից ունե՞ք, - հարցրեց մյուս վետերանը, - սիրով կկարդամ: «Արևմտյան պատմություններ»-ում կամ «Պատերազմի հերոսներ»-ում երբևէ չե՞ք տպագրվել: Պատրաստ եմ ամեն օր «Պատերազմի հերոսներ»-ն ընթերցել:

- Այն բարձրահասակն ի՞նչ թռչուն է, - հարցրեց Ռիչարդ Գորդընը:

- Ասացի, չէ՞, քոսոտ արձատականի մեկն է, - պատասխանեց երկրորդ վետերանը: - Ճամբարում դրա նմաններն ուղղակի վխտում են: Կքշե՛իք դրանց, բայց ասում եմ, չէ՞, մերոնց մեծ մասը չի հիշում:

- Ի՞նչ չի հիշում, - հարցրեց Ռիչարդ Գորդընը:

- Ոչինչ, - պատասխանեց երկրորդը:

- Ինձ տեսնո՞ւմ եք, - հարցրեց շեկը:

- Այո, - ասաց Ռիչարդ Գորդընը:

- Կհավատայի՞ք, որ իմ կինն աշխարհում ամենալավ կնիկն է:

- Իսկ ինչո՞ւ՝ ոչ:

- Իրականում այդպես է, - ասաց շեկը: - Ինձ համար զփվում է:

Ոնց-որ ստրուկ լինի: «Մի բաժակ էլ սուրճ բեր», - ասում եմ: «Այս րոպեիս, հայրիկ», - պատասխանում է: Հաջորդ պահին սուրճը սեղանին է: Եվ այդպես՝ ամեն հարցում: Խելագարվում է ինձ համար: Ցանկացած քմահաճույքս նրա համար օրենք է:

- Դե ասա՛, հիմա որտե՞ղ է, - հարցրեց երկրորդ վետերանը:

- Էդ է, էլի, - ասաց շեկը, - հենց էդ է, բարեկամս: Որտե՞ղ է:

- Նա չգիտի, թե կինը որտեղ է, - ասաց երկրորդ վետերանը:

- Մեռակ դա չի, - ասաց շեկը, - ես նույնիսկ չգիտեմ, թե վերջին անգամ որտեղ եմ նրան տեսել:

- Գաղափար անգամ չունի, թե կինը որ երկրում է:

- Բայց լսի՛ր, բարեկամս, - ասաց շեկը, - որտեղ էլ լինի, ինձ հավատարիմ է:

- Սուրբ ճշմարտություն, - ասաց երկրորդ վետերանը, - գլխովս եմ երդվում:

- Երբեմն, - ասաց շեկը, - մտածում եմ, որ նա Ջինջեր Ռոջերսն է ու հիմա ֆիլմերում է նկարահանվում:

- Կարող է և՛ այդպես է, - ասաց երկրորդը:

- Հետո նորից թվում է, թե տանը նստած՝ ինձ է սպասում:

- Օջախն է ծխացնում, - ասաց երկրորդը:

- Ճիշտ է, - ասաց շեկը: - Աշխարհի ամենալավ կնիկն է:
- Լսե՛ք, - ասաց երկրորդ վետերանը, - իմ պառավն էլ՝ ոչինչ:
- Ճիշտ է:
- Բայց արդեն մահացել է, - ասաց երկրորդ վետերանը, - եկեք նրա մասին չխոսենք:
- Դուք ամուսնացա՞ծ եք, բարեկամ, - Ռիչարդ Գորդընին հարցրեց շեկը:
- Բա ո՞նց, - պատասխանեց:
- Կանգնակի մյուս ծայրում, չորս մարդ այն կողմ, գծագրվեցին պրոֆեսոր Մաք Ուոլսիի կարմիր դեմքը, երկնագույն աչքերն ու գարեջրից խոնավացած, շիկավուն բեղը: Պրոֆեսոր Մաք Ուոլսին ուղիղ իր դիմաց էր նայում, և Ռիչարդ Գորդընը տեսավ, թե նա ինչպես խմեց-վերջացրեց գարեջուրը, ձգեց ստորին շուրթն ու լպստեց բեղին կպած փրփուրը: Ռիչարդ Գորդընը նկատեց, որ նրա աչքերը չափից ավելի բաց երկնագույն էին:
- Նրան նայելով՝ Ռիչարդ Գորդընն զգաց, որ ինչ-որ բան սեղմվեց կրծքի տակ: Եվ կյանքում առաջին անգամ հասկացավ, թե ինչ է զգում տղամարդը, երբ նայում է մեկ այլ տղամարդու, հանուն որի սեփական կինը լքում է իրեն:
- Ի՞նչ պատահեց, բարեկամ, - հարցրեց շեկ վետերանը:
- Ոչինչ:
- Լավ չեք զգում: Տեսնում եմ, որ լավ չեք:
- Բան չկա, - ասաց Ռիչարդ Գորդընը:
- Ոնց-որ ուրվական տեսած լինեք:
- Տեսնո՞ւմ եք այն բեղավորին, - հարցրեց Ռիչարդ Գորդընը:
- Այն մեկի՞ն:
- Այո:
- Չետո՞, - հարցրեց երկրորդ վետերանը:
- Ոչինչ, - ասաց Ռիչարդ Գորդընը: - Սատանան նրա հետ: Ոչ մի բան:
- Նա ձեզ խանգարո՞ւմ է: Կարող եմք դաս տալ: Երեքով գետին կզցենք, հետո դուք քացով՝ տո՛ւր, թե կտաս:
- Ոչ, - ասաց Ռիչարդ Գորդընը, - իզուր է:
- Չենց որ փողոց դուրս գա, դեմը կկտրենք, - ասաց շեկ վետերանը: - Քիթ-մռուլը բուլրովին դուր չի գալիս: Շան որդին շատ է նման սրիկայի:
- Ատում եմ դրան, - ասաց Ռիչարդ Գորդընը, - կյանքս խորտակել է:
- Չիմա հերը կանիծենք, - ասաց երկրորդ վետերանը, - սրիկա շան որդի:

- Լսի՛ր, Շեկո, մի-երկու շիշ վերցրու հետդ: Սատկացնելու ենք: Էդ ե՞րբ է հասցրել: Լսե՛ք, բարեկամ, մի հատ էլ չկրկնե՞նք:
- Դեռ մի դուլար յոթանասուն ցենտ ունենք, - ասաց Գորդընը:
- Այդ դեպքում, ավելի լավ չի՞ միանգամից մի շիշ վիսկի վերցնենք, - ասաց շեկ վետերանը, - թե չէ՝ գարեջրից ուռեցինք:
- Ոչ, - ասաց երկրորդը, - գարեջուրը քեզ լավ է: Տակառի՛ գարեջուր է:
- Եկեք, գնանք դրան քացու տակ գցենք ու գանք՝ էլի գարեջուր խմենք:
- Ոչ, նրան ձեռք չտա՛ք:
- Չեղա՛վ, բարեկամս: Մեզ լավ չեք ճանաչում: Ասացիք, որ այդ առնետը ձեր կնոջն է խորտակել:
- Կյանքս, ոչ թե՛ կնոջս:
- Թո՛ւ, կներեք: Մեղավոր եմ, բարեկամ:
- Նա է բանկը թալանել ու պայթեցրել, - ասաց մյուս վետերանը:
- Գրագ կգամ, նրա համար պարգևատրում է խոստացված: Աստված վկա, այսօր փոստում լուսանկարը տեսել եմ:
- Փոստում ի՞նչ էիր անում, - կասկածամտորեն հարցրեց երկրորդը:
- Իրավունք չունե՞մ նամակ ստանալ:
- Ի՞նչ է, նամակները ճամբար չե՞ն հասնում:
- Կարո՞ղ է, մտածում ես, թե խնայդրամարկդ եմ մտել:
- Փոստում ի՞նչ էիր անում:
- Անցնում էի, մտա:
- Դե ստացի՛ր, - ասաց ընկերն ու, թեք հետ տանելով և որքան հնարավոր էր անբոխի մեջ թափ առնելով, հարվածեց նրան:
- Ընկերներն էլի իրար կպան, - ինչ-որ մեկը գոռաց: Նրանց սկսեցին դեպի դուռը հրել, և իրար քաշելով ու խփելով, աքացի տալով ու հրմշտելով՝ երկուսն էլ հայտնվեցին փողոցում:
- Թող մայթի վրա որքան կուզեն՝ կռվեն, - ասաց թիկնեղ երիտասարդը, - այս շան որդիներն օրը երեք-չորս անգամ տալիս են իրար:
- Երկու աքլոր, - ասաց մի ուրիշ վետերան, - շեկը ժամանակին կարգին կռվել գիտեր, բայց հիմա սիֆո է:
- Երկուսն էլ սիֆո են:
- Շեկը ռիմգում է վարակվել, մի քահելի հետ կռվելու ժամանակ,
- ասաց կարծիկ, ամրակազմ վետերանը: - Չախելի մարմինը լրիվ դուրս տված էր, թիկունքն էլ, ուսերն էլ: Եվ ամեն անգամ, երբ ամուր բռնում էին իրար, նա ուսերը Շեկի քիթ-մռուլին էր քսում:
- Ա՛յ քեզ զզվանք: Շե՞կն ինչու էր գլուխը դեմ տալիս:



- Դե, միշտ եղպես էր կռվում: Գլուխը կախա: Էդ լակոտն էլ հա քսվում էր:

- Չեքիաթ ես պատմում: Կռվի ժամանակ ո՞վ է սիֆո ընկնում:

- Էդ քո՞ կարծիքով: Գիտե՞ս ինչ, Շեկը երեխայի նման մաքուր էր: Նրան լավ գիտեմ: Նույն ջոկատում ենք եղել: Լավ կռվող էր: Կատակ չեմ անում, հա: Կարգի՞ն էլ կին ուներ: Լուրջ եմ ասում, հա: Սիֆո էլ ընկել է էդ Բեննի Սենփսոնից, դա ճշմարտություն է, ինչպես և ճիշտ է, որ ես հիմա էստեղ կանգնած եմ:

- Դե, ուրեմն մատի՞ր, - ասաց մյուս վետերանը: - Բա Պուլչի՞ն ո՞նց վարակվեց:

- Շանհայում:

- Իսկ դո՞ւ:

- Ոչ մի տեղ:

- Փրփո՞ւրը:

- Բրեստում, մի աղջկանից, արդեն տուն էինք վերադառնում:

- Էնքան էլ սիրում եք դրա մասին խոսել: Սիֆո: Ի՞նչ տարբերություն, մարդը սիֆո է, թե՛ չէ:

- Հիմա մեզ համար արդեն մեկ է, - ասաց մեկ այլ վետերան, - սիֆո ունե՞նք, թե՛ ոչ:

- Պուլչիի համար, նույնիսկ, ավելի լավ է: Ոչ էլ գիտի, թե շուրջն ինչ է կատարվում:

- Սիֆոն ի՞նչ է, - պրոֆեսոր Մաք Ուոլսի՞ն հարցրեց կողքը նստածին:

Հարևանը բացատրեց:

- Հետաքրքիր է, այդ բառն ի՞նչ ստուգաբանություն ունի, - ասաց պրոֆեսոր Մաք Ուոլսի՞ն:

- Չգիտեմ, - պատասխանեց հարևանը: - Բանակ մտնելուս առաջին օրվանից այդ եմ լսել: Մի մասը սիֆոն է ասում: Բայց, հիմնականում՝ սիֆո:

- Շատ կուզեի ճշտել, - ասաց պրոֆեսոր Մաք Ուոլսի՞ն: - Նման բառերի մեծ մասը հին անգլերենից է:

- Լսի՞ր, ինչո՞ւ են սիֆո ասում, - պրոֆեսոր Մաք Ուոլսիի հարևանը դիմեց կողքի վետերանին:

- Չգիտեմ:

Կարծես, ոչ ոք չգիտեր, բայց բոլորին էլ դուր էր գալիս լեզվաբանական քննարկումների մթնոլորտը:

Ռիչարդ Գորդընն այժմ պրոֆեսոր Մաք Ուոլսիի կողքին էր: Երբ Շեկն ու Պուլչին սկսել էին իրար քաշքշել, ամբոխը նրան հրել-հասցրել էր կանգնակի այդ կողմը, իսկ ինքը չէր փորձել դիմադրել:

- Ողջո՞ւյն, - նրան բարևեց պրոֆեսոր Մաք Ուոլսի՞ն, - մի բան կխմե՞ք:

- Միայն, թե՛ ոչ ձեզ հետ, - պատասխանեց Ռիչարդ Գորդընը:

- Թերևս՝ ճիշտ եք, - ասաց պրոֆեսոր Մաք Ուոլսի՞ն: - Նման բան երբևէ տեսե՞լ էիք:

- Ոչ, - պատասխանեց Ռիչարդ Գորդընը:

- Անչափ հետաքրքրական է, - ասաց պրոֆեսոր Մաք Ուոլսի՞ն: - Տարօրինակ մարդիկ են: Ես ամեն օր այստեղ եմ լինում:

- Եվ ոչ մի անգամ պատմության մեջ չե՞ք ընկել:

- Ոչ: Իսկ ինչո՞ւ պետք է ընկնեի:

- Դե, երբ հարբածները կռվում են, պատահում է:

- Ինձ հետ չի պատահել:

- Մի քանի րոպե առաջ բարեկամներիցս երկուսը ուզում էին ձեզ ծեծել:

- Ի՞նչ եք ասում:

- Փոշմանել եմ, որ չթողեցի:

- Կարծում եմ, դրանից ոչինչ չէր փոխվի, - ասաց պրոֆեսոր Մաք Ուոլսի՞ն՝ բառերն արտասանելով իրեն հատուկ տարօրինակ երանգով: - Եթե իմ ներկայությունը տհաճ է, կարող եմ հեռանալ:

- Ոչ, - պատասխանեց Ռիչարդ Գորդընը, - ես, նույնիսկ, մի տեսակ հաճույք եմ ստանում ձեր ներկայությունից:

- Ահա՛ թե ինչ, - ասաց պրոֆեսոր Մաք Ուոլսի՞ն:

- Երբևէ ամուսնացած եղե՞լ եք, - հարցրեց Ռիչարդ Գորդընը:

- Այո:

- Եվ ի՞նչ:

- Կինս մահացավ գրիպի համաճարակի ժամանակ, 1918-ին:

- Ինչո՞ւ եք ուզում կրկին ամուսնանալ:

- Կարծում եմ, այս անգամ բախտս կբերի: Ինձ թվում է, հիմա ավելի լավ ամուսին եմ լինելու:

- Եվ, ուրեմն, կնո՞ջս եք ընտրել:

- Այո, - ասաց պրոֆեսոր Մաք Ուոլսի՞ն:

- Ես քո հերն եմ անիծել, - ասաց Ռիչարդ Գորդընն ու հարվածեց նրա դեմքին:

Մեկը բռնեց ձեռքը: Չեռքը հետ քաշեց, և մեկ ուրիշ ձեռք ուժգին հարվածեց իր գլխին, ականջի տակ: Տեսավ, որ պրոֆեսոր Մաք Ուոլսի՞ն դեռ իր դիմաց էր, կանգնակի մոտ՝ աչքերը կկոցած, դեմքը՝ կարմրատակած: Մեկնել էր ձեռքը, որ մի ուրիշ գավաթ վերցնեք, քանի որ Գորդընը շուռ էր տվել նրա բաժին գարեջուրը, և Ռիչարդ Գորդընը ձեռքը հետ տարավ, որ մի հարված էլ հասցնեք: Այդ պա-

հին դարձյալ ինչ-որ բան պայթեց ականջի տակ, և բարի լույսերը առկայծեցին ու միանգամից հանգան:

Հետո տեսավ, որ արդեն բարի մուտքի առջև էր: Գլուխը դժժում էր, մարդաշատ սրահը թույլ տարուբերվում էր, սիրտը խառնում էր: Ամբոխն իրեն էր նայում: Հաղթանդամ երիտասարդը կանգնած էր կողքին:

- Լսե՞ք, - ասում էր երիտասարդը, - կարիք չկա այստեղ կռիվ սարքել: Այս հարբեցողներն էլ մեզ հերիք են:

- Ինձ ո՞վ հարվածեց, - հարցրեց Ռիչարդ Գորդընը:

- Ես, - ասաց հաղթանդամ երիտասարդը: - Պարոնը մեր մշտական հաճախորդն է: Իզուր տեղը մի՛ ոգևորվեք: Այստեղ չի՛ կարելի կռիվ սարքել:

Տեղում ճոճվելով՝ Ռիչարդ Գորդընը նկատեց, որ պրոֆեսոր Մաք Ուոլսին առանձնացել էր կանգնակի մոտ խոնված ամբոխից ու իր կողմն էր գալիս:

- Ցավում եմ, - ասաց: - Բուրոսիվին չէի ցանկանա, որ ձեզ հարվածեին:

Եվ ձեր զգացումներն ինձ հասկանալի են...

- Ե՛ս քո... - ասաց Ռիչարդ Գորդընն ու քայլ արեց: Դրանից հետո այլևս ոչինչ չէր հիշում, քանի որ հաղթանդամ երիտասարդը դիրք բռնեց, ուսերը մի փոքր կախ գցեց ու հարվածեց: Այս անգամ բերանքսիվայր ծեփվեց ցեմենտե հատակին: Հաղթանդամ երիտասարդը շրջվեց դեպի պրոֆեսոր Մաք Ուոլսին:

- Ամեն ինչ կարգին է, դոկ, - ասաց սիրալիր: - Նա այլևս ձեզ չի անհանգստացնի: Չեզանից ի՞նչ էր ուզում:

- Պետք է տուն տանեն, - ասաց պրոֆեսոր Մաք Ուոլսին: - Ուշքի կգա՞:

- Անպայման:

- Օգնե՞ք տաքսի նստեցնել, - ասաց պրոֆեսոր Մաք Ուոլսին: Երկուսով գրկեցին Ռիչարդ Գորդընին և վարորդի օգնությամբ խցկեցին հնաոճ տաքսին:

- Վստա՞հ եք, որ բան չի պատահի, - հարցրեց պրոֆեսոր Մաք Ուոլսին:

- Երբ ցանկանաք ուշքի բերել, ուժով կքաշեք ականջները: Մի քիչ էլ ջուր կցանեք երեսին: Միայն թե զգույշ եղեք, որ նորից չհարձակվի: Թույլ չտաք, որ նորից ձեզ կպչի, դոկ:

- Եղավ, - ասաց պրոֆեսոր Մաք Ուոլսին:

Ռիչարդ Գորդընի գլուխը թեքվել էր տաքսու հետևի նստարանին, շնչելիս կոկորդից խռպոտ, ընդհատուն աղմուկ էր լսվում: Պրոֆե-

սոր Մաք Ուոլսին թևը նրա գլխի տակ դրեց և փորձեց գլուխը բարձրացնել ու այնպես պահել, որ այս ու այն կողմ չխփվի:

- Ո՛ր եմք գնում, - հարցրեց տաքսու վարորդը:

- Քաղաքի մյուս ծայրը, - ասաց պրոֆեսոր Մաք Ուոլսին, - զբոսայգուց այն կողմ: Այն փողոցով, որտեղ արքայաձուկ են վաճառում:

- Ռոքի Ռո՞ղն է, - ասաց վարորդը:

- Այո, - ասաց պրոֆեսոր Մաք Ուոլսին:

Ճանապարհին հանդիպած առաջին սրճարանի մոտ պրոֆեսոր Մաք Ուոլսին վարորդին խնդրեց կանգնեցնել մեքենան: Ուզում էր ծխախոտ վերցնել: Ռիչարդ Գորդընի գլուխը զգուշությամբ նստարանին դրեց և սրճարան մտավ: Երբ վերադարձավ, Ռիչարդ Գորդընն արդեն մեքենայում չէր:

- Ո՛ր է, - հարցրեց վարորդին:

- Այնտեղ, փողոցում, քիչ վերև, - պատասխանեց վարորդը:

- Հասե՞ք նրան:

Երբ տաքսին հավասարվեց Ռիչարդ Գորդընին, որ երերալով քայլում էր մայթով, պրոֆեսոր Մաք Ուոլսին իջավ ու նրան մոտեցավ:

- Նստե՞ք, Գորդըն, - ասաց, - տուն ենք գնում:

Ռիչարդ Գորդընը նրան նայեց:

- Գնում ե՞մք, - ասաց օրորվելով:

- Ուզում եմ, որ այս տաքսիով տուն գնաք:

- Կորե՞ք գրողի ծոցը:

- Ամեն դեպքում, նստե՞ք, - ասաց պրոֆեսոր Մաք Ուոլսին: - Ուզում եմ, որ բարեհաջող տուն հասնեք:

- Չեր հրոսակախո՞ւմքն ուր է, - հարցրեց Ռիչարդ Գորդընը:

- Ի՞նչ հրոսակախումք:

- Որ ինձ ծեծեց:

- Դո՞նապանն էր: Չէի սպասում, որ հարվածելու էր:

- Սո՛ւտ է, - ասաց Ռիչարդ Գորդընն ու փորձեց բռունցքն իջեցնել նրա կարմրատակած դեմքին: Սակայն վրիպեց, կորցրեց հավասարակշռությունն ու վայր ընկավ: Ապա դանդաղ ոտքի կանգնեց: Մայթգրի քարերը քերծել էին ծնկները, բայց նա, կարծես, ոչինչ չէր զգում:

- Առաջ եկեք, կռվելու ենք, - ասաց ջղաձգվելով:

- Ես երբեք չեմ կռվում, - ասաց պրոֆեսոր Մաք Ուոլսին: - Եթե տաքսի նստեք, կհեռանամ:

- Կորե՞ք գրողի ծոցը, - ասաց Ռիչարդ Գորդընն ու սկսեց իջնել փողոցով:

- Թող գնա, - ասաց վարորդը, - նրան ոչինչ էլ չի պատահի: Արդեն լավ է:

- Այդպե՞ս եք կարծում:

- Իհարկե, - ասաց վարորդը, - լրիվ ուշքի է եկել:

- Ամեն դեպքում, անհանգիստ եմ, - ասաց պրոֆեսոր Մաք Ուոլսին:

- Առանց կռվի նրան մեքենա նստեցնել չի լինի, - ասաց վարորդը:

դը: - Թողե՛ք, թող գնա: Ամեն ինչ կարգին է: Ձեր եղբա՞յրն է:

- Որոշ առումով, - ասաց պրոֆեսոր Մաք Ուոլսին:

Հայացքով հետևում էր, թե ինչպես էր Ռիչարդ Գորդոնն օրորվելով քայլում փողոցով, ապա անհետացավ հսկայական ծառերի ստվերում, որոնց ճյուղերն այնքան էին աճել-ճկվել, որ խրվել-արմատակալել էին հողի մեջ: Նրան նայելով՝ պրոֆեսորը տհաճ մտքերի մեջ ընկավ: Մահացու մեղք է, մտածում էր, ծանր ու անքավելի մեղք, մեծագույն դատաւնություն, և եթե նույնիսկ կրոնը ձևականորեն օրհնականացնի այս ամենը, ի վիճակի չեմ լինելու ինքս ինձ ներել: Մյուս կողմից, վիրաբույժն իրավունք չունի ընդհատել վիրահատությունը՝ ինչ է, թե հիվանդին ցավ է պատճառում: Ինչո՞ւ են նման բոլոր վիրահատություններն առանց անզգայացման արվում: Եթե ես ավելի լավ մարդ լինեի, քան իրականում եմ, թույլ կտայի, որ ծեծեր ինձ: Թեթևություն կզգար: Խեղճ, հիմար մարդ: Խեղճ, անօթևան մարդ: Չպետք է մենակ թողնեի, սակայն գիտեմ, նրա համար անչափ ծանր կլինեի: Ինքս ինձ ատում եմ, նողկում եմ ինձանից և զղջում եմ արարքիս համար: Այս ամենը կարող է շատ վատ վերջանալ: Բայց դրա մասին պետք չէ մտածել: Հիմա կրկին կդիմեմ անզգայացմանը, որ տասնյոթ տարի փրկել է ինձ, սակայն հուսով եմ, շուտով այլևս պետք չի գալու: Չնայած հնարավոր է, որ այն արդեն արատի է վերածվել, և ես ընդամենը արդարացումներ եմ հորինում: Համենայն դեպս, հարմարվել եմ այդ արատին: Միայն թե շատ կուզենայի օգնել այս խեղճին, որին չարիք եմ պատճառել:

- Ինձ հետ տարեք Ֆրեդիի մոտ, - կարգադրեց վարորդին:

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆԻՆԳԵՐՈՐԴ

«Թագուհի կոնչ»-ին քարշակող առափնյա պահպանության նավակը լողում էր մանր կղզիների ու ստորջրյա խութերի արանքով: Մակընթացություն էր, հյուսիսից թեթև քամի էր փչում, նավակը տարուբերվում էր ալիքների վրա, իսկ ճերմակ նավը հանդարտ ու հնազանդ հետևում էր նրան:

- Եթե քամին չաստկանա, ամեն ինչ կարգին կլինի, - ասաց առափնյա պահպանության նավակի կապիտանը: - Նավը լավ է լողում: Լուսահոգի Ռոբբին հմուտ նավաշինարար էր: Նրա ասածներից բան հասկացա՞ք:

- Անկապ բաներ է խոսում, - պատասխանեց օգնականը, - զանանցում է:

- Դժվար, թե ապրի, - ասաց կապիտանը: - Որովայնն ամբողջությամբ քրքրված է: Ի՞նչ եք կարծում, չորս կուրացուն էլ նա՞ է սպանել:

- Ինչ իմանաս: Հարցրեցի նրան, բայց այդպես էլ չհասկացավ, թե ինչի մասին եմ խոսում:

- Մի անգամ էլ չփորձե՞նք հետը խոսել:

- Գնա՛նք, տեսնենք ոնց է, - ասաց օգնականը:

Պեկանիվը վստահելով մյուս օգնականին և կարգադրելով, որ այքը ափից եկող ազդանշանների վրա պահեր, նրանք անցան դեկանիվի խցիկի հետևն ու մտան հրամանատարական նավասենյակը: Երկաթյա մահճիկին պառկած էր Հարրի Մորգանը: Աչքերը փակ էին, բայց հենց որ կապիտանը ձեռքով ուսին դիպավ՝ անմիջապես բացեց կոպերը:

- Ինչպե՞ս եք, Հարրի, - հարցրեց կապիտանը: Հարրին նրան նայեց, սակայն չխոսեց:

- Ի՞նչ է պետք, ի՞նչ կարող եմք անել, - կրկին հարցրեց կապիտանը:

Հարրի Մորգանը սառած հայացքով նրան էր նայում:

- Չի լսում, - ասաց օգնականը:

- Հա՛րրի, - շարունակեց կապիտանը, - ինչ-որ բա՞ն եք ուզում:

Սրբիչը թրջեց մահճիկի կողքի խորշին ամրացված ջրամանի մեջ ու խոնավացրեց Հարրի Մորգանի ճաքճքած շուրթերը, որ չորացել ու սևացել էին: Նրան նայելով՝ Հարրի Մորգանը հանկարծ սկսեց խոսել:

- Մարդը, - ասաց:  
- Հասկացա, - ասաց կապիտանը, - շարունակե՛ք:  
- Մարդը, - չափից ավելի դանդաղ ասաց Հարրի Մորգանը, - չու-  
նի չի կարող ոչ մի կերպ չի կարելի ոչ մի տեղ: - Ապա դադար առավ:  
Դեմքը սառած էր:  
- Շարունակե՛ք, Հարրի, - ասաց կապիտանը: - Ասացե՛ք, ո՞վ ա-  
րեց:

Ինչպե՞ս եղավ:  
- Մարդը, - ասաց Հարրին, կապիտանին նայելով ցցուն այտուսկ-  
րերով լայն դեմքին բնավորված նեղ աչքերով՝ փորձելով ինչ-որ  
բան բացատրել:

- Չորս մարդ, - օգնեց կապիտանը և մի անգամ էլ խոնավացրեց  
նրա շուրթերը՝ ամուր քամելով սրբիչը, որպեսզի մի քանի կաթիլ  
ջուր բերանի մեջ հոսեր:

- Մարդը, - ուղղեց Հարրին, ապա լռեց:  
- Դե, լավ: Մարդը, - ասաց կապիտանը:  
- Մարդը, - կրկնեց Հարրին դանդաղ, անարտահայտիչ, դժվա-  
րությամբ շարժելով չորացած շուրթերը: - Ինչպես հիմա է ամեն բան  
ինչպես հիմա է դարձել ինչ էլ լինի ոչ:

Կապիտանը հայացքը դեպի օգնականը շրջեց և գլուխը տարու-  
բերեց:

- Հարրի, ո՞վ արեց, - հարցրեց օգնականը:

Հարրին անտարբեր նրան էր նայում:

- Քեզ մի՞ հիմարացրու, - ասաց: Կապիտանն ու օգնականը կռա-  
ցան. ուր որ է՝ էլի մի բան կասի: - Ոնց որ փորձես մեքենայով սարի  
զագաթով անցնել: Կուբայի ճանապարհին: Ցանկացած ճանապար-  
հի: Ամենուր: Նույնը այստեղ: Ինչպես որ է: Ինչպես հիմա է դարձել:  
Կարճ ժամանակ, այո, իհարկե: Կարող է պատահել, եթե հաջողվի:  
Մարդը: - Լռեց: Կապիտանը, օգնականին նայելով, կրկին տարուբե-  
րեց գլուխը: Հարրի Մորգանը սառած հայացքով նրան էր նայում:  
Կապիտանը նորից թրջեց նրա շուրթերը: Սրբիչի վրա արյան հետ-  
քեր մնացին:

- Մարդը, - նրանց նայելով ասաց Հարրի Մորգանը: - Մարդը  
միայնակ չի կարող: Հիմա՝ ոչ մի միայնակ մարդ: - Դադար առավ: -  
Միևնույն է, միայնակ մարդը ոչինչ չի կարող:

Փակեց աչքերը: Բավական ժամանակ պահանջվեց, մինչև ասաց  
այդ մի քանի բառը, բայց մի ամբողջ կյանք էր պահանջվել, որ հաս-  
կանար այդ ամենը:

Պառկել էր անշարժ, աչքերը կրկին բաց էին:

- Գնա՛նք, - օգնականին դիմեց կապիտանը: - Հարրի, ձեզ հաս-  
տա՞տ ոչինչ հարկավոր չէ:

Հարրի Մորգանը նրան նայեց, սակայն չպատասխանեց: Ինքն  
ասել էր, նրանք չէին լսել:

- Շուտով կվերադառնամք,՝ - ասաց կապիտանը, - հանգիստ  
պառկեք:

\*\*\*

Մինչ դուրս կգային նավասենյակից՝ Հարրի Մորգանն ակնդետ  
նրանց էր հետևում էր:

Դեկանիվի խցիկում հետևելով, թե ինչպես էր երկինքը մթնում, և  
ինչպես էր Սոմբրերոյի փարոսից լույս սփռվում ծովի ալիքներին,  
օգնականն ասաց.

- Սարսափում ես, երբ սկսում է զառանցել:

- Մեղք է, - ասաց կապիտանը: - Ոչինչ, շուտով տեղ կհասնենք:  
Մոտավորապես ժամը մեկին այնտեղ կլինենք: Մենակ թե՛ հանկարծ  
ստիպված չլինենք ընթացքը դանդաղեցնել:

- Կարծում եք, կապրի՞:

- Ոչ, - ասաց կապիտանը: - Չնայած՝ ի՞նչ իմանաս:

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ

**Խ**ավար փողոցում, ծովախորշի մուտքը փակող երկաթյա դարպասների մոտ հոծ բազմություն էր հավաքվել: Այստեղ նախկինում ստորջրյա նավատորմի հենակետն էր, այժմ ծովային զբոսանավերի նավահանգիստն է: Կուբացի պահակին կարգադրված էր ոչ մեկին ներս չթողնել, և ամբոխը կիպ սեղմվել էր ցանկապատին, որպեսզի գոնե երկաթյա ծողերի արանքից զններ մութ տարածքը, որն աղոտ լուսավորում էին կայանած նավերի լույսերը: Ամբոխը խաղաղ էր, այնքան խաղաղ, որքան կարող էր խաղաղ լինել Քի Ուեսթի ամբոխը: Ջրոսանավերի սեփականատերերից երկուսը, որ ուսերով ու արմունկներով հրմշտվելով՝ հասել էին դարպասներից, դեմ էին առել պահակին:

- Ե՛յ, ներս գալ չի կարելի, - ասաց պահակը:  
- Սա՞ ինչ նորություն է: Մեր նավերն այնտեղ են:  
- Ոչ մեկը ներսամտնել, - պատասխանեց պահակը: - Դե՛տ անցնել:  
- Դո հիմար չե՞ս, - ասաց նավատերերից մեկն ու, նրան մի կողմ հրելով, առաջացավ դեպի նավահանգիստը:

Ամբոխը դարպասներից այն կողմ մնաց, նրանց հետ էլ՝ փոքրամարմին պահակը՝ շփոթված ու անհանգստացած իր գինվորական գլխարկի, երկար բեղի ու ոտնահարված հեղինակության համար, ավստասլով, որ բանալի չուներ, որպեսզի փակեր դարպասը, իսկ զբոսանավերի տերերը, գոհ տեսքով քայլելով դեպի նավահանգիստը, հանդիպեցին մարդկանց ինչ-որ խմբի, որ լուռ սպասում էր առափնյա պահպանության նավամատույցում: Անտարբեր անցնելով նրանց կողքով, շրջանցեցին այն նավամատույցները, ուր կայանել էին մյուս զբոսանավերը, մտան հինգերորդ նավամատույցը, մոտեցան նավասանդուղքին, լուսարձակի պայծառ լույսի միջով վեր բարձրացան անտաշ տախտակների վրայով ու հայտնվեցին «Նոր էքզուրմա-2»-ի հինգակադնե տախտակամածին: Ընդհանուր նավասենյակում տեղավորվեցին թերթերով ու ամսագրերով ծանրաբեռ երկարավուն սեղանի մոտ, կաշվե խորը բազկաթոռների մեջ, ապա նրանցից մեկը կանչեց ուղեկցորդին:

- Շոտլանդական՝ սողայով, - կարգադրեց: - Դո՞ւ ինչ կցանկանալիր, Դե՛նրի:

- Նույնը, - պատասխանեց Դե՛նրի Քարփենթերը:

- Էդ էջի՞ն ինչու էին դարպասի մոտ ցցել:  
- Գաղափար չուներ, - ասաց Դե՛նրի Քարփենթերը:  
Սպիտակ համազգեստով ուղեկցորդը բերեց գավաթները:  
- Դրեք այն ծայնապնակները, որ ճաշից հետո էի հանել, - ասաց Ուոլլես Ջոնսթընը՝ զբոսանավի տերը:  
- Ներեցեք, պարոն, կարծեմ, արդեն տեղավորել-պահել ենք արկղում, - պատասխանեց ուղեկցորդը:  
- Սատանա՛ն ձեզ տանի, - ասաց Ուոլլես Ջոնսթընը: - Այդ դեպքում, Բախի նոր ալբոմը դրեք:  
- Լսում եմ, պարոն, - ասաց ուղեկցորդը: Չայնապնակների պահարանից վերցրեց ալբոմն ու մոտեցավ պատեֆոնին: Դնչեց «Սարաբանդեն»:  
- Այսօր Թոմմի Բրեդլիին տեսե՞լ ես, - հարցրեց Դե՛նրի Քարփենթերը: - Օդանավակայանում հանդիպեցի:  
- Տանել չեմ կարողանում, - ասաց Ուոլլեսը: - Ո՛չ իրեն, ո՛չ էլ պողոնիկ տիկնոջը:  
- Դելենն ինձ դուր է գալիս, - ասաց Դե՛նրի Քարփենթերը: - Գիտի հաճույք ստանալ:  
- Դու է՛լ ե՞ս փորձել:  
- Իհարկե: Գրաշալի է:  
- Ոչ մի դեպքում հետը գործ չեմ ունենա, - ասաց Ուոլլես Ջոնսթընը: - Եվ, ընդհանրապես, ինչո՞ւ է այստեղ ապրում:  
- Այս քաղաքում հոյակապ առանձնատուն ունեն:  
- Դիանալի բույն է, մաքուր, կոկիկ, - ասաց Ուոլլես Ջոնսթընը: - Իսկ ճի՞շտ է, որ Թոմմի Բրեդլին իմպոտենտ է:  
- Չեմ կարծում: Ում մասին ասես, չեն խոսում: Պարզապես լայն հայացքների տեր է:  
- Լա՛վ ասացիր: Կինն էլ լայնի տեր է, իսկ հայացքներ, չգիտեմ՝ երբևէ ունեցե՞լ է, թե՛ ոչ:  
- Չարմանալի հաճելի կին է, - ասաց Դե՛նրի Քարփենթերը: - Ուոլլի, քեզ հաստատ դուր կգա:  
- Դժվար, - պատասխանեց Ուոլլեսը: - Նա մարմնավորում է այն ամենը, ինչը ես սկզբունքորեն ատում եմ կնոջ մեջ, իսկ Թոմմի Բրեդլին հանրագումարն է այն ամենի, ինչն ատում եմ տղամարդու մեջ:

- Այսօր շատ վճռական ես տրամադրված:

- Իսկ դու երբեք վճռական չես լինում, քանի որ ընդհանրապես գուրկ ես որոշակիությունից, - ասաց Ուոլլես Ջոնսթընը: - Սեփական կարծիք չունես: Նույնիսկ չգիտես, թե ինքդ ով ես կամ ինչացու ես:

- Կապիտան, նեղություն չէի՞ք բաշի մի շիշ գարեջուր փոխան-  
ցել, - ինձ դիմեց Ջոնսընը:

- Խնդրեմ, - ասացի ու ձեռքս սառույցի մեջ մտցրեցի, որ սառը  
շիշ գտնեի:

- Դուք նույնպես չէի՞ք ցանկանա, - հարցրեց:

- Ո՛չ, պարոն, - պատասխանեցի, - մինչև երեկո կսպասեմ:

Բացեցի շիշն ու արդեն նրան էի մեկնում, երբ դարչնագույն մի  
թրածուկ նկատեցի, որի թուրը մարդու բազկից երկար կլիներ: Կի-  
սով չափ դուրս ցցվեց ջրից ու հարծակվեց մեր թյունիկի վրա: Շատ  
էր մեծ, սղոցարանի գերանի չափ:

- Թուլացրե՛ք, արա՛գ, - բղավեցի:

- Դեռ չի բռնել, - պատասխանեց Ջոնսընը:

- Այդ դեպքում, քաշե՛ք արգելակը:

Ամենախոր տեղից էր բարձրացել ու վրիպել էր: Գիտեի, որ շրջ-  
վելու էր և հետ էր վերադառնալու:

- Դիմա ուշադիր եղեք, հենց որ խփի, կթուլացնե՛ք:

Այդ պահին նկատեցի, որ ծուկը նավի հակառակ կողմում էր հայ-  
տնվել: Ջրի մեջ գծագրվում էին լայն բացված լողակները, որ, կար-  
ծես, ալ կարմիր քեթր լինեին, ալ կարմիր գուլեր էին նաև դարչնա-  
գույն մարմնին: Մոտենում էր սուզանավի նման՝ մեջքի լողակը ջրից  
դուրս ցցած, լավ երևում էր, թե ինչպես էր ջուրը ճեղքում: Անցավ  
խայծի հետևը, արագորեն ցցեց թուրն ու այնպես թափահարեց,  
կարծես ուզում էր ազատվել ջրից:

- Թողե՛ք խայծը կուլ տա, - ասացի: Ջոնսընը թելը կոճից արծա-  
կեց, կոճը սկսեց վզգալով քանդվել, հսկա ծուկը շրջվեց ու սուզվեց,  
նրա արծաթափայլ մարմինը չլմփաց, փոխեց ուղղությունն ու մեծ  
արագությամբ դեպի ափը լողաց:

- Մի փոքր քաշեք արգելակը, - ասացի, - շատ քիչ:

Սկսեց թելը ձգել:

- Շատ եղավ, - ասացի: Նկատեցի, որ կարթաթելը պրկվում էր: -  
Դիմա փակեք արգելակն ու քաշեք: Փախչելու է:

Ջոնսընը քաշեց արգելակն ու նորից բռնեց ծողը:

- Չգե՛ք, - բղավեցի, - ձգեք, որ կեռը լավ խրվի: Դինգ անգամ  
ձգեք:

Երկու անգամ ուժգին ձգեց, ծողը ճկվեց-ծալվեց, կոճը սկսեց  
ճռճալ, և ծուկը թռավ, հո՛ւպ, արևի տակ շողշողաց, ցատկեց ու այն-  
պիսի ճողփյունով սուզվեց, կարծես հսկայական ծի էր ընկել ժայ-  
ռից:

- Բա՛ց թողեք արգելակը, - ասացի:

- Փախավ, - պատասխանեց Ջոնսընը:

- Չի՞ փախչի: Արա՛գ, բաց թողեք արգելակը:

Նկատեցի, որ թելը թուլացել էր, և երբ ծուկը մի անգամ էլ ցատ-  
կեց, արդեն նավի հետևում էր հայտնվել և լողում էր դեպի ծովի  
խորքը: Քիչ անց մի անգամ էլ ջուրը փրփրացնելով երևաց, նկատե-  
ցի, որ կեռը խրվել էր բերանի անկյունը: Պարզ գծագրվում էին մեջ-  
քի գուլերը: Գեղեցիկ թրածուկ էր, արծաթափայլ, ալ կարմիր նախշե-  
րով, գերանի հաստությամբ:

- Փախավ, - ասաց Ջոնսընը: Թելը կախ էր ընկել:

- Դե՛տ փաթաթեք, - ասացի, - կեռը լավ է բռնել:

Ապա նեղրին ծայրեցի:

- Լրի՛վ առաջ, հասի՛ր դրան:

Զուկը մի քանի անգամ էլ ցատկոտեց, ձգվեց, ցցվեց սյան նման՝  
մարմնով մեկ ուղիղ դեպի մեզ խոյանալով և ամեն ընկնելիս ջրի հս-  
կայական շիթեր բարձրացնելով: Թելը պրկվեց, ծուկը կրկին դեպի  
ափը լողաց, ապա պարզորոշ տեսա, թե ինչպես շրջվեց:

- Դիմա սկսում ենք հետապնդել, - ասացի, - եթե փորձի խուսա-  
փել, ավելի կարագացնենք: Արգելակը բաց թողեք, թելի երկարու-  
թյունը կհերիքի:

Մեր ծուկը, բոլոր մեծ ձկների նման, դեպի հյուսիս-արևմուտք էր  
լողում: Եվ ի՛նչ արագ էր լողում: Փախչում էր երկար ուստյուններով  
ու ամեն անգամ սուզվելիս այնպես էր շրմփացնում, կարծես ալիք-  
ներն ակոսող արագընթաց մոտորանավ լիներ: Շարունակում էինք  
հետապնդել: Դեկը ձեռքս էի առել և գոռում էի Ջոնսընին, որ արգե-  
լակը բաց թողներ ու կոճն արագ փաթաթեր: Դանկարծ նկատեցի,  
որ ծողը մի կողմ թռավ, և թելը միանգամից թուլացավ: Գործից  
չհասկացողը չէր նկատի, որովհետև թելի ու խայծի սեփական ծան-  
րությունը թելը ձգված են պահում: Բայց ես հո գիտեի՝ ինչն-ինչոց  
էր:

- Փախավ, - ասացի: Զուկը դեռևս շարունակում էր ցատկոտել,  
այնքան ցատկոտեց, մինչև լրիվ անհետացավ տեսադաշտից: Իս-  
կապես, հրաշք ծուկ էր:

- Բայց զգում եմ, ինչպես է ձգում, - ասաց Ջոնսընը:

- Թելի ծանրությունն է:

- Լավ էլ ձգում է, հազիվ եմ փաթաթում: Երևի սատկել է:

- Նայե՛ք, - ասացի, - տեսեք, թոչում է:

Կես մղոնի վրա երևում էր, թե ինչպես էր ծուկը ջուրը ճղփաց-  
նում: Ձնեցի արգելակը: Ամուր պտտած էր: Անհնար էր թելը կծկել:  
Պետք է կտրեիք:

- Ինձ հանգիստ թող, - ասաց Յենրի Քարփենթերը և ծխախոտ վառեց:

- Ինչո՞ւ:

- Թեկուզ այն պատճառով, որ ուղեկցում եմ քեզ այս հիմար մալի վրա և անում եմ այն ամենը, ինչ դու ես ուզում, մաև քեզ ազատում եմ լռության համար նավաստիներին ու մնացածներին վճարելու անհրաժեշտությունից, ովքեր լավ գիտեն, թե իրենք ինչացու են և գիտեն մաև, թե դու ինչացու ես:

- Քեզ ի՞նչ եղավ, - ասաց Ուոլլես Ջոնսթընը: - Ես երբեք որևէ մեկին լռելու համար չեմ վճարել: Այդ մեկը հո լավ գիտես:

- Ճիշտ է: Չափից ավելի ժլատ ես: Փոխարեն՝ իմ նման ընկերներ ես պահում:

- Քո նման ուրիշ ընկեր չունեմ:

- Դե լավ, պետք չէ հաճոյախոսել, - ասաց Յենրին: - Հավես չունեմ: Ավելի լավ է՝ Բախ լսիր, նախատիր ուղեկցորդիդ, մի բոլ խմիր ու գնա քնելու:

- Չեմ հասկանում, ինչո՞ւ հանկարծ ոգևորվեցիր, - ասաց ընկերն ու ոտքի ելավ: - Ի՞նչ ես դուրս տալիս: Դու էլ գամձ չես, գիտե՞ս:

- Գիտեմ, - ասաց Յենրին: - Վաղն անչափ զվարթ կլինեմ: Բայց այս երեկոն անհաջող է: Երբևէ նկատե՞լ ես, որ երեկոները տարբեր են լինում: Թե՞ հարուստների համար բոլորն էլ նույնն են:

- Աշակերտուհու նման ես խոսում:

- Բարի գիշեր, - ասաց Յենրի Քարփենթերը, - ոչ աշակերտուհի եմ, ոչ էլ՝ աշակերտ: Գնում եմ քնելու: Առավոտյան ուրախ կլինեմ:

- Շա՞տ ես տարվել: Դրա համա՞ր ես մռայլվել:

- Երեք հարյուր:

- Տեսա՞ր: Գիտեմ, չէ՞, որտեղ է թաղված շան գլուխը:

- Դու միշտ ամեն ինչ գիտես:

- Լսիր: Երեք հարյուր տարվել ես, չէ՞:

- Ավելի շատ:

- Որքա՞ն:

- Ամեն ինչ, - ասաց Յենրի Քարփենթերը, - ամբողջ ջեք-փոթը: Հիմա այնպիսի ավտոմատի հետ եմ խաղում, որ այլևս ջեք-փոթ չի տալիս: Այս երեկո գլխի ընկա: Մտքովս երբեք չէր անցել: Դե լավ, գնամ քնեմ, թե չէ արդեն ծանձրացրեցի:

- Բողոքովին: Միայն թե աշխատիր այլևս անտաշություն չանել:

- Որովհետև անտաշ եմ, դու էլ ինձ զգվեցրել ես: Բարի գիշեր: Վաղն ամեն ինչ լավ կլինի:

- Ահավոր անպատկառ ես:

- Մերը սա է, կամ ընդունիր, կամ՝ հեռացիր- ասաց Յենրին, - կյանքումս երկուսն էլ արել եմ:

- Բարի գիշեր, - լավատեսորեն ասաց Ուոլլես Ջոնսթընը:

Հարրի Քարփենթերը չարձագանքեց: Բախ էր ունկնդրում:

- Իսկապե՞ս գնում ես քնելու, - ասաց Ուոլլես Ջոնսթընը, - չի՞ կարելի տրամադրությանը գերի դառնալ:

- Արի վերջ տանք:

- Ինչո՞ւ: Առաջ էլ քեզ հետ պատահել է, բայց հո անցել է:

- Վերջ տուր:

- Մի բաժակ էլ խմիր, տրամադրությունդ կբացվի:

- Խմել չեմ ուզում, համ էլ, միևնույն է, չի ազդելու:

- Լավ, ուրեմն, գնա՞ քնիր:

- Գնում եմ, - ասաց Յենրի Քարփենթերը:

Ահա, թե այդ երեկո ինչ էր տեղի ունենում «Նոր Էքզումա-2» գրոսանավի վրա, որի անձնակազմը բաղկացած էր տասներկու հոգուց. կապիտան՝ Նիլս Լարսեն, ուղևորներ՝ գրոսանավի տերը՝ Ուոլլես Ջոնսթըն, 38 տարեկան, Հարվարդի շրջանավարտ, արվեստների մագիստրոս, կոմպոզիտոր, շահույթի աղբյուրը՝ մետաքսագործական ֆաբրիկաներ, ամուրի, Փարիզում՝ *interdit de sejour\**, հանրաճանաչ անձնավորություն Ալժիրից մինչև Բիսկրա, նավի միակ հյուրը՝ Յենրի Քարփենթեր, 36 տարեկան, նույնպես Հարվարդի շրջանավարտ, արվեստների մագիստրոս, շահույթի աղբյուրը՝ ժառանգություն մորից, որ ներկայումս, խնամատարների որոշմամբ, ամսական ընդամենը երկու հարյուր դոլար է, չնայած նախկինում չորս հարյուր հիսուն է եղել, քանի դեռ խնամատարական գումարը տնօրինող բանկը վստահելի արժեթղթերը չէր փոխարինել այլ, նույնպես վստահելի արժեթղթերով, հետո՝ ուրիշ, ոչ այնքան վստահելիներով, և ի վերջո՝ գրասենյակներին վարձակալությամբ տրված անշարժ գույքի մի մասով, որը բանկին հարկավոր չէր և շահույթ չէր բերում: Եկամուտը պակասելուց դեռ շատ առաջ Յենրի Քարփենթերի մասին ասում էին, որ եթե նրան առանց անկարգելի բաց թողնես 5500 ոտնաչափ բարձրությունից, բարեհաջող վայրէջք կկատարի ծնկների վրա ուղիղ որևէ մեծահարուստի սեղանի կողքը: Ճիշտ է, հանդուրժանքի դիմաց նա լիովին վարձահատույց էր լինում հաճելի ընկերակցությամբ, և չնայած հազվադեպ, այն էլ միայն վերջերս, ինչպես այս երեկո, ինքնաարտահայտման կամ զգացմունքային պոռթկումներ էր ունենում, ընկերները վաղուց էին նկատել, որ նրա

\* Ֆր. - բնակվելն արգելված է:

նյարդերը սկսել էին տեղի տալ: Գլխի էին ընկել հարուստի անսխալական բնագոյով, որով կարողանում են ստույգ գուշակել, թե երբ է ոհմակի անդամներից որևէ մեկի հետ ինչ-որ բան կատարվում, և համակվում են առողջ նկրտումներով՝ դուրս չպրտել նրան, եթե, իհարկե, ոչնչացնելն անհնար է, և հենց միայն այդ պատճառով էր հոժարակամ ընդունել Ուոլես Ջոնսթրոնի հյուրընկալությունը: Իրականում, Ուոլես Ջոնսթրոնը, ինքնատիպ հակումներով համդերձ, Չենրի Քարփենթերի վերջին հանգրվանն էր, և ազնվորեն փորձելով վերջ դնել նրա հետ իր մտերմությանը՝ Չենրին, առանց գիտակցելու, թի ինչ էր անում, ընտրել էր ինքնապաշտպանության լավագույն ձևը, իսկ վերջին օրերի կտրուկ արտահայտություններն ու ապագայի հանդեպ անկեղծ մտահոգությունը նրան առավել հետաքրքրական և գրավիչ էին դարձրել Ջոնսթրոնի աչքում, թե չէ անվերջ զիջելով՝ արդեն վաղուց ծանծրացրած կլիներ ընկերոջը, հատկապես՝ հաշվի առնելով նաև առաջացող տարիքը: Այդպես Չենրի Քարփենթերը հաջողում էր հետաձգել անխուսափելի ինքնասպանությունը, եթե չասենք մի քանի ամսով, զոհն՝ մի քանի շաբաթով:

Ամսական եկամուտը, որով ապրելն անհմաստ էր համարում, հարյուր յոթանասուն դոլարով ավելի էր, քան ձկնորս էլբերտ Թրեսի ամսական աշխատավարձը, որով նա իր ընտանիքն էր կերակրում, քանի դեռ չէր սպանվել ընդամենը երեք օր առաջ:

Փայտաշեն նավամատույցում կայանած մյուս զբոսանավերին այլ մարդիկ էին՝ բոլորովին այլ հոգսերով: Ամենամեծ նավերից մեկի՝ սև, գեղեցիկ եռակայն առագաստանավի վրա, վաթսունամյա հացահատիկային միջնորդը Չարկային պետական վարչության ստուգումներից հետո գրասենյակից ստացած նամակի պատճառով անհանգիստ շուռումուռ էր գալիս անկողնում: Եթե այդ նամակը չլիներ, ըստ իր սովորության, գիշերվա այս ժամին վաղուց հույզերը խեղդած կլիներ շտուկանդական հայբուլի\* գավաթի ընդերքում և թքած կունենար ամեն ինչի վրա՝ առափնյա ծովահենների նման, որոնց, ի դեպ, շատ նման էր թե՛ բնավորությամբ, թե՛ վարք ու բարքով: Սակայն բժիշկն արգելել էր խմել մեկ, ավելի ճիշտ՝ երեք ամիս, ավելի ստույգ, նրան հասկացրել էին, որ եթե առնվազն երեք ամսով չհրաժարվեր ալկոհոլից, մի տարի էլ չէր ապրի, այնպես որ վճռել էր զոհն մեկ ամիս ձեռնպահ մնալ, բացի դրանից, տազնապած էր մեկնելու նախօրյակին Վարչության արած այն հարցումից, թե ուր էր

\* Սողայաջրով ու սառույցով վիսկի, որ մատուցվում է երկարավուն բաժակներով:

ուղևորվում և արդյո՞ք լքելու էր Միացյալ Նահանգների ջրային տարածքը:

Իսկ այժմ գիշերագգեստով պառկել էր ընդարձակ մահճակալին, գլխի տակ երկու բարձ էր խցկել, վառել էր սեղանի լամպը, սակայն չէր կարողանում կենտրոնանալ ու չէր հասկանում, թե ինչ էր գրված Գալապագոս կատարված ճամփորդության մասին պատմող գրքում: Երբեք որևէ կնոջ այստեղ չէր բերել: Մնում էր նրանց նավասենյակներում, հետո գալիս էր՝ քնում իր մահճակալին: Սա մասնավոր նավասենյակ էր, նույնքան անձնական, որքան՝ աշխատասենյակը: Կանայք այս սենյակում անելիք չունեին: Երբ նրան կին էր պետք, գնում էր նրա սենյակը, և գործն ավարտելուն պես, վերջանում էր ամեն ինչ, իսկ այժմ այդ ամենն անդառնալիորեն կորած էր, գիտակցությունը շարունակում էր անաղարտ սառնություն պահպանել, ինչը նախկինում ընդամենը վերջնական արդյունք էր: Ու հիմա պառկել էր՝ միտքն ազատված հաճելի մշուշից ու արհեստածին քաջությունից, որ տարիներ ի վեր սփոփել էր ուղեղն ու ջերմացրել հոգին, և մտածում էր, թե Վարչությունը հետո ինչ էր նախաձեռնելու, ինչ էին հասցրել հայտնաբերել և ինչ դավեր էին մտնում, ինչն էր ընդունելի համարվելու, ինչն՝ անօրինական, և չէր սարսափում, ոչ, ընդամենը ատում էր նրանց ու այն իշխանությունը, որ բանեցնելու էին լկտիաբար, որպեսզի ճաք տար իր փոքրիկ, կարծր, հանդուգն ու անխորտակելի անպատկառությունը՝ իր անձի միակ մնայուն ու արժեքավոր նվաճումը, որ միանգամից փշուր-փշուր էր լինելու, եթե ինքը հանկարծ ահի մատնվեր:

Վերացական հասկացություններով չէր առաջնորդվում, վերլուծում էր բոլոր գործարքները, հաշվեկշիռները, մուրհակներն ու ապրանքագրերը: Ուղեղում պտտվում էին բաժնետոմսեր, հակեր, հագարավոր բուշելներ, առք ու վաճառքի պայմանագրեր, փոխառական ընկերություններ, տրեստներ ու մասնաճյուղեր, և մտովի մի անգամ էլ տնտղելով այդ ամենը համոզվում էր, որ ահագին բան կարող էին գտնել, այնքան, որ կբավարարեր մի քանի տարով իրեն զրկելու հանգստությունից: Եթե հետները լեզու չգտներ, վատ էր լինելու: Տարիներ առաջ իսկի չէր անհանգստանա, սակայն պայքարելու ունակությունը մարել էր նրա մեջ՝ այն մյուս ունակության հետ միասին, և հիմա մեն-մենակ պառկել էր մեծ, լայն, հին մահճակալին և չէր կարողանում ոչ ընթերցել, ոչ էլ՝ քնել:

Կինը տասը տարի առաջ էր բաժանվել՝ ամբողջ քսան տարի առերևույթ պատշաճություն պահպանելուց հետո, ինքը կնոջ բացակայությունը երբեք չէր զգացել, երբևէ նրան չէր սիրել: Գործը նրա



փողով էր սկսել, իսկ նա երկու արու զավակ էր լույս աշխարհի բերել, որոնք, իրենց մոր նման, խելթով չէին փայլում: Քանի դեռ իր կուտակածը կրկնակի չէր գերազանցել նախնական կապիտալը, կնոջը լավ էր վերաբերվում, հետո արդեն հանդգնել էր այլևս նրան չնկատել: Երբ ունեցվածքը հատել էր այդ սահմանագիծը, սկսել էին այլևս չանհանգստացնել նաև կնոջ գլխացավը, տրտուներն ու պագայի պլանները: Պարզապես, բանի տեղ չէր դնում:

Շահամոլության անկրկնելի հատկությունով էր օժտված, նաև սեռական արտասովոր ուժի տեր էր, որը նրան հրաշալի խաղացողի ինքնավստահություն էր ներշնչել, տիրապետում էր առողջ դատողության, մաթեմատիկական անթերի մտածողության, հաստատուն, սակայն զուսպ լավատեսության, որ չափից ավելի զգայուն էր մոտալուտ աղետների նկատմամբ, անսնդիկ ծանրաչափի պես, որ ընդհանրապես թրթռում է մթնոլորտային ճնշման ամեն փոփոխությունից, վերջապես, ժամանակի անսխալ զգացումը, որ թույլ չէր տալիս ոչ շտապել, ոչ էլ՝ ուշանալ, ապա՝ բարոյականության իսպառ բացակայությունը, ապաշավանքի ու կարեկցանքի անկարողությունը, համակրանք առաջացնելու տարօրինակ հմտությունը՝ առանց դիմացիմին փոխհատուցելու սիրով ու վստահությամբ, միաժամանակ անկեղծորեն ու եռանդազին հավատացնելով, թե իսկական բարեկամ է, բարեկամ՝ իբր այնքան մտահոգ ընկերների հաջողություններով, որ նրանք ինքնաբերաբար դառնում էին իր գործակիցը: այս ամենի արդյունքում նա դարձել էր այն, ինչ էր հիմա: Իսկ հիմա ծերունի էր՝ մետաքսյա զուլավոր գիշերազգեստով, որ ծածկում էր փոս ընկած կուրծքը, ճարպակալած փորիկը, թառամած ոտքերն ու երբեմնի պարծանքը, որ այժմ ճլորել, անպիտան էր դարձել, և նա պառկել էր մահճակալին և չէր կարողանում քնել, քանի որ կյանքում առաջին անգամ զղջում էր:

Չղջում էր, որ խարդախել էր հինգ տարի առաջ: Այն օրերին կարող էր առանց ավելորդ ճարպկության վճարել հարկերը, և հիմա անհանգստանալու կարիք չէր լինի: Պառկած՝ այդ մասին էր մտածում, հետո վերջապես քնեց, սակայն զղջումն արդեն սողանք էր գտել, անվերջ ներս էր խուժում, իսկ ինքը չէր գիտակցում, որ քնած էր, քանզի ուղեղը շարունակում էր գործել՝ կարծես դեռ արթուն էր: Այնպես որ, հանգիստ չէր ունենալու, իսկ այդ տարիքում նման մի քանի գիշերը բավական էր, որ հարցերն արագորեն լուծվեին:

Սիրում էր կրկնել, թե տագնապելը հատուկ է պարզամիտներին, և հաջողել էր տագնապները հեռու վանել, քանի դեռ ինքն անձանոթ էր անքնությանը: Հիմա էլ քնած ժամանակ կարողանում էր խուսափել, սակայն բավական էր արթնանար, տագնապները գրոհում էին

չորս կողմից, և քանի որ ծեր էր ու տկար, անհանգստությունը հեշտությամբ էր պարուրում նրան:

Երբևէ չէր մտահոգվել, թե ինչ վիճակի էր հասցրել ուրիշներին, իր պատճառով նրանք ինչ օրն էին ընկել, ինչպես էին կյանքն ավարտել, ով էր հրաժեշտ տվել ազնվականական թաղամասի առանձնատանն ու հանգրվանել արվարձանային էժանագին հանրակացարանում, ում դուստրերը, հազիվ կյանք մտած, արդեն իսկ ատամնաբույժի օգնական էին դարձել, եթե, իհարկե, հաջողվել էր, ով էր բորսայական հերթական էին դարձել, եթե, իհարկե, հաջողվել էր, ով էր բորսայական հերթական սպեկուլյացիայից հետո վաթսուներեք տարեկանում գիշերային պահակի վերածվել, ով էր հրաշալի մի առավոտ՝ նախաճաշից առաջ ինքնասպան եղել, և զավակներից որն էր հայտնաբերել իոր դիակը, ու հետո այդ տանն ինչ էր կատարվել, ով էր ամեն օր աշխատանքի գնում քաղաքային տրանսպորտով, եթե, իհարկե, աշխատանք ուներ, և ով էր, որ սկզբում փորձել էր արժեթղթեր վաճառել, հետո՝ ավտոմեքենաներ, տնտեսական ապրանքներ ու այլ մանրուք (առևտրականների մուտքն արգելված է, գնացե՛ք այստեղից, և դուռը շրխկում է քթիդ առաջ), և, վերջապես, ով էր, որ աննշան տարբերվելով հորից, որը ցած էր նետվել քառասուներկուերորդ հարկից՝ արծվի պես խոյասլաց, առանց քնահարելու, մի օր կանգնել էր Օրորա-էլջին գնացքի դիմաց, երրորդ ռելսի վրա՝ վերարկուի գրպանում ամուր թաքցրած չվաճառվող հյուրաբանիչները, որ նաև ձվահարիչ էին: *Թույլ տվեք ընդամենը ցուցադրել, տիկին: Սիա, այսպես ամրացնում եք, ձգում այս փոքրիկ պտուտակը: Հիմա նայեք: Ոչ, ինձ հարկավոր չէ: Դուք միայն փորձեք: Չեմ ուզում: Դեռացե՛ք:*

Փողոց է դուրս եկել, և մերկ ծառերի շարանը, ամայի բակերն ու միանման տները, որոնց բնակիչները ոչինչ չէին ցանկանում գնել, նրան Օրորա-էլջին երկաթգծի մոտ են բերել:

Մեկն ընտրում էր դանդաղ, ազատ անկումը գրասենյակի կամ բնակարանի պատուհանից, մյուսը սուսուփուս կողպում էր երկմեքենա ավտոտնակի դուռն ու գործի գցում ավտոմեքենայի շարժիչը, մի քանիսը դիմում էին հայրենական հին ավանդույթին՝ «Կոլտին» կամ «Սմիթ-Վեստոնին»՝ սրամիտ սարքեր, որ հնարավորություն են տալիս վերջ դնել անքնությանը, մոռանալ զղջումը, բուժել քաղցկեղը, խուսափել սնանկացումից և մատի թեթև հպումով ելք գտնել անելանելի իրավիճակներից, ամերիկյան արդյունաբերության հրաշալի արտադրանք՝ դյուրակիր, վստահելի ու այնքան հարմար, որ հեշտությամբ ավարտին են հասցնում ամերիկյան երազը, երբ այն արդեն մղձավանջի է վերածվում, իսկ միակ անհարմարությունն այն խառնափնթրությունն է, որ հարազատները ստիպված են լինելու հետո վերացնել:

Նրանք, ում ինքը սնանկացրել էր, այս ելքերից մեկն անկասկած գտնում էին, սակայն ինքը բոլորովին չէր տազնապում: Դե ինչ, պարտվողներ անպայման պետք է լինեն, իսկ տազնապելը հատուկ է պարզամիտներին:

Ինքը ոչ նրանց համար է տազնապելու, ոչ էլ՝ բարեհաջող սպեկուլյացիայի կողմնակի արդյունքի: Դու հաղթում ես, ուրեմն մեկ ուրիշը պետք է տանուլ տա, միայն պարզամիտներն են տազնապում:

Բավական էր ընդամենը մտածել՝ որքան լավ կլինեք, որ հինգ տարի առաջ խարդախած չլինեք, իսկ այդ տարիքում նման մտատանջությունն անգամ հերիք էր, որ անդառնալին հետ բերելու ցանկությունը մի ակնթարթում սողանցք բացեր տազնապի համար: Տազնապելը պարզամիտների գբաղմունքն է: Բայց տազնապը կարելի է խեղդել շոտլանդականով ու սոդայաջրով: Գրողի ծոցը կորչեն բժիշկն էլ, նրա խորհուրդն էլ: Չանգեց ուղեկցորդին, սա եկավ՝ քնատ, գավաթը ձեռքին, ինքն արագ կոնծեց. շահամուլն այլևս պարզամիտ չէր, ոչ մեկի համար, բացի՝ մահից:

Իսկ հարևան զբոսանավի վրա մրափել է համակրելի, բարեկանոն ու ծանծրալի մի ընտանիք: Դոր խիղճը մաքուր է, կողքի է շրջվել, խորը քուն է մտել, գլխավերևում՝ հսկա շրջանակի մեջ շքեղ առաջաստանավը մարտնչում է փոթորիկի դեմ, սեղանի լամպը վառվում է, գիրքն ընկել է մահճակալի կողքը: Խաղաղ քնի մեջ մայրն իր պարտեզն է տեսնում: Դիսուսին մոտ է, գեղեցիկ, առողջ, լավ պահպանված, դեռևս հրապուրիչ է, երբ քնած է: Դուստրը երագում տեսնում է փեսացուին, որ հաջորդ օրն է ժամանելու ինքնաթիռով, քնի մեջ ժպտում է ու շուռումուռ է գալիս, հետո ծնկները հավաքում, սեղմում է կզակին և կծկվում է կատվի պես. խարտյաշ խոպոպիկներ ու հարթ, նուրբ մաշկ, հիշեցնում է մորը՝ դեռատի հասակում:

Երջանիկ ընտանիք, սիրում են մեկմեկու: Դայրը չափից ավելի սուր քաղաքացիական արժանապատվությամբ է օժտված, կարևոր ծառայություններ է մատուցել, ժամանակին դեմ է եղել խմիչքի արգելմանը, կեղծ բարեպաշտ չէ, մեծահոգի է, խելացի, բարի, միշտ կարողանում է իրեն տիրապետել: Նավի անձնակազմն էլ կարգին վարձատրվում է, լավ սնվում է, ապրում անհոգ: Եվ ըստ արժանվույն գնահատում է տիրոջը, հարգում նրա տիկնոջն ու դստերը: Փեսացուն «Ոսկոր և գանգ»\* եղբայրության հուսադրող, ընդհանուրի հարգանքը վայելող անդամներից է և առայժմ ավելի շատ ուրիշ-

\* Ուսանողական միություն, որին կարող են անդամակցել միայն ազնվական ընտանիքների զավակները:

ների մասին է մտահոգված, քան՝ սեփական անձի, ցանկացած աղջկա համար չափից ավելի հարմար թեկնածու է, բացի՝ Ֆրենսիսից: Դնարավոր է, Ֆրենսիսի համար էլ մի փոքր ավելի լավն է, սակայն տարիներ են պետք, որ Ֆրենսիսը գլխի ընկնի, իսկ եթե ամեն ինչ բարեհաջող լինի, այդպես էլ չի իմանա: Այն տղաները, որ «Գանգ»-ում մշտապես իրենց բարձրության վրա են, հազվադեպ են նույն բարձրության վրա մնում նաև անկողնում, սակայն Ֆրենսիսի նման չքնաղ աղջնակի համար մտադրությունը պակաս կարևոր նշանակություն չունի, քան դրա իրականացումը:

Ինչևէ, հանգիստ քնած է այս ընտանիքը. սակայն որտեղի՞ց այն փողը, որ ծախսում են անչափ օգտավետ, մեծագույն հաճույքով և դեռ երջանիկ են զգում: Մարդկանց մեծ մասի նախընտրած սննդամթերքի միլիոնավոր շշերի վաճառքից. մեկ կվարտանոց շիշ պատրաստելը երեք ցեներ է մատուցում, բայց վաճառում են մեծ շիշը մեկ դոլարով, միջինը՝ հիսուն ցենտով, փոքրը՝ քսանիինգով: Իհարկե, մեծը գնելն ավելի ձեռնտու է, քանի որ շաբաթական տասը դոլար վաստակողը նույն գինն է վճարում, ինչ, ասենք, միլիոնատերը, իսկ մթերքի որակն իսկապես բարձր է: Այն, ինչ խոստանում է պիտակը, մի բան էլ՝ ավելի: Աշխարհի բոլոր ծեգերից երախտապարտ գնորդներն անվերջ տեղեկացնում են, թե շշերի համար ինչ նոր կիրառություն են գտել, իսկ հին, մշտական գնորդները շարունակում են հավատարիմ մնալ, ինչպես, ասենք, այս փեսացուն՝ Դարոլդ Թոմքինսը, «Ոսկոր և գանգ»-ին, կամ Սթենլի Բոլդուինը\* Դերոուին\*\*: Ու երբ այսպես են հարստանում, ինքնասպանություններ չեն լինում, բոլորը հանգիստ քնում են «Ալգիրա-3» զբոսանավի վրա, որի կապիտանն է Յոն Յակոբսոնը, անձնակազմը բաղկացած է տասնչորս հոգուց, իսկ միակ ուղևորը նավատերն է՝ իր ընտանիքով:

Չորրորդ նավամատույցում կայանել է 34 ոտնաչափ երկարությամբ երկկայան առաջաստանավը, ուղևորներն էստոնացիներ են՝ երկուսը այն երեք հարյուր քսանչորսից, որ 28-ից 36 ոտնաչափ երկարությամբ նավերով լողում են աշխարհի բոլոր ծովերում և հաղորդագրություններ են ուղարկում էստոնական լրագրերին: Նրանց հողվածները էստոնիայում մեծ ժողովրդականություն են վայելում, իսկ հեղինակներն ամեն սյունակի համար մեկից մինչև մեկ ու երեսուն դոլար են ստանում: Դողվածները լրագրերի այն մասում են տեղադրվում, որն Ամերիկայում հատկացնում են բենյաբուլին կամ

\* Անգլիական քաղաքական գործիչ (1867-1947), պրեմիեր-մինիստր:

\*\* Անգլիայում հայտնի փակ տիպի մասնավոր միջնակարգ դպրոց:

Ֆուտբոլային նորություններին, և հրապարակվում են «Մեր անվե-  
հեր ճանապարհորդների առասպելները» խորագրի ներքո: Հարա-  
վային ջրերի ոչ մի նավահանգիստ չի կարող յուր գնալ առանց  
առնվազն երկու արևախամո, աղատոգոր, ճերմակահեր էստոնա-  
ցու, որոնք համբերատար սպասում են վերջին հաղորդագրության  
հոնորարին: Հենց ստացան, հաջորդ նավահանգիստն են շտապե-  
լու, որպեսզի մի նոր առասպել սղագրեն: Սրանք էլ են երջանիկ:  
Համարյա «Ալգիրա-3»-ի ուղևորների նման: Անվեհեր ճանապար-  
հորդ լինելը մեծ սխրանք է:

«Իրիդիա-4»-ի վրա քնած են գրոսանավի տերը՝ մասնագիտու-  
թյամբ մեծահարուստ աներոջ փեսան, և նրա սիրուհի Դորոթին՝ տի-  
կինը հոլիվուդյան բարձր վարձատրվող բեմադրիչ Ջոն Հոլլիսի, ով  
հենց այս պահին լարել է ուժերը՝ ուղեղին ստիպելով լարողից եր-  
կար գոյատևել, որպեսզի կարողանա, ի վերջո, հոգին փրկելու հա-  
մար հայտարարել, թե կոմունիստ է, քանի որ հույս չի կապում մնա-  
ցած օրգանների հետ. այնքան փտած են, որ փրկելն այլևս անհնար  
է: Ուրեմն, փեսա կոչված հաղթամարմինն աֆիշային գեղեցկու-  
թյամբ խմփացնում է մեջքի վրա, իսկ Դորոթի Հոլլիսի՝ կինոբեմադ-  
րիչի տիկնոջ քունը չի տանում, և խալաթն ուսին առնելով՝ դուրս է  
եկել ու հայացքը հառել է նավահանգիստը բոլորած մութ ջրերին,  
որ ակոսվում են՝ դիպչելով ալեհատին: Տախտակամածի վրա  
ցուրտ է, քամին ծածանում-խառնում է տիկնոջ մազերը, և նա ան-  
վերջ հարթում, հետ է սանրում արևառ ճակատից, ապա ձգվում-  
փաթաթվում է խալաթի մեջ, քանի որ կրծքապտուկները ցրտից ար-  
դեն կարծրանում են, հետո հանկարծ նկատում է ծովից դեպի ալե-  
հատը շարժվող նավակի լույսերը: Տեսնում է, թե ինչպես են լույսերն  
արագ ու անշեղորեն առաջանում, նավահանգստի մուտքին չիա-  
սած միանում է նաև լուսարծակը, և հզոր լուսախուրձը, հընթացս  
կուրացնելով նաև իրեն, սահում-անցնում է դեպի առափնյա պահ-  
պանության նավահանգիստը՝ իր ճառագայթների մեջ առնելով ա-  
փին սպասողների խումբն ու շտապ օգնության նոր, սևափայլ ավ-  
տոմեքենան, որ թաղման բյուրոյինն է և նաև որպես դիակառք է ծա-  
ռայում:

Ամեն դեպքում, ստիպված են լինելու լուսափայլ խմել, մտածում է  
Դորոթին: Ի վերջո, պետք է քնեն: Խեղճ էղդին խմել-լու է դարձել:  
Ինձ շատ է սիրում, ինքն էլ դուրեկան է, համ էլ շատ լավն է, բայց  
միշտ այնքան է լակում, որ անմիջապես քնում է: Դե, եթե հետն ա-  
մուսնացած լինեի, միևնույն է, էլի ինչ-որ մեկի հետ կապվելու էր: Ա-  
մեն դեպքում, լավն է: Խեղճ տղա, անհույս հարբած է: Մենակ թե՛ ա-

ռավոտյան չվատանա: Գնամ, սանրվեմ ու փորձեմ ինչ գնով էլ լինի՝  
քնել: Թե չէ՝ տեսքս սարսափելի է: Հենց նրա համար պետք է գեղե-  
ցիկ երևամ: Ի՞նչ քաղցրիկն է: Ափսոս, աղախնին հետս չվերցրի: Չէր  
կարելի: Նույնիսկ Բեյթսին չէր կարելի բերել: Հետաքրքիր է, խեղճ  
Ջոնն ինչպես է: Նա էլ լավն է: Հուսով եմ, հիմա իրեն ավելի լավ է  
զգում: Անիծյալ լարդ: Մտը չեմ, ո՞վ է խնամելու: Չէ, գոնե մի քիչ  
պետք է քնեմ, այլապես վաղն ինձ տեսնողը կվախենա: Էղդին սիրե-  
լի է: Ջոնը՝ նույնպես, նրա խեղճ լարդն էլ: Ա՛խ, խեղճ լարդ: Էղդին  
քաղցրիկ է: Ափսոս, հարբած է: Այնքան խոշորամարմին է, ուրախ,  
ուժեղ և՛ ընդհանրապես: Երևի վաղն այսպես չի հարբի:

Իջավ, քայլեց դեպի նավասենյակն ու, տեղավորվելով հայելու  
դիմաց, սկսեց մազերը հարդարել խոզանակով. ամեն երեկո նույն  
բանը՝ հարյուրավոր սանրահարվածներ: Եվ մինչ երկարուկ, խիտ  
խոզանակով սանրում էր գեղեցիկ մազերը՝ ժպտում էր հայելու մեջ:  
Էղդին սիրելի է: Այո, սիրելի է: Ափսոս, որ այսքան խմեց: Տղամարդ-  
կանց մոտ միշտ ինչ-որ բան այն չէ: Վերցնենք, թեկուզ, Ջոնի լար-  
դը: Դե, իհարկե, չենք կարող վերցնել: Փառք Աստծո, չենք կարող:  
Թե չէ՝ սարսափելի կլիներ: Չնայած, տղամարդու մեջ ոչ մի այլան-  
դակ բան չկա: Ծիծաղելի է, որ բոլորը դա չեն հասկանում: Չնայած,  
ասենք, լարդը: Կամ՝ երիկամը: Երիկամներ՝ en brochette\*: Քանի՞  
երիկամ ունենք: Ամեն ինչից, կարծեմ, երկուսն է, բացի ստամոքսից  
ու սրտից: Հա, մեկ էլ՝ ուղեղից: Այսպես: Արդեն հարյուր սանրահար-  
ված: Սիրում եմ սանրվել: Երևի միակ բանն է, որ անում ես, քանի որ  
անհրաժեշտ է, համ էլ՝ հաճելի: Իհարկե, երբ մենակ ես: Ա՛խ, Էղդին  
շատ քաղցր է: Գուցե մո՞տը գնամ: Չէ, շատ է հարբած: Խեղճ տղա:  
Լավ, հիմա լուսնիսալ կխմեմ:

Իրեն զննեց հայելու մեջ: Ջարմանալի գեղեցիկ դեմք, նրբագեղ,  
վայելչակազմ մարմին: Դեռ՝ ոչինչ, մտածեց: Մի տեղս՝ լավ, մյուսը՝  
վատ, բայց ընդհանրապես՝ ոչինչ: Այնուամենայնիվ, քնել պետք է:  
Սիրում եմ քնել: Այնպես կուզեի գոնե մի անգամ խորը, ամենախ-  
կական, կազդուրիչ քնով քնել, այնպես, ինչպես երեխա ժամանակ:  
Վատը սա է՝ մեծանում ես, ամուսնանում, երեխաներ բերում, հետո  
սկսում ես շատ խմել ու այնպիսի բաներ ես անում, որ չպետք է ա-  
նեիր: Հնարավոր է, եթե կարողանաս լավ քնել, այս ամենը բոլորո-  
վին էլ վնասակար չլինի: Մենակ թե՛ չափից ավելի խմել պետք չէ:  
Խեղճ Ջոնն ու նրա լարդը, հիմա էլ՝ Էղդին: Ամեն դեպքում, Էղդին  
սքանչելի է: Ինչ էլ լինի, գրավիչ է: Ավելի լավ է՝ լուսնիսալ խմեմ:

\* Ֆր. - երիկամի խորոված:

Դեմքը ծամածռեց հայելու մեջ:

- Ստիպված ես լյուսինալ ընդունել, - շշմջաց: Հաբը կուլ տվեց, հետո ջուր խմեց բաժակից, որ թերմոս-ջրամանի հետ դրված էր մահճակալի կողքի պահարանիկին:

Ներվայնացնում է, մտածեց: Բայց, դե, քնել պետք է: Հետաքրքիր է, եղդին ինչ կաներ, եթե ամուսիններ լինեինք: Երևի կողքից ավելի ջահել մեկին կգտներ: Հավանաբար, տղամարդիկ այդպես են ստեղծված, իրենք էլ դեմն առնել չեն կարող՝ իսկը մեր նման: Ինձ ուղղակի պետք է, որ շատ, շատ լինի, ախր, դրանից լավ եմ զգում, և կապ չունի՝ ամուսինդ է, ուրիշը, թե՛ լրիվ անծանոթ մեկը: Կարևորը, որ լինի, և անպայման կսիրես նրան, ով քեզ հաճույք է պատճառում: Նույնիսկ, եթե մշտապես նույն արուն է: Իսկ նրանց մոտ այլ է: Նրանք անվերջ նորն են փնտրում՝ ավելի ջահել, անմատչելի, կամ էլ՝ ինչ-որ մեկին հիշեցնող: Եթե թխահեր ես, ուրեմն խարտյաշին են փնտրում: Խարտյաշ ես, սիրահարվում են շիկակարմիրին: Իսկ եթե շիկակարմիր ես, դարձյալ ինչ-որ ուրիշ բանի են ձգտում: Օրինակ՝ հրեուհու, և երբ թվում է, թե մտքովդ այլևս նոր բան չի անցնի, չինացի են գտնում, կամ՝ Աստված գիտի՝ էլի ում: Ես որ՝ հաստատ չգիտեմ: Հնարավոր է, պարզապես հոգնում են: Ինչ մեղադրես, նրանց բնույթն է, մեղավոր եմ, որ Ջոնն այնքան է խմել, որ այլևս բանի պետք չէ: Առաջ կարգին տղամարդ էր: Սքանչելի էր: Էր: Իսկապես, տեղը-տեղին: Էդդին էլ է սքանչելի: Բայց հիմա հարթած է: Երևի, ի վերջո, անառակ դառնամ: Կարող է, արդեն՝ եմ: Հավանաբար, երբ անառականում ես, ինքդ չես էլ զգում: Քանի դեռ լավագույն ընկերուհիներդ չեն ասել: Եվ պարոն Ուինչելի\* ցանկում դժվար թե սեփական անունդ աչքովդ ընկնի: Չնայած, նրա համար հետաքրքիր նյութ կլինես: «Անառակաբարո կյանք: Երկար ժամանակ օվկիանոսի ափին շնահաճո ժամանակ անցկացնելուց հետո տիկին Ջոն Հոլլիսն, ի վերջո, բարեհաճեց հարազատ քաղաքը վերադառնալ»: Ավելի հետաքրքիր է, քան իմանալ, թե ով ինչ է ծնել: Չնայած, ավելի գոեհիկ է: Սակայն կանայք, իսկապես, դժբախտ են: Որքան լավ ես վերաբերվում տղամարդուն, շատ ես սեր խոստովանում, այնքան շուտ է քեզանից ծանծրանում: Կարգին տղամարդուն տասնյակ կին է պետք, բայց հոգնեցուցիչ է, երբ ինքդ ես փորձում միանգամից տասնյակ կին լինել, միևնույն է, հայտնվելու է մեկ ուրիշը, որ առանց ավելորդ խորամանկության խլելու է նրան, երբ արդեն քեզա-

նից ծանծրացած կլինի: Ի վերջո, բոլորս էլ անառականում ենք, բայց ո՞վ է մեղավոր: Անառակների կյանքն ուրախ է, սակայն կարգին անառակ դառնալու համար պետք է կատարյալ հիմար լինել: Հելեն Բրեդլիի նման: Հիմար է և ահավոր եսասեր: Հիմա ես էլ, երևի, այդպիսին եմ:

Ասում են, ինքդ երբեք չես նկատում, միայն թվում է, թե այդպիսին չես: Հավանաբար, կան տղամարդիկ, որ երբեք չեն ծանծրանում ո՛չ կնոջից, ո՛չ էլ դրանից: Պետք է, որ լինեն: Բայց ո՞ւր են: Մեր իմացածները, երևի, սխալ դաստիարակություն են ստացել: Լավ, հիմա դրա ժամանակը չէ: Չարժե հիշել: Ոչ էլ՝ պարահանդես ու ավտոգրոսանք: Այս լյուսինալն էլ գոնե շուտ ազդեր: Չզվելի էդդի: Ամեն դեպքում, այդքան խմելն անխղճություն է: Պարզապես, ազնիվ չէ: Լավ, ասենք թե դրանց բնույթն այդ է, խմե՛լն ինչ կապ ունի: Ենթադրենք, իսկական անառակի մեկն եմ, բայց եթե ամբողջ գիշեր պառկեմ ու չքնեմ՝ կխելագարվեմ, եթե շարունակեմ այս անիծյալ հաբերը կուլ տալ, վաղն ամբողջ օրը սարսափելի վատ կզգամ, համ էլ միշտ չէ, որ օգնում է, և միևնույն է, վաղը չարանալու եմ, նյարդայնանալու և ահավոր վիճակում եմ լինելու: Լավ, ուրեմն պետք է անեմ: Չեմ սիրում, բայց ի՞նչ արած: Ի՞նչ անեմ, պիտի շարունակեմ, ինչ-որ ձևով, մի կերպ, օ՛հ, նա սիրելի է, ոչ: Ես սիրելի եմ, այո, դու լավն ես, շատ լավը, այնքան լավն ես, չէի ուզում, բայց ի՞նչ անեի, նա քաղցր է, ոչ, նույնիսկ այստեղ էլ չէ, ես եմ այստեղ, ես միշտ այստեղ եմ, միակն եմ, որ չի կարող երբեք լքել, ոչ, երբեք: Քաղցրս: Սիրելիս: Այո՛: Քաղցր, քաղցր, քաղցր: Այո, սիրելիս: Դու ես եմ: Այդպես է: Եվ այդպես էլ պետք է լինի: Երևի այդպես էլ շարունակվի, հիմա էլ, հետո էլ: Հիմա: Լավ: Մեկ է: Ի՞նչ տարբերություն: Կարևորը, որ վատ չզգամ: Եվ՝ վատ չեմ զգում: Քունս է տանում, երբ զարթնեմ, էլի կանեմ՝ մինչև որ իսկապես արթնանամ:

Վերջապես քնեց՝ մինչև աչք կպցնելը չմոռանալով կողքի շրջվել, որպեսզի քնած ժամանակ դեմքը խորը չթաղվեր բարձի մեջ: Որքան էլ քունը տաներ, երբեք չէր մոռանում, որ դեմքի մաշկի վրա սարսափելի վատ է ազդում, երբ գլուխդ բարձի մեջ խորը թաղած ես քնում:

Ուրիշ երկու գրոսանավ էլ էր կայանված, սակայն դրանց բոլոր ուղևորները քնած էին, երբ պահպանության նավակը քաշեց-բերեց, մութ նավահանգիստը հասցրեց Ֆրեդի Ուոլլեսի նավը՝ «Թագուհի կոնչը», և կառանեց առափնյա պահպանության նավամատույցում:

\* Ուոլթեր Ուինչել, ամերիկացի հանրահայտ լրագրող, մասնագիտացած էր աշխարհիկ լուրերի ու բանբասանքների բնագավառում:



որ փողը մեր նավակը տեղափոխելու, - ասաց նավապետը, - Բայց հետո որոշեցի, որ ավելի լավ է տեղում թողնենք, հատկապես եղանակն էլ բարենպաստ էր:

- Եվ ճիշտ եք արել, - ասաց շերիֆը: - Բայց ո՞ր է կորել մյուսը, էլբերտ Թրեսին՝ ձկնորսը:

- Չգիտեմ: Այստեղ ամեն ինչ այսպես էր, միայն այն երկուսին ենք տեղաշարժել, - ասաց նավապետը: - Բոլորը գնդակներով ծակծակված են, բացի այն մեկից, որ դեկանիվի տակ է: Արան գլխից են խփել, թիկունքից: Գնդակը ճակատից է դուրս թռել: Ահա, տեսեք:

- Այդ նա է, որ տեսքից, կարծես, երեխա լիներ, - ասաց շերիֆը:

- Հիմա արդեն դժվար է գուշակել, թե ինչ տեսք է ունեցել, - ասաց նավապետը:

- Այն բարձրահասակը, որի կողքին ինքնաձիգն է, փաստաբան Ռոբերտ Սիմոնսին սպանողն է, - ասաց շերիֆը: - Ձեր կարծիքով, նավի վրա ի՞նչ է կատարվել: Ինչպե՞ս է պատահել, որ բոլորն էլ սպանվել են:

- Հավանաբար, իրար մեջ են կռվել, - ասաց նավապետը: - Երևի չեն կարողացել փողը բաժանել:

- Լավ կլիներ, մի բանով ծածկեիք, - ասաց շերիֆը: - Իսկ պայուսակներն ինքս կտանեմ:

Դեռ չէին հասցրել իջնել նավից, նավամատույցում մի կին հայտնվեց, որ վազում էր առափնյա պահպանության նավակի կողքով, նրա հետևից էլ՝ ամբոխը: Վտիտ էր, միջին տարիքի, գլխաբաց, սանրվածքը քանդվել, հարթ մազերը դուրս էին պրծել, փաթաթվել էին պարանոցին, չնայած մի ծայրով դեռ ամուր կառչած էին հերակալից: Նավակի վրայի դիակները տեսնելով՝ նա վժժաց զիլ, ականջ ծակող ծայրով: Կանգնել էր նավամատույցի եզրին ու գլուխը հետ գցած՝ ծվվում էր, երկու կին թևերն էին ընկել: Հետևից ներխուժած ամբոխը խոնավել էր շուրջբոլորը, և իրար հրմշտելով, ամեն մեկը փորձում էր նավակի ներսը տեսնել:

- Սատանան տանի, - ասաց շերիֆը: - Այս ո՞ր հիմարն է բացել դարպասը:

Մի բան տվեք, դիակները ծածկենք, վերմակ, սավան, ինչ պատահի, սրանց էլ պետք է դուրս քշել այստեղից:

Կինը դադարեցրեց ծորտոցը, նավակի մեջ նայեց, հետո գլուխը հետ գցեց ու նորից սկսեց ճչալ:

- Ո՞ր են տարել, - ասաց կողքը կանգնած կանանցից մեկը, - էլբերտին ո՞ր եք տարել:

Շղթաացող կինը դադար առավ ու մի անգամ էլ նավակի մեջ նայեց:

- Այստեղ չէ, - ասաց: - Է՛յ, Ռոջեր Ջոնսոն, - ծայնեց շերիֆին, - էլբերտն ո՞ր է: Ո՞ր է էլբերտը:

- Նավի վրա չէր, տիկին Թրեսի, - ասաց շերիֆը: Կինը նորից գլուխը հետ գցեց ու սկսեց ճչալ, վտիտ պարանոցի երակներն ուռեցին, ձեռքերն ամուր սեղմել-բռունցքել էր, գլուխը ցնցվում էր:

Ամբոխը ծփում էր, հրմշտվում, հետևի կանգնածներն արմունկներով աջ ու ձախ էին զարկվում, որ ճանապարհի հարթեին ու մոտենային նավամատույցի եզրին:

- Ճանապարհ: Թողեք մյուսներն էլ նայեն:

- Հիմա կծածկե՞ն:

Նաև՝ իսպաներեն՝

- Թույլ տվեք՝ անցնեն: Թույլ տվեք՝ նայեն: Hay cuatro muertos. Todos son muertos\*: Թույլ տվեք՝ նայեն:

Եվ կրկին կնոջ բղավոցը.

- Է՛լբերտ: Է՛լբերտ: Աստված իմ, էլբերտն ո՞ր է:

Վերջին շարքում երկու երիտասարդ կուրացի, որ նոր էին վազել-մոտեցել ու չէին կարողանում առաջանալ, մի-երկու քայլ հեռացան, թափ առան և միանգամից մխրճվեցին ամբոխի մեջ: Իրարանցում սկսվեց, հետևի շարքերում կանգնածներն առաջ մղվեցին, հրեցին դիմացիներին, տիկին Թրեսին և երկու ընկերուհիները նույնպես ճոճվեցին, մի ակնթաթ, կարծես, կախվեցին ջրի վրա՝ անհույս ճիգերով փորձելով պահել հավասարակշռությունը, և մինչ կողքիները մի կերպ ոտքի վրա էին մնում, տիկին Թրեսին, շարունակելով աղաղակել, մխրճվեց կանաչավուն ջրի մեջ, իսկ նրա ճիչերը ճողփյունի ու պղպջակների վերածվեցին:

Առափնյա պահպանության նավաստիներից երկուսն արագորեն թռան-սուզվեցին մաքուր, կանաչավուն ջրի մեջ, ուր տիկին Թրեսին թփրտում էր լուսարձակի հզոր լույսերի մեջ: Շերիֆը կախվեց նավակողից ու կարթածողերից մեկը նրան մեկնեց: Ի վերջո, ներքևից դեպի վեր հրող նավաստիների ու վերևից քաշող շերիֆի միացյալ ջանքերով, կնոջը նավախելի վրա բարձրացրին: Ամբոխից ոչ մեկը չփորձեց ձեռք մեկնել, և ոտքից գլուխ ջրի մեջ կորած, կանգնելով նավախելին, նա շրջվեց ու զույգ բռունցքները թափահարելով՝ ճչաց.

-Բոգե՛: Սան ոթինե՛: - Հետո ներքև նայեց ու գոռաց: - Է՛բեչ: Ո՞ւյս է՛բեչը:

- Նավի վրա չէր, տիկին Թրեսի, - ասաց շերիֆը՝ վերցնելով վեր-

\* Իսպ. - Չորս հոգի մեռած են: Բոլորը մեռած են:

մակն ու տիկնոջ ուսերին գցելով: - Հանգստացե՛ք, տիկին Թրեսի: Հավաքեղք ձեզ:

- Աշամնեսյ, - ողբալով ասաց տիկին Թրեսին, - աշամնեսյ եմ կոչ- շյել:

- Առավոտյան կիանենք, - հանգստացրեց նավապետը, - չեն կորչի: Նավաստիները մազլցեցին նավախելը, ջուրը հոսում էր վրանե- րից:

- Գնա՛նք, - ասաց նրանցից մեկը, - մրսեցի:  
- Ինչպե՞ս եք, տիկին Թրեսի, լա՞վ եք գգում, - նրան վերմակի մեջ փաթաթելով՝ հարցրեց շերիֆը:

- Լա՞յ եմ գյում, - պատասխանեց տիկին Թրեսին: - Լա՞յ, - ապա սեղմեց բռունցքներն ու գլուխը հետ գցեց՝ պատրաստվելով ավելի բարձր ճչալ: Տիկին Թրեսիի վիշտը նրա ուժերից վեր էր:

Ամբոխը հարգալից լռությամբ նրան էր հետևում: Տիկին Թրեսիի ճիչերը շատ էին սազում այդ չորս ավազակների չարագուշակ դիակներին, որ փույթով ծածկում էին շերիֆն ու օգնականը՝ շղար- շելով այնպիսի ծոխ մի տեսարան, որի նմանը քաղաքը վերջին ան- գամ տեսել էր տարիներ առաջ, երբ Քանթրի Բողոքում լինել էին մի Isleno\*-ի և չորս կողմից թամաշի եկած ավտոմեքենաների լույսերի մեջ կախել հեռագրասյունից:

Երբ դիակները ծածկեցին, ամբոխը հիասթափվեց, սակայն գի- տակցում էր, որ քաղաքի բնակիչներից միայն իրենց էր բախտ վի- ճակվել ականատես լինել այս ամենին: Տեսել էին, թե ինչպես էր տի- կին Թրեսին ջուրն ընկել, և նախքան դարպասներից ներս կսողոս- կեին՝ իրենց աչքի առաջ էին Հարրի Մորգանին Ծովային հիվանդա- նոց տեղափոխել: Եվ երբ շերիֆը կարգադրեց ազատել նավամա- տույցը, բոլորն էլ հանգիստ ու գոհ հեռացան: Հասկանում էին, որ բախտները բերել էր:

Նույն պահին Հարրի Մորգանի կինը՝ Մերին ու երեք դուստրերը նստած էին Ծովային հիվանդանոցի ընդունարանում: Աղջիկները լալիս էին, Մերին թաշկինակն էր կրծում: Դեռ առավոտից արցունք- ները քարացել էին:

- Հայրիկին որովայնից եմ վիրավորել, - աղջիկներից մեկն ասաց քրոջը:

- Սարսափելի է, - պատասխանեց քույրը:  
- Լռե՛ք, - ասաց ավագը: - Նրա համար եմ աղոթում: Մի՛ խանգա- րեք:

Մերին լուռ էր, շարունակ կծոտում էր թաշկինակն ու ստորին շուրթը:

Քիչ անց դռների հետևից հայտնվեց բժիշկը: Մերին նրան նայեց, վերջինս ճոճեց գլուխը:

- Կարելի՞ է ներս մտնել, - հարցրեց կինը:  
- Առայժմ՝ ոչ, - ասաց բժիշկը: Կինը մոտեցավ:  
- Վե՞րջ, - հարցրեց:

- Վախենամ, որ վերջ, տիկին Մորգան:  
- Կարո՞ղ եմ գոնե տեսնել:  
- Առայժմ՝ ոչ: Վիրահատարանում է:

- Տե՛ր Աստված, - ասաց Մերին, - Տե՛ր Աստված: Աղջիկներին տուն տանեմ ու վերադառնամ:

Հանկարծ ինչ-որ բան փքվեց-փակեց կոկորդը, թուքը կուլ տալ չէր կարողանում:

- Գնացինք, աղջիկներ՛ր, - ասաց: Երեքով լուռ հետևեցին նրան, մոտեցան հնամաշ ավտոմեքենային, մայրը տեղավորվեց վարորդի նստարանին ու գործի գցեց շարժիչը:

- Հայրիկն ինչպե՞ս է, - հարցրեց աղջիկներից մեկը:  
Մերին չպատասխանեց:  
- Մայրի՛կ, հայրիկն ինչպե՞ս է:  
- Հետս մի՛ խոսեք, - ասաց Մերին: - Ոչ մի բան չլսե՛մ:

- Բայց...  
- Լռի՛ր, քաղցրիկս, - ասաց Մերին: - Մի՛ խոսիր և աղոթի՛ր նրա համար:

Աղջիկները նորից սկսեցին լաց լինել:

- Սատանա՛ն տանի, - ասաց Մերին: - Լաց մի՛ եղեք: Ասացի, չէ՞, աղոթե՛ք նրա համար:

- Աղոթում ենք, - ասաց աղջիկներից մեկը: - Ես անընդհատ աղո- թում եմ, դեռ հիվանդանոցից աղոթում եմ:

Երբ շրջվեցին դեպի Ռոքի Բողոքի մաշված, ճերմակ մայթերը, մե- քենայի ցուլարծակների լույսի մեջ տղամարդու կերպարանը գծագրվեց, որ օրորվելով ընդառաջ էր գալիս:

«Խելճուկրակ հարբեցող է, - մտածեց Մերին, - դժբախտ հարբե- ցող»:

Հավասարվեցին ու տեսան, որ դեմքն արյունվիկ էր, և մինչ ցո- լարծակները լուսավորում էին փողոցի հեռավոր անկյունները, նա շարունակում էր ճոճվելով խարխափել մթության մեջ: Ռիչարդ Գոր- դոնն էր, տուն էր վերադառնում:

\* իսպ.՝ կղզիաբնակ:

\*\*\*

- Մերին մեքենան արգելակեց տան դռների դիմաց:  
 - Աղջիկներ՛ր, պառկեք քնելու, - ասաց: - Վերև բարձրացեք ու անկողին մտեք:  
 - Իսկ հայրիկն ինչպե՞ս է, - հարցրեց նրանցից մեկը:  
 - Մի՛ հարցրեք, - ասաց Մերին, - Աստծո սիրուն, հետս մի՛ խոսեք: Շրջեց դեկն ու հիվանդանոց վերադարձավ:

\*\*\*

- Հիվանդանոց հասնելուն պես Մերի Մորգանը մի շնչով արագ բարձրացավ աստիճաններով: Շենի վրա հանդիպեց բժշկին: Հոգած էր, տուն էր շտապում:  
 - Վերջ, տիկին Մորգան, - ասաց նա:  
 - Մահացա՞վ:  
 - Վիրասեղանին:  
 - Կարո՞ղ եմ տեսնել:  
 - Այո, - ասաց բժիշկը: - Խաղաղ հանգավ, տիկին Մորգան: Ցավ չէր զգում:  
 - Տե՛ր Աստված, - ասաց Մերին: Արցունքները հոսեցին այտերն ի վար: - Օ՛, - հառաչեց, - օ՛, օ՛, օ՛:  
 Բժիշկը գրկեց նրա ուսը:  
 - Ինձ չդիպչե՛ք, - ասաց Մերին: Ապա ավելացրեց, - ուզում եմ տեսնել:  
 - Գնա՛նք, - ասաց բժիշկը: Նրան միջանցքով ուղեկցեց մինչև սպիտակ սենյակը, ուր Հարրի Մորգանը պառկած էր անվավոր մահ-ճակալին, ծածկոցն ամբողջությամբ տակն էր առել նրա հսկայական մարմինը: Սենյակը պայծառ լուսավորված էր, ոչ մի ստվերոտ կետ: Շլացուցիչ պայծառությունից Մերին ընկրկեց:  
 - Բոլորովին չչարչարվեց, տիկին Մորգան, - ասաց բժիշկը: Մերին, կարծես, նրան չէր լսում:  
 - Տե՛ր Աստված, - կինը հառաչեց ու նորից սկսեց լաց լինել: - Ի՞նչ նզովյալ դեմք է:

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ

**2** գիտեմ, ճաշասենյակի սեղանի մոտ նստած մտածում էր Մերի Մորգանը, զուցե միառժամանակ դիմանամ՝ մի քանի օր, մի քանի գիշեր, ու հետո այլ կերպ, ավելի հեշտ կլինի: Անիծյա՛լ գիշերներ: Գոնե մեր դուստրերին սիրեի, էլի ոչինչ: Բայց, ախր, բոլորովին չեմ սիրում: Չմայած, նրանց մասին հո պետք է մտածեմ: Երևի աշխատանք ճարեմ: Ոնչ-որ մեռած լինեմ, երևի կանցնի: Ինչ տարբերություն: Ամեն դեպքում, գործ պիտի անեմ: Այսօր ուղիղ մեկ շաբաթը լրացավ: Վախենամ, եթե շարունակեմ միայն նրա մասին մտածել, մոռանամ, թե իրականում ինչպիսին էր: Ամենասարսափելին այն էր, երբ հանկարծ զգացի, որ դեմքը մոռացել եմ: Որքան էլ հոգիս խռոված լինի, պետք է անպայման աշխատանք գտնեմ: Եթե փող թողած լինեիր, կամ էլ պարզևատրում տային, էլի հեշտ կլինեիր, բայց մեկ է, ինձ համար այլևս ոչինչ հեշտ չի լինելու: Նախ, պետք է փորձեմ տունը ծախել: Սրիկաներ, ո՛նց սպանեցին: Կեղտոտ շներ: Ի՞նչ եմ զգում: Ատելություն, ներսունս՝ դատարկություն: Դատարկ տան նման: Պետք է աշխատանք գտնեմ: Ամեն դեպքում, թաղմանը պետք է գնայի: Դե՛ չէի կարող: Աշխատանք պետք է գտնեմ: Գնացողին էլ ետ չես բերի:

Կրքոտ էր, ուժեղ, արագաշարժ, իսկը հազվագյուտ գազանիկ: Հանգիստ չէի կարողանում նայել, թե ոնց էր շարժվում: Միշտ ինձ այնքան երջանիկ էի զգում, որ իմն էր: Առաջին անգամ բախտը Կուբայում երես թեթեց: Հետո վիճակն ավելի վատացավ, մինչև որ կուբացին սպանեց:

Կուբացիները կոնչերին միայն դժբախտություն են բերում: Կուբացիները բոլորին են դժբախտացնում: Հետո՝ այնտեղ լիքը սևամուռներ կան: Հիշում եմ, երբ գործերը լավ էին ու կարգին փող էր աշխատում, մի անգամ ինձ հետը Հավանա տարավ, զբոսնում էինք այգում, մի նեզր հետևիցս խոսք գցեց, Հարրին այնպես շապացրեց վզակոթին, որ ծղոտե գլխարկը մի կողմ թռավ, իսկ Հարրին բռնեց ու գլխարկը փողոցի մյուս կողմը շարտեց, տաքսին էլ տորրեց-անցավ վրայով: Այնքան հեռացի, որ փորս ցավեց:

Այդ ժամանակ էր, կյանքումս առաջին անգամ մագ ներկեցի գեղեցկության սրահում, Պրադոյի վրա: Վարսահարդարն առավոտից մինչև կեսօր չարչարվում էր, որովհետև մագերս շատ էին սև,



- Ձգուշացրել էի, չէ՞, արգելակը պետք է թույլ պահել:
- Բայց նա ծգում էր:
- Ի՞նչ անենք:
- Ես էլ արգելակը քաշեցի:

- Լսեք, - ասացի, - եթե թելը թույլ չթողնեք, երբ ծուկը բռնել է կեռը և թափ է տալիս, թելն անպայման կկտրվի: Ոչ մի թել չի դիմանա: Երբ ծուկը պահանջում է, պետք է զիջել: Արգելակն անհրաժեշտ է լրիվ բաց թողնել: Նույնիսկ վարպետ ձկնորսները չեն կարողանում դիմադրել, այն էլ՝ որսատեգով: Պետք է նավով այնքան հետապնդեինք, որ ամբողջ կարթաթելը չքանդվեր, ու ծուկն էլ թելը հետը չտաներ: Իսկ երբ փախուստն ավարտվեր, ծուկը կսուզվեր, այդ ժամանակ արդեն կարելի էր արգելակը քաշել ու թելը հետ փաթաթել:

- Ուրեմն, եթե թելը չկտրվեր, կբռնե՞ի դրան:
- Հավանաբար:

- Հո չէ՞ր կարող այդպես անվերջ ցատկոտել:

- Ո՞ր է, թե միայն այդքանը կարողանար: Իսկական կռիվը սկսվում է այն պահին, երբ փախուստը նոր է ավարտվել:

- Լավ, եկեք մի ուրիշ ծուկ բռնենք, - ասաց նա:
- Սկզբում պետք է կոծը փաթաթել, - պատասխանեցի:

Մինչ մենք հասցրել էինք ձկանը կարթել ու բաց թողնել, Էդդին քնած էր:

Հիմա հայտնվել էր նավախելին:

- Ի՞նչ է պատահել, - հարցրեց:

Մի ժամանակ, երբ դեռ չէր խնում, կարգին նավաստի էր, բայց հիմա հեջ բան էր դարձել: Ցցվել է դիմացա՝ բարձրահասակ, փոս ընկած այտերով, կախշուրթ, ճպռոտած աչքերով ու արևախամձ մազերով: Ձարթխումից մեռնում է:

- Ավելի լավ է մի շիշ գարեջուր խմես, - ասացի: Արկղից վերցրեց շիշն ու մի շնչով դատարկեց:

- Դե ինչ, պարոն Ջոնսըն, - ասաց, - ուրեմն, ճիշտ կլինի քունս առնեն: Եվ անչափ շնորհակալ եմ գարեջրի համար, պարոն:

Այ՛քեզ Էդդի, ծուկը նրան բոլորովին չի հետաքրքրում:

Մինչև կեսօր մեկին էլ կարթեցինք, բայց սա էլ ճողոպրեց: Պարզորոշ տեսանք, թե ինչպես ծուկը մի կողմ շարտեց կեռը, որ մոտ երեսուն ոտնաչափ օդ բարձրացավ:

- Էլի՞ ինչ-որ բան սխալ արեցի, - հարցրեց պարոն Ջոնսընը:

- Ոչ, - պատասխանեցի, - պարզապես ծուկը կեռը շարտեց:

- Պարոն Ջոնսըն, - ասաց Էդդին, որ կրկին գարթնել ու հաջորդ շիշն էր անցել, - պարոն Ջոնսըն, պարզապես ձեր բախտը չի բե-

րում: Գուցե, կանանց հարցում ա՞յլ կերպ է: Հը՞, պարոն Ջոնսըն, երեկոյան մի քիչ չպտտվե՞նք:

Լսաց ու նորից անցավ նավի քթամասը՝ քնելու:

Վերադարձի ճանապարհին, մոտավորապես ժամը չորսին, երբ հոսանքին հակառակ էինք լողում ու գրեթե ափին էինք մոտեցել, իսկ հոսանքն անչափ ուժեղ էր, արևն էլ այրում էր թիկունքից, Ջոնսընը մի այնպիսի մեծ թրածուկ կարթեց, որ կյանքումս չէի տեսել: Փոքր կարթածողով չորս թյուննոս էինք որսացել, և նեգրը դրանցից մեկը Ջոնսընի կեռին էր ամրացրել: Վատ խայծ չէր, բայց շատ ուժգին էր ճղփացնում նավահետքի ալիքների վրա:

Ջոնսընը հանել էր փրկագոտին, որպեսզի կարողանար կարթածողը ծնկներին դնել. անընդհատ կախված վիճակում պահելուց ձեռքերը հոգնել էին: Եվ քանի որ նա ձանձրացել էր ակնդետ կարթաթելին հետևելուց, որին ամրացված խայծը նույնպես բավական ծանր էր, հենց որ շրջվել էի, անմիջապես քաշել-փակել էր արգելակը: Ես տեղյակ չէի այդ ամենից: Ինձ դուր չէր գալիս, թե ինչպես էր նա բռնում կարթածողը, սակայն ցանկություն չունեի անվերջ դիտողություն անել: Բացի այդ, երբ արգելակը քաշած է, թելը կարող է ազատորեն քանդվել, այնպես որ, վտանգավոր չէր: Չնայած, այդ ձևով ծուկ չեն որսում:

Դեկն իմ ձեռքին էր, և նավը, գլխավոր հոսանքին համընթաց, վարում էի ափի ուղղությամբ, դեպի ցեմենտի գործարանը, որի մոտ հոսանքը սովորաբար ջրապտույտ էր առաջացնում, և առատ մանրածուկ էր լինում: Հանկարծ ջրի բարձր շիթեր հայտնվեցին ուղիղ դիմացս, կարծես ստորջրյա ռումբ էր պայթել, հետո՝ թուր, աչք, բացված երախ և սև թրածկան կարմրասև, հսկայական գլուխը: Մեջքի լողակն ամբողջությամբ ջրից դուրս էր ցցվել, հասակը համարյա եռակայմ նավի բարձրություն ուներ: Ամբողջ թափով հարձակվեց մեր թյուննոսի վրա, ապա ջրի երեսին հայտնվեց նաև պոչը: Թուրը բեյսբոլի գարկիչի հաստության էր՝ վեր ցցված, և երբ կուլ տվեց խայծը, օվկիանոսի մակերևույթը պատռվեց ու մի պահ, կարծես, դատարկվեց-բացվեց: Մարմինն ամբողջովին կարմրասև էր, աչքերը՝ մեկական ապուրաթաս: Հսկայամարմին էր: Գրագ կգամ, որ հազար ֆունտը միանգամից քարշ կտար:

Ջոնսընին ծայնեցի, որ թելը բաց թողներ, բայց չէի հասցրել առաջին բառն արտասանել, տեսա, թե ինչպես Ջոնսընն օդ բարձրացավ, կարծես վերամբարձ կռունկով էին քաշում, մի պահ կառչած մնաց կարթածողին, բայց ձողը աղեղի նման ձկվեց, ապա ուղղվեց ու հաստ կոթով հարվածեց ուղիղ նրա որովայնին, որսասարքը մի կողմ թռավ ու ջուրն ընկավ:

սկզբում նույնիսկ հրաժարվում էր գույնը փոխել, իսկ ես վախենում էի, թե ծիծաղելի տեսք կստանամ, բայց անվերջ խնդրում էի՝ «Չե՞ք կարող գոնե մի քիչ բացացնել», և վարսահարդարը շարունակում էր մազերս մշակել սանրով ու ծայրը բամբակած նարնջագույն փայտիկով, որ անընդհատ թաթախում էր ներկի ծխացող թասի մեջ, սանրի ծայրով մազափնջեր էր առանձնացնում ու ներկում, հետո սպասում էր, որ չորանար, իսկ ես նստել էի, և վախից սիրտս զցում էր, որ հիմարություն եմ անում ու անվերջ խնդրում էի, որ գոնե մի փոքր բացացնեք:

Ի վերջո, վարսահարդարն ասաց՝ «Տիկին, սրանից բաց այլևս հնարավոր չէ», հետո մազերս լվաց օճառահեղուկով, սանրեց, նույնիսկ չէի փորձում նայել, վախենում էի, որ սարսափելի տեսք եմ ստացել, իսկ նա շարունակում էր հարդարել. մի կողմից բախտ բացեց և փոքրիկ, ճոխ խոպոպիկներ փաթաթելով՝ վեր սանրեց ականջներիս հետևից, սակայն դեռ չէի տեսել, թե ինչ էր ստացվել, քանի որ մազերս թաց էին, չնայած արդեն զգում էի, որ իրականում կարգին փոխվել էին, ես էլ, աչքիս, այլևս այն չէի: Ապա մազերս ցանցի մեջ հավաքեց ու ինձ նստացրեց չորացնող սարքի տակ. վախից դողում էի: Երբ սարքի տակից դուրս եկա, հանեց ցանցն ու ծամկալները, մի անգամ էլ սանրեց-հարդարեց, նոր միայն տեսա, որ մազերս ոսկեփայլ էին դարձել:

Փողոց դուրս եկա, նայեցի հայելու մեջ. մազերս էին փայլում արևի տակ, իսկ երբ ձեռք տվեցի, այնքան փափուկ էին, մետաքսյա, որ չէի հավատում, թե իսկապես իմն էին, հուզմունքից շունչս կտրվում էր:

Պրադոյով ներքև իջա, դեպի սրճարանը, որտեղ Հարրին ինձ էր սպասում, այնքան հուզված ու լարված էի, որ թվում էր, թե ուր որ է, վայր կընկնեի, բայց երբ ներս մտա, ինձ տեսնելով՝ Հարրին ոտքի կանգնեց ու աչքը չէր կարողանում ինձանից կտրել, և ծիծաղելի, խեղդվող ծայրով ասաց.

- Հիսո՛ւս Քրիստոս, Մերի, դու գեղեցկուհի ես...

Իսկ ես պատասխանեցի.

- Քեզ չիկափեր է՛լ եմ դուր գալիս:

- Այդ մասին չխոսենք, - ասաց: - Տուն գնանք, հյուրանոց: Ես էլ ասացի.

- Լավ: Որ այդպես է՛ գնացինք:

Այդ ժամանակ քսանվեց տարեկան էի:

Ինձ միշտ լավ էր վերաբերվում, ես էլ՝ նրան: Ասում էր, որ նման կին երբևէ չի ունեցել, իսկ ես համոզված եմ, որ աշխարհում նրա

նման տղամարդ գոյություն չունի: Շատ լավ գիտեմ, իսկ հիմա նա մահացել է:

Պետք է աշխատեմ: Գիտեմ՝ պետք է: Բայց եթե նման ամուսին ես ունեցել, ու հանկարծ ստոր կուբացին սպանել է, հեշտ չէ ինչ-որ բան ձեռնարկել, որովհետև ներսումդ ամեն ինչ մեռած է: Հիմա չգիտեմ՝ ինչ անեմ: Երբ ուղերթի էր մեկնում՝ ուրիշ էր: Անպայման տուն էր վերադառնում, իսկ հիմա ամբողջ կյանքում մենակ եմ լինելու: Արդեն ծեր եմ, գեր ու տղեղ, և ոչ ոք չի փորձի հակառակը համոզել, որովհետև նա այլևս չկա: Երևի ստիպված լինեմ տղամարդ վարձել, չնայած դժվար թե ուզենամ: Այսպիսի բաներ: Եվ այսպես էլ շարունակվելու է:

Այնպես էր ինձ սիրում ու հոգում մեր մասին, միշտ կարողանում էր փող վաստակել, երբեք փողի մասին չեմ մտածել, միայն՝ նրա մասին, և հիմա՝ վերջ ամենին:

Սպանվողի համար ավելի հեշտ է: Դեմ չէի լինի, որ ինձ սպանած լինեին: Բժիշկն ասաց, Հարրին վերջում պարզապես հոգնել էր: Այդպես էլ ուշքի չեկավ: Ուրախ եմ, որ հեշտ մահացավ, Տե՛ր Աստված, թե չէ նավի վրա շատ էր տանջվել: Երևի իմ մասի՞ն է մտածել կամ՝ ինչ-որ ուրի՞շ բանի: Ինձ թվում է, երբ այդ վիճակում ես, այլևս ոչ մեկի մասին չես մտածում: Հավանաբար, ահավոր ցավեր է ունեցել: Իսկ վերջում արդեն ուժասպառ է եղել: Աստված իմ, այնպես կուզեի, որ ես մեռած լինեի: Բայց ուզենալուց ի՞նչ օգուտ: Ուզենալը երբեք էլ չի օգնում:

Թաղմանն անկարող էի գնալ: Մարդիկ չեն պատկերացնում: Չեն կարողանում հասկանալ, թե ինչ ես զգում: Որովհետև լավ ամուսին քիչ կա, դրա համար էլ չգիտեմ, թե դա ինչ զգացում է: Պարզապես, չունեմ: Իսկ ես գիտեմ: Շատ լավ գիտեմ: Բայց եթե ևս քսան տարի ապրելու լինեմ, ի՞նչ եմ անելու: Ոչ-ոք էլ չի կարող ասել, մնում է քիչ-քիչ հարմարվել, օր-օրի, և անմիջապես աշխատանք գտնել: Այդպես էլ կանեմ: Բայց, Հիսուս Քրիստոս, գիշերնե՛րն ինչ եմ անելու, այ, դա կուզեի իմանալ:

Գիշերն ինչպե՞ս անցկացնես, եթե քունդ չի տանում: Ի վերջո, երևի, դա էլ ես պատկերացնում, չե՞ որ կարողանում ես հասկանալ, թե ինչ է լինում, երբ կորցնում ես ամուսնուդ: Հավանաբար, ստիպված ես լինում պատկերացնել: Այս անիծյալ կյանքում ամեն ինչ էլ պատկերացնում ես: Եվ լավ էլ հասկանում ես: Կարծես, ես էլ եմ արդեն պատկերացնում: Պարզապես, ներսումդ ամեն ինչ մեռնում է, և ամեն ինչ հեշտանում է: Դու էլ մեռյալ ես դառնում, ինչպես մարդկանց մեծ մասն է մեռած՝ գրեթե ամբողջ կյանքում: Երևի, այդպես է

պետք: Ու հենց այդպես էլ կլինի: Դե ինչ, ինձ համար սկիզբը դրված է: Եթե այդպես պետք է լինի, ուրեմն լավ էլ սկիզբ է: Կարծում եմ, այդպես էլ կա: Զենց դա է, որ կա: Ենթադրում եմ, որ դրանով էլ վերջանալու է: Դե, ինչ: Լավ սկիզբ է: Բուրից առաջ ընկա:

\*\*\*

Դրսում մերձարևադարձային պարզ, զով ծմեռային օր էր, հյուսիսային մեղմ քամին ճոճում էր արմավենիների ծյուղերը: Զմեռնեկ հանգստացողները հեծանիվներով անցնում էին տան կողքով: Ծիծաղում էին: Դիմացի ընդարձակ բակում ճչում էր սիրամարգը:

Պատուհանից երևում էր ծովը, ծմեռնալուսյա մեջ՝ անխռով, քարն ու երկնագույն:

Մեծ, ճերմակ առագաստանավը նավահանգիստ էր մտնում, հորիզոնում, ափից շուրջ յոթ մղոն հեռավորության վրա, երկնագույն ծովի ֆոնին պարզորոշ նշմարվում էր փոքրիկ լցանավը, որ արևնուտքից շրջանցում էր ստորջրյա ժայռերը, որպեսզի հոսանքին հակառակ չգնար ու վառելիք խնայեր:

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1. ԶԱՐԲԻ ՍՈՐԳԱՆ - ԳԱՐՈՒՆ ..... 3
2. ԶԱՐԲԻ ՍՈՐԳԱՆ - ԱՇՈՒՆ ..... 45
3. ԶԱՐԲԻ ՍՈՐԳԱՆ - ԶՄԵՌ ..... 61

Մարտի 15-ին Երևանի Գրականության կոմիտեի կողմից հրատարակված է «Զարբի Սորգան»-ի գրքի 3-րդ հրատարակությունը:

Գրքի արժեքը՝ 1500 Դրամ: Գրքի օրինակները կարելի է կարգադրել Երևանի Գրականության կոմիտեի կողմից:

Երևան, 1978 թ.

Գրականության կոմիտեի  
հրատարակչություն  
Երևան, Կոմիտեի պալատի  
կառուցվածքի թիվ 10

Տպագրվել է Երևանի «Պրինտ» տպարանում



Հրատարակչություն  
Երևան, Կոմիտեի պալատի  
կառուցվածքի թիվ 10

ԷՌՆԵՍ ՅԵՄԻՆԳՈՒԵՅ

## ՈՒՆԵՆԱԼ ԵՎ ՉՈՒՆԵՆԱԼ

Նկարիչ՝  
Խմբագիր՝  
Սրբագրիչ՝  
Ձևավորող՝

**Էդվարդ Միլիտոնյան**  
**Անուշ Վարդանյան**  
**Սուսաննա Հովհաննիսյան**  
**Գևորգ Բաղդասարյան**

Ատորագրված է տպագրության 10.01.2007: Չափսը՝ 60 x 84 1/2:  
Թուղթը՝ օֆսեթ- 1: Տառատեսակը՝ «Arial Armenian»:  
Տպագրությունը՝ օֆսեթ: Ծավալը՝ 11.5 տպ. մամուլ:

Տպաքանակը՝ 500

---

**«ԾԻԾԵՌՆԱԿ» հրատ.**  
**Տնօրեն՝ Անուշ Վարդանյան**  
Երևան, Արշակունյաց 2  
Հեռ.՝ (091) 79-73-10

---

Տպագրվելը է «Գևորգ - Հրայր» ՍՊԸ



հրատարակչությունում

Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:  
Հեռ.՝ 52-79-74, 52-79-47:  
Էլ. փոստ [lusakn@rambler.ru](mailto:lusakn@rambler.ru)

**Տիօննալ 2007**